2228

84
U-35

4 II
963

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ

Возвращайте книгу в срок, чтобы и другие могли воспользоваться ею.

2011

84
Մ-36 Ա
4474
3135

ԱՆՆԱ

ԿԱՄ

ՍԷՐ ԾՆՈՂԱԿԱՆ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ՏԸ ՄԱՐԼԷՅ ԳԱՂՂԻԱՑԻՈՅ

14927

31 V 1911
Библiот.-Читальн.
Бак. Арм. ...ов. О-ва

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1882

1-05к.
2003

583
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Пуб. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
916
41 Գ

ԱՆՆԱ

ԳԼՈՒԽ Ա.

Սէնթ-Անժի գերդաստանն:

Սէնթ-Անժի մարքիզուհին չքեղազարդ դահլիճի մի մէջ գլուխն կէս մի վար հակած՝ աչուըներն գետինն յառած՝ բազմոցի վրայ նստած էր, ու իր երեսաց վրայ սաստիկ այլայլութիւն կերևէր: Իւր այրն նորա առջին ոտքի վրայ կեցած էր, և իւր բնութեան քաղցրութիւնն երեսէն յայտնի կը տեսնուէր՝ իւր կնոջ վրայ գրեթէ աղաչական հայեցուած մի դարձնելով. որովհետև փոթորկի մի բռդելն կը գուշակէր, և կուզէր առաջքն առնուլ: Որմըսանի հրամանատարն՝ որ մարքիզուհւոյն հօրեղբայրն և նորա մանկութեան խնամակալն եղած էր՝ 'ի նոցանէ սակաւ մի հեռի նստած՝ օրագրի մի մէջ նոյն աւուր լուրերն կընթեռնուր՝ որք շատ վըտահացուցիչ բաներ չէին, որովհետև մեծ յեղափոխութեան երկրորդ տարւոյն սկիզբն էր:

Վերջապէս մարքիզուհին՝ որ մինչեւ այն ատեն դժուարաւ ինքզինքը զսպած էր՝ լռութիւնն խզելով խիստ ձայնով ասաց. Գնա՛, տէր, գնա՛ քու թերափդ խնկարկելու, քու սիրելի Աննադ անհամ գովեստներովդ ուռեցնելու. մեծայօ տարած յաղթութիւնն իւր քրոջն իմ սիրելի Եմիլիիս վրայ՝ զոր անդթաբար ցաւոց եւ յուսահատութեան մէջ ընկղմեցիր. որպիսի՜ ապառաժ սիրտ:

Անդրէն հրամանատարն ապքենելով՝ Դու ինքն ես եղբօրորդիս որ այդ յանդիմանութիւնդ կուտաս, ասաց երգիծական ծաղրով. ուսկից սաստիկ վիրաւորուելով մարքիզուհւոյն սիրտն՝ արհամարհական կերպով պատասխանեց. Ես ինչո՞ւ պիտի չկարեմ տալ:

— Ինչո՞ւ. զարմանալի հարցմունք. կուզե՞ս որ ասացածս բացատրեմ. կարծեմ թէ իրաւունք ունիմ քեզ հետ համարձակ խօսելու:

— Մանաւանդ թէ խստութեամբ, մանաւանդ թէ...

— Մանաւանդ թէ թերեւս նուաղ պատկառանօք, վրայ բերաւ հրամանատարն առանց այլայլելու: Ո՛հ, յիրաւի մեծապէս յանցաւոր եմ որ քու առջեւդ երկու ծնկան վրայ չեմ գար, դու որ իմ եղբօրս աղջիկն ես եւ իմ որդեգիրս, եւ քու ամենուն վրայ բանեցուցած իշխանութեանդ առջին գլուխ չեմ ծռեր. բայց ինչ առնելու է, ա՛լ ինքզինքս ուղղելու ատենն անցած է: Սակայն մտիկ արա՛ եղբօրորդիս. քու երկու աղջկանցդ մէջ բոլոր մայրական սէրդ անդրանկիդ պահած ես, իսկ կրտսերոյն հետ թշնամւոյ պէս կը վարուիս. բոլոր գութդ առաջնոյն համար է, եւ բոլոր խստութիւնդ երկրորդին. քու մայրական գիրկդ առաջնոյն համար միշտ բաց է

ու վերջնոյն համար միշտ գոց: Բայց տեսցուք մի անգամ ինչ է Աննայի յանցանքն. նորա յանցանքն ուրիշ բան չէ՝ բայց եթէ քու կոյր սիրելութիւնդ Եմիլիին համար, քու յանցաւոր զիջողութիւնդ այդ զաւկիդ համար՝ որոյ վրայ յիրաւի գեղեցիկ կատարելութիւններ կը տեսնուէին, բայց դու յիմարական սիրովդ զնա կորուսիր:

— Կորուսի՞...

— Այո, կորուսիր կասեմ եւ չեմ վախեր զայն կրկնելէն. որովհետեւ ամեն ունայնամիտ, հպարտ, նախանձոտ ու անձնասէր կանայս, ես կորուսած կը համարիմ. եւ դու ալ քու անդրանիկ աղջիկդ ունայնամիտ, հպարտ, նախանձոտ ու անձնասէր կին մի դարձուցիր:

— Բարեբաղդաբար Տէր տը Ֆորթոն քեզ խորհուրդ հարցուցած չէ իւր կնոջ արժէքն գիտնալու համար, պատասխանեց մարքիզուհին՝ հազիւ զսպել կարելով իւր զայրացեալ բարկութիւնն:

— Այնոր համար ուրեմն աղջիկդ իրեն տալու նկատմամբ ալ խորհուրդ չհարցուցիր:

— Երբ Տ. տը Ֆորթոն պատուաւոր մարդ է՝ ալ ուրիշ ինչ բան պէտք էր:

— Խօսքերնիս հասկնամք, եղբօրորդիս. եթէ պատուաւոր մարդ ասելով՝ աշխարհքիս հասկցածն կիմանաս՝ այդմ խօսք չունիմ եւ կը հաւանիմ. մարդ մի որ նախատանաց չկրնար համբերել, խաղի մէջ պարտքն ճիշդ կը հատուցանէ, իր կրից զինքն ձգած մոլորութեանց վրայ՝ քաղքավարութեան, մարդավարութեան նաեւ բարեսիրութեան փայլ մի կը ծածկէ. ահա այս է Ֆորթոն ասացած մարդդ: Բայց սոքա իմ առջիս պատիւ չեն սեպուիր. ուստի քու վե-

այնդ վրայ լաւ համարում մի ունեցած չեմ. և քանի որ այս չարագոյժ խռովութիւնս սկսաւ, որոյ հետևանքն չեմ կարող գուշակել, և որ մեր հայրենեաց մէջ այսչափ տարաձայնութեան որոմներ կը ցանէ, աւելի նուազեցաւ իմ նորա վրայ ունեցած համարումս։ Քսանուհինգ տարուան հասակին մէջ վաշտի մի գլուխ լինելով՝ իւր գնդապետին մեռնելէն չորս ամիս յետոյ նորա տեղն անցնիլ կուզէր. բայց շատ պատերազմներու մէջ գտնուած և պատուաւոր վէրքով ծածկուած սպայ մի գնդապետ անուանեցաւ, միթէ արդարացի չէ՞ր այս բանս. պէ՞տք էր որ ճշմարիտ արդեանց տեղ առանձնաշնորհութիւնն յաղթանակէր։ Հիմա տեսնենք թէ այսօր հետևանքն ինչ եղև. քու փեսայդ այս բանիս համար կառավարութեան յայտնի թշնամի կը հանդիսանայ, ականջ կը կախէ ու կը հրատարակէ այն ամենայն չարախօսութիւններն ու ամբաստանութիւններն որ կը զրուցուին արքունեաց, թագաւորին և թագուհւոյն դէմ՝ զնոսա անուանարկ առնելու համար՝ զորս մեր յաջորդներն իրենց ժամանակակցաց դէմ պիտի արդարացնեն։ Նաև ստոյգ տեղէ իմացած եմ որ քու փեսայդ ալ ընկերակից է այն ժողովոց որ առ երեսս հայրենասիրականք կ'անուանին և ստուգապէս ուրիշ բան չեն բայց եթէ խռովութեան կեդրոններ։ Այս ասացածս օգտակար խրատ լինի քեզ, եղբօրորդիս. Ֆորթոն տէրութենէ տժգոհ է. տժգոհն ու մատնիչն ալ իրարմէ շատ հեռի չեն։

Բայց մենք մեր խնդրոյն դառնամք, ասաց հրամանատարն սակաւ մի դադրելէն ետև, Աննայի այն բարի, սիրուն, գորովագութ և 'ի վեր քան զամենայն սքանչելի աղջկան վրայ. ին-

չո՞ւ մտիկ չես առներ նորա արտասուալից հառաչանացն որ կը գոչէ. Ի՞նչ գործած ունիմ արդեօք՝ որ մայրս զիս կը վռնտէ. միթէ բոլոր սրտովս չէ՞մ սիրեր զնա. միթէ միշտ պատրաստ չէ՞մ նորա ամեն ուզածն կատարելու, և թէ որ պէտք լինի իւր երջանկութեանն համար ինքզինքս զոհելու։ Աստուա՜ծ իմ, Աստուա՜ծ իմ, բաց ինձ մօրս սիրտն որ գոնէ տեղ մը իր գրկաց մէջ զիս ընդունի։ Եւ այս ասացողն տասնուվեց տարուան աղջիկ մի է, Տիկին, ասաց հրամանատարն։

— Շատ լաւ, ասաց մարքիզուհին անհամբեր եղանակաւ մի. հապա երէկ երեկոյեան անցքն, անշուշտ այս ալ իր բարեսրտութենէն յառաջ եկած էր, այնպէս չէ՞։

— Երէկուան անցքն. յիրաւի կը զարմանամ քու վրայ. Եմիլին ընկերակցութեամբ այլոց որչափ կարաց երգեց, որովհետև տղայութենէն 'ի վեր բան մի ուսանիլ չէր ուզած, և նոյն իսկ դասուց ժամանակ իր վարպետներն կը ծաղրէր՝ որ քեզ շատ հաճոյ բան կերևէր. և այսպէս օրերն սահելով և ժամանակն անցնելով յառաջադիմութիւն մի չկարողացաւ առնել. արդ ինչպէս կրնար ծափահարութեանց սպասել։ Յետոյ ուզեցին որ Աննա ալ երգէ։

— Տէր տը Սէնթ-Անժն էր անշուշտ ուզողն . . .

— Կը սխալիս եղբօրորդիս, քու ամենէն ընտիր բարեկամդ՝ Տիկին Պլէնվալն էր։

— Գիտեմ, այդ չարասիրտ կինն։

— Աննա վախէն ու ամօթխածութենէն երկայն ատեն ընդդիմացաւ. ես էի ես իր մեծ հօրեղբայրն որ ստիպեցի զինքն ունկնդրաց իղձն կատարելու. ինչ կուզէիր որ առնէր խեղճ աղ-

ղայն: Բնութիւնն հեշտալի ձայն մի տուած է իրեն՝ որուն հետ կը միացնէ նրբին ճաշակ մի, որով հրեշտակի պէս երգեց. միթէ իրեն յանցանք է այս. և միթէ կարէր արգելու՞լ որ ունկնդիրք իրենց զգացած զուարճութիւնն չյայտնէին. և դու ալ ուրախանալու չէի՞ր այս անմեղ յաղթանակիս վրայ որ իր բնութեանն նայելով ամենևին վտանգ մի չունի: Այլ խօսքս չեմ երկնցըներ, վասն զի գիտեմ որ Աննայի վրայ խօսք եղածին պէս կը տհաճիս. բայց սա վերջի խօսքս մտիկ արա. քու հայրդ քիչ ժառանգութիւն թողուց. իր անթիւ պարտքերն՝ զորս ես հատուցի իւր անուան պատւոյն համար՝ որ իմս ալ է. գիտես դարձեալ որ դեռ մեծ հարստութեան տէր եմ՝ որ քոյ աղջկանդ ճոխաբար ապրելուն համար բաւական է, զոր քոյ ունեցածէդ չես կարող յուսալ: Այս հարստութիւնս իմ երկու սաներուս մէջ պիտի բաժնեմ եթէ երկուքն ալ արժանաւոր լինին՝ ինչպէս որ ես կուզեմ, չէ թէ ինչպէս դու. ապա թէ ոչ՝ բոլորն ալ նմա պիտի անկանի ով որ ճշմարիտ առաքինութեամբ արժանի լինի:

Հրամանատարն դադրելէն ետև՝ սակաւ մի ժամանակ լռութիւն եղև. մարքիզն ալ չէր համարձակեր խօսք մի ասելու որ մի գուցէ իւր կնոջ բարկութիւնն գրգռէ որ հպարտութենէն լռեր պապանձեր էր. վերջապէս քանի մի վայրկեանէն ետև հրամանատարն ոտք ել հրաժարեաց, ողջունեց՝ ու թողուց գնաց:

Այն ատեն մարքիզուհին նեղացած ձայնով մի գոչեց. Ա՜հ, սա հարուստներն՝ ինչպէս ուրիշներու վրայ կը պարծին. ու հարուստ լինելնուն համար՝ ամեն իրաւունք իրենց կը սեպհականեն, և ամենքն ալ նոյն բնութիւնն ունին:

—Ներեցէք ինձ Տիկին, ասաց մարքէզն, ասելու որ հրամանատարին իրաւունքն՝ միայն իր հարստութենէն առաջ չգար, հապա այլ աւելի հիմնական և սրբազան պարտքէ մի. ինքն քոյ հօրեղբայրդ է և խնամակալդ եղած է և զիս ալ միշտ իւր բարեկամութեամբն պատուած է. պէտք է որ մեք ալ զինքն պատուեմք. ինքն իւր ստացուածոց բացարձակ տէրն է, և իր սաներէն որուն որ կուզէ կարէ թողուլ զամենքն ալ: Հիմա դու ինչ վաստկեցար Էմիլիդ վրայ մասնաւորութիւն ցուցնելով՝ զինքն գըրգռելէդ: Նոյն իսկ Էմիլին ալ՝ իւր էրկան իր վրայ ունեցած իշխանութեամբն՝ քեզ շնորհակալ չկարէ լինել իր վրայ ցուցած մասնաւոր սիրոյդ համար՝ որ պատճառ պիտի լինի զինքն զրկելու իր մեծ հօրեղբօրն ժառանգութենէն:

— Այլ բաւական է, պատասխանեց խստութեամբ Տիկին տը Սէնթ-Անժ. գնա կոչէ զԱննա. և թէ որ քեզ հաճոյական բան մի առնելու համար ես իմ մայրական սէրս երկու աղջկանցս ալ կը շնորհեմ, յուսամ որ հրամանատարն ալ իր ստացուածքն երկոցուն ալ թողու:

Մարքէզն կնոջ խօսքն կրկնել չտուաւ աղջիկն կոչելու համար, որովհետև զնա յոյժ կը սիրէր և դժուարն կուզար մօրն ցուցած պաղութիւնն. բայց տան խաղաղութիւնն պահելու համար իր հպարտ քմահաճոյ և կամապաշտ կնոջն ամեն ասացածներուն կը համբերէր, թէ զանիկայ պատուելու համար և թէ նմա դէմ դնելով իւր խաղաղութիւնն չվրդովելու համար: Միայն երբ հրամանատարն զինքն կը պաշտպանէր՝ այն ատեն սակաւ մի կը զօրանար, այն ալ շատ զգուշութիւններով և վախով՝ որ մի գուցէ իւր կնոջ դիւրագրգիռ բնութիւնն զայրացնէ. այն-

պէս որ կարծես թէ աւելի վախկոտ ու շրջահայեաց խորհրդական մի էր տան մէջ՝ քան թէ տանուտէր։

Աննա շուտով երեցաւ, և հայրն սորա ձեռքէն բռնած մարքիզուհւոյն ներկայացուց։ Խեղճ աղջիկն կը դողդղար, որովհետև մօրմէն կը վախէր՝ որ միշտ անիրաւ յանդիմանութիւններ ու դառն խօսքեր ասելու համար իրեն հետ կը խօսէր։ Ուստի յուսով և երկիւղիւ խառնեալ սիրտը կը նետէր, և իւր քաղցր կերպարանաց վրայ որ իր զգացմանցն հաւատարիմ թարգմանն էր, իւր վախն ու երկիւղն յայտնի կը տեսնուէին։

«Մօտ եկ, Օրիորդ, ասաց մարքիզուհին ձայնն քաղցրայնել ջանալով. լսեցի՝ որ դու կը գանգատիս եղեր իմ վրաս, քեզ ցուցած պաղութեանս համար, ալ ի՞նչ գիտեմ։ Մի թէ քու վրադ մայրական խնամքէս և մտադրութենէս պակսե՞ր եմ. քեզ ի՞նչ բան կը պակսի. մի թէ ի՞նչ վարպետներ որ քրոջդ համար բռնեցի, քեզի համար ալ չառա՞րի։ Քոյ հասակիդ և վիճակիդ վայել զուարճութեանց մասնակից չե՞ս. մեր ընկերութեանց մէջ չե՞ս գտնուիր, և մի թէ չե՞մ ջանացած քու կատարելութիւններդ այն ընկերութեանց մէջ երեւան ածելու, ասաց բարեսիրութեան այնպիսի ձայն եղանակով մի՝ որ սրտին դառնութիւնն հազիւ թէ կը պարտկէր։ Պատասխան տուր, Օրիորդ, ի՞նչ բանի վրայ է գանգատդ»։

Մարքիզուհւոյն խօսած ժամանակ՝ Աննայի սիրտն աւելի ընելով պատասխանեց. «Ներեցէք մայր իմ որ ձեր ոտքն ինկած՝ սիրտս ձեզի բանամ. գիտեմ որ դուք ամեն խնամք ցուցէք ինձ՝ որոց համար շնորհակալ եմ. բայց ինձ կեանք

տուողն ստուգիւ սիրելուս կը փափաքէի երբեմն նորա հետ գրկախառնիլ, ո՜հ կարծեմ թէ մօր մի համբոյրներն շատ քաղցր լինելու են.« զայս ասելով առատ արցունք կը թափէր. այնպէս որ Տիկին Սէնթ-Անժի սիրտն ալ յուզեցաւ, և երբ ակամայ իւր բազուկներն կը բանար իր զաւկին՝ Տիկին Ֆորդոն յանկարծակի վրայ հասնելով ներս մտաւ. և կարծես թէ նորա ներկայութիւնն իր մայրական զգացումն սրտին խորերն ետ մղեց. և ամաչելով իր զգացման վրայ՝ զոր տկարութիւն կը համարէր՝ քանի մի խօսք մրմռաց Եմիլիին առջին ինք զինք արդարացնելու համար, և պաղութեամբ արձկեց զխեղճ Աննա ճիշդ այն վայրկենին՝ երբ գորովալից զաւակն ինքզինք՝ իր մայրն գտնելու երջանկութեան հասած կը կարծէր։

Եմիլին գեղեցիկ և բարեկազմ հասակ մի ունէր. բայց դէմքն շատ նշանաւոր բան մի չէր, և իւր հպարտ և գոռոզ կերպերն նորա հոգւոյն խստութիւնն ցուցանէին. ուստի Տիկին Սէնթ-Անժի ծանչուորներն որ նորա իւր անդրանիկ աղջկան վրայ ունեցած առաւել սէրն գիտէին՝ կը զարմանային այս ձախողակ մտացն վրայ որով ամենևին չէր զգար Աննայի շնորհալից անմեղութիւնն, անփոփոխ քաղցրութիւնն և այն կատարելութիւններն զոր երկինք նմա շնորհել էին. և ընդհակառակն իւր ամեն սիրելութիւնն պահած էր իւր մեծ աղջկանն, որոյ ամենէն մեծ կատարելութիւնն իր անձնահաճ ծանրութիւնն էր զոր մարդ աշխարհիս մէջ կը ստանայ անձնասիրութեամբ, ամբարտաւանութեամբ ու պահանջողութեամբ։

Սոյն զարմանքն աւելի պիտի յաւելուր եթէ նորա էրկանն Տ. Ֆորթոնի սիրտն կարէին ընթեռ-

նուլ, և հին ծածկուած սուտթիւնն ու խարդախութիւնն նշմարել: Այս մարդս պատերազմի պաշտօնէին դէմ կրած ոխն և ատելութիւնն որ իրաւամբ զլացել էր իրեն՝ այն պաշտօնն որ արդարապէս ուրիշի կը պատկանէր, Թագաւորին դէմ դարձուց, և շատ անգամ կառավարութեան և միապետական սահմանադրութեանց դէմ գործած դառն ճամարտակութեանց համար՝ ծափահարութեանց արժանի եղած էր այն ժամանակի ռամկավարական ժողովակաց մէջ. ուստի և արժանի սեպուած էր գաղտնի ժողովոց անդամակցելու, որոց մէջ կը կարգադրուէին օգոստոս 10ին լինելիքն: Փորթոն չէր անգիտանար որ խռովարարաց միտքն՝ սինլքոր ժողովրդեան ձեռօք միապետութիւնն տապալել էր. և ինքն ալ ասոր վրայ դրած էր բոլոր յոյսն և ակնկալութիւնն:

Կը մտածէր որ քաղաքական անցք երթալով զայրանալով՝ մարքէզն և հրամանատարն պիտի ստիպուէին օտար երկիր պանդխտելու, ինչպէս որ նոցա բարեկամներէն շատերն արարեալ էին. և կը յուսար որ իւր ժողովակից բարեկամաց ձեռօք, և քանի մի Թղթադրամ միոյն և միւսոյն ափն խոթելով՝ դիւրաւ կարողանայ բոլոր գերդաստանին ստացուածքն իւր ձեռքն անցուցանելու: Իւր այս մտածմունքս մասամբ իւր կնոջն ալ հաղորդել էր. և նա ալ սակաւ մի դէմ դնելէն ետև՝ նորա կարծեացն հաւանել էր. այն դիմադրութիւնն ալ առ երեւս բան մի լինելն լաւ հասկցած լինելով Փորթոն՝ կատարեալ հաւանութիւն սեպած էր: Եւ սակայն ամենայն ինչ իրեն չէր իմացուցած. այսինքն որ եթէ մարքէզն և հրամանատարն չուզէին պանդխտել՝ պատրաստ էր հնա-

րիւք իմն զնոսա ստիպելու. անանուն սպառնալիք մի, գաղտնորոգայթ ամբաստանութիւն մի այն ժամանակի ժողովակաց առջին և կամ այս օրինակ միջոցներ դիւրին ճամբայ մի կրնային բանալ իւր առջև ազգականներն օրինաւորապէս իրենց ստացուածքէն զրկելու համար: Եմիլին իւր մօր սենեակն մտած ժամանակ՝ դեռ նոր իմացել էր իւր էրկանը խորհուրդն. նախընթաց երեկոյին դիպուածն ալ՝ որոյ համար կատաղութենէն դառն արտասուք թափել էր՝ նոր հանդիպած լինելուն՝ յաւիտենական ատելութիւն մի երդուընցել էր իւր քրոջ դէմ, և այն ատելութիւնն մինչև իւր հօր դէմ կը կրէր. որով Փորթոն ալ յարմար ժամանակ սեպած էր՝ զինքն իւր խորհրդոց տեղեակ առնելու: Եմիլիի շատ հոգն եղած չէր իր հօրն, մեծ հօրեղբօրն և քրոջ գլխուն գալու փորձանաց. միայն խնդրել էր որ իւր մայրն ազատ լինի այս հարուածէն. բայց նոյն իսկ այս վերջնոյս նկատմամբ այնպէս պաղութեամբ խօսել էր՝ որով կիմացնէր թէ բոլորովին կամակից էր իւր էրկանը խորհրդոցն: Ուստի երբ ներս մտաւ և զԱննա մօր քովն տեսաւ՝ ներքին ատելութիւնն եւելի գրգռելով՝ իւր ակամայ տարտամութիւնն բոլորովին փարատեցաւ. իւր շահասիրութիւնն պարտկել կը ջանար էրկանն ունեցած հնազանդութեան արդար պարտքովն, և իւր մօրն համար խնդրած ազատութիւնն՝ որով կուզէր նորա կոյր սիրոյն փոխարէն մի առնելու, ալ իրեն բոլորովին աւելորդ երևեցաւ:

Բայց տեսցուք թէ ինչ կերպով այս աստիճան անբարտաւանութեան հասել էր Եմիլին՝ որ իւր անձնասիրութեան դէմ եղած ամեն զգացմունք՝ ծանր բեռ մի կերևէր իրեն: Ինքն 'ի

քնէ այնպիսի կատարելութիւններ ունէր՝ որ եթէ լաւ դաստիարակութեամբ ուղղէին՝ մի մի առաքինութիւն կարող էին դառնալ, բայց Տիկինն Սէնթ-Անժ վտանգալից զիջողութեամբ բոլորն 'ի չարն դարձուցել էր. որք ոչ միայն իրեն համար գառն ցաւոց պատճառ պիտի լինէին, այլ և այլքանն ալ ողբալի հետևանք, բարեկամական քաղցր զգացմանց և ընտանեկան անոյշ սիրելութեանց դէմ նորա սիրտն փակելով: Իւր կամքէն զատ ուրիշ կանոն մի չունենալով իւր գործոց՝ ամենայն ինչ իրեն կը ենպհականէր, և զուրիշներն իրմէ վար էակներ կը համարէր, և կամ իրեն ծառայելու ստիպուած գերիներ: Ուստի մօրն զիջողութիւններն ալ բանի տեղ չէր սեպեր, որովհետև կը համարէր թէ նորա պարտքն էր իւր ամեն քըմահաճութեանցն հպատակիլ: Աւելի մեծ դըժբաղդութիւնն այս եղած էր՝ որ մայրն զինքն մատաղ մանկութեան ժամանակ աշխարհային ընկերութեանց մէջ մտցնելով, այն ընկերութեանց մէջ տեսել ու հաւնել էր Ֆորթոնի պէս մարդու մի, որ արտաքուստ հրապուրիչ ձևերու տակ՝ անհաւատ, անխրատ և անպատիւ հոգի մի կը պարտկէր: Այս մարդս Եմիլին սուտ գովեստներ և շողոքորթութիւններ առնելով, և անձնասէր հպարտութիւնն փայփայելով՝ նորա վրայ այնպէս ազդել էր՝ որ երբ իւր հօրմէն խնդրեց զնա իրեն կին առնլու համար՝ առաջուց ապահով էր որ Եմիլին իրեն ծնողաց դիմադրութեանց ալ ունկնդիր պիտի չլինէր. որովհետև ինքն ալ գիտէր թէ նորա ազգականքն իւր վրայ մեծ համարում մի չունէին, և Որմըզանի հրամանատարին անյողդողդ արդարասիրութիւնն ալ իրեն ծանօթ էր: Իսկ այլքան

հօրն մարքէզին համար շատ փոյթ չէր աներ, որովհետև գիտէր թէ այս տկար մարդն իւր կնոջ ուզածին դիմադրելու չէր համարձակեր: Ուստի սոցա ամուսնութիւնն՝ յառաջագոյն գուշակուած պտուղներն յառաջ բերել սկսաւ: Ֆորթոն ԺԸ դարուն մէջ երևցած այն մարդիկներէն էր որ իմաստասիրի գեղեցիկ անուան տակ ծածկուելով՝ ամեն բան ոչինչ և մանկութեան ու դաստիարակութեան նախապաշարմունք կը համարէին. որով յետոյ ջանացին ուրիշներու սրտէն ալ բոլոր կրօնից սկզբունքն քանդելու, և տեղն ցաւալի սկեպտականութիւն կամ տարակոյս մի անկելու, ուստի առաջ եկն կրօնական անխտրութիւն, և անտի ալ անհաւատութիւն: Սակայն Ֆորթոն և ոչ իսկ մէկ սկըզբան տէր լինելու ջանք ունէր, այլ մերթ աստուածեան մերթ նիւթապաշտ կամ անաստուած լինելով՝ հաստատուն կարծիք մի չունէր. այլ անաստուածին հետ անաստուած կը ձևանար, նիւթապաշտին և աստուածեանին հետ աստուածեան, և այս բանիս համար բաւական էր բանի մի չհաւատալ՝ անհաւատութեամբ պարծեցողաց հետ զուգաձայն գտանելու համար:

Եմիլին ալ ամենևին իր կրից դէմ մաքառելու վարժած չլինելով՝ կամակորութեամբ կընդունէր այս վարդապետութիւններս՝ որ միանգամայն կազատէին զինքն այն լուծէն՝ զոր կրօնք միայն կրնային դնել իւր չար հակամիտութեանցն: Ֆորթոն իւր կնոջ նախապաշարմանց դէմ վարպետ հնարք բանեցնելով անզգալի կերպով զինքն այն կէտին հասուցած էր որ իւր վարմանց կանոն միայն անձնական շահն կը սեպէր. և կը հաւատար թէ արդարութիւնն ու

անիրաւութիւնն, առաքինութիւնն և ախտ, չարն ու բարին՝ գաղափարական բառեր են միայն և էական իմաստ մի չունին, և իրաց մէջ էական զանազանութիւն մի չկայ, այլ մարդիկ հնարած են զնոսա ուզածնին և չուզածնին բացատրելու համար:

Այժմեան դարուց իմաստասէրք, այսինքն ամեն դասք անհաւատից, կրօնից առաքելութեան դէմ կը բողոքեն. վասն զի կը համարին թէ դարձի բերելու ջանքն՝ խղճի ազատութեան դէմ է. բայց իրենց որ գայ՝ այնպէս չեն մտածեր, և կուզեն որ ամենքն իրենց սկզբունքն ընդունին, և իրենք քան զայլս աւելի այս բանիս եռանդուն քարոզիչներ են: Ֆորթոն ջանացել էր զԱննա ալ իւր իմաստասիրական սկզբանցն համոզել, ուզելով ազատել զնա 'ի նախապաշարմանց և կրօնից նախանձայուզութեան կապերէն, և նորա մատաղ սրտին մէջ բացարձակ անհաւատութիւնն սերմանել, և նախկին հաւատոց տեղ՝ կրից լայնարձակ բարոյականն հաստատել: Սակայն սխալեցաւ իւր խորհրդէն ետ կենալու, և այն կասկածաւոր սէրն զոր առջի բերան Աննայի կը ցուցանէր ատելութեան և վրէժխնդրութեան փոխեցաւ: Այս քաղցրահամբոյր և անփորձ օրիորդն՝ Նորա ճամարտակութիւնն պարապի հանեց, և նորածին բայց ողջամիտ խելքով առաջնորդեալ՝ նորա ապացոյցերն հերքեց ու խայտառակեց: Եւ տեսնելով որ մայրական սիրտն անիրաւաբար զինքն կը մերժէր, կրօնից մէջ կը բնտռէր իւր միակ մխիթարութիւնն. որովհետև իրեն միակ ապաւէն իւր հայրն մնացած էր, բայց նորա իշխանութիւնն ալ տան մէջ ճանչցուած չլինելով՝ աւելի քաղցր ապագայի մի ակնկալու-

թիւն ոչ կարէր ունել: Եւ որովհետև կրօնից մէջ առատ օգնութիւն գտանի ամենայն տեսակ աղետից և վշտաց, ինքն ալ նոքօք այնպէս հագէզինեալ էր՝ որ քաջութեամբ իւր վիճակին ամենայն տհաճութիւններուն ուրախութեամբ կը համբերէր: Յայլմէ կողմանէ քրիստոնէական առաքինութեանց գործադրութեամբն՝ իւր միտքն մաքրուած լինելով, շատ լաւ համոզուած էր որ երկրիս վրայ երջանկութիւնն առաքինութեանց կատարմամբն լինի, ուստի Ֆորթոնն ալ՝ որ իւր հաւատոց հետ կը պատերազմէր, իրեն թշնամի կը համարէր՝ որ կուզէր զինքն իւր ամենէն թանկագին բարիքէն զրկել: Խեղճն չէր գուշակեր թէ օր պիտի գար որ յոյժ աւելի ծանր յանցանքներ պիտի լսէր այն անօրէն մարդուն վրայ:

ԳԼՈՒԽ Բ.

Քաղաքական անցք:

Սակայն քաղաքական անցք հսկայաքայլ կը յառաջէին. սահմանադրական ժողովքն՝ զոր աւելի եւս եղծիչ ժողովք կոչել արժան է, որովհետև իր մի չկարգադրելէն զատ այլ և ամենայն ինչ աւրել աւրշտկել էր, շատ անկարգութեանց նիւթ թողուց իրմէ ետև եկող Օրէնսդրական ժողովոյն. Թագաւորական գահն ու Աստուծոյ սեղանն քայքայած, Թագաւորն իւր անձեռնամերձ ազատութենէն զրկուած որ մինչև այն ատեն իւր միակ ապահովութիւնն եղած

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
-ССР
им. А. М

էր, և արևմտեան գաւառներն կատարեալ ապստամբութեան վիճակի մէջ ինկած։

Ալ միանգամ մղում տրուած էր, և ինքնասաց Նորոգողք քաղաքական կարգաց՝ պիտի եւ չըդառնային մինչև որ բոլոր չարեաց ասպարէզն չհատանէին չանցնէին, զոր անսանձ հպարտութիւնն նոցա առջև բացած էր՝ ժողովրդեան օգտի սուտ անուամբն պատրուակեալ՝ որ այն ատենի ոճով հայրենասիրութիւն և ազատասիրութիւն կը կոչուէր։ Արդէն Թագաւորազուն իշխանք օտար երկիրներ գաղթած էին, և բազումք յազնուականաց ալ նոցա ետևէն գնացած էին. առջիններուն ստացուածքն տէրութեան գրաւուեցան. իսկ վերջիններուն ալ հրաման գնաց որ յունուարի 1էն (1792) յառաջ Փրանկիա դառնան, ապա թէ ոչ այս ժամանակակէտս անցնելուն՝ մահուան վճիռ տըրուած էր իրենց համար՝ որում նաև բռնի հաւանութիւն տուած էր տկարն Լուդովիկոս։

Տ. ալ Սէնթ-Անժ կը սարսափէր այս խռովարար սկզբանց և օրինաց շուտ շուտ յառաջելն տեսնելով, և կարծէր թէ իւր պարտքն է Թագաւորազուն իշխանաց մօտ գտնուիլ, ինչպէս որ կը համարէին նաև միապետութեան կողմն եղած մարդիկներէն շատերն. մանաւանդ որ կը լսուէր ալ թէ այն իշխանազունք պատրաստուած էին զինու զօրութեամբ Փրանկիա մանել արքայական աթոռն նորէն հաստատելու, կըրօնքն վերականգնելու և պայծառացնելու՝ և աշխարհին խաղաղութիւն և անդորրութիւն տալու համար։

Մարքիզուհին ալ պատրաստ էր իւր այն ետևէն երթալու՝ ոչ թէ ինքզինքն նորա համար նուիրելու փափաքէն՝ այլ մայրաքաղքին մէջ

մնալու վախէն, որ շատ գաղթողաց ալ հեռանալուն այս պատճառ եղած էր. և յիրաւի վախնալու ալ իրաւունք ունէին՝ երբ կը տեսնէին որ սինլքոր ժողովուրդ տանց և կրպակաց վրայ յարձակելով՝ իրենց կասկածաւոր նշանակուած անձինքն կը ջարդէին և նոցա արիւնաշաղախ մարմինն փողոցներուն մէջ կը պտըտցընէին. ուստի Տիկին Սէնթ-Անժ ալ որ անձնասիրութեան կողմանէ իւր մեծ աղջկէն վար չէր մնար, ամիսներէ 'ի վեր այս սրտադողին մէջ լինելով և իւր կենաց համար ալ վախնալով՝ շատ գոհ էր այս խռովութեան ու ապստամբութեան բորբոքեալ կեդրոնէն հեռանալու, և ուրիշ երկիր երթալով աւելի հանգիստ շունչ առնելու։

Իսկ Ֆորթոն, ոչ միայն դէմ չէր դներ որ իւր կնոջ ծնողքն հեռանան և օտար երկիր գաղթին, այլ և նոցա երկիւղն աւելի կը սաստկացնէր, և յորդորելու համար՝ ասէր թէ քանի մի ամիս միայն պիտի տևէր իրենց աքսորն. « Ահա, ասէր, տէրութիւնք պատերազմի կը պատրաստուին ու իրարու հետ դաշնակցելով՝ շատ զօրքով Փրանկիոյ վրայ պիտի յարձակին. նոյնպէս Փրանկիայէն ելլողներն ալ Գօնտէներու ու Միրապօներու դրօշակներուն ներքև կը միանան ու պատերազմի նշանն տրուելուն կը սպասեն։ Իսկ ընդ հակառակն խռովարարք զանազան կողմնակցութեանց բաժնուած զիրար կը ջարդեն, ու ոչ զէնք ունին ոչ պաշար և ոչ ստակ. և ամենայն ինչ անկարգութեան մէջ է. ուստի իշխանաց յարձակումն արագ յաղթութեամբ մի պիտի աւարտի։

Միայն հրամանատարն դէմ կը դնէր մարքէզին խորհրդոց՝ իւր եղբօրորդւոյն վախերուն և Ֆորթոնի նենգամիտ յորդորանացն։ Ինքն կը

համարէր թէ Թագաւորին մտերմաց օտար երկիր գաղթելն՝ ռամկավարաց յանդգնութիւնն աւելի կը սաստկացնէր. Թագաւորական աթոռն, ասէր, առանց պաշտպանի մնալով խռովութեան փոթորկին պիտի չկարէ դիմանալ. և եթէ ամեն բարեկամք զինքն թողուն ու փախչին՝ Թագաւորն ինչպէս պիտի վանէ իրեն դէմ եղած յարձակումն: Եթէ բոլոր Թագաւորականք օտար երկիրներ գաղթելու և օտարաց օգնութիւնն խնդրելու տեղ՝ գային իրենց Թագաւորին չորս դին բոլորէին պատնիշի մը պէս և իւր գաւազանն նորէն ձեռք առնլու համար նմա օգնէին՝ այս աւուր օրս ռամկավարներն ժողովոց մէջ բազմած չէինք տեսներ, և իրենց երկաթի լուծն ազգին վրայ դրած՝ դժբաղդ Թագաւորի մը կենաց չէին կարող սպառնալ, զոր վերջապէս օր պիտի գայ որ արիւնաթաթաւ իւր գահէն վար պիտի ընկենուն: — Երանի՜ թէ ասացածս սխալ լինէր, բայց վախեմ որ գուշակածէս շատ աւելի սարսափելի բաներ պիտի տեսնեմք: Մի՛թէ մոռցա՞ք, բարեկամ, այն յունիսի 20ին չարագոյժ օրն՝ երբ Փարիզու ռամիկն ամեն դաս սինլքորաց հաւաքեալ՝ արքային ապարանքն կոխեցին և ստիպեցին զինքն որ այն անարգ կարմիր գդակն գլուխն դնէ, որով կը ցուցանէին թէ անիշխանութիւնն Թագաւորական աւերակաց վրայ պիտի կանգնէր: Չէ՞ք գիտեր որ ամեն օր ժողովարանին մէջ սարսափելի խռովարար ձայներ կը լսուին՝ Թագաւորին դէմ բողոքելով իբր թէ ազգն կը մատնէ, և կուզեն զինքն գահէն վար առնուլ ու դատաստանի մատնել, և ամենէն արդար Թագաւորն բռնաւորի տեղ կը դնեն: Մի՛թէ անգիտնալ չասէ՞ք այն խաժամուժ ամբոխն որ

Մարսիլեան սարսափեցնելէն ետև՝ եկն ու Փարիզ մտաւ աւարելու կործանելու և արիւնլուայ առնելու համար: Չկարդացի՞ք նոցա դրօշակացն վրայ՝ այս ահռելի խօսքերս կամ ազատութիւն ու կամ մահ: Ի՞նչ ասեմ այն խռովարար յանձնաժողովին վրայ որ ամեն երեկոյ կը ժողովի զժողովուրդն միացնելու պատրուակաւ, և այն ժողովակաց վրայ՝ որ յայտնապէս միապետութեան դէմ կը դաւադրեն, և Թիւլէրիի վրայ յարձակելու հնարք կը մտածեն, և սպանութիւններ կը խորհին՝ որոց մտածութիւնն միայն զիս կը սարսափեցնէ:

Սէնթ-Անժ՝ հրամանատարին ամեն ասացածներուն իրաւունք տալով՝ պատասխանեց. Ուրեմն ինչ առնելու է. կը տեսնէք որ Փրանկլից ազնուականք Թագաւորազանց օրինակին հետևելով՝ խմբովին Հռենոսի կողմն կը վազեն, և ամեն Թագաւորականաց բերնէն ուրիշ բան չլսուիր բայց եթէ՝ Քոպլէնց Քոպլէնց երթալու է խօսքերն. կարծես թէ բոլոր Փրանկլից պատիւնն հոն ապաւինել է:

— « Բարեկամ, ասաց հրամանատարն, անխոհեմ բաղմութեան խօսքին ինչ կը հաւտաս. հաւատա ինձ, երբ խռովարարաց ուժէն Թագաւորական գահն կը տատանի՝ նորա պաշտպաններուն ուր ժողովելիք տեղն արդէն որոշուած է. կարծէք թէ հեռանալո՞վ զայն պիտի կարողանաք պաշտպանել: Ես իմ միտքս որոշած եմ. արքային բոլորտիքն մեծամեծ վտանգներ պաշարած են՝ կուզեմ իրեն մասնակից լինել. եթէ ամենքն ալ ինձ հետևէին՝ խռովարարք 'ի վաղուց կը յաղթուէին »:

Երկու երեք օրերէ 'ի վեր ձայն մի կը հռչակէր, թէ արքայն նորէն փորձ մի փորձել և ու-

վեր է փախստեամբ ճողոպրելու հայրենաւէրաց ձեռքէն, որ ուրիշ բան չէր բայց եթէ խռովութեան պատրուակ մի. ուստի քաղքին շահապին ձեռքովը ազգային պահապանաց գունդն Քարուսէլի և Թիւլեէրիի անցքերն բռնեցին: Թագաւորին մտերիմ բարեկամներն իմաց տալով իրեն եղածն՝ նա ալ ուզել էր այս մերձաւոր վտանգին առաջքն առնուլ, և որովհետև արդէն ստիպուած էր իւր Թիկնապահ զօրքն ցրրուելու՝ ուստի ծածուկ լուր գնաց այն ամեն մարդկանց որոց հաւատարմութեան վրայ վըստահ էր՝ որ գան պալատն ժողովին. ուստի աւգոստոսի 9ին օրն ու հետևեալ գիշերն հոն ժողովեցան գրեթէ երկու հազար ազգային պահապան զօրք, ինն հարիւրի չափ հելուետիացիք և չորս հարիւր ազնուականք, այս վերջիններուս մէջն էին նաև մարքէզն ու հրամանատարն: Մայեի ծեր մարաջախտն՝ որում յանձնել էր արքայն արքունեաց պաշտպանութիւնն՝ զնոսա ընկալաւ և ասաց. «Տեարք, ես ալ ձեզ կը սպասէի, գիտէք որ վտանգի օրն՝ արքայն իւր բարեկամներն պիտի գտանէ». և յետոյ իւր բոլորն եղածներուն դառնալով ասաց. «Ոչ միայն Լուդովիկոսի և նորա գերդաստանին համար պիտի պատերազմինք՝ այլ միապետութիւնն փըրկելու համար. խռովարարք առհասարակ կը սպառնան սեղանոյն և գահուն դէմ. Աստուծոյ թողունք իւր սեղանոյն պաշտպանութիւնն, իսկ մեք արքայական գահն պաշտպանել ջանամք. երբ ժամանակն հասնի Աստուած կարող է զամբարիշտն եղծանել և մի շնչով նորա խորհուրդներն ցրուել. իսկ մեզ համար ժամանակն հասած է. ծանր է աշխատութիւննիս, բայց դատերնիս արդար է, և Աստուած զայն պիտի

պաշտպանէ»: Ծերունին այս խօսքերով կուզէր յոյս տալ ուրիշներուն՝ զոր ինքն չունէր. որովհետև շատ կասկածէր արքային վախկոտութենէն, կիսկատար հրամաններէն, սրտին բարութենէն, արիւն թափելու վախէն՝ որով չէր թողուր որ արդարութիւնն անգամ կատարուի, և նոյն իսկ օրինաւոր պաշտպանութիւնն կարգելուր: Սակայն այս ամեն վշտալից խորհրդածութիւններով հանդերձ՝ միտքն դրել էր իր կենաց մնացորդն՝ զոր հասակն ու պատերազմունք խնայել էին, արքային համար նուիրելու:

Առաւօտեան ժամն հինգին Լուդովիկոս իւր ապարանքէն վար իջաւ, ազգային պահապան զօրքն ու հելուետիացիներն աչքէ անցնելու համար. և ամենքն միաձայն կեցցէներով իր գալուստն բարևեցին, և իրենց յարգանօք լի անձնանուիրումն ցուցին. որով արքայն գոհութեամբ դարձաւ թագուհւոյն քով՝ իւր վստահութիւնն նմա հաղորդելու համար: Նաև ստիպեցաւ յորդորելու զազնուականս՝ որ իրենց եռանդն չափաւորեն, որպէս զի ազգային պահապան զօրաց կասկածելի չլինին. Թագուհին ալ թագաւորին վստահութենէն ու սրտոտութենէն խաբուելով՝ յուսով կը պարարէր: Բայց բարիք մի չկայ՝ որ 'ի մէնջ չխուսափէ, և կորսուած սուտ պատրանաց տեղ՝ հոգւոյ դառնութիւն մի չաւիրէ. շատ հեղ գեղեցիկ արշալուսով սկսած օրն փոթորկով կը վերջանայ. և շատ անգամ երեկոյեան արտասուք՝ առաւօտեան զուարթ դէմքն կողողեն: Ո՛վ չգիտէ աւգոստոսի 10ին չարագոյժ օրն յորում թագաւորութիւնն կործանեցաւ. մեք չեմք ուզեր այն աւուր ահռելի անցից մանրամասն նկարագիրն

առնելով՝ սրտաճմլիկ ցաւերն նորոգել, և պատմութեան կը թողումք վրէժխնդիր լինելու այն Թագաւորին յիշատակին՝ որ առ ապերախտ ժողովուրդն ցուցած սիրոյն զոհ եղև, և անկեղծաբար կը ցաւիմք որ փոխանակ իւր բոլորն եղած հաւատարիմ ծառայից ինքզինքը վստահելու՝ անըմբռնելի մեծանձնութեամբ իւր Թշնամեաց ձեռքը մատնեց զինքն, որ եթէ սակաւ մի ևս հաստատութիւն ունեցած լինէր՝ այս աւուր օրս Փրանկիա անարատ կը լինէր այն սարսափելի ոճրագործութեննէն: Յիրաւի իւր հաւատարիմ ծառայք շատ դէմ դրին այս խորհրդիս, ինչպէս նաև Թագուհին ալ շատ աղաչեց պաղատեց՝ անցեալ ոճիրներէ ահռելի ապագայն գուշակելով, սակայն ճար չեղև, և մի մարդու խորհրդով արքայն այն չարագուշակ որոշողութիւնն արար՝ անձամբ երթալու և ազգային խորհրդարանին ներկայանալու. այս խորհրդատուողն, որ էր կոմսն Թէտըրբէի, որչափ ալ ինք զինքն արդարացնելու համար ջատագովութիւններ հրատարակեց և հրատարակել տուաւ՝ ապագայից առջև պիտի չարդարանայ:

Երբ խռովարարք կատաղի ուրախութեամբ կընդունէին՝ իրենց հարուածոց անձնամատոյց զոհն՝ անգին արքունեաց պահապանք՝ ուր միայն հելուետացիք մնացել էին, մարսիլիացւոց և սինլքոր ժողովրդեան յարձակման դէմ կը կռուէին. և այն վայրենի ջոկատն՝ որչափ որ առաջ կատաղութեամբ յարձակել էին Թագաւորական ապարանից վրայ՝ նոյնչափ ալ յետոյ վատութեամբ փախչող փախչողի եղեն: Եղածներուն գոյժն ամէն կողմ տարածուելով՝ մինչև խորհրդարանն հասաւ, և գաւաճանք սարսափած կը դողային՝ իրենց ձեռքն դերի մատ-

նուած Թագաւորին հայեցուածքէն: Վերջապէս բռնադատեցին զԼուդովիկոս որ հրաման տայ կրակն դադրեցնելու, որ ուրիշ բան չէր բայց եթէ ստիպել իր վերջին պաշտպաններն զինաթափ լինելու և թողլու որ ժողովուրդն զիրենք անխնայ ջարդէ՝ առանց դիմադրութեան. այս բանիս ալ հնազանդեցան. և այն ազնուականք և ազգային պահապանք որ արքունիքն պաշտպանելու ժողոված էին՝ կեանքերնին զոհելու պատրաստ, տեսնելով որ Թագաւորն և իւր գերդաստան մեկնեցան գնացին՝ և իրենց անձնանուիրութիւն ալ այլ անօգուտ էր, և հայրենիքէն դուրս քշուելու պատճառ պիտի լինէր, ամէնքն ալ գղեակն թողուցին և զիրենք ազատելու ճարն կը նայէին: Նոյն իսկ Մայեք ալ տեսնելով որ այլ արքայն ազատելու յոյս չմնաց՝ սիկարեանց դաշոյններէն ինքզինքը ճողոպրելու կը ջանար: Ուստի հրամանատարին, Սէնթ-Անժի և Բոմարի հետ ապարանից վերին յարկն ելին և անձրևի պէս թափած գնդակներու մէջէն անցնելով՝ Թագուհւոյ սանդուխէն վար իջան յուսալով որ կարող լինին Բոն-Բուայալի կամուրջն ելնել. և այն չարագուշակ դուռն հասնելնուն պէս՝ աւազակներն ծանեան զնոսա կամ գուշակեցին:

Հոն սարսափելի աղաղակ մի բրդաւ, մահ մահ կը պոռային ամէնքն, սուրերն ու նիզակներն շողացնելով, և Բոմար ու հրամանատարն վիրալից հոն տեղն անկան, և նոցա դեռ դողդոջուն մարմիններն պատառ պատառ առնելով՝ նիզակներու ծայրն անցուցած քաղքին մէջ կը շրջեցընէին՝ արիւնլուայ դրօշակներու պէս: Բայց նախախնամութիւնն Մայեքի կենաց վրայ կը հըսկէր. վասն զի սրիկայք այս անգէն ծերունին

տեսնելով՝ շուարած մնացին, և առաքինութեան անդիմադարձ զօրութիւնն՝ զնոսա նուաճեց։ Նոյն միջոցին անծանօթ մարդ մի յառաջ էանց, քաշեց մէկ դի էառ ութսնամեայ զօրականն Սէնթ-Անժի հետ միատեղ, ժողովրդեան ասելով թէ զնոսա ժողովակին առջևն պիտի տանի. ուստի այն կատղած ամբոխին սակաւ մի ետ քաշուելով նեղ ու վտանգալից անցք մի բացաւ որ անցնին։

Մայէք անբաւ դժուարութեամբ հասաւ իւր տունն. բայց սակաւ մի յետոյ անանուն ամբաստանութեամբ՝ Արրասի խռովարար ատեանին առջև հանեցին զինքն, և կառափնատեղւոյն վերայ վերջացաւ իւր կեանքն՝ իւր փառքն պահելով. վասն զի խռովարարաց սուրն հաւատարմութեան պատիւն կաւելցնէ, որպէս մարտիրոսութեան պսակն հաւատոյ խոստովանող սուրբերն կը փառաւորէ։ Իսկ Սէնթ-Անժ՝ ծերունի մարաջախտն պաշտպանող անծանօթ ձեռքէն պաշտպանեալ՝ Թիւլէրիի արիւնաղանգ դռնէն դուրս ելաւ, և անտի Սէն գետոյն եզերքն իջնելով՝ հոն տեղ եղած կոտրտած նաւերու նաւակներու կոյտին մէջ պահուըտեցաւ, և երբ ամէն ձայն և աղմուկ դադրեցաւ՝ կարծելով թէ արիւնայք ուրիշ կողմ յարձակել են՝ յուշիկ յուշիկ գետեզերքէն անցաւ ինչուան Լուդովիկոս ԺԵի կամուրջն և անկէց գետոյն միւս կողմն անցաւ՝ առանց ճանչցուելու։ — Բայց գետոյն ձախակողմն նորանոր վտանգներ իր առջևն ելին. վասն զի երբ Պուրպոնեան ապարանից մօտ էր՝ վայրենի դունդերու բազմութենէն պաշարուեցաւ՝ որ զինքն տեսնելով սկսան պոռչտալ. Գետն նետեցէք, կ'ասէին ոմանք. ոչ'ի կախաղան կը պատասխանէին այլք. ուրիշներն ալ բանտ

տարէք կը գոչէին։ Հոն սարսափելի կերպարանօք մարդ մի առաջ անցաւ «Այո, բանտ». ասաց։ Մարքէզն երեսն նայելով տեսաւ որ Թիւլէրիի դուռն հանդիպած մարդն էր՝ որ նորա թևերէն ուժով բռնեց և զնա գրկած՝ առջևն ելած ամբոխին մէջ մտուց ու քաշելով կը տանէր։ Մարքէզն կարծեց թէ մէկ իր վերջին ժամն հասած է, ուստի առջի շարժումն ինքզինքն Աստուծոյ գթութեան յանձնելն եղև, իսկ երկրորդն բնական ազդեցութիւն մի իր կեանքն պաշտպանելու. բայց այն անծանօթ մարդուն ջղոտ բազուկքը իւր ջանիցն յաղթեցին. և ռամիկն այս անհաւասար կռւուն տեսնելով՝ այն արիւնային խօսքերուն վրայ կը ծիծաղէր, երբ նա ասէր «Դուն ազնուական ձեռքէս չես կարող ազատիլ». և երբ երկու երեք հոգի կուզէին նմա օգնել՝ զնոսա ետ հրելով ասաց. «Գնացէք բանէրնուդ, սորա պէս չորս հոգի ալ թէ լինի՝ մինակ կրնամ տանիլ»։ Իսկ մարքէզն բանտի անունն լսելով՝ որ իրեն համար մահուան վճիռ էր՝ դեռ կը ջանար նորա ձեռքէն ազատելու. ինչպէս տկար թռչնիկ մի որ անգղի մագիլներուն մատնուած կը մաքառի. եթէ սուր մի ունէր՝ աւելի սարսափելի թշնամւոյ հետ ալ քաջութեամբ ու ճարպկութեամբ կարող էր պատերազմիլ. բայց եկ տես որ զէնք մի չունէր, և միայն իւր ուժին վստահացած, և նոյն աւուր անցքերէն ալ սարսափած որ աչքին առջին կուգային՝ բնական ազդեցութեամբ իւր կեանքն պաշտպանելու կը ջանար, թէպէտ և ազատելու յոյս մի չունէր։ Եւ երբ տանողն զինքն նեղ ու մութ անցքի մէջ հրեց՝ որուն ծայրն երկու հոգի կեցած կը կանչէին՝ Ահաւասիկ եկն. ալ ինքզինքը բոլորովին մեռած կարծէր. այն տանն էր.

ան կողմէն ալ անծանօթ ձայն մի լսուեցաւ որ ասեր. «Լաւ նայեցէք՝ ձեզմէ պիտի պահանջեմ այդ մարդը»: — Իսկ մարքեզին սրտանց հառաչելով ասեր. «Աստուած իմ կեանքս առ, բայց գերդաստանիս խնայէ. քու գթութեանդ ճառագայթն շողացո՛ Աննայիս վրայ. լուր Աստուած իմ թշուառ հօր մի վերջին աղաչանացն». այս համառօտ աղօթքէս ետև՝ աւելի զօրացաւ. կարծես թէ յուսոյ նշոյլ մի իր սիրտն կիջանէր, ոչ իրեն՝ այլ սիրելի աղջկանն համար, որ այս ատենս կարգէ դուրս տագնապի մէջ էր: Իսկ մայրն այս տագնապողական ժամերու մէջ ևս՝ իր ցուրտ հպարտութիւնն ձեռքէ չթողլով՝ ինքն իրեն անարժան բան կը սեպէր իր որդւոյն հետ ողբալու, և զանիկայ քովէն կը վռնտէր: Ուստի խեղճ աղջիկն ստիպած իւր ցաւերն իր սրտին մէջ թաղելու և հօրն կենաց վրայ կասկածելով, և մօրն սիրտն ալ կակղցնելէն յուսահատեալ՝ իւր սենեակն քաշուեցաւ. որպէս զի իւր քեռայրն ալ չտեսնէ՝ որոյ աչաց մէջ միշտ կասկածաւոր խորհուրդ մի նշմարած էր, նոյնպէս իր քրոջ վրայ ալ արհամարհական հայեցուած մի կը նկատէր, և իրմէ դուրս եղած բաներուն վրայ ցուրտ անզգայութիւն մի կը տեսնէր. ծերունի սպասաւորի մի բերած ձախող լուրերն ալ զինքն աւելի կը խոցոտէին ու կը տագնապէին: Ուստի աչքերն արտասուօք լի և սիրտն խոցոտեալ անկաւ խաչելութեան առջևն՝ որուն դիմացն առտու և երեկոյ կ՚աղօթէր. և որտանց հառաչանօք կը պաղատէր իւր հօրն և մեծ հօրեղբօրն համար՝ որոյ սարսափելի մահն դեռ լսած չէր: Իսկ երբ եղածն իմացաւ՝ յանկարծակի աչաց արցունքն ցամքեցան, և սարսափելի կսկիծ մի իւր երակաց արիւնն պաղե-

ցուց, շունչն կտրեցաւ, և կեցած տեղէն չէր կարող շարժիլ. վերջապէս բունի հառաչանքով մի գոչեց. «Հապա հա՞յրս»:

— Հայրդ՝ առաւօտէ 'ի վեր մէջ տեղ չէ, պատասխանեց ծերունի սպասաւորն լալով. ոչ ոք տեսեր է զինքն, բայց իւր մարմինն չգտնուելուն համար՝ կը յուսացուի որ...

— Ա՜հ, ուրեմն դեռ կենդանի է հայրս. երթամ բնտռեմ գտնեմ զինքն. ողորմած գթած Աստուած, անշուշտ ողջ պիտի շնորհէ զինքն իր զաւկին:

— Ի՞նչ ասէք, օրիորդ. չէ՞ք գիտեր որ մարդասպաններն խումբ խումբ փողոցներն կը պտըտին, ու ամեն տեղ կատաղութեամբ մահ կը սպառնան:

— Հոգ չէ. պիտի երթամ, Աստուած ինձ ճամբայ կը ցուցանէ: Այս ասելով՝ սենեակէն դուրս ելաւ, և դէպ 'ի մօրն սենեակն սկսաւ երթալ:

— Ո՞ւր կը վազես, աղջիկ, ասաց մայրն զինքն տեսնելուն:

— Ա՜հ, տիկին. արդեօք հօրս վրայ լուր մի ունի՞ք. Տիպուան ինձ ասաց թէ ինչ եղած է չգիտցուիր. ներեցէք որ երթամ զինքն բնտռեմ. Աստուած ինձ կառաջնորդէ. թերևս զինքն ազատեմ:

— Լալուդ համար բան մի չեմ զլացեր, իրաւացի են արտասուքդ. բայց միտքդ դրածդ տղայութիւն է: Արդէն ես մարդ ղրկեցի այդ բանիդ համար. և Տ. Ֆորթոն քան զքեզ աւելի լաւ կարէ գլուխ հանել այդ ատացածդ:

Աննա սիրտն ճմլած իր սենեակն դարձաւ. երբ Ֆորթոնի անունն լսեց՝ այնպիսի դող մի եկաւ իր վրայ՝ որ ինչ ընելն չէր գիտեր. Ֆոր-

Թոնի ցուրտ մարդավարութիւնն՝ սուտ և չին-ծու բան մի կերևէր իւր աչքին, և իւր սէրն՝ սրտանց չէր. և նորա մշտածիծաղ երեսաց վրայ՝ բարեսրտութեան պարզութիւն չէր նշմարուեր. և թէպէտ դեռ չէր կարող որոշել այն մարդուն դիմաց վրայ երևցած կեղծ բարեսիրութիւնն ու անձնասիրութիւնն՝ սակայն իրեն կերևէր թէ բնական չէին:

Ցուրթոն Ժաքոպէններու գաղտնի խորհրդոց խորհրդակից լինելով՝ նոցա միապետութեան դէմ ունեցած թշնամական խորհրդոցն տեղեկացել էր. և նախընթաց երեկոյն իւր աներոջ տունն երթալով՝ նմա իմացուցել էր թէ երկրորդ օրն արքունեաց վրայ յարձակելու խորհուրդ կար, և նմա խրատ տուել էր որ անով տեղով իւր գեղի ամարանոցն երթայ, որ Փարիզէն 30-40 ասպարէզ (հազարամետր) հեռի էր: Կերևի թէ առջի բերան մտքն դրած էր որ իւր աներն այն վտանգէն ազատէ. բայց երբ տեսաւ որ նա մտքն հաստատ դրած է Թիւլերի երթալ՝ լինելիքէն իրեն օգուտ մի քաղել կը ջանար: Հրամանատարին մեռնելուն լուրն ալ շուտով իմացել էր, և շատերն ալ առէին թէ սիկարեանց ձեռքն սուր տուողն ալ ինքն եղած էր: Եւ երբ կէս օր ատեն Նորէն մարքեզին տունն եկաւ, շատ ցաւ կը ձևացընէր իւր կնոջ մեծ հօրեղբօր հանդիպածին վրայ. նաև մարքեզին վրայ ալ շատ սիրտհատնում կը ցուցանէր, թէպէտ և գիտէր թէ նորա կենաց վտանգ մի չկար. վերջապէս ել և գնաց՝ ասելով թէ ամէն ջանք պիտի թափէ ստոյգ լուր մի առնելու համար:

ԳԼՈՒԽ Գ.

Ակամայ ուղևորութիւն:

Ինչպէս որ տեսաք՝ մարքեզն փոքրիկ տուն մի տարել էին՝ ուր մտնելուն պէս դող ու սարսափ մի եկն իր վրայ, մտքն դնելով որ անշուշտ հոնտեղ զինքն պիտի սպաննէին. բայց այս վախն սակաւ մի յետոյ փարատեցաւ, և ստուգապէս իմացաւ որ իր կենաց խնայել ուզեր էին. վասն զի այն անծանօթ մարդն որ զինքն հոն բերել էր՝ ասաց՝ Ա՛լ սիրտ առ՝ ազատեցար, բայց մազ մնաց բանդ բուսած էր. սակայն հիմա պէտք է որ ասկէ ելնես. քու կեանքդ Փարիզու մէջ ապահով չէ. քու վրադ դաւաճանութեան ամբաստանութիւն եղած է, և սակաւ ժամանակէն խռովարարաց ատեանն 'ի քէն համար պիտի պահանջէ:

— Ահ, հաւատա, Տէր, ասաց մարքեզն որ...

— Ի՞նչ է այդ, տէ՛ր, տէ՛ր. սա ազնուական ասացեալ կրողներն իրենց սովորածէն ետ չեն կարող դառնալ. հոս ամէնքնիս ալ հայրենակից եմք, հասկցա՞ր:

— Հասկցայ, հասկցայ. ա՛լ միւսանգամ չեմ ասեր. սակայն կուզէի գիտել թէ իմ պաշտպանութեանս համար որու՛մ երախտապարտ պիտի լինիմ. ո՞վ է արդեօք այն վեհանձն հայրենակիցն...

— Այդ քեզ հարկաւոր չէ. խաղողն կե՛ր՝ այգին մի հարցաներ: Հիմա տեսնենք դու ի՛նչ պիտի առնես:

— Ի՛նչ գիտեմ. կուզէի միանգամ ընտանիքս,

կինս ու փեսայս տեսնել ու նոցա խորհուրդ հարցունել։

— Այդ ասացածդ անհնարին է, անշուշտ արդէն ոստիկանութեան զինուորներն քու ետեւէդ անկած զքեզ կը բնտռեն։

— Ուրեմն, ես ի՛նչ ընեմ։

— Առանց դանդաղելու Փարիզէն ել։

— Եւ ո՞ւր երթամ։

— Որչափ կարես հեռու՝ որ զքեզ չկարեն բռնել. ուրիշ երկիր ա՛նց։

— Ի՛նչ. օտար երկիր անցնի՞մ. հապա ընտանի՞քս։

— Դոքա ալ թող ետեւէդ գան։

— Անցագիր չունիմ. ճամբայն զիս կը բռնեն։

— Մեք շուտ կը հոգամք ու անցագիր և քաղաքացւոյ թուղթ կուտամք քեզ, բայց մարքէզութիւնդ օդ պիտի ելնէ՝ գիտես ա՛. քու Սէնթ-Անժ անունդ ալ կալուածոց անուն է, այդ բանի չգար. սա քաղաքացւոյ վայել հասարակ աղուորիկ կլորիկ անուն մը չունի՞ս, ինչպէս Թարպէ, Թուման, ալ ի՛նչ գիտեմ սոցա նման բան մը։

— Իմ դերդաստանիս նախկին անունն Թոմա է։

— Հա՛, Թոմա, շատ լաւ. ուրեմն Թոմա քաղաքացի՝ ես հիմա կերթամ քու անցագիրդ կարգի կը դնեմ, և աս երեկոյ գիշերանց քաղքիս պատնէշէն կանցնիմք. յետոյ անցագիրդ ծոցդ երթաս բարով։

Երբ գիշերն կոխեց՝ անծանօթ մարդն կանոնաւոր անցագիր մի բերաւ Սէնթ-Անժ ասացեալ քաղաքացի Թոմայի անուամբ, որ վաճառականութեան գործերով Սըտան քաղաքն կերթար, ու ներս մտածին պէս « Հա՛պա, շուտ արա՛ երթանք, ասաց, քանի որ ժամանակ է,

փողոցներն մարդ չկայ, բոլոր Փարիզ դէպ 'ի Թամբլի կողմն կը վազէ »։ Մարքէզն ալ առանց անսալու ել, որովհետեւ ժամ մի առաջ ազատիլ կուզէր, և այն ձախաղէմ մարդկանց պաշտպանութենէն ճողոպրիլ։ Միայն անծանօթէն հրաման խնդրեց որ երկու տող գիր գրէ իւր դերդաստանին, և նա ալ խօսք տուաւ որ իրենց ձեռքն կը հասցնէ։ — Այս մարդուս բիրտ խօսուածքէն՝ մարքէզն լաւ իմացել էր որ սա հասարակ մարդ մի էր ուրիշի կամացն սպասաւոր, և ծածուկ ձեռաց գործիք. և իւր անյայտ պաշտպանն ալ իր վաղեմի աշակերտակիցներէն մին կը համարէր, որ տէրութեան դէմ դժգոհութիւն ունենալով՝ խռովարարաց կողմն անցած լինելոց էր և օրէնսդիր ժողովքին գործունեայ անդամներէն մին եղած. բայց իւր այս կարծիքն բոլորովին փոխուեցաւ՝ երբ այս անծանօթ մարդուս առաջնորդութեամբ մանաւանդ թէ ասեմք պահպանութեամբն տնէն դուրս ելնելով երթալու ատեն՝ այն մարդն իրեն ստակ ալ տուաւ իւր ճամբորդութեանն համար, և ասաց թէ քաղքին դրան մօտ պատրաստ կառք մի ալ պիտի գտնէր իրեն համար։ Այս բաներս իր մըտաց մէջ աղօտ լոյս մի ծագեցին՝ թէպէտ և դեռ բոլորովին պայծառ չէր տեսներ. միայն կասկածէր թէ այս եղած զգուշութիւններս ուրիշ բանի համար չէին՝ բայց եթէ զինքն Փարիզէն հեռացնելու համար, և թերեւս իր ստացուածքն յափշտակելու մտքով, որովհետեւ թողած փախած լինելուն համար զանոնք տէրութեան պիտի գրաւէին։ — Բայց որո՞յ վրայ կրնար կասկածիլ. մերթ այս իր կասկածն Ցորթոնի վրայ կը դառնար. բայց մտքէն կը վանտէր ինքզինքը մեղադրելով։ Գիտէր յիրաւի որ Ցորթոն երկայն

ժամանակէ 'ի վեր արքային Թշնամեաց կողմն անցել էր՝ ու նոցա սկզբանցն կը վարուէր, մանաւանդ թէ 'ի նոցանէն այլ աւելի. բայց դեռ այսպիսի ոճրագործութենէ մի շատ հեռի կը համարէր զինք։ Ուրիշ կողմանէ ալ կը մտածէր, թէ ով կարէր լինել իրեն Փարիզէն ելնել ուզողն և անկէ հեռացնելու համար իրեն պէտք եղածն անգամ տուողն, և տակաւին ալ անոր կարօտութիւնն հոգացողն։ Այս ամեն մաքէն անցած կասկածանաց լուծում մի չկարելով տալ՝ միտքն դրաւ որ Սըտան քաղաքն բնակի, և սահմանագլուխն անցնելու տեղ՝ դարձեալ ծածուկ Փարիզու մօտերն դառնայ, ու ընտանեաց վրայ լուր առնու։

Մինչդեռ մարքեզն՝ Թոմա անուամբ ակամայ դէպ 'ի սահմանագլուխն երթալու վրայ էր՝ իւր կինն քանի մի ժամերէ 'ի վեր մեծ անհանգըստութեան ու ցաւոց մէջ կը տագնապէր՝ ալ իր սուտ մեծութիւնն մէկ դի դնելով, որովհետև մինչև այն ատեն միտքն դրած էր՝ որ իրեն պէս բարձր վիճակի մարդիկ պէտք չէր որ իրենցմէ խոնարհ եղողներու վշտերուն վշտանան ու իրենք զիրենք անհանգիստ առնեն։ Ուստի բոլոր գիշերն իր առն դարձին սպասելով՝ տագնապներով անցուցել էր, Ֆորթոնն ալ ամենևին չէր երևցած. նորա կինն ալ յանկարծական անհանգըստութիւն մի պատճառելով՝ իւր մայրն մխիթարելու չէր եկած. ծերունի Տիպուան ալ անօգուտ տեղ բոլոր Փարիզ վազվզելով՝ տխուր լուրեր միայն կը բերէր, և բարի ծառայն յուսահատութեան մէջ ինկած կերևէր. որով մարքիզուհին ալ բոլորովին յուսահատեցաւ, և գառն արտասուք երեսն 'ի վայր սկսան վազել։ Մերթ Աննայի վրայ կը նայէր՝ որ իւր խորին

վշտաց մէջ չէր դադարեր եռանդագին աղօթելէ. մերթ իւր սիրելի դուստրն և փեսայն կը մտածէր՝ որ կարծես թէ ամենէն աւելի մխիթարութեան կարօտ ժամանակն՝ զինքն երեսի վրայ թողել էին. և մերթ սրտին խորէն ձայն մի լսելով թէ ինչ քաղցր բան է մօր մի համար՝ իւր զաւակաց անշահախնդիր սէրն տեսնելն՝ ինքզինքը կը մեղադրէր այն խստութեանց դէմ որ Աննայի պէս բարի զաւկի մի դէմ ցուցել էր, որ հիմա իր հօր համար կ'աղօթէր և զինքն ամեն քաղցր խնամքով կը մխիթարէր։

— Այս մտածութեամբ այնպիսի գութ մի զգաց իր սիրտն՝ որ գրեթէ ակամայ իր բազկաց մէջ առաւ աղջիկն. որ այս մայրենի սիրոյն առաջին նշանն տեսնելով՝ սիրտն ելաւ ու ասաց. «Ահ, տիկին, երանի ինձ»։

— Տիկին. պատասխանեց մարքիզուհին լալով. մի թէ ես քու մայրդ չե՞մ։

— Այո, այո, մայր իմ, մայր բարեգութ՝ որ բոլոր կենացս մէջ ունեցած սիրոյս միաւուր մէջ հատուցումն առնես։ Ո՛հ Աստուած իմ, ասաց աչքն ու ձեռքն դէպ 'ի երկինք վերցնելով, դու ողորմեցար իմ վրաս ու աղաչանքս լսեցիր. շնորհակալ եմ։

Նոյն ատեն Ֆորթոն դրան սեմին վրայ երևցաւ, և իրեն համար այս նոր տեսարանս տեսնելով կանգուն կեցած կը դիտէր՝ իւր աչաց չհաւատալով. Տիկին Սէնթ-Անժ ալ իւր նախկին սովորութենէն յաղթահարեալ և գրեթէ ամաչելով մայրական զգացման վրայ որ իր նախապաշարմանց կը յաղթէր՝ շուտով ինքզինքը ժողվեց և դէմքն խստացուց։ Աննա իւր մօր սրտէն անցածն իմանալով՝ գնաց պատուհանի մի առջին իւր արտասուքն ծածկելու. բայց շատ հեռու չգնաց՝

որպէս զի Ֆօրթօնի ստացածներն լսէ․ որովհետև չէր տարակուսեր որ հօրն վրայ լուրեր բերած պիտի լինէր, և որչափ ալ չէր ախորժեր այն մարդէն՝ բայց մտադիր ականջ կը դնէր խօսածներուն, որ մարքիզուհւոյն մօտենալով՝ ասաց․ «Մինչև ցայժմ պարապ տեղ բնտռեցի, Տիկին, մարքէզին ծածկուած տեղն գտնելու․ ծածկուած տեղն ասեմ, վասն զի տարակոյս չունիմ որ նա ողջ է տակաւին․ ստոյգ տեղէ լսեցի որ երեկ ժամն ութին արևն մարն մտած ատեն՝ Փարիզու հիւսիսակողման դռներէն երեք հոգի դուրս են ելեր․ մին 'ի նոցանէ հոն տեղ պատրաստ գտուած կառք մի հեծնելով շուտով քաղքէն հեռացեր է․ իսկ իրեն հետ եկող միւս երկուքն նորէն Փարիզ մտեր են․ ինձ խօսք տուին որ այս երկու մարդիկն ինչ ալ լինի պիտի գտնեն։ Իսկ հրամանատարին հանդիպած դժբաղդութեան վրայ տարակոյս չկայ․ սակայն կ'երևի թէ առաջուց իր բաներն կարգի դրած է եղեր, և ընդհանուր հրիտակատար մի ալ կարգեր է»։

— Ի՛նչ, ընդհանուր հրիտակատա՛ր, կանչեց մարքիզուհին զարմացմամբ։

— Այո՛, տիկին, պատասխանեց Ֆօրթօն, և շատ յոյսեր պարապի պիտի ելնեն՝ ասաց բարկութենէն խղդուկ և խիստ ձայնով մի․ անշուշտ սակաւ ժամանակէն պիտի լսէք այն երջանիկ անձին անունն որ տարին քառասուն հազար ֆրանք եկամուտի տէր պիտի լինի։ Երբ այս առտու ձեր հօրեղբօր տունն գնացի՝ տեսի որ նոտար մի նստած երկայն բարակ ցուցակ մի կը գրէր տան մէջ եղածներուն․ և կ'երևի թէ այս անսովոր զգուշութիւնս ձեր հաւատարիմ Տիւպուային հնարքն եղած է, որպէս թէ Սէնթ-Անժի մարքիզուհին հանդուցելոյն սանն՝ իւր

հօրեղբօր ստացուածոց ժառանգ լինելու համար՝ նոտարի կարօտութիւն ունէր, որոց վրայ արդէն բնութիւնն անհերքելի իրաւունք տուած է իրեն։ Ուստի շատ երախտապարտ պէտք է լինիք, տիկին, այդ հաւատարիմ Տիւպուային, ասաց՝ ծերունի ծառային անունն շեշտելով։ Եմիլին որ հարցնէք՝ կարծեմ թէ այսօր զձեզ տեսնելու չէ կարող գալ․ խեղճն սարսափէն ու անհանգստութենէն հիւանդացաւ, ասաց վեր 'ի վերոյ կերպով մի, և ձգեց գնաց։

ԳԼՈՒԽ Դ.

Հրիտակ․ — Մարքիզին նկած լուրեր։

Մարքիզուհւոյն շատ մեծ հետաքրքրութեան նիւթ եղև Ֆօրթօնի ասածն, և կը փափաքէր գիտել թէ ո՛վ է արդեօք հրամանատարին հրիտակատարն․ այն կէտն որ զինքը ճօխ ժառանգութենէ մի կը զրկէր՝ շատ ցաւալի բան էր, ուստի միտքն դրաւ որ ասոր վրէժն Տիւպուայէն առնու․ ուստի ուժով մի զանգակին ժապաւէնն քաշեց․ Աննա յառաջ նետուեցաւ որ երթայ Տիւպուան կոչէ, բայց մայրն չեխելով մէկ դի հրեց զինքն․ մայրն ու դուստրն մի և նոյն կասկածի մէջ էին․ Աննա տեսեր էր Ֆօրթօնի իր վրայ նետած խիստ ու սպառնալից հայեցուածն, և նորա արհամարհական ու զայրացած նայուածքէն՝ կը կասկածէր թէ թերևս ինքն է Ֆօրթօնի ասացած երջանիկ անձն․ մարքիզուհին ալ հրամանատարին Աննայի վրայ ունեցած սէրն գիտելով՝ որչափ ալ իւր երկան վըրայ անհանգիստ էր՝ սակայն իր զգացած ցաւոց

մեծագոյն մասն այնպիսի ժառանգութենէ մի զրկուած լինելուն համար էր։ Զանգակն զարնուածին պէս՝ ծառաներն ներս վազեցին։

— Տիւպուան ո՞ւր է, ասաց մարքիզուհին։

— Տիւպուան հոս չէ, տիկին։

— Գալուն պէս թող հոս գայ. չէ՞ք գիտեր ո՞ւր է։

— Այո, տիկին, կարծեմ։

— Շատ լաւ, գնացէք ասացէք որ շուտ գայ։

Ծառաներն դուրս ելին, ու Աննա աղջիկ մօրն հետ մինակ մնաց՝ որ իրեն դառնալով ասաց. լսեցի՞ր, օրիորդ, Ցորթոնի ասածն։

— Այո, տիկին, յուսամ որ Աստուած վեհանձն պաշտպան մի տուած է իմ հօրս։

— Ես ալ նոյնն կը յուսամ. հապա ինչ ասես սա մեծ քեռւոյդ համար, իրեն յառաջագոյն պատրաստած կտակին և թողած ժառանգութեանն վրայ։

— Ի՞նչ կարեմ ասել, տիկին, հազիւ թէ այս ասացած բառերդ կը հասկնամ։

— Մի թէ ինքն քեզ խորհուրդ հարցուցած չէ՞ր։

— Ինձ, տիկի՞ն։

— Նորա միտքն չէ՞իր գիտեր, քեզ բան մի իմացուցած չէ՞ր։

Երբ Աննա պատասխան պիտի տար, Տիւպուա ներս մտաւ։ Տիկինն բարկացած ձայնով մի հրամայեց որ եղածն մանրամասն պատմէ. իսկ սպասաւորն խիղճն բանի մի վրայ չգտնող մարդու մի հանդարտութեամբն՝ շուտով նորա հրամանն կատարեց, ու հաստատ ձայնով մի այսպէս սկըսաւ խօսիլ. « Տիկին, հրամանատարին կամքն հաւատարմութեամբ կատարեցի, և եթէ ինքն ալ գործածիս պէս ինձ ապսպրած չլինէր՝ ուրիշ

ճամբայ չէի կարող բռնել։ Շատ ատենէ 'ի վեր Տէր տ'Որմըսան իմ հաւատարմութեանս վրայ վստահացած՝ ինձ իմացուցել էր որ ինքնագիր կտակ մի ունէր իւր գրասեղանին մէջ պահած. բայց յայսմանէ նաև անոր մի օրինակն ալ ծրարի մէջ կնքած ինձ յանձնել էր ասելով. « Սիրելի Տիւպուաս. այս իմ կտակիս միւս օրինակն է. եթէ մեռնելէս ետև՝ գրասեղանիս միջի օրինակն գողցուի, քեզ յանձնածս մէջ տեղ հանէ » ։ Հիմա այս օրինակս, տիկին, իմ ձեռքս է, բայց անոր կարօտութիւն չկայ՝ որովհետև բնագիրն գտնուեցաւ։ Երեկ երեկոյ ես գնացի հրամանատարին սենեկապանին եղածն իմացնելու. նա ինձ պատասխան տուաւ թէ մարդ մի, որոյ անունն չուզեց տալ, շատ ստակ խոստացել էր նմա՝ գրասեղանին միջի թղթերն աչքէ անցընելու համար։ Ես ալ այս լսելուս պէս խռովեցայ, և շուտով նոտարի մի գնացի. նոտարն ալ հարկաւոր սեպեց այս առաւօտ կանուխ հրամանատարին տունն երթալ և ամեն բան ցանկի առնուլ։ Թղթոց մէջ բաց հրխտակ մ'ալ գտաւ, և որպէս զի այս կարևոր գրոյն գողցուելուն առաջքըն առնու կամ գոնէ գողութիւնն անօգուտ լինի՝ ծայրէ 'ի ծայր նստաւ օրինակեց. և երբ աւարտեց նոյն գրուածքն և ցուցակն՝ բարձր ձայնով ինձ ընթեռնլով՝ այն ատենն միայն իմացայ որ Տ. տ'Որմըսան ունեցածն չունեցածն Օրիորդ Աննային թողել էր » ։

Երբ Տիկին Սէնթ-Անժ իւր կրտսեր աղջկան անունն լսեց՝ իր կրից պլպլութիւնն չկարաց զսպել. իսկ Աննա շատ վշտացեալ կերևէր։ Տիւպուա ալ իւր տիկնոջ ուզածէն աւելի խորագէտ լինելով՝ լաւ հասկցաւ խռովելուն պատճառն, և որովհետև նորա գոռոզ ամբարտաւա-

նութիւնն լաւ գիտէր՝ իւր գործն արդարացնելու համար բան մի չասաց՝ որ արդէն արդարանալու ալ կարօտ չէր, և Տիկնոջ ծանր ձևով մի հրամայելովը դուրս ելաւ։ Յայնժամ սա դառնալով իւր աղջկանն խստութեամբ ասաց. «Տակաւին կը համարձակիս, Օրիորդ, պնդելու թէ հրամանատարին միտքն չէիր գիտեր, և թէ ծածկած էր 'ի քէն իր խորհուրդն՝ իւր օրինաւոր ժառանգներին զրկելու, դու որ նորա միակ սիրականն էիր։

— Մայր իմ... Տիկին, պատասխանեց Աննա լալով, Ճշմարիտ Աստուած որ այդ աստացածներէդ բան մ'ալ չէի գիտեր. հաւատա ինձ որ արդ եղածներն ոչ կուզէի և ոչ ալ կը փափաքէի որ լինէին։ Ա՜հ եթէ սիրտս գիտէիր՝ հոն տեղն պիտի տեսնէիր՝ որ այս ամեն հարստութիւնս կամակար կուտայի՝ քու սիրոյդ մի փոքրիկ մասն ժառանգելու համար։

— Դոքա խօսքեր են, ասաց մարքիզուհին երգիծական ծիծաղով մի. այդպիսի խօսքեր քուքոյդ շա՛տ. գործն պիտի յայտնէ. երբ մարդ յանկարծ կեցած տեղն քառասուն հազար ֆրանք եկամուտ տէր լինի՝ այնպէս կը ձևացնէ թէ իւր աչքին առջև հարստութիւնն մեծ բան մի չէ և մեծամեծ առատաձեռնութիւններ ալ կը խոստանայ, բայց եթէ կարող ես իրմէ բան մի խլէ տեսնեմ. Որմըսանի հարուստ ժառանգորդին մտածմունքն՝ շատ հեռի է Սէնթ-Անժի աղքատ կրտսեր աղջկանն մտածմունքէն։

— Ո՛հ, տիկին, գոչեց Աննա ցաւագին՝ իւր մօր ոտքն անկանելով, ինչ արդեօք արարել եմ ձեզ՝ որ սիրտս այսպէս կը կեղեքէք։ Ա՛ռ, տիկին, այս հարստութիւնս՝ որ քու բարեկամութիւնդ ինձ կորսնցնել կու տայ, և քու և քրոջս մէջ

բաժնէ զայն հոգս չէ. քու սէրդ միայն կը խնդրեմ ես։

— Ճիշդ տղու մի պէս կը խօսիս, ասաց մարքիզուհին սակաւ մի քաղցրութեամբ. քեզ թողուած ժառանգութիւնն ոչ կարես ընդունիլ և ոչ կարես մերժել՝ մինչև քանի մի տարուան չես, և եթէ այդ տարիքն հասնիս... Այս ասելու ատեն Տիւպուա ներս մտաւ և ասաց. Ներեցէք. տիկին, թուղթ մի հասաւ ձեզ, և գրէն իմանալով որ տիրոջս է՝ չուզեցի որ ուրիշ մի զայն ձեր ձեռքն հասցնէ։

— Ո՞րս, գոչեց մարքիզուհին։

— Հա՛յրս, ասաց Աննա։

Տիւպուա լուռ կեցած՝ սպասեց որ մարքիզուհին նամակն ընթեռնու. ու երբ աւարտեց՝ աղաչական ձայնով մի ասաց. Համարձակութիւն կուտա՞ք ինձ, տիկին, սիրելի տիրոջս լուրերն հարցնելու։ Մարքիզուհին վայրկեան մի լռելէն ետև՝ սիրտն ելնելով արդար ծերունւոյն սիրոյն վրայ՝ որ յիրաւի մեղադրանաց արժանի բան մի գործած չէր, նամակին մէջ գրուածներն նմա հասկցուց։ Մարքէզն իւր կնոջ կ'իմացնէր աւգոստոսի 10 իւր գլխէն անցած փորձանքներն, և ինչ կասկածներ որ ունեցել էր իւր բանին յաջորդութեան վրայ։ Թուղթն Փարիզէն ելնելէն ետև առջի կայանքէն գրած էր, և միտքն դրած էր Արտան քաղաքն հասնելու՝ մինչև որ իւր ընտանեաց վրայ լուր առնու. և կը խոստանար երկրորդ թուղթ մի ալ գրելու՝ երբ այն քաղաքն հասնի։

Տիւպուա շնորհակալ եղև տիկնոջն բարեհաճութեանն համար, և յայտնեց իւր փափաքն մարքէզին քովն երթալու և նմա ծառայելու։ Մարքիզուհին ասաց նմա որ սպասէ խօսա-

ցուած երկրորդ Թըլթին գալստեան և այնպէս ճամբայ ելնէ։ Աննա ալ կուզէր նոյն շնորհքն մօրէն խնդրելու, բայց վախնալով որ նա չհաւանի՝ չհամարձակեցաւ իւր սիրտն յայտնել։

Սակաւ ժամանակէն ինչպէս որ խոստացել էր մարքէզն նորէն գրեց իւր կնոջն և իւր վիճակն կիմացնէր, աւելով թէ Սըտան մնալն իրեն համար անկարելի կ'երեւէր· որովհետև ամենևին իւր չճանչցած մարդիկ՝ կարծես թէ խօսք դրելէին զինքն անհանգիստ անելու և ահաճութիւններ պատճառելու· ինքն յայտնի կը տեսնէր որ կուզէին զինքն վախցնել և ստիպել որ սահմանագլխէն ալ անդին անցնի· բաց աստի սակաւ մի ատակ ալ կը խնդրէր, որովհետև գլխուն գալիքն չէր գիտեր· դարձեալ կը յայտնէր իւր կնոջ իր կարծիքներն՝ զորս չէր կրցած իւր մաքէն հանել. և առջի նամակէն աւելի բաց խօսելով՝ իւր փեսյին հաւատարմութեան վրայ կասկածներ կը յայտնէր։

Տիկին Սէնթ-Անժ իւր այն գրածներն կարդալով՝ սարսափեցաւ. և որովհետև սովորած էր իւր աղջկան համարմամբն Ֆորթօնի վրայ դատաստան անել՝ որ զինքն նոյն ժամանակի ամենէն կատարեալ մարդն կը համարէր, այս ծանր և չար կասկածներն նորա վրայ ձգելէն կը դողար։ Եւ սակայն ինչպէս կարող էր մերժել իւր այն խորհրդածութիւններն ։ Տարակոյս չկար որ այն անծանօթ մարդն որ աւգոստոսի 10ին մարքէզն ազատել էր և թողել էր որ հրամանատարն սպաննուի, նոյն մարդն դարձեալ մարքէզին ետեւէն անկանելով՝ Պուրպոնեան ապարանից մօտ նորէն նորա առջևն ելել էր· այն մութ տունն ուր տարել էր զմարքէզն գիշերն անցնելու համար, այն չկատարուած հրամանն

զինքն խռովարարաց ատեանն հանելու, այն յառաջագոյն պատրաստուած կառքն և անյայտին զինքն մինչև սահմանագլուխն տանելու, այն Սըտանի մէջ հանդիպած դժուարութիւններն, այս ամենքս անշուշտ զօրաւոր ձեռքէ մի յառաջ կու գային՝ որ առանց երևելու կը գործէր։ Բայց այս անյայտ ձեռքս ինչ օգուտ ունել կը յուսար, և ինչ բանէ շարժեալ կը գործէր։ Յայտնի էր որ մարքէզին օտար երկիր անցնիլն կուզէր· իսկ արդ նորա օտար երկիր պանդխտիլն ո՞ւմ կրնար օգտակար լինել, եթէ ոչ Ֆորթօնի՝ որ Փարիզու մէջ գտնուելով և հօն մեծ ազդեցութիւն ունելով՝ կարէր ցած գնով աճուրդի հանել գերդաստանին բոլոր ինչքն ու ստացուածքն։

Մարքիզուհին տագնապող այս խորհրդածութեանցս վրայ՝ աւելի դառնագոյն կասկածներ ալ կը յաւելուին· շատ օրերէ 'ի վեր իւր սիրելի դուստրն Էմիլին՝ ամենևին չէր երևցած՝ որոյ համար ինքն ամեն բան զոհած էր· առջի բերան հիւանդութիւնն պատճառանք կրնար համարուիլ· բայց հիւանդութիւն ստացածդ ալ կը նուազի կամ կ'աւաւելու, իսկ իւր աղջիկն միշտ նոյն վիճակի մէջ էր։ Գալով իւր փեսին՝ մարքիզուհին դիտել տեսել էր՝ որ իւր առջև երևցած ժամանակ գրեթէ վախկոտ կերպ մի ունէր՝ որ իւր բնութեան հակառակ էր, և թերևս իրեն գործոց հզօր զսպանակն շահասիրութիւնն էր, ինչպէս որ յայտնի եղած էր՝ հրամանատարին հրւատակ մի ունելն իմացած ժամանակ՝ ցուցած դժկամակութենէն։

Այս խորհրդածութիւններս անելով՝ մարքիզուհին գրեթէ յակամայ կամս իւր կրտսեր զաւակն մաքէն կարդարացընէր· և այս վիճակիս

մէջ կը գտնէր՝ երբ մարքեզէն եկած երկրորդ-նամակ մի գրեթէ կայծակնահար արար զինքն. որովհետեւ Տէր տը Սէնթ-Անժ այն նամակին մէջ այսպէս կը գրէր. «Վախերս ու կասկածներս իրաւ ելին. մութ բանտի մի մէջէն կը գրեմ քեզ այս թուղթս. հիմա հրաման մի եկն ինձ դատաւորաց առջեն երեւելու, որովհետեւ ամբաստանութիւն եղած է իմ վրայօքս իբրու թէ բռնաւորէն (Բոգաւորէն) հետ դաշնադիր եղեր եմ ազգին դէմ. ինչ պատասխան տալիքս չեմ գիտեր այսպիսի ամբաստանութեան մի. չեմ կարող և ոչ ալ կամիմ թագաւորիս ունեցած սէրս և հաւատարմութիւնս ուրանալ. ուստի յուժ սակաւ յոյս ունիմ ազատութեան, մանաւանդ թէ բոլորովին յուսահատած եմ. կուզէի քոյ և սիրելի Աննայիս յետին համբոյրներն ընդունիլ, բայց այս մխիթարութենէս ալ զուրկ պիտի մնամ, որովհետեւ խռովարարաց դատաստանին վճիռն անյապաղ կը կատարուի: Իմ խեղճ Տիւպուաս աղաչեց պաղատեց որ ինձ բանտակից լինի, և ուզածն եղև. շնորհապարտ եմ իր սիրոյն. բայց խեղճն իւր ցաւն չկարէ ծածկել յինէն, և ես ստիպուած եմ զինքն մխիթարելու»: Այս նամակս երբ կը կարդային՝ Աննա հեղեղի պէս արտասուք կը թափէր, և ցաւօք սրտի դէպ 'ի երկինք կը գոչէր. «Աստուած իմ, Աստուած իմ, քու գթած աչքդ մեր վրայ դարձո. հօրս կեանքն ինձ շնորհէ, և թող իմ կեանքս քեզ զոհ լիցի»: — Այս խօսքերուս վրայ՝ Տիկին Սէնթ-Անժի աչուըներն ալ լեցուեցան: Իւր առն նամակն ազնուական խորհուրդ մի ծագեց նորա միտքն, և Աննայի նուիրումն ալ մինչև իր սրտին խորն թափանցեց ու կակղցուց, և այս առաջին անգամն էր որ Աննա կը լսէր այս խօս-

քերս «Սիրելի զաւակս». զոր լսելով՝ անգէն մօրն քովը վազեց՝ բռնեց նորա ձեռքն և սրտին վրայ սեղմելով կը պագնէր, բայց խօսք մի չէր կարող զրուցել: «Սիրելի զաւակս, կրկնեց մայրըն, երբ դժբաղդութիւնն մեր վրայ կը հասնի՝ պէտք չէ վհատիլ՝ այլ մեր հոգւոյն բոլոր զօրութեամբն նորա հարուածոց դէմ դնելու պատրաստուիլ. մի թէ կարեմք քոյ հայրդ մինակ թողուլ իւր թշուառութեան մէջ. գիտեմ որ նա արդար է և մեռնելէն չվախեր. բայց մարդուս կենաց մէջ այնպիսի պարագաներ կան՝ որոց դէմ դնելու համար արիութիւնն բաւական չէ: Ես միտքս դրի հիմա շուտով ելնելու երթալու հօրդ քով՝ ձեռքէս եկած օգնութիւնն ու մխիթարութիւնն նմա մատուցանելու, և թէ որ կարելի է զինքն ազատելու համար ամեն ջանք պիտի գործածեմ. իսկ թէ որ Աստուած չուզէ՝ գոնէ իմ պարտքս կատարած լինելով՝ թշուառութիւնս ալ սակաւ մի կը թեթևնայ: Իսկ դու, զաւակս, առ ժամս պէտք է որ հոս մնաս, որովհետեւ այն մեծ ժառանգութիւնն ալ ձեռք ձգելու համար՝ քոյ հոս գտնուիլդ հարկաւոր է:

— Ինչ ասես, մայրիկ, պատասխանեց Աննա վառվռուն կերպով մի. աշխարհիս մէջ ինչ շահ կարէ լինել՝ որ արգիլէ զիս քու ետեւէդ գալու. բոլոր աշխարհիս հարստութիւնն ալ ինձ համար ոչինչ է՝ եթէ զայն ձեռք ձգելու համար պիտի ստիպուիմ իմ սիրելիներէս զատուելու: Ա՜հ, սիրելի մայր, մի թողուր զիս հոս տեղս, և թող որ քոյ ետեւէդ գամ և քեզ հետ իմ հայրս մխիթարեմ:

— Շատ լաւ ուրեմն աղջիկս. 'ի միասին կ'երթամք:

— Այո, մայրիկ, երթամ դատաւորաց ոտքն պլլուիմ, անշուշտ նոքա իմ ցաւոցս վրայ պիտի ողորմին։

— Ուրեմն գնա, աղջիկս, քեզ պէտք եղածն պատրաստէ, ես ալ իմիններս հոգամ. և քրոջդ ու ամուսնոյն ալ իմացնեմ մեր միտքն։

ԳԼՈՒԽ Ե.

Վեհանձն որոշողութիւն. Ելք 'ի փարիզէ ։

« Հիմա կիմանամ, ասէր Տիկին Սէնթ-Անժ ինքն իրեն, որ ես մինչև հիմա անիրաւել եմ խեղճ Աննայիս դէմ. Էմիլին՝ որուն այնչափ զոհեր արարեալ էի՝ երբէք այսպիսի քաղցր սէր ցուցած չէ ինձ. ես միշտ զինքն գգուել փայփայել եմ և փոխադարձ սէր չեմ տեսած իրմէ։ Ա՜հ պէտք է որ իմ յանցաւոր անիրաւութեանս փոխարէնն առնեմ. Աննայի ուզածն ալ ուրիշ բան չէ՝ բայց եթէ սիրոյ թեթև նշան մի, և զայն տալով ինչպէս որ արժանի է, իւր մինչև հիմա կրէն քաշածներն՝ մոռանալ պիտի տամ»։

Մարքիզուհին մարդ ղրկել էր իւր փեսին՝ ապըսպրելով որ շուտով ելնէ իրեն գայ ու Էմիլին ալ հետ բերէ։ Ֆօրթօն որ Սըտանի մէջ եղածներն լաւ գիտէր, շուտով ել ու եկն, բայց մինակ էր. Էմիլին տակաւին յարմար չէր սեպած, իւր ձեւացեալ հիւանդութիւնն 'ի բաց թողուլ. վասն զի յառնէն իմացած լինելով՝ թէ հայրն բանտըն է՝ ինչ պիտի առնէր իւր մօր քով երթալով, բայց եթէ նորա հառաչանքն լացն ու ողբն լսել, և բոլոր օրն զինքն տրտում երևցնել։ Բաց աստի անշուշտ զԱննա ալ մօրն քով պիտի գտնէր, որ յանգգնել էր իւր մեծ հօրեղբօր ժառանգ ա-

նուանել զինքն, և այսպիսի անօրէն ու խարդախ գործէ մի ետև՝ իրեն այնպէս կ'երևէր թէ քրոջ երեսն անգամ չէր կարող նայել։

Ֆօրթօն եղածներն նոր լսել ձևացնելով՝ շատ ծանր վախերու մէջ կը ցուցանէր ինքզինքն, և կեսրոջ խորհուրդին կը համոզուէր. իսկ իրեն համար ասէր՝ թէ ազգային զօրաց հրամանատարութիւնն նոր իրեն յանձնուած լինելով՝ Փարիզէ չէր կարող հեռանալ՝ առանց կասկածաւոր լինելու, և թէ այնպիսի պարագայից մէջ կասկածաւոր լինելն վտանգաւոր բան էր։ Ֆօրթօնի ցուրտ և անտարբեր կերպն՝ պէտք էր որ մարքիզուհւոյն աչքն բանար՝ իմանալու համար թէ ինչպիսի մարդ էր իւր փեսայն. վասն զի Դաշնադրական ժողովոյն վստահութիւնն ստանալու համար՝ պէտք էր որ հին ազնուականներէն սեպուած մարդ մի և բռնաւորին (Թագաւորին) ծառայն՝ հասարակ ռամիկէ մի աւելի ցոյցեր ու փորձեր տուած լինէր իւր խռովարար սկզբանց, որպէս զի կարող լինէին նմա այնպիսի մեծ ու կարևոր պաշտօն մի հաւատալ. բայց մարքիզուհւոյն պատրանքն բոլորովին փարատելու համար՝ նորանոր ապացոյցներու կարօտ էր, և մաղն բոլորովին ծակելու համար վերջին փորձեր պէտք էին, որ ահա սակաւ ժամանակէն յայտնի եղեն։

Վասն զի տիկինն Փարիզէն ելնելն բացարձակ որոշած լինելով, բայց միտքն դնելով թէ յիրաւի իւր աղջիկն հիւանդ է, առանց զինքն տեսնելու՝ չուզեց բաժնուիլ, ուստի միտքն դրաւ որ իրիկուան դէմ գնա տեսնելու երթայ. և որպէս զի փեսին ալ անհաճոյ բան մի չառնէ՝ որ այնչափ կասկածաւոր լինելէն կը վախէր՝ մըտածեց որ հասարակ կառք մի վարձել տայ. ո-

րովհետև նշանազարդ փառաւոր կառք մի, և համազգեստ ծառաներ՝ քաղաքացի Ֆորթոնի դրան առջև որ կանգնէին՝ կրնային հասարակապետականաց աչքին զարնել և տանտէրն ամբաստանել՝ իբրև թէ ազնուականաց հետ յարաբերութիւն ունի: Բայց կարելի բան չէ բացատրել թէ ինչ ցաւ և զարմանք կալաւ զինքն՝ երբ աղջկան տունն հասնելով՝ լսեց թէ նա դուրս ելած էր և Դաշնագիր ժողովոյն անդամներէն միոյն տունն պարահանդէսի գնացել էր, այնպիսի մարդու մի տուն՝ որ ոչ եթէ խելաց կողմանէ՝ այլ անցուցած զեղխ ու շռայլ կեանքովն երևելի եղած է նոյն ատեններն: Ուստի Տիկին Սէնթ-Անժ տրտում տխուր տուն դարձաւ՝ սիրտն սաստիկ վշտացեալ: Աննա զինքն այսպէս խռովեալ տեսնելուն՝ վախով հարցուց թէ արդեօք նոր թշուառութիւն մի լսած էր. մայրն ալ ինքզինքը չկարելով բռնել՝ բոլոր տհաճութիւնն դուրս տուաւ, և լաւ մի քաշեց իւր մեծ աղջկան անզգայութեանն վրայ: Աննա ջանաց մայրն հանդարտեցնել և զքոյրն անմեղադիր առնել. «Այդ անզգայութեան յանցանքն Եմիլինն չէ, մայրիկ, ասաց, որ իր սրտէն շատ հեռի է. բայց ինչ ասեմ. . .»

— Ասա՛, զաւակս, ասա՛:

— Բայց պիտի ասես՝ որ շատ չար կարծիք ունիմ ես Տ. Ֆորթոնի վրայ, և թէ իմ հասակիս չանկանիր զայս դատել. ինձ այնպէս կերևի որ յանցանքն քրոջս չէ. ինչ ընէ, ինքն ալ նմա հնազանդելու պարտական է:

— Աստուած տար, զաւակս, որ ասածիդ պէս լինէր. բայց դու քոյրդ պաշտպանել ուզելով՝ որ քեզ այնչափ չարիք արարեալ է՝ քոյ սրտիդ բարութիւնն կը ցուցանես, սակայն չես

կրող տխուր ճշմարտութիւնն ալ բոլորովին պարզել: Ուստի որ անսահման սէր և նուիրումն կը յուսայի գտանել՝ Աստուած զիս պատժելու համար կը թողու որ անզգայութիւն և մոռացութիւն գտնեմ. իսկ ուստի որ ատելութիւն կը յուսայի. . .

— Ատելութիւն. ոչ տիկին, ինչ ասես. ես զքեզ իմ մայրս ատեմ: Ինձ չէր անկաներ քոյ բռնած կերպդ դատել. միշտ այնպէս համարած էի որ արժանի էի քոյ խստութեանցդ. կարծէի թէ Աստուած զիս փորձել կուզէր՝ առկաւ մի ժամանակ քոյ սիրոյդ զիս զրկելով. բայց քոյ իմ մանկութենէս՚ի վեր տուած սկըզբամբդ զօրացեալ՝ բոլոր վստահութիւնս Աստուծոյ վրայ դրած էի՝ որ ուզածին պէս սըրտերն կը դարձնէ, և կաղաչէի որ քոյ սիրտդ ալ շարժէ ու քոյ սէրդ ինձ շնորհէ. և ինքն որ ողորմած է՝ իմ արտասուացս ողորմեցաւ:

— Ո՜հ զաւակ իմ, գոչեց մարքիզուհին սըրտանց հառաչելով, որպիսի ժամանակ և ինչպիսի սարսափելի պարագայից մէջ իմացուց ինձ Աստուած իմ սխալմունքս: — Աննա ուրիշ պատասխան չտուաւ իւր մօրն՝ բայց եթէ իւր բազկաց մէջ զնա գրկելով, և իւր արցունքն նորա արտասուաց հետ խառնելով:

Երկրորդ օրն արևն ծագածին պէս՝ տիկին Սէնթ-Անժ և իւր աղջիկն կառքն հեծան. մարքիզուհին շատ վշտացաւ տեսնելով որ անցագրին մէջ իրենց ուրիշ պատուանուն տրուած չէր՝ բայց եթէ քաղաքացիք Թոմա անունն: Բայց առանց փորձանաց Սըրտան բերդաքաղաքն հասան. սակայն ուզածնուն պէս մէկէն մարքէզն չկարացին տեսնել. որովհետև բանտարկելոց հետ առանց հրաման ունելու տեսնուիլ չէր լի-

նէր, և այս հրամանս բերդակալէն խնդրելու էր, վասն զի քաղաքն ալ պաշարման վիճակի մէջ էր։ Մարքիզուհին ու աղջիկն տրտում տխուր տուն դարձան. սակայն կը յուսային որ բանտարկեալն պիտի իմանար որ իւր երկու սիրելի անձինքն Սըտան հասած էին. վասն զի բանտէն ելնելէն յառաջ Աննա բանտապանին մօտեցաւ՝ անուշիկ ձայնով մի, որ այս մարդս իւր կենաց մէջ բնաւ լսած չէր, աղաչեց նմա որ մարքէզին իմացնէ թէ կինն ու աղջիկն հասել էին, և առանց ժամանակ կորուսանելու՝ իւր ազատութեանն համար պիտի աշխատէին։ Աննայի գեղեցկութիւնն, մանկութիւնն ու անմեղ կերպն՝ բանտապանին պղնձի սիրտն շարժեցին. մարքիզուհին ալ նորա ձեռքն ոսկիով մի օծելուն պէս՝ ալ բոլորովին քաղցրացաւ, և խոստացաւ որ գիշեր չեղած նմա պիտի իմացնէր եղածն։

Երկրորդ օրն Աննա և իւր մայրն սգաւորի հագուստով ելլին բերդակալին գնացին որ քսանևութ կամ երեսուն տարուան քաղաքավար սպայ մի էր, թէպէտ և կարգէ դուրս խստութիւն կ'երևէր իւր ամեն շարժմանց մէջ։ Երկու տիկնայքը տեսնելուն պէս, նոցա առջևն ել և մարդավարութեամբ հարցուց թէ ինչ էր ուզածնին. և երբ մարքիզուհին իրենց գալուն պատճառն կ'իմացնէր, ժէրվալ բերդակալն աչքըն Աննայի վերայ յառած հիացմամբ զնա կը դիտէր՝ զարմանալով նորա անկեղծ և անմեղ դիմաց վերայ՝ որ սրտին մաքրութիւնն կը յայտնէր, կը զարմանար նորա գծագրութեան քաղցրութեանն և ճակտին վերայ նկարեալ անբծութեան վերայ, ևս առաւել կերպին ամօթխածութեան, վախկոտութեան ու համեստութեան վերայ՝ որ կարծես թէ զինքն պաշտպանող շող

մի էր։ — Երբ մարքիզուհին խօսքն աւարտեց, բերդակալն ժէրվալ՝ զօրականի մի դառնալով՝ որ գրասեղանին առջև նստած կը գրէր՝ ասաց. «Հայրենակից, շուտ հրամանագիր մի գրէ այս քաղաքացւոյս և դստերն համար՝ որ ուզած բանտարկելոյն հետ տեսնուին»։

— Բանտարկելոյն անունն ինչ է, հարցուց զօրականն։

— Սէնթ-Անժի մարքէզն, պատասխանեց մարքիզուհին։

— Մարքէզ. մարքէզ, մռմռաց քթին տակէն գրագիրն՝ խոշոր դատագիրք (Dossier) մի թղթատելով. հոս Մարքէզ անուն չկայ. . . հա, ահաւասիկ, ասաց ձայնն բարձրացնելով, Թոմա անուանեալ Սէնթ-Անժ . . . . Սակայն հրամանագիր տալն անկարելի է. երէկ չէ առջի օրէ 'ի վեր եկակոչ եղած է իրեն՝ այսօր յեղափոխական ատենին առջև ելլելու մինչ որ հասարակին։ և հաւանականաբար վաղուան օրն հրեշտակաց հետ միայն պիտի տեսնուի այդ ազնուական բանտարկեալն, ասաց դառն ձայնով և սատանայական ծիծաղով մի։ Այս խօսքերս կայծակի հարուածի մի պէս՝ Աննայի բուղխ սիրտն վիրաւորեցին, որ լսածին պէս՝ մօրն գիրկն անկաւ մարեցաւ։

— Հայրենակից, ասաց ժէրվալ բարկանալով. զօրականն իւր պարտքն կատարելու է՝ որչափ ալ խիստ լինի, բայց ցուրտ բարբարոսութիւնն՝ դահճի գործ է։ Շուտ մարդ զրկէ հասարակաց ամբաստանչին՝ որ Թոմա Սէնթ-Անժի համար տրուած հրամանն ետ ձգել տայ, նորա դատագիրն ալ թող ինձ բերէ. ես անձամբ պիտի քննեմ այս գործս։

Գրագիրն ակամայ հնազանդեցաւ, և հրա-

մանն գնաց, զոր հասարակաց ամբաստանիչն առածին պէս՝ սա վայրենի խօսքն բերնէն թռուց. «բերդակալն ազնուականաց պաշտպանն է. թէ որ օր մի իւր գլուխն ալ չթռցնեն՝ ազատած գլուխներուն տեղ՝ ես ալ մարդ չսեպուիմ. ժողովուրդն մատնողներն գթութեան արժանի չեն»:

Սակայն բերդակալին տան կանայք Աննայի վերայ վազելով՝ հազիւ շատ խնամքով՝ նորա խելքն գլուխն բերել էին, որ աչուըներն բացածին պէս գոչեց. Ո՛վ հայր իմ, ո՛վ խեղճ հայրս. այս խօսքերովս սրտին ցաւն դուրս պոռակաց և թափած արցունքն սիրտն սակաւ մի թեթևցաւ. և երբ բոլորովին հանդարտեցաւ, բերդակալն քովն երթալով ասաց. Մի յուսահատիր տրամութեամբ, Օրիորդ, և ներէ զօրականի մի խիստ համարձակութեանն՝ որ ինք իր անձին անողոքելի լինելով՝ այլոց հետ քաղցրութեամբ վարուելու չէ վարժած. քոյ հօրդ դատողն ես պիտի տեսնեմ, և ապահով եղիր որ արդարութիւնն նմա չեմ զլանար. առ ժամս գնա քոյ ներկայութեամբ զինքն մխիթարէ:

Աննա յանկարծ խորին տրամութենէն յուսոյ երջանկութեան հասնելով՝ բան մի չկարաց պատասխանել բերդակալին. այնչափ սիրտն ելած էր՝ որ լեզուն բռնուած էր. բայց հրեշտակային նայուածքով մի երախտագիտութիւնն յայտնեց:

Բերդակալն ալ կուզէր յայտնել իւր ուրախութիւնն՝ այսպիսի դիպուածի մի մէջ Աննայի և նորա մօրն ծառայութիւն մի ընել կարողանալուն համար. բայց բաւական սեպեց մարքիզուհւոյն ասելու՝ որ ձեռքէն եկածն պիտի անէր իւր այրն ազատելու համար:

Ո՛վ կրնար նկարագրել՝ մարքէզին և իւր կնոջ և աղջկան իրարու հետ առաջին անգամ տեսնուելուն՝ գորովական և ցաւալից տեսարանն: Սէնթ-Անժ որ լաւ գիտէր թէ այն արիւնարբու ատեանն եկողներէն մին անգամ ետ դարձած չէր, բոլոր նախընթաց օրն գիր գրելով անցուցել էր. և երբ երեկոյեան դէմ բանտապանն իրեն իմացուց իւր կնոջ և աղջկան հասնելն, այս լուրն զինքն ուրախացնելու տեղ աւելի տրտմեցուց, որովհետև նոցա գալն ուրիշ բան չէր՝ բայց իր մահուանն ականատես լինել: Նոցա ներս մտած ժամանակ՝ ինքն երկար և սարսափելի հոգեվարքի մի մէջ կը տագնապէր ու կը սպասէր որ գան զինքն ատեան տանելու՝ մանաւանդ թէ սպաննելու: Բայց իւր կնոջ ու աղջկան վերայ ունեցած սէրն՝ որ աւելի սաստիկ էր՝ քան զինքն սարսափեցնող երկիւղն՝ քանի մի վայրկեան հաճոյից տեղի տուաւ. գրկեց զնոսա ուժով իր բազկաց մէջ իր կուրծքին վերայ սեղմելով և կը գոչէր. «Ահ օրհնեալ է Աստուած որ մեռնելէս առաջ սա վայրկենական երջանկութիւնս ինձ շնորհեց. օրհնեալ է Աստուած»:

— Սիրելի, ասաց մարքիզուհին, որ աչքի բերան յուզման սաստկութենէն լեզուն բռնուած էր, դեռ յուսերնիս չկտրեմք. կերևի թէ բերդակալն մեր վերայ կը ցաւի. քոյ և մեր վիճակն նորա ձեռքն է, ես նորա մարդասիրութեան վերայ մեծ յոյս ունիմ:

— Ես այդպէս չեմ յուսար, ասաց մարքէզն. մի թէ բերդակալն ինքզինքն կարէ՞ վտանգի մէջ ձգել՝ անծանօթ մարդ մի ազատելու համար. լրտեսներ ու մատնիչներ նորա բոլորտիքն առած են:

— Հայր իմ, ասաց Աննա նորա խօսքն կտրելով, ես վստահ եմ որ նա զքեզ թշնամեացդ ձեռքէն պիտի ազատէ. ինքն ասաց Քոյ այրդ պիտի ազատէմ, և այնպէս սրտանց հաստատ և ազնուական կերպով ասաց այս խօսքերս՝ որ զիս համոզեց։ Ահ սիրեցեալ հայր, սակաւ ժամանակէն քոյ շղթաներդ պիտի քակուին, և դու դարձեալ քոյ սիրական ընտանեացդ մէջ պիտի գտուիս։

— Երանի թէ ասացածդ ճշմարիտ լինէր, սիրելի Աննաս, պատասխանեց մարքեզն, ո՜ւր էր թէ օր մի ասացածիդ պէս իմ ընտանեացս մէջ գտանէի ինքզինքս. բայց որչափ արգելք կըտեսնեմ այս ըղձիցս կատարմանն։

ԳԼՈՒԽ Զ.

Երեսփոխանք ժողովրդեան.

Բոլոր օրն սաստիկ հոգերու և մտատանջութեան մէջ անցուցին. որովհետև որչափ ալ բերդակալին խոստմունքն մարքիզուհւոյն վըստահութիւն տուեր էին՝ սակայն քանի որ իւր այրն շղթաներու տակ էր՝ չէր կարող հանդիստ լինել. մարքեզն ալ դրսէն հանդարտութիւն ցուցանելով՝ իւր վախն կուզէր ծածկել, որպէս զի կնոջն տրտմութիւնն չյաւելու և զաւկին պատրանքն չփարատէ։ Եւ սակայն իր յոյսն ալ բոլորովին չէր հատանէր. և երբ ատեանն երևելու ժամն անցաւ և չկոչեցին զինքն՝ համարեցաւ թէ բարեյաջող փոփոխութիւն մի եղած էր իւր վիճակին։ Իսկ Աննա բոլորովին վստահ էր. «Աստուած իմ արտասուացս ողորմեցաւ, ասէր, ինքն ինձ գտնել տուաւ մօրս սէրըն, անշուշտ հայրս ալ ինձ պիտի շնորհէ»։

Յիրաւի Աննայի ակնկալութիւնն լիապէս կատարեցաւ՝ վեհանձն Ճերվալի ջանքովը. վասն զի մարքեզին դէմ եղած փուրսիշն (ամբաստանութեան գիրն) իրեն բերել տալով, տեսաւ որ անոր մէջ յանցանաց ստուերն անգամ չկայ, ոչ միայն բարոյականի, պատուոյ և արդարութեան դէմ, այլ և նոյն ժամանակի խռովարար կառավարութեան դէմ՝ որ սաստիկ խստութիւն կը բանեցնէր այն անձանց դէմ որոց հարստութիւնն կուզէր յափշտակել և զիրենք հալածել։ Այսպէս լինելուն՝ թէպէտ և կարող էր ինքն անմիջապէս հրաման տալ որ մարքեզն ազատ թողուի, բայց գիտէր որ քաղքին մէջ շատ թըշնամիներ ունէր՝ որ արդէն յայտնապէս կը մեղադրէին զինքն թագաւորականաց կողմն բըռնելուն համար. վասն զի այն թշուառ ժամանակներն՝ այն իշխանաւորն որ անմիջապէս մահուան չէր դատապարտէր՝ հայրենակցէ մի ամբաստանեալ մարդն՝ ինքն կասկածելի լինէր և երկրէն դուրս կը քշուէր։ Սակայն թէպէտ և Ճերվալ այս վախերս բանի տեղ չէր դնէր՝ որ իւր խըղճին և համոզման դէմ գնել կարող չէին, այսու ամենայնիւ խոհեմութիւնն ալ ձեռքէ ձգել չէր ուզէր՝ չարախօս լեզուներն կարկելու համար։

Դաշնագիր ժողովն՝ հիւսիսային գաւառներն երկու երեսփոխան ղրկած էր՝ որպէս զի Մէզիէրի մօտերն հաւաքուելու բանակին համար զօրաժողով առնեն. Ճերվալ այս երկու հոգին իր տունն հրաւիրեց, և նոցա սիրտն շահելու համար՝ առատ նախաճաշ մի հանեց՝ որոյ համեմունքն էին հասարակապետական խօսակցութիւնք, և եղբայրակցութեան, ազատութեան կամ մահու անընդհատ բաժակներ։ Երբ այս մարդիկս այնչափ անկեցին՝ որ խելքերնին գըլ-

խըներնէն գնաց և դատի ու ամբաստանութեան վերայ խօսելու կարողութիւն չունէին, ժերվալ Թոմայի դատին խօսքն բացաւ՝ համարելով թէ նոքա իրեն պիտի թողուին որ ուղածին պէս այն գործն աւարտէ, և կամ իւր ասացածներուն պիտի հաւանէին: Նաև յառաջագոյն Թոմայի անպարտ դատուած լինելուն գիրն պատրաստած էր, որուն նոքա միայն իրենց ստորագրութիւնն պիտի դնէին. բայց այս երկու երեսփոխաններս՝ որոց մին յառաջագոյն մսագործ էր և միւսն նաւաստի՝ մոխիր կլլող մարդիկ չէին երևէր: — «Հաւատա ինձ, հայրենակից բերդակալ, ասաց մսագործն, այս Թոմայի դատին մէջ տարակոյսներ գոն. ես որոշ և պայծառ չեմ տեսներ եղածն:

— Այո, պատասխանեց նաւաստին ճիշդ ընկերոջ խօսքերն կրկնելով:

— Եթէ այսպէս է, ասաց առաջինն, սակրի մի հարուածն ամէն բան կ'ուղղէ, կ'աւարտէ:

— Այո, այնպէս է, ասաց դարձեալ նաւաստին, սակրի մի հարուածն...

— Այդ ինչ է, ասաց յանկարծ բերդակալն սաստկութեամբ. դուք ինքնին ասէք թէ իրն տարակուսական է, և յետոյ մահուան կը դատապարտէք խեղճ մարդն. ոչ, մեռնիլս աչքս կառնում, այդ բանդ չեմ կարող առնել:

— Կա՛ց, կա՛ց, հայրենակից, ասաց մսագործն, ինչո՞ւ այդպէս կը բռնկիս. եկ այսօր ճար մի գտնեմք և խօսքերնիս հասկնամք. դու մեզ այսօր համեղ ճաշիկ մի տուիր՝ մեզ աըչվայելէր որ քեզ ապերախտ լինիմք: Նայէ սա վառարանին վրայ փօթնօյի խաղ մի կայ, կուզե՞ս որ անով քու բանտարկելոյդ բաղդն փորձեմք[1]. թէ դու

[1] Այս դէպքս պատմական ստուգութիւն է:

վաստկիս՝ բանտարկեալն քուդ է, ինչ որ կուզես գրէ նորա համար՝ մեք պատրաստ եմք ստորագրելու. իսկ եթէ կորուսանես՝ բանտարկելոյն բանն բուսած է: Կը հաւանի՞ս ասացածիս:

— Շատ լաւ, ասաց բերդակալն՝ միտքն դնելով՝ որ եթէ բաղդն իրեն չյաջողի՝ այն ատեն իւր ամէն իշխանութիւնն բանեցնէ: «Բարձր թիւ քաշողն պիտի վաստկի, ասաց մսագործին. հիմա թիւերն գլխարկի մի մէջ կը դնեմք, և երկուքս մի մի հատ կը քաշեմք:

— Շատ լաւ, յաղթութիւնն բարձր թիւ քաշողին է, կրկնեց երեսփոխանն: Եւ ձեռքն գլխարկին մէջ երկայնելով՝ զոր իւր ընկերն գլխին բարձրութեամբն բռնած էր՝ կոճակին մէկն քաշեց ու կատաղի ուրախութեամբ գոչեց «Վեց և հինգ»:

— «Վեց և վեց» ասաց բերդակալն հանդարտութեամբ:

— Նայիմք. վեց և վեց, իրաւ է, հայրենակից վաստկեցար. բանտարկեալն բաղդաւոր է եղել ասելով, երկու երեսփոխանք ալ ազատութեան վճռոյն ներքեւ ստորագրեցին:

Բերդակալն շուտով լուր ղրկելով՝ եղածն մարքիզուհւոյն իմացուց. միանգամայն ներումն խնդրելով որ այս աւետիքս անձամբ չէր կարող բերել, որովհետև լրտեսներն չորս դիս առած ամէն գործս կը դիտեն, ասէր, և փոքրիկ անխոհեմութիւն մի կարէ արգելք լինել ինձ ձեռքէս եկած բարիքն անելու: Դարձեալ կ'իմացընէր որ ամենակարեւոր բան մի ունելով նմա հաղորդելու կը փափաքէր զինքն տեսնելու: Տիկին Սէնթ-Անժ իւր աղջկան հետ միատեղ շուտով ելին ու եկին բերդակալն տեսնելու և իրենց շնորհակալութիւնն մատուցանելու: —

Դուք ինձ շնորհակալութեան պարտք չունիք, տիկին, ըսաց վեհանձն սպայն, ես իմ պարտքէս զատ՝ ուրիշ բան չարարի. ինքզինքս երջանիկ կը համարիմ որ կարող եղէ իմ մտերմութիւնս ձեզ ցուցանել՝ որում արժանի էիք, և բոլոր կենացս մէջ այս աւուր յիշատակն պիտի չմոռնամ: Ձեզ տեսնելու փափաքս՝ այս էր, տիկին, որ կարեւոր բան մի ունելով ձեզի հաղորդելու՝ գրով չէի կարող ձեզ իմացնել, և որ ձեր ու իմ մէջս միշտ ծածուկ ու գաղտնի պիտի մնայ: Քոյ առնդ վերաբերեալ դատագրոյն մէջ՝ գրուած մի ալ կայ, որ թէպէտ ճիշդ խօսելով ամբաստանութիւն չկարէ ասիլ, բայց այնոր ճիւղերն կարող է յառաջ բերել. այս գրուածքիս տէրն կուզէ և ամենայն ջանիւ կը պահանջէ՝ որ ձեր առնդ վրայ դատաստան բացուի ԻՆՉ ԱԼ ԸԼԼԱՅ ԹՈՂ ԸԼԼԱՅ ասելով, որ կը նշանակէ՝ նաև եթէ գլխապարտութեամբ աւարտի դատաստանն: Այս գրուածքիս ներքև ստորագրութիւն չկայ, բայց այն գրուածքին հետ թուղթ մի ալ կայ՝ զոր Փարիզու հասարակաց ամբաստանիչն իւր Սըտանի մէջ եղած գործակցին կը գրէ, և այն նամակին մէջ ասի՝ թէ վերոյիշեալ գրուածքին հեղինակն Ֆորթօն անուամբ մէկն է:

— Ֆորթօ՞ն, գոչեց մարքիզուհին զարհուրանօք. ա՜հ որպիսի անօրէնութիւն:

— Այս բանս ձեզ իմացնելու պատճառն՝ այն է, տիկին, որ կարող լինիք զգուշանալ. երբ մեր թշնամին կը ճանաչեմք, կարեմք ինքզինքնիս պաշտպանել. ահա այս բանիս համար ես ալ այս գաղտնիքս ձեզ յայտնեցի:

— Շնորհակալ եմ քեզ, տէր, իմ և գերդաստանիս կողմանէ, ըսաց մարքիզուհին. և բաց յայսմանէ ես ալ ձեզ սիրտս պէտք է յայտ-

նեմ՝ ինչպէս որ պարագաներն կը պահանջեն: Այդ Ֆորթօն ըսացածդ, այդ վատանուն մատնիչն՝ իմ փեսայս մեծ աղջկանս այրն է: Քանի մի ժամանակէ 'ի վեր մարքէզն նորա անհաւատարմութեան վրայ կը կասկածէր, բայց ես նորա յանցաւորութեանն չէի հաւատար. այս օր ամեն տարակոյս փարատեցաւ:

— « Թշուառակա՜ն մայր », ըսաց բերդակալն կամաց մի՝ զարմանքէն ու զարհուրանքէն լուռ և ապշած մնալով: — Վա՜յրկեան մի լռութիւն լինելէն ետև, մարքիզուհին յաւել ասելու. « Այս նողկալի գաղտնիքս ձեզ իմացնելուս պատճառն՝ այս աւուր ձեր մեզ համար գործած մեծ բարերարութեան փոխադարձ մի առնելու համար է: Ֆորթօնի ազդեցութիւնն մեծ է Փարիզու մէջ. արքունեաց և թագաւորական կառավարութեան թշնամի լինելով՝ խռովութեան կողմ բռնած է, և դաշնադրութեան պարագլխոց հետ սերտ բարեկամութեամբ կապուած է. ուստի լսելով ձեր աներկիւղ արդարութեամբ իւր աներն պաշտպանելն՝ անշուշտ ձեզ ալ մահացու թշնամի պիտի դառնայ: Աստուած տայ որ օր մի չզղջաք մեր վրայ ցուցած խնամոցդ վրայ:

— Մի երկնչիք ամենևին, տիկին, ըսաց ճերւալ եռանդեամբ, ԻՆՉ ԱԼ ԸԼԼԱՅ ԹՈՂ ԸԼԼԱՅ: Բայց փութացէք, ժամանակն կարճ է. ահաւասիկ ազատութեան հրամանագիրն. կարելի է որ բարձրագոյն հրաման մի ինձ հասնելով՝ բարի կամքս պարապ ելնէ: Ձեզ խորհուրդ մի չեմ կարող տալ, բայց ինչ ձեռնարկութիւն որ առնէք ապագային համար՝ որոնց կը փափաքիմ որ յաջողի և ապահով լինիք. այնպիսի ժամանակի մի մէջ եմք որ զապահովութիւն միայն փափաքե-

լուեմք մեզ և այլոց համար. վասն զի անցք և դէպք զմեզ կը մղեն և կը տանին և մեր ձեռքն չէ ուղղելն զնասին։

Մարքիզուհին և բերդակալն իրարմէ բաժնուեցան՝ իրարու յարգութեամբ քաղաքավարութիւններ ընելէն ետև՝ և զիրար նորէն տեսնելու ամենևին յոյս չունէին։ Բանտապանն բերդակալին ազատութեան թուղթն տեսնելով՝ մարքէզն ազատ թողուց, որ վազեց եկն իր ընտանեաց քով որ էին իւր կինն և աղջիկն։ Երբ իր փեսիննենդութիւնն իմացաւ՝ բոլորովին վըստահութիւնն վերցաւ, և նմա այնպէս կերևէր թէ Ֆօրթօն իւր կինն ալ համոզած էր իւր չար խորհրդոցն իրեն ստացուածքն բոլորովին յափըշտակելու համար։ Նոյն օրն փոքրիկ ժողով մի գումարելով Տիպուան ալ խորհրդի կոչեց, որոյ հաւատարմութիւնն այնպիսի սրտանց փորձերով իմացած էր։ Հոն շատ խօսակցութիւն եղև թէ արդեօք նորէն Փարիզ դառնան, թէ Սըտան բնակին, թէ օտար երկիր ապաւէն մի բռնեն. Փարիզ դառնալն ուրիշ բան չէր՝ բայց եթէ իւր գլուխն կառափնատեղին տանիլ, կամ դէթ նորէն բանտի դռներն բացուած տեսնել. մանաւանդ որ սեպտեմբերի 2ին եղած ջարդին լուրն նախընթաց իրիկուն հասած էր Սըտան քաղաքն, որով մարդուս յօժարութիւն չէր դար երթալու մայրաքաղաքն բնակելու։ Իսկ այս անցքերէն ետև Սըտան բնակիլն ալ շատ վտանգաւոր էր, և վախ կար ժողովրդեան խելքն փչածին պէս՝ նորա առաջին զոհերն լինելու։ Ո՞ւր երթալու էր ուրեմն. յիրաւի օտար երկրի մէջ հանդարտութիւն կարող էին գտնել, բայց այս հանգստութիւնս գտնելու համար ալ ամէն ունեցածն զոհելու էր։ Իրաւցնէ Աննա այս ա-

ւուր օրս հարուստ էր, բայց միթէ կը վայլէր սխալել զինքն որ իւր ամէն ունեցածն թողու և իրենց հետ պանդխտութիւն քաշէ. թէպէտ և ինքն պատրաստ էր իր ծնողաց հետ ամէն տեղ երթալու թէ Փարիզ և թէ Քօպլէնց, ինչպէս որ ասէր, Փարիզու մէջ ամէն վտանգ ու նաև մահ աչքն առնլով, իսկ Քօպլէնցի մէջ ամէն աղքատութ այլ և թշուառութիւն։ Անշուշտ շատ մեծ զոհողութիւն էր Աննայի գործածն, որոյ համար իւր ծնողքն զիրենք երախտապարտ կը ճանաչէին՝ սէր ընդ սիրոյ փոխանակելով. բայց որչափ որ Աննա աւելի սէր կը ցուցանէր նոցա, նոքա ևս առաւել կը քաշուէին նմա բեռ լինելէ։

Վերջապէս շատ վիճաբանելէն ետև՝ որոշեցին որ դաղտնի իրենց ճամբուն պատրաստութիւնն տեսնեն, և երկու օրէն գիշերանց ճամբայ ելնեն՝ ապահով մարգիկ իրենց հետ առնլով և նոցա հաւատարմութիւնն ճոխաբար վարձատրելով, և սահմանագլուխն անցնելէն ետև տեղ մի մնան. Իսկ Տիպուան իր տիրոջմէն գործակատարութեան թուղթ առած՝ անմիջապէս Փարիզ դառնայ և ինչ որ կարէ ձեռք ձգել ու ազատել առնու գայ։ Ուրիշ կողմանէ մարքէզն համոզուած լինելով թէ թագաւորազունք օտար տէրութիւններէ օգնութիւն գտնելով՝ սակաւ ժամանակէն Փրանկիա պիտի մտնեն և միապետութիւնն նորէն պիտի հաստատեն, և խռովարարաց ուժն պիտի կոտրեն, միտքն դրած էր թէ իրենց պանդխտութիւնն երկար պիտի չանէր։ Մանաւանդ որ օտար երկիր անցնիլն՝ արդէն աքսորուածներու համար՝ միակ ճամբայ էր ազատութեան և փրկութեան. իրաւ խռովարարներն շատուոր չէին, բայց իրենց յանդգնութեամբն ամէն պաշտօն և իշխանութիւն ձեռքերնին անցուցել էին, ու-

ժերնին շատ էր. այնպէս որ բաց 'ի արևմտեան քանի մի գաւառներէ՝ ուր Թագաւորականք աւելի ուժով էին՝ յեղափոխականաց ձեռքն եղած բովանդակ Փրանկիա՝ արքային մահուանց համար ուրիշ բան չէր բայց եթէ ընդարձակ սպանդանոց մի: Միանգամայն Թագաւորականաց Փըրանկիոյ մէջ բնակելովը ինչ օգուտ կարէր լինել իրենց, երբ միշտ լրտեսներու աչաց ներքև հալածուելով ու անբան անասնոց պէս չարչարուելով իրենց Թագաւորին ալ ձեռնտուութիւն մի չէին կարող տանել, որ այնչափ բարեսրտութեամբ բայց միանգամայն այնչափ անխոհեմութեամբ ինքզինք իւր անգութ թշնամեաց ձեռք վստահացել էր. և հիմա իւր ազատութենէն զրկուած՝ ցաւալի հոգեվարքի մի մէջ իր մահուան վճռոյն կը սպասէր՝ զոր պիտի վճռէին իւր ամբաստանողներն՝ դատաւորաց կարգ անցնելով յահ և 'ի սարսափ ազգաց և ազանց:

ԳԼՈՒԽ Է.

Պանդխտութիւն. — Քոպլենց:

Մարքէզն, իւր կինն և Աննա՝ Սըտան բերդաքաղաքէն ելին դռներն փակուելէն յառաջ. և արուարձանին տներէն միոյն մէջ սպասեցին՝ որ իրենց խոստացուած առաջնորդներն հասնին, ու երբ նոքա եկին՝ ճամբայ ելին: Առաջուց իրենց սնտուկներն գեղացւոյ տալով մի ճամբայ դրեր էին, որոց մէջ պարտիզպանական գործիներ դրուած էին. իսկ ճամբորդներն անցուդարձի բանուկ ճամբայն թողլով արտերուն մէջէն երթալնուն համար՝ երեք չորս ժամէն ետև հազիւ հասին՝ Լիւքսամպուրի դքսութեան ճամբուն վը-

րայ եղած սահմանագլխին վերջին գիւղն: Մարքէզն ազատելուն վրայ ուրախացած՝ յոգնածութիւն չէր իմանար. իսկ կինն փափուկ մեծցած և երկայն ատեն քալելու վարժած չլինելով՝ հազիւ ոտից վրայ կարող էր կալ, և եթէ իւր այրն ու աղջիկն նմա չօգնէին՝ կարող պիտի չլինէր մինչև հոն հասնիլ: Աննա հօրն վտանգէ ազատելուն և մօրն սէրն վաստըկելուն համար՝ բոլորովին յանձնէ դուրս ելած՝ աներկիւղ առաջ կերթար. խեղճն չէր գիտեր թէ ինչ դժբաղդութիւններ դեռ պիտի գային իւր և ընտանեաց գլուխն:

Հասած գիւղերնին յոյժ սակաւ ժամանակ մընացին, վախելով որ ետևնուն մարդ չհասնի. բայց երբ միանգամ սահմանագլուխն անցան՝ ալ մեր ճամբորդներն հանգիստ շունչ առնուլ սկսան. նոցա այնպէս կերևէր թէ վրաներնէն ծանր բեռ մի նետած էին: Իրենց կաշն գեղէն սակաւ մի հեռի պանդոկի մի մէջ գտին. նմանապէս ծանր ու բաց կառք մի՝ զոր յառաջագոյն եկած առաջնորդն՝ հոն տեղի գեղացիներէն վարձած էր, և այն կառաց մէջ մարքիզուհւոյն և աղջկանն համար հանգիստ նստարան մի շինած էր. բայց Աննա չուզեց հոն բազմիլ, այլ բռնադատեց զհայրն որ ելնէ մարքիզուհւոյն քովն նստի, ինքն ալ աղէկ գէշ մօրն ոտից քով պլորեցաւ նստաւ: Երկու օրէն խեղճ պանդուխտներն Լիւքսամպուր քաղաքն եկին. հոն հասնին չհասնին փրանկիացի մի իրենց այցելութիւն եկն ասելով թէ ինքն մարքէզին Քոնտէ իշխանին կողմանէ պաշտօն ունէր՝ Փրանկիայէն եկած պանդուխտներն ժողովելու և զինուոր գրելու: Այն մարդն հազիւ դուրս ելեր էր ուրիշ մի եհաս գերակոմս Միրապոյի կողմանէ՝ որ Միրապոյ ճարտարախօսին եղբայրն և Թիւրէնի գնդին վաղեմի գնդապետն էր: Մար-

քէզն յոյժ զարմանալով որ օտար երկիր ոտք կոխածին պէս՝ շահասէր և բաղդախնդիր մարդիկ իւր առջեն կելնէին՝ այլոց թշուառութենէն օգուտ քաղելու համար, պատասխանեց նոցա որ Քոնտէի իշխանն անձամբ չտեսած՝ բանի մի ձեռք զարնելու միտք չունէր:

Երկրորդ օրն Թրէվ քաղաքն հասին, և անտի ելնելէն յառաջ՝ մարքէզն ուզեց որ իւր աղջիկն այս հռչակաւոր քաղաքն պտըտցընէ՝ որ նախկին Կեղտաց մանաւանդ թէ բովանդակ Եւրոպայի ամենէն հին քաղաքներէն մին է. որովհետև Հռովմայեցւոց մինչև Հռենոսի եզերքն արշաւած ժամանակ՝ այս Թրէվիրի կամ Թրէվէրի քաղաքն ապարանօք և շինուածքով զարդարուած ու պարսպով ամրացած էր. վաճառականութիւնն ու արուեստներն ալ ծաղկած, և ժողովուրդն 'ի վաղուց հետէ կրթուած և քաղաքական կարգերով զարգացած էին. այնպէս որ Հռովմայեցիք զայն (Բեղգիոյ) Պէլճիքայի մայրաքաղաքն արարին, և յետոյ Կեղտաց կուսակալն ալ հոն կը նստէր: Նախ և առաջ Սուրբ Պետրոս մայր եկեղեցին գնացին և Աստուծոյ շնորհակալ եղեն այն իրենց յայտնի ցուցած պաշտպանութեանն համար. և յետոյ եկեղեցւոյն ամեն դին պտըտեցան. որոյ ճակատն և արևելեան կողմն հռովմէական ճարտարապետութեան կնիքն դեռ պահած է. ոմանք ասեն թէ այս եկեղեցին Հեղինէ դշխոյի ապարանից աւերակաց վրայ շինուած է. իսկ այլք թէ 'ի Կոստանդիանոսէ շինեալ կռատան մի տեղն է: Անտի Սուրբ Սիմէոն եկեղեցին գնացին որ այն ալ շատ հին է և Հռովմայեցւոց աշխարհակալութենէն առաջ շինուած համարի. սորա շէնքն առանց շաղախի և ծեփի իրարու վրայ դրուած կոփածաքարի մեծամեծ հա-

տարներով շինած է՝ ներսի դին երկաթի պահանգներով իրարու հետ կապուած[1]: Տեսին նաև Մոզէլ գետոյն վրայի կամուրջն հրաբխային քարերով և կեղտա-բելգական ճարտարապետութեամբ շինուած, Հռովմայեցւոց շինած շրջաթատրոնն՝ որ հիմա բոլորովին աւերած և անյայտ եղած է, Կոստանդիանոսի պալատան, բաղանեաց և նաւամարտի հրապարակին աւերակներն են: Բայց քան զայսոնք աւելի զուարճալին՝ Թրէվի շրջակայքն էին գեղափթիթ գիւղերով զարդարեալ:

Երբ Քոպլէնց հասին՝ մարքէզն անմիջապէս Քոնտէի իշխանին գնաց՝ որ մարդասիրութեամբ ընկալաւ զնա. բայց երբ մարքէզն նմա յայտնեց իւր միտքն թէ կուզէ Հռենոսի եզերքն հաւաքուած գունդերէն միոյն մէջ զինուորիլ, իշխանն խրատ տուաւ նմա որ իւր աշխոյժն չափաւորէ. «Եթէ երիտասարդ լինէիր, ասաց, զքեզ կը գովէի ու կը քաջալերէի, բայց հոս ընտանիքդ հետդ են, և նոքա քեզ պէտք ունին. և ինչ լինին եթէ զքեզ կորուսանեն: Արքունեաց քաղաքականութիւնն ալ այնչափ մութ և ծածուկ է՝ որ չեմ գիտեր թէ ինչպէս այս բաներս պիտի աւարտին: Բրուսիոյ թագաւորն միայն թագաւորաց դատին պաշտպանն է, սակայն Վիեննայի և Բրուսիոյ արքունիք՝ մանաւանդ առաջինն՝ անօգուտ բանագնացութեամբ շատ ժամանակ կորուսանէ, և կարծես թէ չտեսներ որ Փրանկիոյ մէջ անցք հսկայաքայլ դէպ 'ի կորուստ կընթանան: Պատրանօք մեք զմեզ չխաբեմք. ես կը տես-

1 Այս եկեղեցիս հիմա թանգարան փոխուած է ուր կը հաւաքուին քաղքին և շրջակայից մէջ գտուած հնութիւնք:

նեմ՛ որ տու հասարակ ամենայն արքունիք ան-
տարբեր և անկարեկիր աչօք կը նային մեր վրայ։
Ի նոցանէ միայն Բրուսիոյ Թագաւորն սրտի
մօտք կաշխատի. բայց նա ալ զինչ կարող է ա-
նել՝ Փրանկաց պէս անհամար ազգի մի դէմ, որ
մեծամեծ ու գեղեցիկ խօսքերով խաբուած՝ ինչ-
պէս որ միշտ եղած են Թեթևամիտ ազգերն, հո-
գիներն գրգռուած են հաւասարութիւն, ազա-
տութիւն և եղբայրութիւն բառերով, և իւր խե-
լացնոր հասարակապետութեամբ բորբոքած »։

Իշխանին խօսքերն՝ երկմտութեան մէջ ձգե-
ցին զմարքէզն. 'ի միոյ կողմանէ կը տեսնէր որ իւր
զոհած ազատութիւնն՝ հասարակաց բարւոյն օ-
գուտ մի պիտի չլինէր, և ուրիշ բանի պիտի չգար՝
բայց եթէ իւր դրամական կարողութիւնն նուազել
'ի վնաս իւր ընտանեաց. միւս կողմէն ալ իրեն շատ
ծանր կու գար իւր յամուսնոյն և յԱննայէ բաժ-
նուիլ՝ որ անձնամատոյց եղած էին նմա ծառա-
յելու։ Քօպլէնցի մէջ ալ շատ մի պանդուխտ
Գաղղիացիք գոյին՝ որ ամենքն ինքզինքնին պարտա-
ւոր սեպելով պատուոյ համար Քոնտէի կամ Մի-
րապոյի հրամանացն երթև զինուորելու՝ յանցաւո-
րի պէս կը նայէին այն մարդկանց վրայ որ անփոյթ
կերևէին այս պարտքս կատարելու։ Ուստի սոցա
Թախանձանքէն ազատելու համար, մարքէզն իւր
կնոջ հետ ալ խորհրդակցելով՝ որոշեց անյապաղ
առնուլ ու Պէրլին կամ Վիէննա երթալ, և այս
քաղաքներէս միոյն մէջ սպասել՝ մինչև ժամանակ
հանին նորէն 'ի Փրանկիա դառնալու։ Ուստի Տէր
տը Սէնթ-Անժ, իւր կինն և աղջիկն գրեթէ քան
որ Քօպլէնց մտալէն յետոյ այն քաղքէն ելին. մըտ-
քերնին այն էր որ ուղղակի Մայանս (Մակոնցայ)
երթան և հոն Հռենոսէն անցնելով 'ի Մանհէյմ՝
Հէյտէլպէրկի ճամբան բռնեն և Անսբախէն դէպ

'ի Դանուբ իջնեն և անցնին 'ի Բոհեմիոն։ Մար-
քիզուհին անհանգստութեան վարժած չլինելով՝
դժուարաւ պիտի հաւանէր այս երկար ճամ-
բորդութեան՝ եթէ իւր այրն ամէն խնամք չըա-
նեցընէր հանգստեամբ կատարելու այս ուղևո-
րութիւնս, և այս բանիս համար ստակի չէր
խնայեր. Թէպէտ և Տիւպուայի բերած ստակն
և մարքիզուհւոյն Փարիզէն ելնելու ժամանակ՝
իւր վրայ առածն՝ իրենց պիտի չբաւէին եթէ
պանդխտութիւննին սակաւ մի երկարէր։ Իսկ Ան-
նա զապագայն շատ չէր հոգար, և կը հաւա-
տար Թէ քանի մի ամսէ 'ի Փարիզ պիտի դառնան՝
ինչպէս որ ամենք ասէին։ Նա և չէր գիտեր Թէ
որչափ ստակ կայ հօր քսէն, և որովհետև կենաց
մէջ սակաւ ստակ անցած էր իւր ձեռքն, ուստի
ոսկւոյ յարգն ալ չէր գիտեր. և Աստուծոյ նա-
խախնամութեան կը յանձնէր ու ինքն իրեն ասէր.
«Այնպիսի տաղանդ մի ունիմ՝ որոյ համար Փա-
րիզու մէջ ծափահարութիւններ ընդունած եմ,
ո՛ գիտէ Աստուած ինչ բանի համար տուած է ինձ
զայն։ Դեռ ես տղայ եմ՝ և եթէ իմ բարի հօրս
համար աշխատիլ պէտք լինի՝ Աստուած գիտէ ինչ-
պէս սրտանց պիտի աշխատիմ»։ Մանաւանդ որ
ճամբորդութիւն ալ իւր սիրած բանն էր՝ Թէպէտ
և սակաւ մի երկար պիտի քշէր. Աննա բան ու-
սանիլ կուզէր, և կը մտածէր Թէ ճամբորդու-
Թեան մէջ մարդ շատ բան կրնար ուսանիլ զը-
ւարճութեամբ հանդերձ։ Ընդհանրապէս աղայք
ճամբորդութիւն կախորժին. այն հազար մի
նիւթերն որ անդադար զիրար կը յաջորդեն, այն
կենաց և սովորութեանց, զգեստուց և լեզուայ
զանազանութիւն, այն բնութեան տեսարաններն
մերթ զուարթ և գեղածիծաղ և մերթ լուրջ և
ահարկու, այն կանաչ մարգագետիններն՝ որոց

մէջ հօտք ոչխարաց կը խայտան հաւատարիմ և իմաստուն շանց պահպանութեան ներքև, այն աչեղ ժայռերն որ կարծես թէ իրենց գագաթներն ձամբորդին գլխուն վրայ կը ձօձեն, այն յստակ առուակներն՝ որոց ջրերն օձապտոյտ կը խոխոջեն ու կը թաւալին հովտաց աւազներու վրայէն, այն ջրվէժներն որ բարձր լեռներէ վար սաստկաձայն կը թափին, այն կանաչ անտառներն՝ որոց մէջ քաղցր մտածութիւններով թափառիլ կուզէ մարդ, այն քաղաքներն, գիւղերն ու շէներն՝ որ որչափ յառաջ երթաս յերևան կելնեն, այն հորիզոնն որ կարծես թէ ուղևորին առջևէն ետ ետ կը փախչի, այս ամէնքս զանազան ազդեցութիւններ կուտան մարդուս՝ թէ իրենց նախկին բնական ձևոյն մէջ պահուած ատեն և թէ յոյն և հռովմէական գեղեցիկ գործերէն մնացած, այս ամէն բան՝ կ՚ասեմ՝ մանաւանդ ուղևորին վրայ մեծ տպաւորութիւն կը գործեն, և իւր մտաց մէջ նոցա կենդանի պատկերն կը դրոշմեն: Ուստի Աննա ալ միտքն դրաւ՝ որ այս ուղևորութեանս մէջ ամէն բան դիտէ, ու նաև 'ի գիր անցընէ իւր ունեցած զգացմունքն և դիտողութիւնքն:

ԳԼՈՒԽ Ը.

Ուղևորութիւն 'ի Քոպլենցէ 'ի Վիեննա:

Մեր պանդուխտներն կանուխկէկ հասին 'ի բերդաքաղաքն Մայանս, որ Հռենոսի ձախակողմեան եզերքն՝ Մէյնի հետ խառնուելու կէտին վրայ շինուած է ու 30,000 բնակիչ ունի՝ որք իրենց պարսպաց և մանաւանդ միջնաբերդին վրայ վստահացած, չէին յուսար որ սակաւ ժամա-

նակէն եռագոյն դրօշն իրենց պարսպաց վրայ ալ պիտի ծածանէր. որով զՖրանկլոցիս ալ բանի տեղ չէին դնէր և նոցա վրայ արհամարհանօք կը խօսէին. Նա թերևս մտքերնէն կանցընէին թէ ո՞ւր էր որ հասարակապետութեան բանակ մի գար ու իրենց քաղաքն պաշարէր և իրենց զօրութիւնն հասկնար: Սակայն այս անշուք և անարուեստ շինուած քաղքիս մէջ ալ՝ կան քանի մի տեսնելու արժանի շէնքեր և աւերակներ. Ինչպէս առջիններուն մէջ մայր եկեղեցին, զինարանն, Տևտոնեան ասպետաց կարգին ապարանքն՝ որ այժմ մեծ դքսին բնակարանն է. իսկ հնութեանց մէջ երևելի է միջնաբերդին մէջ փլատակ շէնք մ՚ որ 'ի պատիւ Դրուսոսի շինուած կերևի. գետին մէջ ալ կամրջի խարիսխներ կերևին՝ զոր Տրայիանոս կայսեր ժամանակ Հռովմայեցիք շինեցին. Մեծն Կարոլոս այս խարիսխներուս վրայ փայտէ կամուրջ մի ձգեց, որ երկար ժամանակէ 'ի վեր անյայտ եղած է, և գետոյն ցածցած ժամանակն ալ այս խարիսխներս ջրոյն հետ հաւասար են. հիմա քաղքին մի կողմէն 'ի միւսն անցնելու համար 550 մեթր երկայնութեամբ նաւակամուրջ մի շինուած է: Սակայն Աննա իւր հետաքրքրութեան արժանի բան մի չգտաւ այս քաղքիս մէջ, բաց 'ի Պէյնպրախթի ա[պ]արանքէն՝ որ հիմա իջևան երից թագաւորաց ասի, որ գոթացի շինուած մ՚ է, և այսոր մէջ առաջին անգամ տպագրեալ ամբողջ գիրք մի 1457ին. մայանսացի առաջնորդն որ զնոսա կը պտըտցընէր ասաց նոցա թէ իւր հայրենակիցն Կութէնպէրկ՝ տպագրութեան գիւտն հնարողն եղած էր, որոյ դէմ չդըրաւ մորքէզն՝ Մայանսի պարծանք եղող Կութէնպէրկի պատուոյն համար՝ որ նոյն քաղաքն ծնած էր, բայց յետոյ աղջկանն ասաց որ բուն

տպագրութեան գիւտն Սթրասպուրկ քաղքին մէջ հնարուած էր։

Մայանսէ ելնելով, որ յառաջագոյն համանուն կայսրընտրութեան մայրաքաղաքն էր և հիմա Հռենոսեան Հէսի գլխաւոր քաղաքն է, մեր ճանապարհորդներն ծաղկազարդ գեղերէ անցնելով հասան Վորմս քաղաքն, որ միջին դարու պատմութեան մէջ անուանի է, և զոր Հռովմայեցիք շինեցին և անուանեցին Վորմացիա. դիրքն շատ գեղեցիկ և զուարճալի լինելով Փրանկաց թագաւորաց շատերուն ամարանոցն էր, որպէս նաև մեծին Կարողոսի. և այն ատենէն 'ի վեր Գերմանիոյ կայսերք մեծ ժողովքներ գումարած են հոն։ Վորմսի մէջ երևեցաւ 1521ին Լուտեր հերետիկոսապետն՝ որ դժբաղդաբար գերմանացի թագաւորազունքն իրեն պաշտպան գտնելով՝ քանի մի ուղղափառ հովուաց առջի իւր թունալից վարդապետութիւններն պաշտպանելուն համար՝ դատապարտեցաւ։ Ուղևորներն գնացին մայր եկեղեցին տեսնելու՝ որ կաթողիկէ կ'անուանի, և որոյ հիմունքն ասի թէ Ը դարուն մէջ ձգուած են, և տեսնելու բան է դասին արևմտեան գին եղած կլոր վարդաձև մեծ լուսամուտն, որ առաջինն եղած է միւս եկեղեցեաց այս ձև պատուհաններուն։ — Մանհէյմ քաղաքն՝ որ յառաջագոյն Պալատինեան կայսրընտրաց բնակութիւնն էր և հիմա Պատի մեծ դքսութեան մասն սեպուած՝ Ստորին Հռենոսնահանգին գլխաւոր քաղաքն է, և Գերմանիոյ գեղեցիկ քաղաքաց մին

1 Լեհաց անուամբ իմաստուն մայանսացին՝ ասկէ սակաւ մի յառաջ եցոյց՝ որ Մայանսի մէջ աւելի կատարելագործուեցաւ տպագրութեան գիւտն՝ որ 'ի Սթրասպուրկ հնարուած էր։

է, և Հռենոս ու Նեքեր գետերու իրարու խառնուած տեղն շինեալ լինելով՝ վաճառականութիւն ու ձեռնարուեստք շատ ծաղկած են։ Մեր ուղևորքն գնացին տեսնելու կայսրընտրին պալատն՝ ուր հիմա մեծ դուքսն կը նստի, և շատ ընդարձակ շէնք մի է. և 'ի նմին բազմաթիւ գրեանց գրատուն մի, պատկերաց, հնութեանց և բնապատմութեան ճոխ թանգարաններ. այս քաղքիս մէջ կը շինուի կեղծոսկի ասացեալ մետաղն՝ որ Մանհէյմի ոսկի ալ կը զրուցուի. այս քաղքես Հէյտելպէրկ շատ հեռի չէ. այնպէս որ մեր ուղևորք միջօրէէն երեք ժամ ետև հոն հասին։ — Որովհետև այն ժամանակն ոչ շոգենաւ գոյր՝ որով կ'արծես թէ մարդ ջրոց վրայէն կը սահի կերթայ, ոչ երկաթուղի՝ որ հեռաւոր տեղերն իրարու կը մօտեցընէ, նա և ոչ այն ձեպընթաց ասացեալ քսան հոգւոյ ծանր կառքերն՝ որ գիշեր ցորեկ վազելով հազիւ շունչ առնուլ կուտան ուղևորաց, ուստի քաղքէ մի ուրիշ քաղաք երթալու համար՝ օրուան մէջ քանի մի ժամ միայն կ'երթային ու երեկոյ եղածին պէս իջևան մը կ'իջանէին կառքերն ու ձիերն փոխելով. որով թէպէտ և կերակրոյ և քնոյ հանգիստ ժամանակ ունէին՝ հովէ անձրևէ և սառուցէ ազատ, բայց շատ ալ ժամանակ կը կորնչէր։ Մալըքէզի ուղևորութեան ժամանակն ալ՝ այս հին սովորութիւնս լինելուն՝ երկրորդ աւուր ճամբորդութե հոգն՝ վաղուան կը թողուին։ Բայց Հէյտելպէրկի մէջ ալ ժամանակնին պարապ չանցուցին. իրիկուան դէմ գեղեցիկ օդ մի լինելուն՝ հետևոտս ելլին գնացին կայսրընտրաց դղեակն տեսնելու, որ լերին զառ 'ի վայրին վրայ շինուած է թէ և աւերակ դարձած. որովհետև 1764ին հրդեհով մի էրեցաւ, և նորէն չշինուեցաւ։ Ուղևորաց գլխաւոր

դիտումն այն էր որ այն գըլէկին նկուղներուն մէջ եղած արտաքոյ կարգի մեծ տակառն անծնէն՝ որ չորս հարիւր քառասուն հազար լիտրէն աւելի գինի կ'առնու մէջը. այս տակառս մինչ ցարդ կեցած է, և Գերմանիոյ հրաշալեաց մին կը սեպուի և երկրին զարմանալիքն՝ ինչպէս բրգունքն՝ Եգիպտոսի աշխարհին:

Հէյտէլպէրկէն մինչև Ռոթէնպուրկ ուրիշ զարմանալի բան մի չկայ տեսնելու. այս յետին քաղքիս բնակիչքն վեց հազարի չափ՝ գրեթէ բոլորն կաթոլիկեայ են, և եպիսկոպոսանիստ է և վարդապետանոց մի ունի, և Վիւրթէնպէրկի թագաւորութեան արևմտեան սահմանածայրն անկանի: Վիւրթէնպէրկի թագաւորութեան մէջ է Սուապ նահանգին մեծագոյն մասն և Ֆրանքոնիայի մի փոքրագոյն մասն: Ռոթէնպուրկէն անդին Պաւիէրայի թագաւորութեան երկիրն կը մացուի Սեաւ անտառի մէջէն կարող ճամբով մի. Դունա կամ Դանուբ գետն ալ այս Սեաւ անտառէս կելնէ ու Սեաւ ծովը կը թափի:

Անսբախ գեղեցիկ քաղաք մի է տասնուչորս հազար բնակչօք, որ ճարտարարուեստ և վաճառական մարդիկ են. Ճ.ին գրատուն մի ալ ունի ինչպէս որ Գերմանիոյ մէջ շատ կան:

Երկու օր ճամբայ առնելով մեր պանդուխտներն հասին 'ի Ռաթիսպոն՝ որ շատ հռչակաւոր քաղաք է՝ պատճառաւ որ 1662է 'ի վեր գերմանական կայսրութեան մեծ ազգաժողովն հոն կը հաւաքուէր. բայց 1806ին այս փառքէն զրկուեցաւ, որովհետև գերմանական կայսրութիւնն ալ նոյն տարի դադարեցաւ և ազգաժողովն լուծաւ: Շատ գեղեցիկ շէնքեր ունի, որոց մէջ երևելի է մայր եկեղեցին, և մանաւանդ Ռաթհաուզ ասացեալ դատաստանարանն, Սէնթ

Էմերանի մենաստանն՝ որ Գերմանիոյ վանաց մէջ մեծերէն մին է, և հիմա Թուրն-Թաքսիս իշխանին ապարանքն է: Ռաթիսպոնէն սակաւ մի հեռի նոյնպէս գետոյն աջակողմն է Սթրաուպինկ քաղաքն՝ եօթն հազար բնակչօք: Անոր գետոյն անդին կողմն կերևի Տէկկէնտորֆ քաղաքն իւր գարբնոցաց համար հռչակաւոր, և մանաւանդ իւր եկեղեցին՝ ուր բոլոր տարին ուխտաւորք պակաս չեն: Սթրաուպինկէն ամբողջ օր մի հեռի՝ Իննն ու Դանուբ գետոց խառնուած տեղն է՝ Բասսաւ եպիսկոպոսանիստ քաղաքն՝ տասն հազար բնակչօք, որ իւր պատնէշներուն և բրից համար անուանի է՝ Պաւիէրայի սահմանածայրն. Բասսաւի մէջ գեղեցիկ կամուրջ մի կայ Դանուբի վրայ:

Աննա շատ անգամ կը դիտէր այս ընդարձակ գետոյն լայնութիւնն, այնոր ջրոյ արագութիւն, իր ափանց վրայ բարձրացած ժայռերն ու պարժիններն. Լուիկ մնջիկ կը զարմանար այս լայնատարր յորձանքիս [illegible], որ իր դղրդող ալիքներն կը թաւալէր անդունդի մի մէջ որ զինքն կը կլլէր ու մերթ ընդ մերթ անյայտ առնէր: Ասոր վրայ կը նկատէր մարդկային կենաց օրերն որ իրարու վրայ կը թաւալին և ստուերի պէս անյայտ լինին, և գերեզմանէն դուրս հետք մի չեն թողուր իրենց վաղանցիկ գոյութեանն: Ա՜հ, ասէր, որչափ կորսուած աւուրք կան մարդկային կենաց մէջ. որչափ աւուրք որ կը վազեն կ'անյայտին ու ա՛լ ետ չեն դառնար. Երանի այն մարդուն որ նախախնամութեան նմա շնորհած ժամանակն օգտակար կերպով կանցընէ: — Ուրիշ տեղ ալ իւր օրագրին մէջ այսպէս կը գրէ. «Դանուբի երկայնութիւնն սկսեալ 'ի Սեաւ անտառէ ուստի որ կը բղխի՝ մինչև 'ի Սեաւ ծով ուր իր ջրերն կը թափին, գրեթէ 500 փար-

սախ է, և այս ընթացիցս մէջ գրեթէ հարիւր գետեր այնոր մէջ կը խառնուին՝ որոց կէսէն աւելին նաւարկելի են. իւր երկայնութեան շատ տեղերն 120էն մինչեւ 500 տակառաչափ տանող նաւեր կրնան նաւարկել: Բասսաւէն անդին մինչև Լինց իւր լայնութիւնն փարսախի չորրորդ կամ երրորդ մասն է միայն. բայց Լինցէն անդին և Իննի հետ խառնուելէն ետև՝ լայնութիւնն մի փարսախի կը հասնի. իսկ Վիէննայէն վար այս լայնութիւնն կը կրկնապատկի. և երբ աջակողման եզերքն Նայզիտել լճին հետ միանալով միւս եզերքն ալ Վաակին հետ կը խառնուի՝ լայնութիւնն քանի մի փարսախի կը հասնի և հեռուէն լերանց գօտիներ զայն կը շրջապատեն: Իր բըղխած ակունքէն մինչև Վաց քաղաքն՝ իւր ընթացքն արևմուտքէն արևելք է, Պաուլ հիւսիսային դիէն աւուր մի ճամբայ հեռու: Վաց հասածին պէսյանկարծ կը դառնայ ու 60 կամ 65 փարսախ տեղ դէպ 'ի հարաւ կը վազէ. յետոյ դարձեալ ընթացքն կը փոխէ ու մինչև Պէլկրատ դէպ 'ի հարաւ արևելք կընթանայ. և անտի դարձեալ իւր առջի ընթացքն կառնու՝ այսինքն արևմուտքէն դէպ 'ի արևելք»:

Արևն ծագելու ժամանակ մեր ուղևորքն Բասսաւէն մեկնեցան, և մինչև Լինց՝ անցած երկիրներն խիստ և տխուր երևցան իրենց. սակայն կը տեսնէին որ մշակութիւնն շատ յառաջ գնացած էր, և քանի մի գաւառներ ալ շատ ծաղկած գոլին ամէն տեսակ բոյսերով ծածկած. ծառերն սաղարթուն և տերևալից, տանձենիներն, խնձորենիներն ու սալորենիներն պտղալից: Ամէն դի կանաչ անտառակներու մէջ մեծամեծ գիւղեր, բանջարեղինաց պարտէզներ, մարգագետիններ և հունձքով ծածկուած լերանց կողեր.

ամէն դի գործունեայ և ջանասէր մարդիկներով լի, որ բնութեան կ'օգնէին իւր ճոխութիւններն յառաջ ածելու:

Բայց երբ Վերին Աւստրիա մտին՝ Աննա շատ զարմացաւ բնակչաց ծանր և գրեթէ տխուր կերպն նկատելով. արդէն հագած զգեստուց սև և մութ գոյներն՝ նոցա դիմացն զուարթութիւն չէին տար. արանց զգեստն երկայն պարեգօտ մի է՝ ներսի դին կարմրագոյն բամբակեայ աստառով ու կարերուն տեղերն կարմրագոյն երիզներով ու մետաղէ կոճակներով. բաճկոնին վրայ ալ դարձեալ խոշոր կոճակներու շարք մի կայ. կապտագոյն գուլպաներ, և արծաթի կամ պղնձի ճարմանդով մոյկեր, և սևագոյն մորթէ վարտիք մի. գլուխնին մետաքսէ լայն ժապաւինով զարդարուած՝ փոքրիկ գլխարկ մի. այս է բոլոր հագուստնին: Իսկ կանայք բաճկոնակ մի կը հագնին երկնկեկ, իսկ շրջազգեստնին այնչափ կարճ՝ որ հազիւ ծունդերուն կը հասնի, կապտագոյն գուլպաներ ու գլուխնին կլորիկ ճերմակ գդակներ: Բնակիչքն իրենց երկրին շատ յարուած կերևին, լեզուննին գերմաներէնի գաւառական տեսակ մի է՝ խիստ և գրեթէ օտարաց անհասկնալի. այնպէս որ Աննա թէպէտ և անգղիարէն և գերմաներէն լեզուներն ուսեալ էր և լաւ կը խօսէր՝ սակայն մեծ դժուարութիւն կը կրէր նոցա ասացածն հասկնալու. երկրին ընդհանուր կրօնքն կաթոլիկէ հաւատքն է, և լուտերականութեան թոյնն նոցա մէջ մտած չէ, բայց միայն Լինցի հարաւ արևելեան դին Շթէյերի մէջ:

Լինց Վերին Աւստրիոյ մայրաքաղաքն կը համարի և Հաւսրուխի նահանգին գլխաւոր քաղաքն է, և կարծուի թէ Հռովմայեցւոց Լէնցիա տառ-

ցեղ գաղթականութեան տեղն շինուած է, և Աւստրիոյ արշիդքսութեան հետ միանալէն յառաջ՝ ազատ և անկախ իշխաններ ունէր. անուանի Քէբլէր աստղաբաշխն այս քաղաքս կը բնակէր՝ երբ Հերպէրսթորֆի քաղաքապետին և 'ի նմանէ ընկճեալ գիւղացւոց մէջ քաղաքական պատերազմ բացուեցաւ։ Հին քաղաքն բոլոր բոլոր փողոցէ մի կը ձևանայ՝ հարաւէ դէպ 'ի հիւսիս ձգուած, հոն է արշիդքսութեան հին դղեակն՝ որ յոյժ գեղեցիկ տեսարան ունի։ Իսկ Նոր քաղաքն ընդհանուր լաւ շինուած է. դատաստանարանն և եպիսկոպոսարանն տեսնելու արժանի են. Լինցի արքեպիսկոպոսութիւնն Յովսէփ Բ կայսրն հաստատած է 1785ին։ Հրապարակին մէջ մարմարինէ սիւն մի կանգնած է 1717ին 'ի պատիւ ամենասուրբ Երրորդութեան. բայց զարմանալին այն է՝ որ այնոր տակ եղած երկու աղբիւրներուն արձաններէն մին զՊոսիդոն կը ներկայացնէ և միւսն զԱրամազդ։ Դանուբի մօտաւորութեան պատճառաւ ճարտարարուեստք ծաղկած են, և մեր ուղևորաց անոր անցած ժամանակ շատ մեծ շարժում կար քաղքին մէջ, որովհետև մեծ տօնավաճառ լինելուն՝ շատ օտարականք եկած էին հոն։

Երբ մեր ուղևորք կը պատրաստուէին Լինցէն ելնելու, ոմանք նոցա առաջարկեցին որ Վիէննա երթալու նաւ մի կար հոն մանեն. և մարքէզն ալ հաւանեցաւ, որովհետև ցամաքի ճամբէն դիւրագին էր. բայց երբ մարքիզուհին լսեց որ Սփիէլպերկ ամրոցէն վար չորս հինգ ժամ նաւարկելէն յետոյ՝ գետն երկու լերանց գօտիներու մէջ սեղմած այնչափ կը նեղնայ՝ որ սաստիկ յորձանք կը պատճառէ և նաւերն վտանգի մէջ կը ձգէ, աւելի ուզեց հետիոտս յառաջ վարել իւր ճամբան՝ քան թէ փորձանքի մէջ ձգել զիրենք։ Եւ թէպէտ մարքէզն ասէր, թէ քաջ նաւուղիղ մի ունենալէն ետև՝ վախնալու բան չկար, բայց մարքիզուհին չհաւանեցաւ։ Իսկ Աննա լսած լինելով այն անուանի յորձանքն կամ պտոյտն որ տեղացոց լեզուով Վիրպէլ ասի, շատ հետաքրքրութիւն ունէր զայն տեսնելու։ Գետոյն ամենէն աւելի նեղցած տեղն՝ ջրերուն մէջ բարձրացած ժայռոտ կղզի մի կայ, և այս ժայռին ու եզերքին մէջ եղած նեղ անցքէն անցնելու համար շատ զգուշութի պէտք է, որովհետև ջրոց յորձանքն այս ժայռին զարնուելով ուժով ետ կը դառնան, և վա՜յ այն նաւուն որ այս ետ դարձած ջրերուն մէջ անկանի, վասն զի անշուշտ կորնչի. իրաւ ժայռին հարաւային դին եղած անցքն յորձանք չունի՝ բայց հոն ալ ծանծաղ ու սակաւ ջուր լինելուն պատճառաւ՝ թեթև նաւակներ միայն կարեն անցնիլ։ Առջի ժայռոտ կղզիէն ետև՝ երկրորդ կղզի մի ալ կայ աւերակ դարձած աշտարակով, որուն համար ասեն թէ ասպետաց ժամանակ շինուած է։ Այս տեղս գետոյն արագութիւն անհնարին է. սրընթաց ջրերն կատաղութեամբ ժայռին ստորոտն զարնուելով՝ կը խորտակին և ձեան պէս փրփուրն օդն ելնելով՝ անձրևի պէս վար կը թափի. միւս կողմանէ ալ ջրերն իրարու զարնուելով կլոր կլոր կը դառնան և բոլոր գետոյն լայնութիւնն յորձանք ու պտոյտ մի կը ձևացնեն։ Հոս տեղս ետ դարձած ջրոց և ափանց մէջէն անցնիլն անհնարին բան է, այլ պէտք է որ նաւաստին նաւակն ճիշդ այն յետադարձ ջրոց վրայ բռնէ՝ որ այնոր վրայէն սահի անցնի առագաստի և թիակներու ուժովն. խոհեմ նաւուղիղք՝ ջրոց յորդութեան ատեն՝ ոչ երբեք կը համարձակին այս

վտանգաւոր անցքէն անցնիլ, այլ կը սպասէն որ ցածնան [1]։

Աննա որ նախախնամութեան վրայ վստահացած՝ վախն ինչ է չէր գիտեր, յօժարութեամբ հօրն առաջարկին կը հաւանէր, որովհետև ընտանեաց ալ օգուտ և խնայութիւն մի էր, և իւր հետաքրքրութիւնն ալ կը յագեցնէր՝ բնութեան գեղեցիկ տեսարաններէն մին ալ տեսնելով զոր թերևս ուրիշ անգամ տեսնելիք չունէր. բայց գիտելով որ մայրն մեծ հոգւ և մտատանջութեան մէջ ինկած է՝ կամակար իր զուարճութենէն հրաժարեցաւ. մանաւանդ քանի որ իւր մայրն ՚ի կարօտութենէ ստիպեալ՝ իւր սիրտն աղջկանն կը բանար, սորա ալ աչքի երկիւղալից յարգանքն և անձնանուիրութիւնն՝ քաղցրիկ սիրելութեան մի փոխուած էր. մինչև այն ատեն իւր մայրն յարգել էր, հիմա կիմանար որ զնա սրտանց կը սիրէր. ուստի ծանր չէկն իրեն այս զուարճութենէս հրաժարելն, և հայրն ալ աղաչելով համոզեց որ ետ կենայ այս խորհրդէս։ Մարքիզուհւոյն սիրտն կը ճմլէր՝ զաւկին այս նրբին մտադրութիւնն տեսնելով զոր իր առջինեկ աղջկան ցուրտ անձնասիրութեան մէջ՝ ոչ երբէք տեսել էր. ուստի զԱննա գրկելով կարծես թէ ասել կուզէր. «Կարելի բա՞ն է, զաւակս, որ այսչափ ժամանակ զքեզ չեմ ճանչցած, և այսչափ երկար ատեն քու քաղցրիկ մխիթարութենէդ զրկուել եմ»։ Իսկ Աննա նորա ձեռուըներն համբուրելով և իւր սրտին վրայ սեղմելով՝ անուշ անուշ մօրն վրայ կընայէր ու ասել կ՚ու-

1 Քանի մի տարիէ ՚ի վեր աւստրիական պետութիւնն այս Սեմէնտէլի անցքն լայնցընել տուաւ՝ ականով ժայռերը կործանել տալով։

զէր. «Մայր իմ, քանի որ այս սիրտս կը բաբախէ՝ զքեզ սիրելէ պիտի չդադրի»։

Լինցէն գրեթէ տասուերկու ասպարէզ (հազարամետր) հեռու՝ Թրաւն ասացեալ գետոյն վրայէն անցան՝ որոյ ջրերն բոլորովին կանանչ էին. Աննա պատճառն հարցանելով իմացաւ որ այն գետն իւր բխած տեղէն սակաւ մի հեռի լճի մի մէջէն կանցնի եղեր՝ որ թեթև հովէ մի ալ ծածանելով կանաչ գոյն մի կ՚առնու. և այս բանիս պատճառն այնոր յատակն եղած բարակ կաւն է՝ որ ջրերու ծփմամբն կը խառնուի, ու երբ հովն կը դադրի՝ նորէն յատակն կիջնէ. և այն ատեն այնչափ վճիտ ու պայծառ լինի ջուրն՝ որ երէք չորս մետր խորութեամբ ալ յատակն որոշ կը տեսնուի։

Էպերսպերկ գիւղին առջին՝ Թրաւն գետն երկոտասան ճիւղ կը բաժնուի, և վրան գրեթէ 1200 մետր երկայնութեամբ կամուրջ մի կայ. ուսկից մեր ուղևորներն անցնելով իրենց աջակողմն թողլին Շթէյեր քաղաքն՝ որ անուանի է երկաթի վաճառականութեամբ ու շատ գործարաններ ունի դաշոյններու, սուրերու և սուիններու և մանաւանդ սղոցի՝ որոց ջուր տալն կամ մխելն շատ լաւ գիտեն, և հասին Էնս ասացեալ պզտի քաղքին ստորոտն՝ որ համանուն գետոյն եզերքն և մանաւանդ թէ լերին ստորոտն շինուած է, և գետն ալ այն լերին բոլորտիքն կը պատէ։ Էնս կամ Էնսպուրկ քաղաքն (զոր պէտք չէ շփոթել Լորխ գաւառին համանուն գիւղին հետ, որ Էննի և Դանուբի իրար խառնուած տեղւոյն վրայ է) Ամիանոս Մարկելլինոսի յիշած Աւրէլատում քաղաքն է, և Պաւարիացիք շինած են զայն Թ դարուն վերջերն, որովհետև այն գաւառն ալ իրենց էր յայնժամ։ — Էնսէն անդին՝ Ստորին Աւս-

արխու կը մտցուի, որ առջի բերան հաճոյական եր-կիր մի չերեւէր, որովհետեւ ժայռոտ ու խոպան բլուրներով ծածկած է՝ հոս հոն քանի մի փոք-րիկ անտառներով. երկրագործութիւնն ալ երեսի վրայ թողուած է ինտէն սկսեալ մինչև Իփսա քա-ղաքն՝ զոր ոմանք նախկին Կիպսելա քաղաքն կը համարին, և ոմանք 'ի գիտնոց՝ անուան նմանա-ձայնութենէն համարեցան թէ հին ժամանակ Եգիպտացւոց Իսիս աստուածն հոս ալ կը պաշ-տէին:

Եռօրեայ տաժանելի ճամբորդութենէ յե-տոյ ուղևորք մեր հասին 'ի Մոլք կամ Մէօլք, և անտի 'ի Սէնթ-Բոլթէն, ուր երկու օր հան-գիստ առին: Աւստրիոյ այս կողմերս գործա-ծուած ճամբորդի կառքերն լաւ առկախեալ չլի-նելուն՝ մարքիզուհին շատ կը նեղուէր և կը հա-ռաչէր՝ միտքն բերելով Փարիզու չքեղ ու թեթև կառքերն: Մոլք գիւղաքաղաք մի է՝ բաւական լաւ շինուած, որոյ մօտ ժայռի վրայ շինուած գեղեցիկ մենաստան մի կայ Բենեդիկտեան հա-րուստ միաբանութեան, ուր կը նստի նաև Աբ-բայն: Իսկ Սէնթ-Բոլթէն կամ Սուրբ Հիպպոլի-տոս ասացեալն գեղեցիկ քաղաք մի է՝ Վիեննայէն աւուր միոյ ճանապարհ հեռի՝ Տրազէն գետոյն ձախակողմն, և գրեթէ 5000 բնակիչ ունի, և ասի թէ Ը դարուն մէջ Ատալպէր և Ոթթոքար կոմսերէն շինուած է, որ Սուրբ Աւգոստինոսի կարգին կանոնիկոսներ էին: Սէնթ-Բոլթէնի մէջ կը շինուին բամբակէ կտաւներ և հասարակ թուղթ. հոս մեր ուղևորներն սակաւ ժամանակ միայն մնացին: Աննա դիտողութիւն մի արար թէ ընդհանրապէս արք հանճարեղ մարդիկ չէին, թէպէտև բարքերնին քաղցր հիւրասէր և սաստիկ կրօնասէր. իսկ ընդհակառակն կանայք աւելի աշ-

խոյժ ու հանճարեղ էին, որ անշուշտ աւելի մտա-դիր դաստիարակութենէ յառաջ կուգայ: Նմա-նապէս իրենց զգեստն ալ Լինցի բնակչաց զգես-տէն տարբեր էր. հարուստներն արք և կա-նայք Փրանկաց պէս կը հագուէին. իսկ հասա-րակ ժողովուրդն կարճ մութ մոխրագոյն պա-րեգօտ՝ ճարմանդիւք զարդարած, կարմիր բաճ-կոն ձուաձև ուռած մետաղէ կոճակներով, սև մորթէ վարտիք կանաչ ժապաւէններով ուսերէն կախուած, նոյն գունով փողպատ մի՝ որ բոլոր կուրծքն կը գոցէ. և լայն ու ասղնեգործած կաշի գօտի մի. ոտից ամաննին զուսպ կօշիկներ, և գլուխնին լայն եզերքով գլխարկներ. իսկ կա-նանց զգեստն՝ Վերին Աւստրիոյ մէջ եղածէն շատ զանազանութիւն չունի. ամենէն աւելի զար-դասէրներն՝ իրենց խայտումայտ շրջազգեստին և բաճկոնակին եզերքն ճերմակ կամ կանաչ ժա-պաւէն կը կարեն, բաճկոնակն արծաթէ կոճակնե-րով կուրծքէն կը կոճկեն, իսկ գլուխնին խատու-տիկ վարշամակ մի կը կապեն, այնոր վրայէն ալ մոխրագոյն թաղիքէ փոքրիկ գլխարկ՝ զոր ժա-պաւինով ծնօտին տակէն կը կապեն:

Սէնթ-Բոլթէնէն ելնելէն ետև՝ մեր ուղևորք ստիպուեցան դէպ 'ի Դանուբ ելնել որպէս զի Թալնի ճամբան բռնեն, որովհետև իրենց բռնած ճամբայն քանի մի օր առաջ եկած անձրևներով ջուր կոխած ու անանցանելի եղած էր: Թալնի մէջ, որ Վիեննայէն քառասուչորս ասպարէզ է՝ Դա-նուբի աջակողմեան եզերքն, տեսնելու բան մի չկայ՝ բաց յեկեղեցւոյն՝ որ ժամանակաւ Հռով-մայեցւոց կռատուն մի էր: Վերջապէս մեր երեք պանդուխտքն Վիեննա մտին կէս օր ժամանակ: Այս քաղաքս՝ զոր Գերմանացիներն Վիէն կա-նուանեն՝ բարձրացած է դաշտավայրի մի ծայրն

որոյ մէջ գեղեցիկ բլուրներ ալ կան և Դանուբ գետն արևելեան կողմէն կանցնի: Շքեղազարդ-ուղիներով քաղաքը կը մտցուի. բայց մեղք որ գրեթէ միշտ թանձր մառախուղ մը պատած է վրան. բուն քաղքին բոլորտիքն երեսունչորս արուարձանք կան, որոց միայն մէջ էր մարքիզին բնակած տունն: Բուն քաղքին փողոցներն նեղ, մութ և ծամածուռ են, ժողովուրդն՝ բարձր և յոռի կերպով շինուած խարու վրայ դիզուած տանց մէջ կը բնակին. արուարձանաց աներն ընդ-հակառակն ընդարձակ բաց և զուարճալի են. ինչպէս նաև փողոցներն լայն ու շատ տեղ հրա-պարակներ ունին. այս արուարձաններս որ բուն քաղքին բոլորտիքն են՝ վեց կամ եօթնհարիւր մեդր անտի հեռի ու զատուած են. և քաղքին բոլորտիքն ալ պարիսպներ, ամրոցներ և ընդար-ձակ փոսեր կան. և այս պատնէշներս ժողովըր-դեան զբօսանաց և շրջագայելու տեղն է:

Աննա որպէս տեսանք, գերմաներէն ուսեալ էր՝ բայց իր գիտցածն Սաքսի լեզուն ըլլալով որ է ամէն գերմաներէնի գրոց և քերթողաց լեզուն, շատ զարմացաւ երբ Վիեննա հասնելով նոյն գա-ւառական լեզուն դժուարաւ կը հասկնար, մա-նաւանդ հասարակ ժողովրդեան բերանն՝ որոց հնչմունքն յոյժ խիստ ու թանձր է: Աննա գի-տեց որ ընդհանրապէս կանայք շատ ներհուն էին. մարքիզուհին ալ երբ իւր ազնուական ունեցած հանճարոյն պատճառաւ նոյն ընկերութեց մէջ գտնուելու առիթն ունեցաւ՝ ինքզինք Փարիզու մէջ կը կարծէր, որովհետև այն ընկերութեանց մէջ բոլոր կանայք փրանկերէն կը խօսէին: Հոն հասնելուն երկրորդ օրն Աննա ծնողքն յորդորեց եկեղեցի երթալու և շնորհակալ ըլլալու Աստու-ծոյ որ զիրենք ողջ առողջ ուղևորութեան վերջն

հասուցած էր: Մարքիզուհին յօժարութեամբ յանձն էառ, վասն զի որչափ ալ աշխարհիս զբաղ-մանց տուած էր ինքզինքն, և բնութեան թերու-թիւններուն յաղթելու ոյժ չէր ունեցած, սակայն 'ի մանկութենէ ընդունած կրօնից սկզբունքն իր սրտին մէջ միշտ պահած էր. և որչափ ալ աշ-խարհային նախապաշարմունք սակաւ մը ժամա-նակ մոռցնել տուած էին զնոսա՝ սակայն առթի մը կը սպասէին նորէն արթըննալու, և ահա այս առիթս էր ժամանակին բերած դժբաղդութիւն-ներն: — Ուստի մայր և աղջիկ ելին գնացին մայր եկեղեցին՝ որ սարակինոսեան ճարտարա-պետութեան գեղեցիկ յիշատակարան մը է՝ իր հնութեամբն և բարձրութեամբն հռչակաւոր, այնպէս որ իր գագաթն գրեթէ միշտ ամպոց մէջ ծածկած է: Ծնկան վրայ եկան Սրբոյն Ստե-փաննոսի արձանին առջև, որուն նուիրած է եկե-ղեցին, և ջերմեռանդն աղօթեցին սրբոյն՝ որ ի-րենց շնորհակալութեան նուէրն մատուցանէ երեքսրբեան աջերութեան, և բարեխօսէ իրենց և իրենց ընտանեաց գլխոյն համար: Այս աղօթ-քէս ետև մարքիզուհին և դուստրն հանդստու-թիւն մը զգացին իրենց սիրտն, և կարծես թէ ներքին ձայն մը կը լսէին որ նոյնս ասէր. «Յոյս առէք, ջերմեռանդ աղօթքն երկինք կը թռչի, և փոխարէն սիրտն մխիթարութե կը լնու, հոգին կը զօրանայ և միտքն կը լուսաւորի»: — «Ով մայր իմ, գոչեց Աննա, մի թէ դու ալ ինձ պէս սիրտդ աւելի հանդարտ և հոգիդ աւելի զօրացած չե՞ս գտներ աշխարհիս փորձանաց դէմ. միթէ աներ-կիւղ չե՞ս նայիր մեր վրայ հասնելիք ապագային վրայ. և վստահութիւնդ չյաւելուր Աստուծոյ նախախնամութեան և նորա հզօր բազկին վրայ՝ որ մեզ առաջնորդէ պիտի մեր բոլորտիքն առած ժայռերուն և խութերուն մէջէն»:

— Այո՛ զաւակս, պատասխանեց մարքիզուհին, ասացածներդ ես ալ կիմանամ իմ սրտիս մէջ և կարծեմ թէ դժբաղդութիւնն՝ ալ զիս պիտի չվախցընէ. ինչ ալ որ հանդիպի և Աստուած ինչ խաչ ալ վրանիս ղրկէ՝ պիտի չյուսահատիմ, և խաղաղութիւն ՚ի սրտէս պիտի չհեռանայ։

ԳԼՈՒԽ Թ.

Աննայի անձնանուիրութիւնը։

Երկու ամսէ ՚ի վեր մեր աքսորեալ գերդաստանն Վիեննայի մէջ տեղաւորուած էր, երբ յանկարծ ծերունի Տիւպուայէն թուղթ մը ընկալաւ, որ իրեն խաղաղութիւնն վրդովեց, և փոքրիկ բնակարանն ցաւով և հոգերով լեցուց։ Այս հաւատարիմ սպասաւորս Փարիզ հասնելով՝ շատ մեծ դժուարութիւններով կարողացել է մտնել իր տիրոջ տունը և տեսել է՝ որ ամեն դռներ և դարաններ մի և անբաժանելի հասարակապետութեան անուամբն կնքուած էին։ Բարեբաղդաբար գիտէր այն տեղն ուր խռովութեան սկիզբէն մարքէզն մեծագումար ըստակ թաղած էր. ուստի կը յուսար զայն իր տիրոջն տանելու կամ ղրկելու. այս ասեմք՝ որ մարքէզն իւր մեծ աղջկան իմացուցել էր այն ծածկած տեղն. ուստի երբ Տիւպուա նկուղն իջաւ, տեսաւ որ այն փոքրիկ գանձն ալ աներևոյթ եղած էր։ Նա ալ գործ մի չունելով հոն տեղն՝ իւր յատուկ ունեցածն առաւ ու տնէն դուրս ելաւ։ Նոյնպէս կնքուած գտաւ հրամանատարին տունն ալ, և գուշակելով իմացաւ թէ

որո՛յ բարձին տակէն էր այս մատնութիւնս։ Մարքէզն, կինն ու աղջիկն ալ պանդխտելոց ցանկին մէջ անցած էին, և մանաւանդ թէ տեսաւ որ ցուցակին թուականն շատ օրերով յառաջ էր քան թէ բուն իրենց պանդխտութիւնն։ Ուստի տարակոյս չկար որ այն զմուռներն ալ Ֆորթօնի ուզելովը դրուած էին, որպէս զի մարքէզին ստացուածոց վրայ իւր կնոջ ունեցած իրաւունքն պահպանէ. և հետևեալ օրն պետութեան կալուածոց պաշտօնէայն՝ տէրութեան անուամբն այն ստացուածոց գրաւումն հրատարակած էր. որով ամենայն ինչ կորսուած էր թէ հող թէ կահք և թէ առնելիք։ Ահաւասիկ այս տխուր լուրերս կու տար Տիւպուա իւր տիրոջ գրած նամակին մէջ։

«Ահ, խեղճ Աննա, գոչեց մարքիզուհին հառաչելով, ինչ պիտի լինի քու վերջդ, խեղճ աղջիկս. մեք մեք եղաք քու թշուառութեանդ պատճառն՝ որ զքեզ մինչև այս աքսորանաց երկիրն քաշեցինք բերինք. մեք քու ապագայ երջանկութիւնդ խանգարեցինք. մեք քու ծաղկահասակ տարիքդ զրկանաց և թշուառութեանց մղեցինք։ Ահ, ինչպէս պիտի կարեմք այս մեր գործած չարեացս փոխարէն առնել։

— Ի՛նչ ասես, մայրիկ, ձեր գործած չարեա՞ցն. հապա այս կեանքս ո՞վ տուաւ ինձ. միթէ դուք չէի՞ք որ իմ մանկութիւնս խնամքով մեծցուցիք. միթէ ձեզ պարտական չե՞մ ինչ գիտութիւն և ինչ տաղանդ որ ունիմ։ Հապա քու սերդ զոր այսօր կը վայելեմ քու գիրկդ գտնուելուս երջանկութի՞ն՝ միթէ ամենէն աւելի պատուական բարիքն չե՞ն իմ սրտիս համար։ Եւ ինչ բանիս պիտի գար հարստութիւնն՝ եթէ միայն ես պիտի վայելէի զնոսա, միթէ ալ յուսալու տեղ մի չմնա՞ց մեզ

համար: Ես դեռ տղայ եմ ու արիութիւն ալ ունիմ, քու և հօրս համար աշխատելու, որպէս զի ձեր ինծի համար գործածին փոքրիկ փոխարէն մի տանեմ: Աստուած որ Սրտանի մէջ իմ հօրս առջին վեհանձն պաշտպան մի հանեց, Աստուած ինքն զմեզ ալ պիտի չթողու. նա իմ անմեղութիւնս փորձանքներէ պիտի պաշտպանէ, և ամեն օր իմէ խնդրած զօրութիւնս ինծի պիտի շնորհէ:

Տիկին Սէնթ-Անժ անխօս՝ զաւկին խօսքերն մտիկ տանէր, ու սիրտն սաստիկ շարժելով՝ յորդ արտասուք կը թափէր: — « Մի լար, սիրուն մայրիկ, տղայ աղջիկն, Աստուած մեզ պիտի չթողու՛ ինծի հետ դու ալ նմա աղաչէ, ինքն քեզ մխիթարութիւն կու տայ: Աստուած իմ, քու գթած աչքդ դարձո՛ մօրս վրայ, խղճա՛ իր ցաւոց վրայ. և եթէ հաճոյ է քեզ նորանոր խաչերով կրելու, տուր զօրութիւն ինծի և մօրս առանց տրտնջալու վերցնելու զնոսա, օգնէ մեզ Աստուած իմ քու սուրբ հրամանացդ հնազանդելու »: — Այս խօսքերս զրուցած ատեն, մայրն ալ նորա քովն ծնկան վրայ եկած՝ ասացածն կը կրկնէր. ու երբ ոտից վրայ ելաւ, զԱննա ձեռքէն բռնած իրեն քաշեց և զնա գրկելով ըսաց. «Իմ թափած արցունքս, զաւակս, ոչ այնչափ ինծի համար է որչափ քու. ցաւս չկրցայ զսպել, մտածելով որ քու հայրդ աշխատութեամբդ ուտելու պիտի ստիպուիս. ա՛հ, այս խեղճութեան հանելու համար ծնած չէիր. յիրաւի ասեմ, սիրտս շատ տակն ու վրայ եղաւ. բայց հպարտութեան այս ակամայ շարժմանս պիտի յաղթեմ: Աստուծոյ հաճոյ լիցի այսօրուան զոհս, և ինքն քեզ օգտակար գործէ զայն, սիրելի Աննաս »: — Այս զրուցելու ատեն, մարքէզն ներս մտաւ բոլորովին յուսահատ կերպով. վասն զի քանի որ Վիեննա հասել էին, շատերն նմա յոյս

տուած էին արքիդուքս Կարոլոսի թիկնապահաց կարգն անցնելու. որովհետև Փրանկլից հետ պատերազմն հրատարակուած էր, և ամենուն աչքն այս կայսերազուն իշխանին վրայ էր՝ որ ինքն պիտի լինէր բանակին հրամանատարն. բայց մարքէզին յոյսն պարապ ել, վասն զի այն պաշտօնն զոր կը յուսար՝ ուրիշի տրուեցաւ: «Դժբաղդութիւն մինակ չհանիր, դուշեցներս մտածին պէս. ա՛լ յոյս չմնաց. ամեն դրունք երեսս 'ի վեր փակուեցան. չեմ գիտեր թէ ինչ պիտի անենք և ինչո՛վ պիտի ապրինք. եթէ մինակ լինէի՝ կերթայի Քոնտէի բանակին մէջ զինուոր կը գրուէի. բայց ինչպէս կարեմ թողուլ զձեզ»:

— Սիրելիս, ըսաց մարքիզուհին, եթէ մինակ ալ լինէիր՝ այդ բանդ չէիր կարող անել. արդէն առողջութեան կողմանէ տկար ես, և դժբաղդութիւնն ալ զքեզ մաշեցուցած է, և առանց քու կեանքդ վտանգի մէջ դնելու...

— Ի՞նչ կուզես որ անեմ ուրեմն, գոչեց մարքէզն կնոջ խօսքն կտրելով. դու ալ գիտես որ հազիւ թէ քանի մի ամսոց ապրուստ ունիմք քովերնիս. և ինչ բաներու վրայ որ յոյս դրած էի պարապ ելին. զուր տեղ աչքս ասդիս անդին կը դարձնեմ՝ բան մի չեմ տեսներ. գոնէ զինուոր որ գրուիմ՝ ձեզ ծանրութիւն չեմ լինիր. և քովս եղածն ձեզ թողլով, դուք կարէք տակաւ մի աւելի երկար ժամանակ այնու ապրելու:

— Շատ լաւ, վրայ բերաւ մարքիզուհին, դու գնա, մեք ալ Աննան ու ես ետևէդ կու գամք. ինչ, կարծես թէ քեզ պէս հիւանդ տկար մարդըն մեք մինա՞կ ու անօգնակա՞ն պիտի թողումք՝ որ օդին խստութենէն ու զինուորական կենաց տառապանքէն չարչարուիս ու մեռնիս: Ես զքեզ կը ճանչնամ, չես ուզեր որ ուրիշներէն վար մնաս

կորձութեան ու նուիրման կողմանէ, որ յիրաւ ւի երիտասարդին ու առողջ մարդու համար մեծ բան է, բայց հիւանդոտ ու տարիքն առած մարդու համար անկարելի:

Վերջապէս մայրեգին շատ դժուարութեամբ կնոջ խօսից հաւանեցաւ ու միտքն դրածէն ետ կեցաւ: Իսկ Աննա դաշնակի և երաժշտութեան հմուտ ըլլալուն՝ յոյս կուտար ծնողացն որ իւր ձեռաց արուեստովը պիտի կարող ըլլար նոցա օգնելու. բայց հօրն դիմաց վրայ այլայլութիւն մի գալով այս խօսքէս, իմացաւ որ առաջածն Սէնթ-Անժի մայրեգին ազնուական հպարտութեանն դպաւ. ուստի նմա դառնալով ասաց. «Հայր իմ, հաճէ ինձ մտիկ առնելու. այն սկզբունքն որ դու իմ մտացս մէջ տըպաւորել ես՝ 'ի վաղուց ինձ ուսուցած են՝ որ մարդ ամէն վիճակի մէջ ալ պատուաւոր մարդ կարէ ըլլալ, այլոց համարումն ստանալ և հանգիստ խղճիւ ապրիլ. այսոր համար ուրիշ բան պէտք չէ՝ բայց եթէ իւր ընտրած վիճակին պարտքն լաւ կատարել և կրօնից հրամայածէն դուրս չելնել: Դու ալ գիտես հայրիկ՝ որ այս կրօնից պարտքս կատարելովն է որ համբերութեամբ կարող եղէ տանելու այս մանկական հասակիս մէջ այն ամէն նեղութեանց՝ որ գլխէս անցին. վասն զի միտքս դրած էի որ այս համակերպութիւն՝ զԱստուած ինծի հետ պիտի հաշտեցնէր՝ զոր ես թերևս բարկացուցած էի: Հիմա կը տեսնես որ այս յոյս պարապ չելաւ. հիմա թէ հօրս թէ մօրս գիրկն ինծի համար բաց է, ինչպէս որ այս միայն եղած էր իմ միակ փափաքս: Ա՜հ, իմ կատարեալ երջանկութեանս միայն բան մի կը պակսի, որ է քոյրս ալ մեր մէջ տեսնել և այնչափ սէր ցուցանել նմա՝ որ իր սէրն ու բարեկամութիւնն

ալ վաստըկէի. յուսամ որ Աստուած այս շնորհքս ալ պիտի առնէ ինձ: Ուրեմն վստահ եղիր, հայրիկ, որ միշտ սուրբ հաւատոցս հաւատարիմ մնալով իմ սրտիս անբծութիւնն միշտ պիտի պահեմ. ուրեմն հիմա՝ ինչպէս կարող ես տարակուսիլ որ ես չկարողանամ իմ նոր վիճակիս պարտքն կատարելու: Գիտեմ որ այս խօսքերս քոյ դըժուարդ կուգան, և ներէ ինձ համարձակ ըլլացելու՝ թէ քոյ ազնուականութեանդ նախապաշարմանցն կը դպչին: Այս բանիս պատասխան մի միայն ունիմ. աշխատանքն մարդս անպատիւ չառներ, և ամենէն նուաստ վիճակի մէջ ալ մարդ առաքինի կարող է ըլլալ. միթէ նոյն ինքն Աստուած գերագանց օրինակով մի մեզ նոյն բանն ուսուցած չէ՞, երբ իւր անսահման իմաստութեամբն իւր Որդին աշխարհ ղրկեց՝ ամենէն նուաստ վիճակի մէջ ծնանել տալով զինքն. ինչո՞ւ մեք ալ մեր ձեռքէն եկածին չափ իրեն չնմանիմք: Այն որ երկրիս իշխաններէն ու թագաւորներէն այնչափ բարձր է՝ որչափ փայլակի մի կեան բոլորովին աննշանականութեան դարերէն»: — Այս ասելով Աննա տակաւ մըլռեց. կարծես թէ յանկարծ իր միտքն խորհուրդ մի ծագեցաւ: Յանկարծ աչուըներն վառուեցան և ներքին հաճութիւն մի երեսին վրայ սփռեցաւ, և գրեթէ հրեշտակային պատկեր մի իր դիմաց վրայ նկարուելով այսպէս առաջ տարաւ իւր խօսքն. «Աշխարհիս վրայ մի միայն բարիքն որում կը փափաքիմ՝ ձեր սէրն է, մնացած ամէն բան ինձ համար անտարբեր է, այն միայն բաւական է ինձ: Հիմա միտքս բան մի ծագեց՝ զայն ձեզ ասեմ. հոս դեռ զիս ոչ ոք կը ճանաչէ և ոչ ոք գիտէ թէ ես ձեր աղջիկն ու հարազատ զաւակն եմ. ուստի ես այսուհետև ուրիշ բան չեմ՝ բայց եթէ խեղճ որբ մի զոր Աստուծոյ նա-

խախնամութիւնն ձեր խնամոց յանձնել է։ Ուստի եթէ կը հաճիք ես մեր դժբաղդ Թագաւորին ծառաներէն միոյն աղջիկն պիտի սեպուիմ՝ որ դուք քովերնիդ առած էք իմ մանկութիւնս խնամած, իմ միտքս լուսաւորած, և ինձ տէր ու պաշտպան կեցած։ Այսպէս որ լինի, ո՞վ կարէ արգելուլ խեղճ որբ մի որ իր երախտապարտութիւնն ու շնորհակալութիւնն իր բարերարաց չյայտնէ, երբ ձեր նման տուած հանճարն ու տաղանդն կարող է ձեզ օգտակար լինել»։

Մարքէզն և իւր կինն ապշած մնացին այս անակնկալ առաջարկութեանս վրայ, և սակայն մի ժամանակ լռութիւն լինելով՝ վերջապէս Տիկին Սէնթ-Անժ լալով ու հեծկլտալով սկսաւ ասել. «Ի՞նչ, աղջիկս, ես մայր անուանէս հրաժարիմ, երբ հազիւ թէ նորա քաղցրութեան համն առնուլ սկսայ. և դու կը խնդրես յինէն այդ բանդ. ո՛չ ո՛չ, սիրելի Աննաս, մի յուսար. քոյ մայրդ լինելս և զքեզ դուստր կոչելս ինծի մեծ պարծանք է. մտքէդ հանէ այդ բանդ»։

Մարքէզն կնոջ այս խօսքին չէր սպասեր, վասն զի Աննայի առաջարկութիւնն նմա անտեղի չէր երևցած, և որովհետև մարքիզուհւոյն հպարտութիւնն գիտէր՝ կարծէր թէ նա ալ իրեն համամիտ պիտի գտնուէր։ Մանաւանդ որ աղջկան առաջարկութիւնն ուրիշ բան չէր՝ բայց եթէ նորա կոյր զկուրայն ընդունած նախապաշարմունքն՝ իւր հայրական սիրոյն հետ միացնել։ Աննա արտաքուստ և օտարաց առջև անուանն և ազգաւ որբ մի պիտի համարուէր, իսկ տան մէջ զինքն աւելի սիրելով՝ այն իրենց բանադատութեան փոխարէնն պիտի առնուին։ — Աննայի կողմանէ ալ ամենևին պատճառ մի չկար այս խորհուրդէս ետ դառնալու. արդէն մօր սէրն ու

մայրութիւնն ձեռք ձգած լինելով՝ յօժարակամ ինքզինքն կը զրկէր հրապարակաւ իրեն մայրակոչ լինելու և զինքն իրեն մայր անուանելու։ Ուստի իր մտքէն չփոխուեցաւ. ասով իւր հայրն ալ գոհ եղած կը համարէր և ամէն օր ալ իւր մօր քովն լինելով իրեն՝ ամենուն բարւոյն համար գործած զոհին վարձքն ալ՝ նորա սիրովն պիտի ընդունէր։ Միայն մարքիզուհին դէմ կը դնէր այս խորհրդիս, մինչև որ շատ դժուարութեամբ վերջապէս համոզուեցաւ, և շատ արցունք թափելէն ետև, խոստացաւ ալ իւր դուստրն չկոչելու զնա օտարաց առջև։

Հազիւ թէ քանի մի օր անցել էր և ահա օրագիրներն կը ծանուցանէին Վիեննայի բնակչաց թէ դաշնակահար Գաղղիացի օրիորդ մի կը փափաքէր աղջիկ աշակերտներ ունել իւր արուեստն ուսուցանելու համար։ Սակայն այս ծանուցումներս արդիւնք մի չունեցան. որովհետև Գերմանիա որ Հայտնի և Մոզարի հայրենիքն է, գրեթէ դաշնակի միակ երկիրն կը սեպուի. ուրիշ կողմանէ ալ թէ և Վիեննացիք սիրով կընդունէին պանդուխտներն, բայց նոցա վրայ վստահութիւն չունէին, և սակաւք էին որ ուզէին տեսնել կամ լսել Գաղղիացի դաշնակահարն։ Օտարականք առ հասարակ և մանաւանդ Գերմանացիք մտքերնին դըրած են որ Փրանկիացիք երաժշտութիւն չունին, և իրենց ականջն քաղցրաձայնութիւն ինչ է չկըրնար իմանալ. զարմանալին այն է որ Անգլիացիք ալ այս կարծեաց համամիտ են, իրենք որ եղանակ մի երգելու տեղ կը սուլեն, և կատուի խառնաձայն աղաղակն դաշնաւորութիւն կը համարին, և երբ մեր վրայ խօսք լինի՝ կտրուկ կերպով մի կը պատասխանեն թէ Փրանկիոյ մէջ լաւ երաժըշտութիւն գտնել անհնարին է։

ԳԼՈՒԽ Ժ.

Երգահանդէս:

Սակայն օրագրոց ծանուցումն բոլորովին պարապ չելաւ. Պրաւն պարոնն սակաւ ժամանակէ 'ի վեր Վիեննայի կայսերական Թատերաց վարչականութեան գիներն որոշիչ անուանուել էր՝ փոխանորդ ուղղչի տիտղոսիւ. ուստի և Թատերաց մատակարարութիւնն գրեթէ բոլորովին իւր ձեռքն էր, որպէս դերասաններն և գուսաններն որոշել, հանդէսներն կարգադրել, խաղցուելիք նիւթերն աչքէ անցուցանել, և տեսարաններն կազմել, և այլն: Ուստի օրագրի մէջ ընթեռնլով փրանկլեացի դաշնակահարին համար գրուած ծանուցումն, մտածեց որ եթէ յիրաւի այս օրիորդն տաղանդ և հանճար ունի, իւր բանին կարող է գալ և մեծ շահ մի ձեռք բերել. ուստի ելև գնաց Մարքեզ Սէնթ-Անժի տունն, և գերմանացի պարոնի մի գաւռղութեամբ՝ որ փոքրիկ լեռներն իւր ստեղծածն կը համարի՝ նմա ներկայացաւ: Իսկ մարքէզն ցուրտ քաղաքավարութեամբ մի զնա ընկալաւ իշխանազուն մարդու մի պէս, որում դժբաղդութիւնն մոռցնել չէր տուած իւր ազգատոհմին ազնուականութեան նշաններն. և երբ Տէր Պրաւն իմացուց նմա իւր այցելութեան պատճառն, մարքէզն ազատ և գրեթէ ասպետական համարձակութիւն մի ձեւացնելով պատասխանեց. «Իմացայ. Տիկին մարքիզուհւոյն պաշտպանելոյն համար է խօսքերնիդ, սա դաշնակահար աղջկանն. այս ա-

տայածդ կնոջս վերաբերեալ գործ մի է. գիտէք որ այսպիսի բաներու ես չեմ միջամտիր»; ասելով զանգակն զարկաւ: Փոքրիկ աղախին մի ներս մտաւ՝ որ բոլոր տան սպասաւորն այն միայն էր: «Տիկին մարքիզուհւոյն իմաց տուր, ասաց, որ օրիորդն տեսնելու մարդ եկած է»: Պարոնն փրանկերէնն շատ լաւ կը հասկնար, և միտքն դնելով թէ թերևս իւր առջևը կեցող մարդն աւխրեն չափ լեռներ ու դաշտեր ստեղծած լինի, իւր կերպն փոխեց, և որչափ առջի բերան ամարդի երևցել էր՝ անկէ աւելի այնչափ բարեկիրթ և քաղաքավար կերպ մի առաւ:

Շատ չքշեց Աննա և իւր մայրն երևցան. Աննա իւր նորյանձն առած դերն բնական կերպով ձևացնելու համար՝ իւր վախկոտութիւնն մէկդի դնելով՝ պարոնին հարցմանցն ինքն պատասխան տալ սկսաւ, բայց առաջին փորձի առգնայն յայտնի կերևէր՝ իւր սակաւ մի խռովեալ կերպէն. վերջապէս այնչափն իմացուց թէ Փրանկլեյ մէջ փոքր 'ի շատէ երաժշտութեան հրահանգած լինելով և չուզելով որ իւր բարերարացն ծանրութիւն լինի նոցա աքսորանաց մէջ՝ կը փափաքէր քանի մի աշկերտներ ունել, և երաժշտութեան, երգի և դաշնակի դաս տալ: — «Սակայն, օրիորդ, պատասխանեց պարոնն նորա քաղցր ձայնին և մաքուր գերմաներէն խօսուածքին վրայ զարմանալով, և համեստ ու ամօթխած կերպին վրայ հիանալով, ինձ կերևի թէ դուք դեռ շատ մանկահասակ էք ասացած պաշտօնին վարելու համար»: — Աննա պատասխան տալու տեղ դաշնակն բացաւ, և արագագոյն մատերով նախերգանք մի առնելէն ետև, սրտաշարժ և հնչեղ ձայնիւ Դիդէի այն երգն երգեց որ կը սկսի. Ո՛հ, ուրախոյ գեղեցիկ խորհուրդ մանկութեան:

Պարոնն իր զմայլումն չկարենալ ծածկել՝ եռանդուն կերպով մի ասաց. «Ա՜հ, օրիորդ, յիրաւ Բրիչչինի[1] շատ մեծ վարպետ է, բայց կարծեմ թէ քան զձեզ աւելի արժանաւոր թարգման մի ունեցած չէ»։ — Աննա պարոնին այս քաղաքավարութեանս վրայ կարմրեցաւ. սակայն նորա գովեստներէն քաջալերեալ, Մոզարի գեղեցիկ հատուածներէն մին սկսաւ հարկանել այնպիսի գերազանց եղանակաւ՝ որ խեղճ պարոնն բոլորովին իրմէ դուրս ելնելով՝ իւր ունեցած ճշմարիտ հիացումն չկարաց ծածկել։ — Եւ երբ սակաւ մի ինքն իրեն եկն՝ դարձաւ ասաց մարքիզուհւոյն. «Տիկին ձեր պաշտպանեալն կարգէ դուրս տաղանդ մի կ'երեւնէ և այնու կարող է մեծ հարստութիւն ձեռք ձգել. միայն պէտք է որ քաղքիս մէջ ծանօթանայ. ես ալ ձեռքէս եկածն պիտի ընեմ՝ որ անծանօթ չմնայ։ Վաղն չէ միւս օր Լիխթէնշթայն իշխանն մեծ յայտահանդէս մի պիտի կատարէ իւր պալատն՝ ուր պիտի ժողովին Վիէննայի բոլոր իշխանազունք. որովհետեւ Օրիորդն այն ժողովոյն մեծ փառք ու պարծանք կարէ լինել, ուստի եթէ կը հաճիք հաւանելու՝ իշխանն ալ անտարակոյս զձեզ պիտի հրաւիրէ որ դուք ալ ձեր ներկայութեամբն իր հանդէսն փառաւորէք, և ձեր ճարտար պաշտպանելոյն ձայնն լսել տայք։

— Լիխթէնշթայն իշխա՞նն, ասաց մարքէզն, բայց ես պատիւ ունիմ զինքն ճանաչելու. նա ինքն է որ բարեհաճեցաւ զիս կայսերազուն Կարոլոս արշիդքսին ներկայացնելու։

— Այս ևս աւելի, տէր իմ, պատասխանեց պարոնն, այս ալ աւելի պատճառ մի է իշխանին հրաւէրքն ընդունելու։

1 Գիդելի երաժշտութիւնն շարագրող է։

Յիրաւի սակաւ ժամանակէն հրաւիրմանց տոմսակն հասաւ, զոր իշխանն իւր յատուկ ձեռօքն գրած էր շնորհալի կերպով մի մարքէզին և մարքիզուհւոյն, աղաչելով որ հետերնին բերեն որբ օրիորդն։ Մարքէզն ալ շատ հաճելով իշխանին մտադրութեանն՝ որոշեց երթալու և նորա խնդիրն կատարելու։

Լիխթէնշթայնի ապարանքն մանաւանդ թէ պալատն՝ կարի ճոխութեամբ և գեղեցիկ ճաշակով զարդարուած էր. ամէն սենեակներն Պոհեմիոյ բիւրեղեայ ջահերով լուսաւորած, և մեծ դահլիճն ուր պիտի կատարուէր հանդէսն՝ Օսմանեան դահլիճ կ'անուանէր՝ որովհետեւ կահերն բոլոր արեւելեան ձեւով շինուած էին՝ բազմոցներով, բարձերով և գորգերով զարդարուած. գետնին հարուստ տախտակամածն ալ կահերուն գեղեցկութիւնն աւելի դուրս կը ցայտեցնէին, և լուսոյ հեղեղ մի ամէն տեղ կը ծաւալէր։ Այն երեկոյ երգահանդէս մի պիտի կատարուէր՝ Վիէննայի մէջ եղած անուանի երաժիշտներն լսելու համար. որովհետեւ իշխանն երաժշտութեանց շատ կ'ախորժէր, և արուեստասէր անուանիլն իրեն պարծանք կը համարէր, շատ անգամ ալ հանդիսին պարագլուխ և առաջին ջութակահարն կուզէր լինել՝ որ երաժշտաց խմբին շատ հաճոյական չէր անցներ, որովհետեւ իշխանն ձայնաչափին ճիշդ չյարմարելուն համար՝ իրենք ալ կը ստիպուէին չափն երագել կամ դանդաղել։

Բայց այն օրն ինքն բոլորովին զբաղած լինելով իւր հիւրերն ընդունելու՝ իւր գործակցութենէն հրաժարեցաւ 'ի մեծ ուրախութիւն երաժշտաց. այնպէս որ երգահանդէսն գերմանացի մեծ վարպետին շարագրած գեղեցիկ խմբաձայնիւն սկըսաւ՝ բոլոր երաժշտաց և նուագածուաց միաձայ-

նութեամբ։ Այս խմբաձայնէս ետեւ՝ Պրաուն պարոնն մօտ քսան տարուան երիտասարդ մի ներկայացուց դաշնակին առջին, որ այնպիսի կատարելութեամբ աւարտեց իւր մասն՝ որ բոլոր հանդիսականք ծափաձայնութեամբ զինքն ողջունեցին. բաւական լինի ասել որ այն երիտասարդ դաշնակահարն նոյն ինքն Հիւմմէլ էր՝ որ իւր յանպատրաստից յաջողութեամբն և հմուտ շարադրածներովը բոլոր աշխարհ հռչակաւոր եղած է։

Խեղճ Աննա լուռ հասկցաւ Հիւմմէլի գերազանցութիւնն, և իւր համեստութեամբն միտքն դրաւ թէ շատ հեռի էր ինքն նմա հաւասարելէն. և գրեթէ յուսահատած կը ցաւէր թէ ինչու այնչափ յառաջ նետուել էր. և կը վախէր որ բոլորովին անյաջող պիտի ելնէր այս մրցանքէս, և ծնողացն զգալու տրտմութիւնն ալ միտքն բերելով, սիրտն մարմնուք կուգար։ Եթէ մինակ լինէր՝ անկարելի բան էր որ յանձն առնուր այս մրցանքս. աւելի լաւ պիտի համարէր յանկարծական տկարութիւն մի կեղծելով հանդիսէն դուրս ելնել և քաշուիլ երթալ. բայց իւր ծնողաց յոյսն ու ակնկալութիւնն իր վրայ էր, միթէ կարէ՞ր մրցանակն տանելու վայրկենին՝ ետ քաշուիլ. և միթէ ամօթ չէ՞ր իրեն՝ օրագրաց մէջ պարծենալով ինքզինքը ծանուցանելէն յետոյ՝ թողուլ և խուսափել։ Այս բաներս միտքէն անցնելով՝ իրեն սովորական հնարքն բանեցուց՝ որոյ յաջողութիւնն ամէն ժամանակ փորձած էր. «Աստուած իմ, ասաց ինքն իրեն, դու որ սըրտագէտ ես՝ գիտես որ մարդկանց առջև փառաւորիլս չեմ ուզեր. հապա ճակտիս քրտինքովը միայն իմ հօրս ու մօրս հացն ճարել. դու զօրացո զիս այս մրցանացս մէջ՝ որոյ մէջ այժմ գտանիմ»։

Այս ասելով այժ ասաւ, սրտին սաստիկ բաբախումն դադրեցաւ, և ծնողաց վրայ աչուըներն դարձնելով՝ կարծես թէ նոցա ասել կուզէր. «Հանգիստ եղէք, կը յուսամ որ պիտի չյաղթուիմ, որովհետև ձեր օգուտն պաշտպանել է իմ միտքս»։

Նոյն ատեն պարոնն ալ ներկայացաւ և ձեռքն անոր մատոյց. Աննայի վրայ մեծ ակնկալութիւններ ունէին արդէն գիտեմք. բայց նորա ճարտարութին աւելի դուրս ցայտեցնելու համար՝ մեծանուն արուեստագիտի մի առջին հանել ուզեց զնա, որպէս զի աւելի շքեղ յաղթութիւն մի վաստըկի։ Յիրաւի պարոնն տաղանդէ հասկցող մարդ լինելուն համար՝ առջի անգամ որ լսեց այն որբ օրիորդին դաշնակն, մէկէն իմացաւ որ սա գերմանացի դաշնակահարէն աւելի մատանց թեթեւութիւն և ճկունութիւն ունէր, աւելի պարզութիւն և սաստիկ ճշդութիւն, և այնպիսի քաղցր ու փափուկ զարնուած մի որ մարդուս միտքն կը յափշտակէր. և որպէս զի բոլոր հանդիսականք ալ կարող լինին զնոսա իրարու հետ համեմատել և բաղդատել, ուզեց որ Հիւմմէլի գործած ազդեցութիւնն մոռցուի կամ տկարանայ միջանկեալ տպաւորութիւններով, այլ անմիջապէս այն երիտասարդէն ետև օրիորդն հրաւիրեց և դաշնակին առջին տարաւ. և ինչպէս որ գուշակել էր ճիշդ կատարուեցաւ։ — Առջի բերան հանդիսականք վեր 'ի վերոյ ուշադրութի մի մատուցին աւելի իշխանազնին քմահաճութին գոհացնելու համար. որովհետև ով կարող էր համոզուիլ որ հազիւ տասնուեօթն տարուան աղջիկ մի իրենց հաճութիւն մի պատճառէ այնպիսի հռչակաւոր վարպետէ մի ետև։ Եւ մտքերնին ալ դնելով թէ այն աղջկան գործածն ուրիշ

բան չէր՝ բայց եթէ կարգէ դուրս յանձնապաստանութիւն և յանդգնութիւն՝ պատրաստուել էին ամենայն խստութեամբ զինքն դատելու։ Բայց նոյնս դաշնակին փանդխներէն այնպիսի խանդակաթ ձայներ ելան լսուիլ՝ որ ամենքն զարմացած ականջ կը դնէին՝ անակնկալ բանի մի պէս. յետոյ զարմանքնին հիացման փոխուեցաւ, հիացումն ալ հանրական հաւանութեան նշաններու. և ծափահարութիւններն այնչափ սաստկացան և երկարեցին մինչև պարոն Գրաւն յառաջ մատչելով՝ աղաչեց ունկնդրաց որ լռեն՝ եթէ չէին ուզեր ատեղին (adagio) զուարճութենէն զրկուիլ որ պիտի ելնէր։

Եթէ առաջին հատուածին մէջ Աննա իւր ունկնդիրներն զարմացուցեր էր մատանց արագութեամբ, ատեղւոյն մէջ բանեցուցած քաղցրութեամբն ալ ամենուն միտքն յափշտակեց. և վերջապէս հատուածն վերջաբանով մի աւարտելով՝ այնպէս ամենուն խանդն շարժեց՝ տարած յաղթութեամբն՝ որ ունկնդիրք ծափահարութենէն զատ ելան նաև միաբերան գոչել. «Կեցցէ մեծ դաշնակահարն փրանկիայի»։ Լիխթէնշթայն իշխանն ալ որ դաշնակին քով կանգնած էր՝ Աննայի մօտեցաւ, և գոգցես նորա միւս այլ կատարելութիւնն ալ հանդիսականաց ցուցանելու համար՝ սկսաւ հետն գերմաներէն խօսիլ և ցուցած մեծ հանճարոյն վրայ զինքն շնորհաւորել։ Աննա ալ համեստ պատկառանօք պատասխանեց՝ իրեն տրուած գովեստներն՝ իշխանին բարեհաճութեան արդիւնքն համարելով։ Անդին Հիւմմէլ ալ օրիորդին քովն վազեց և իւր ուրախակցութիւնն նմա կը յայտնէր, այլոց տուած գովեստներուն ձայնակից լինելով։ Իսկ պարոնին տաքն գետնէն կը կտրէր, և Աննայի յաղ-

թութիւնն իւր գործն կը համարէր. և միտքն գալով թէ Աննա գեղեցիկ ձայն ալ ունէր ու կ'երգէր՝ ուզեց որ նոր յաղթութիւն մի ալ ստանայ նոյն հանդիսին մէջ։ — Ուստի մարքէզին և մարքիզուհւոյն մօտենալով (որ կը ցաւէին թէ ինչպէս չէին կրցել յայտնել թէ Աննա իրենց զաւակն էր), հարցուց թէ արդեօք օրիորդն բաւական երաժշտութիւն ալ գիտէ՞ր և վստահութեամբ յանձն կարող էր առնուլ երկձայնի մի մասնակից լինելու։ Մարքէզն պատասխանեց թէ իրեն այնպէս կերևէր թէ կարող էր։ Այն ատեն պարոնն Աննայի քովն դառնալով ասաց թէ հանդիսադրաց խոստացուած էր Մոզարի Տոն Ժուանի մի երկձայնն ալ. բայց Վէյց օրիորդն որ յանձնառու եղած էր այն մասին կատարմանն՝ յանկարծակի տկարութիւն մի ունելով՝ պիտի ստիպուէին այն մասն թողլու. և վերջապէս ասաց թէ արդեօք ինքն յանձն կառնո՞ւր այն օրիորդին տեղն բռնել։ «Բարւոք է, պատասխանեց Աննա, եթէ հատուածն շատ դըժուար չէ»։ — «Ահաւասիկ այն հատուածն, ասաց պարոնն, եթէ կուզէք աչքէ անցուցէք»։ — Աննա հատուածն աչքէ անցնելէն ետև ասաց. «Շատ լաւ, կերգեմ»։

Ջութակին առաջին աղեղն չհնչած, պարոնն հանդիսատեսաց դառնալով իմացուց թէ Վէյց օրիորդն յանկարծական տկարութիւն մի ունենալով և հանդիսին չկարելով գալ՝ Օրիորդ Աննա յանձնառու եղած էր նորա մասն կատարելու. ուստի ունկնդրաց ներողամտութիւնն կը խընդրէր, որովհետև Օրիորդ Աննա ժամանակ չէր ունեցած նոյն հատուածն աչքէ անցնելու՝ որ նմա բոլորովին անծանօթ էր։ Պարոնին այս առաջարկն ծափահարութեամբ ընդունեցան հան-

գիտականք նոր զուարճութեան մի ակնկալութեամբ, և իրարու ասէին. «Եթէ դաշնակ զարկածին պէս երգել ալ գիտէ, յիրաւի հրաշալեաց մին է այս փրանկլիացի օրիորդն. մեր Թողունք իւր շնորհալի կերպին ու գեղեցկութիւնն»։

Աննա իւր յուսացածէն աւելի յաջողեցաւ, այնպէս որ Լիխթէնշթայն իշխանն լաւ քաղցրաձայնութիւններէն բոլորովին յափշտակուած՝ նմա մօտեցաւ և նորա ձեռքն բռնելով հանեց իր մատէն ադամանդեայ շքեղ մատանին և նորա մատն անցուց։ Աննա չուզեց ընդունիլ. բայց իշխանն վրայ բերաւ. «Օրիորդ, ասաց, այս մատանիս գրաւական մի լիցի քեզ այն հաճոյից զոր դուք այսօր ինձ պարգևեցիք»։ յետոյ ինքն անձամբ բերաւ զնա և նստոյց մարքիզուհւոյն քովը, նմա ալ իւր ուրախակցութիւններն և շնորհակալութիւններն մատուցանելով։ Յետոյ մարքէզին դառնալով՝ յայտնեց իւր ցաւն՝ որ չէր կարողացած արշիդքսին համար տուած խօսքն կատարելու, և ապահովցուց զինքն որ առջի առիթն ձեռքէ պիտի չփախցնէ նմա օգտակար լինելու համար. և յետոյ ասաց. «Տիկնայց համար Թեթևճաշիկ մի պատրաստուած է, յուսամ որ ինձ պատիւ առնէք բոլոր այս երեկոյթս հոս անցնելու. յետոյ իմ կառօքս զձեզ տներնիդ տանել կուտամ. ինչ ասէք»։

Մարքէզն ներումն խնդրելով հրաժարեցաւ. Գերմանացւոց գոռոզութիւնն գիտելով կը վախէր որ հանդիսին հրաւիրեալ իշխանուհիք և մեծուհիք չդժուարին Աննայի պէս պարզ արուեստագէտ մի իրենց ազնուական խմբին մէջ խառնուած տեսնելով։ Իշխանն ալ նորա միտքն հասկնալով՝ շատ մարդավարութեամբ պատասխանեց. «Օրիորդ Աննա միշտ պատիւ է այնոցիկ՝

որ նորա ներկայութեամբն կուրախանան. մեծամեծ հանճարներն մեծամեծ իշխանաց հետ հաւասարաքայլ կընթանան, և արժանաւորութիւնն՝ ամենէն ստոյգ ազնուականութիւնն է. եթէ Օրիորդն Աննա ձեր հարազատ զաւակն ալ լինէր՝ աւելի չէի կարող մեծարել զինքն»։

Եթէ Աննա յիրաւի այն լինէր ինչ որ երևել կուզէր՝ այս խօսքերս իրեն շատ հաճոյ պիտի լինէին. բայց մարքէզին դուստրն լինելուն համար իրեն ծանր եկին։ Մայրն իմացաւ զաւկին սրտէն անցածն, և իշխանին աղաչեց որ ներէ իրենց տեղերնին քաշուելու, իւր հիւանդոտ լինելն պատճառ բերելով, և այնպէս ցաւ ձևացուց իշխանին հրաւէրքն ընդունել չկարելուն վրայ, որ վերջապէս նա ալ համոզուեցաւ բաժնուելու այն օրիորդէն որ իւր երգահանդիսին ամէնէն գեղեցիկ զարդն կը կոչէր։ Այս վերջին խօսքիս վրայ Աննա կարմրեցաւ. բայց առջի խօսքին տպաւորութիւնն սրտէն բնաւ չէր ելներ. ուստի շնորհակալ եղև իր մօրն որ զինքն ազատեց այն իշխանուհեաց ընելիք հազար և մի հարցփորձներէն։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Առաջարկութիւն մերժեալ. — Փրանկլինոյ լուրեր։

Երկրորդ օրն դեռ նախընթաց երեկոյին յուզմունքն չէին դադարած, որովհետև գիշերն ալ անհանգիստ և խռովեալ անցած էր, և երգահանդիսին դէպքն հազար և մի ցնորական պարագայքն Աննայի քունն անհանգիստ արարեալ

էին․ իւր առջև կուգային տարած յաղթու-
թիւնն և ունկնդրաց ծափահարութիւններն․ բայց այս յաղթութեանս քաղցրութիւնն կը դառնացնէին իշխանին այն խօսքերն, եթէ՝ Օ-րիորդն ձեր հարազատ զաւակն ալ ըլլար, աւելի լաւ կարող ըլլալ մեծարել: Եւ այս խօսքերս այնչափ առաւել կը վշտացնէին զինքն՝ որչափ որ կը վախէր թէ մի գուցէ իւր մայրն ետ առնուր տուած խօսքն ու հաւանութիւնն զինքն իւր պաշտպանեալ որբ մի համարելու: Նոյն իսկ արթննալէն ետև ալ, այս մտածմունքս իրեն սայրասուր խոցեր եղեն․ մանաւանդ երբ օրհասականին երկու նամակ ընդունեցաւ, մին Լիխթէնշթայն իշխանին և միւսն պարոն Պրաունի կողմանէ, և չուզելով առանձինն զայնս ընթեռնուլ, իւր ծնողաց առջին բացաւ: — Իշխանն բաւական չհամարելով տուած մատանիովն փրանկիացի դաշնակահարն վարձատրել՝ որչափ ալ թանկագին բան էր, շատ քաղաքավարական խօսքերով կը ղրկէր իրեն 1500 ֆիորինոց տոմս մի, որ իւր տան հազարապետին ցուցուածին պէս պիտի վճարուէր: Բայց որչափ ալ իւր նամակն մեծ ակնածութեամբ և յարգանօք գրուած էր, այսու ամենայնիւ առջի բերան իւր ծնողաց անձնուիրութիւնն վիրաւորեցաւ ու երկուքն միատեղ գոչեցին․ «Այդ ինչ է, միթէ մեր զաւակն վարձկան արուեստագիտի մի պէս վարձատրել կուզէ․ միթէ մեր զաւակն վարձով աշխատելու համա՞ր ծնած է»:

— Ներեցէք ինձ ձեզ յիշեցնելու, սիրելի ծնողք իմ, ասաց Աննա ցած ձայնով, որ այս վարձքս ոչ եթէ ձեր զաւկին՝ այլ 'ի ձէնջ պաշտպանեալ որբ դաշնակահարին տրուած է: — Եւ այս խօսքիս ճշմարտութիւնն զիրենք համոզելու

համար շատ դժուարութիւն քաշեց, ցուցանելով որ արուեստագիտի մի անվայել բան չէր իւր աշխատանաց վարձքն ընդունիլ, որ եթէ իրենց զաւկին տրուած լինէր՝ խօսքն անգամ առնելն նախատինք պիտի համարուէր:

Իսկ պարոնին նամակն բոլորովին ուրիշ ոճով գրուած էր, և թէպէտ այն ալ շատ քաղաքավարութեամբ գրուած էր, բայց մէջն այնպիսի արտաքոյ կարգի առաջարկութիւն մի կար, որ ինքն իսկ Աննա կարդալով՝ չկրցաւ իր դառն արտասուքն բռնել, որովհետև այսպէս ասէր․ «Օրիորդ, ձեր դաշնակի մէջ ունեցած յաջողութիւնքն հիանալի բան մի է, բայց ձեր ձայնն յիրաւի հրեշտակային ձայն է: Ես Վէննայի թատերաց վարձակալն լինելով և արքունեաց թատերացն ալ ուղղակի փոխանորդ և տնօրէն՝ տարին 12000 ֆիորինի դաշնագրութիւն մի առնեմ ձեզի հետ. եթէ առաջարկութիւնս ձեզ յարմարի, հինգ տարուան համար դաշինք մի առնեմք, կամ թէ կուզէք՝ աւելի երկայն ատենուան համար: Բաց 'ի ձեր հաստատ տարեկան վարձքէն, ձեր շահուն համար երկու ներկայացմանց ալ իրաւունք ունել կարողէք, և տարին երկու ամիս ալ արձակուրդի ժամանակ կը տրուի ձեզ: Խնդրեմ լաւ մտածեցէք առաջարկութեանս և այնոր օգտից վրայ: Վաղիւ պատիւ պիտի համարիմ գալ զձեզ տեսնել և պատասխանդ ընդունել» — Պարոն Պրաուն:

«Հիմա տեսէք, գոչեց մարքիզուհին, միթէ իրաւունք չունէի՞ Աննայի խորհրդին դէմ դնելուս. տեսէք ուր կերթայ այսօր ծայրն՝ որ այսպիսի նախատական առաջարկութիւն մի լինի իրեն ժողովուրդն զուարճացնելու համար ինքզինքնին նուիրած ցած դերասանից կարգն անց-

նելու: Երբ կը մտածեմ Սէնթ-Անժի օրիորդն՝ գերասանի կամ դուսանի կարգն անցնիլը՝ սիրտս կը կեղեքի:

— Մայր իմ, ասաց Աննա՝ աչուըներէն թափած արցունքն բանել ջանալով. ուրիշ բան չեմ կարող ասել քեզ՝ բայց ինչ որ յառաջագոյն ասացի. ոչ եթէ օրիորդ Սէնթ-Անժի է թատերաց անօրէնին առաջարկն, այլ դարձեալ ասեմ որբ գաղղիացւոյ մի: Բայց կը հաւատամ, մայրիկ, որ քոյ զաւակդ գերասան ալ լինելով՝ պիտի մնայ քոյ տուած առաքինութեան սկզբունքն. կարծեմ թէ նոյն իսկ որբն պիտի հրաժարի պարկեշտութեան, պատուոյ և համեստութեան զգացմունքէն՝ զոր դու նորա սիրտըն տպաւորեցիր. կը համարիմ թէ նա ինքզինք ժողովրդեան հաճոյից պիտի զոհէ թատրոնի մէջ՝ որ իւր աչացն համար ուրիշ բան չէ՝ բայց եթէ ամենայն տեսակ ախտից դայթակղութեանց և ցոփութեանց ասպարէզ մի: Չէ, մայրիկ, չէ. մի վախեր, սիրտդ հանդարտ բռնէ. քու զաւակդ ղքեզ ամչցնելու բան մի չառներ. յիրաւի ինքն չյուսար որ ամեն ժամանակ Լիխթէնշթայնի իշխանին պէս առատաձեռն մարդիկ ելնեն իւր առջին, բայց յուսամ որ իմ աշխատութիւնս բաւական պիտի լինի անկարօտ առնելու ղքեզ, որչափ ալ երկայն տևէ մեր աքսորանաց ժամանակն, նա և եթէ բոլորովին զրկուած և հեռի ալ մնամք 'ի մեր հայրենեաց: Պարոն Պրաւն զիս գերասանի կամ դուսանի տեղ դնելով՝ իմ խեղճ վիճակս իւր շահուն գործածել կուզէ, բայց իւր խոստմունքն որչափ ալ շահաւոր երևի՝ ամենևին զայն ընդունելու պատրաստ չեմ, և վաղն եկածին պէս՝ ինչպէս որ նամակին մէջ կը խոստանայ, բացարձակ և համար-

ձակ իրեն պիտի իմացնեմ որ որբ արուեստագէտն ոչ երբէք հեռանալիք ունի պատուոյ, բարոյականի և կրօնից նեղ ճամբաներէն »:

Հազիւ թէ Աննա այս խօսքերս աւարտեց, գերմանացի աղախինն ներս վազեց և իմացուց տիկնոջն՝ որ ծեր և օտարական մարդ մի տան բակն մտել էր, և ետևէն ալ բեռնակիրներ կուգային քուրձերով և սնտուկներով: — «Անշուշտ Տիւպուան է, գոչեց Աննա. անտարակոյս Փրանկիայէն լուրեր բերած է»: Եւ ասացածն սխալ չէր. հաւատարիմ Տիւպուան անմիջապէս ներս մտաւ, և յարգանօք մարքիզուհւոյն ձեռքն համբուրեց. մարքէզն ալ նորա հետ պագտուեցաւ. յետոյ սակաւ մի յոգնութիւն առնլով, մարքէզին և կնոջ նայուածքէն իմանալով նոցա անհամբերութիւնն իր գործածներն լսելու՝ սկսաւ ասել. «Գոպլէնցէն 'ի ձէնջ բաժնուելէս ետև՝ փառք Աստուծոյ քանի մի վտանգներ ու փորձանքներ անցընելով՝ Փրանկիա մտի ու Փարիզ հասի: Ինչպէս որ աստի չորս ամիս առաջ ձեզ գրած թղթովս իմացուցել էի, հոն հասնելուս՝ ամեն տեղ կնքած գտի Տէր Ֆօրթոնի դրդամբն, և յետոյ իմացայ որ այս զգուշութիւնս դեռ ձեր Փրանկիոյ հողին մէջ գտուած ժամանակը գործադրուել է. ուստի անկարելի եղև ինձ ձեր ստացուածքէն բան մի ազատել. իսկ հրամանատարին թողած ժառանգութենէն՝ առջի բերան կը յուսայի սակաւ մի բան ձեռք ձգել. որովհետև ինքն մեռնելէն հինգ վեց օր յառաջ՝ մեծագումար ստակ մի յանձներ էր իւր նոտարին ձեռքն, նմանապէս ունեցած գոհարներն և առնլիքի թուղթերն, ապսպրելով նմա որ անմիջապէս իր ժառանգին կամ նորա գործակատարաց ձեռքն հասցնէ. նո-

նելու: Երբ կը մտածեմ Սէնթ-Անժի օրիորդն՝ գերասանի կամ դուսանի կարգն անցնիլն՝ սիրտս կը կեղեքի:

— Մայր իմ, ասաց Աննա՝ աչուըներէն թափած արցունքն բռնել ջանալով. ուրիշ բան չեմ կարող ասել քեզ՝ բայց ինչ որ յառաջագոյն ասացի. ոչ եթէ օրիորդ Սէնթ-Անժի է թատերաց անօրէնին առաջարկն, այլ դարձեալ ասեմ որբ գաղղիացւոյ մի: Բայց կը հաւատամս, մայրիկ, որ քոյ զաւակդ գերասան ալ լինելով՝ պիտի մնայ քոյ տուած առաքինութեան սկզբունքն. կարծես թէ նոյն իսկ որբն պիտի հրաժարի պարկեշտութեան, պատուոյ և համեստութեան զգացմունքէն՝ զոր դու նորա սիրտըն տպաւորեցիր. կը համարիս թէ նա ինքզինք ժողովրդեան հաճոյից պիտի զոհէ թատրոնի մէջ՝ որ իւր աչացն համար ուրիշ բան չէ՝ բայց եթէ ամենայն տեսակ ախտից դայթակղութեանց և ցոփութեանց ասպարէզ մի: Ոչ, մայրիկ, չէ. մի վախեր, սիրտդ հանդարտ բռնէ. քու զաւակդ զքեզ ամչցնելու բան մի չառներ. յիրաւի ինքն չյուսար որ ամեն ժամանակ Լիխթէնշթայնի իշխանին պէս առատաձեռն մարդիկ ելնեն իւր առջին, բայց յուսամ որ իմ աշխատութիւնս բաւական պիտի լինի անկարօտ առնելու զքեզ, որչափ ալ երկայն տևէ մեր աքսորանաց ժամանակն, նա և եթէ բոլորովին զրկուած և հեռի ալ մնամք 'ի մեր հայրենեաց: Պարոն Պրաւն զիս գերասանի կամ դուսանի տեղ դնելով՝ իմ խեղճ վիճակս իւր շահուն գործածել կուզէ, բայց իւր խոստմունքն որչափ ալ շահաւոր երևի՝ ամենևին զայն ընդունելու պատրաստ չեմ, և վաղն եկածին պէս՝ ինչպէս որ նամակին մէջ կը խոստանայ, բացարձակ և համար-

ձակ իրեն պիտի իմացնեմ որ որբ արուեստագէտն ոչ երբէք հեռանալիք ունի պատուոյ, բարոյականի և կրօնից նեղ ճամբաներէն»:

Հազիւ թէ Աննա այս խօսքերս աւարտեց, գերմանացի աղախինն ներս վազեց և իմացուց տիկնոջն՝ որ ծեր և օտարական մարդ մի տան բակն մտել էր, և տանէն ալ բեռնակիրներ կուգային քուրձերով և սնտուկներով: — «Անշուշտ Տիւպուան է, գոչեց Աննա. անտարակոյս Փրանկլիայէն լուրեր բերած է»: Եւ ասացածն սխալ չէր. հաւատարիմ Տիւպուան անմիջապէս ներս մտաւ, և յարգանօք մարքիզուհւոյն ձեռքն համբուրեց. մարքէզն ալ նորա հետ պագտուեցաւ. յետոյ սակաւ մի յոգնութիւն առնլով, մարքէզին և կնոջ նայուածքէն իմանալով նոցա անհամբերութիւնն իր գործածներն լսելու՝ սկսաւ ասել. «Քոպլէնցէն 'ի ձէնջ բաժնուելէս ետև՝ փառք Աստուծոյ քանի մի վտանգներ ու փորձանքներ անցընելով՝ Փրանկլիա մտի ու Փարիզ հասի: Ինչպէս որ աստի չորս ամիս առաջ ձեզ գրած թղթովս իմացուցել էի, հոն հասնելուս՝ ամեն տեղ կնքած գտի Տէր Ցորթոնի գրգմամբն. և յետոյ իմացայ որ այս զգուշութիւնս դեռ ձեր Փրանկիոյ հողին մէջ գտնուած ժամանակը գործադրուել է. ուստի անկարելի եղև ինձ ձեր ստացուածքէն բան մի ազատել. իսկ հրամանատարին թողած ժառանգութենէն՝ առջի բերան կը յուսայի սակաւ մի բան ձեռք ձգել. որովհետև ինքն մեռնելէն հինգ վեց օր յառաջ՝ մեծագումար ստակ մի յանձներ էր իւր նօտարին ձեռքն, նմանապէս ունեցած գոհարներն և առնլիքի թուղթերն, պատուիրելով նմա որ՝ անմիջապէս իր ժառանգին կամ նորա գործակատարաց ձեռքն հասցնէ. նո-

տարին ալ ուզել էր հաւատարմութեամբ կատա-
րել հանդուցելոյն կամքն: Երբ Ռենաորին եղբա-
րու հետ տեսնուեցանք, ինձ յանձնեց 30,000
ֆրանք ոսկի ստակ, նոյնչափ ալ ժամադրու-
թեամբ վճարելի տոմսակներ, քանի մի ակունք
և ոսկիէ ժամացոյց մի ու ընչադեղի տուփ մի:
Բայց դժբաղդաբար նոտարին գրագիրն նենգա-
ւոր մարդ մի էր. և նոյն երեկոյն որ այս բաներս
առած էի՝ իմ վրաս ամբաստանութիւն եղաւ՝ որ-
պէս թէ աքսորուածներու հետ թղթակցու-
թիւն ունիմ. ուստի երկու ժամ ետքը բռնեցին
զիս ու բանտ տարին: Այս բանտարկութենէս
ետև գլխէս անցածներուն վրայ կուզէի քօղ մի
ձգել ու ծածկել, բայց ճշմարտութիւնն ալ ձեզ-
մէ թաքուցանել չեմ ուզեր: Երրորդ օրն ժան-
տատեսիլ մարդ մի եկն իմ քովս և սկսաւ պար-
ծիլ թէ աւգոստոսի 10ին ժողովրդեան ձեռքէն
զձեզ ազատողն ինքն է եղել. և այս բանս ինձ
իմացնելուն պատճառն այն է որ, ասէր, ինձ
ցուցանէ թէ զիս ալ ազատելու կարող էր: Այս
բանս խորհրդապահութեամբ ինձ զրուցելէն
յետոյ՝ առաջարկեց ինձ որ նոտարէն ընդունած
ամեն բանը իւր ձեռքն տամ, եթէ չես ուզեր, ա-
սէր, ժողովրդեան արդարութեան ձեռքն մատ-
նուիլ: — Ես բացէ 'ի բաց մերժեցի այն անօրի-
նին առաջարկն. այն ալ ել ու կորաւ ասելով.
«Զղջաս պիտի գործածիդ վրայ, վասն զի ժողո-
վրդեան դատաստանն անյապաղ ու սարսափելի
է»: — Այս խօսքերս ինձ վախ մի չտուին. վասն
զի ամեն բան աչքս առած էի, և կեանքս Աստու-
ծոյ նուիրած էի. միայն կը ցաւէի որ իմ վեր-
ջին ծառայութիւններս պիտի չկարեմ ձեզ մա-
տուցանել: — Երբ աղօթքի հետ էի Աստուծմէ
համբերութիւն և ոյժ խնդրելով, բանտապանն զիս

կոչեց և առանձին սենեակ մի տարաւ. կարծեցի
թէ դատաւորներն զիս հարցփորձ պիտի առ-
նէին: Եւ ինչպէս յանկարծակիի եկի երբ սենե-
կին ծայրն գրասեղանի մի առջև նստած մարդուն
վրայ աչքս վերցնելով տեսի որ... ա՜հ, ինչպէս
ասեմ. ներէ ինձ, սիրելի տէրս. տեսի որ նոյն
ինքն Տ. Ֆորթոն էր՝ որ ասաց ինձ. «Մօտ եկ,
Տիւպուա, ես զքեզ ազատելու համար եկի հոն
տեղս. գիտես որ ինձ բարեկամք և ազդեցու-
թիւն չեն պակսիր. ուստի վաղն բանտիս դըռ-
ներն քեզ համար պիտի բացուին, բայց մի միայն
պայմանով. դու նոտարին ձեռքէն 30,000 ֆրանք
ոսկի ստակ, նոյնչափ ալ դրամաթուղթ ընդու-
նել ես, նաև գոհարներ ու ադամանդներ. և այս
բանս ստոյգ է, որովհետև նոտարն բռնուելով
ամեն բան խոստովանել է, տեսնեմք թէ նա իւր
գլուխն ալ պիտի կարէ ազատել թէ ոչ: Այս
ինչքերս քու եղած տեղդ գտուած չեն. ասել է
թէ դու ծածկել ես զայնս՝ հասարակապետու-
թեան ձեռքէն փախցնելու համար. հիմա եթէ
ազատիլ կուզես, յանձնէ զայնոսիկ քու տիրոջդ
աղջկան ձեռքն»:

«Պարապ տեղն ջանացի ինքզինքս պաշտպա-
նելու, և ամեն կերպ բանեցուցի որ նորա սիրտն
ալ շարժեմ ու միտքն փոխեմ. ամեն բան ան-
օգուտ եղաւ: Ինքն միշտ այս բանս ինձ կը կրկնէր՝
որ եթէ կամակորութեամբ իմ գաղտնիքս ուզէի
պահելու չյայտնել, ինձ հետ գաղտնիքս ալ պի-
տի մեռնէր. և այսու թէպէտ հասարակապե-
տութեան վնաս պիտի լինէր, բայց ձեզ ալ օ-
գուտ մի պիտի չլինէր. և իմ անօգուտ հաւա-
տարմութիւնս ալ անծանօթ պիտի մնար, և ոչ
ումեք օգտակար: Այս պատճառներս մտացս
վրայ տեղիք արարին. սակայն վերջին ջանքս գործ-

ածեցի որ գոնէ այս նորնուակոծութենէս քանի մի կտոր բան ազատեմ. և Աստուած ալ յաջողեց: Միայն այս ալ ասեմ որ սակաւ մի խարդախութիւն և սուտ ալ խառնեցի՝ որ միշտ չար ու մեղք է. և այս բանիս համար Աստուծմէ ներումն ալ խնդրեցի. և յուսամ որ դուք ալ, սիրելի տէր իմ, ինձ կը ներէք ձեզ անկած մասին համար. յիրաւի այնպիսի պատճառ մի ունէի, որ բանեցուցած նենգութիւնս ինձ օրինաւոր և գովելի կ'երևցնէր, և այս խորհրդածութիւնս սակաւ մի ժամանակ իմ խիղճս լռեցնել տուաւ: Ուստի նախ Տ. Ֆորթոնի, կամ թէ աւելի լաւ, հայրենակից Ֆորթոնի ասացի՝ թէ (որովհետև ինքն սաստիկ ապսպրեց ինձ որ միշտ այս անուամբ կոչեմ զինքն) նոտարին ինձ տուած գոհարներն շատ բան մի չէին, (առաջուց նոցա մէջէն ամենէն գեղեցիկ ու թանկագիններն զատած ու պարեգօտիս աստառին մէջ կարած էի). իսկ ստակին համար ասացի, թէ յիրաւի առել էի և առածս չէի կարող ուրանալ, ինչպէս նաև թղթադրամներն. (սակայն նոցա մէջէն ալ Լոնտրայի և Համպուրկի վրայ քաշուած տոմսերն՝ պարզ ժամադրութեամբ եղած տոմսերէն զատելով, զնոսա ևս իմ զգեստիս մէջ կարած էի). իսկ ոսկի ժամացոյցն և տուփն ծածկելու համար՝ ամենևին յոյս չունէի. որովհետև քաղաքացի Ֆորթոնն ինձ յայտնապէս ասաց՝ որ դատաստանարանէն ելնելէն ետև մինչև տունս հետս պիտի գար, որպէս զի բարի ժողովուրդն զիս քարի բռնելով՝ ճամբան չսպաննեն. այս ասելն ուրիշ բան չէր նշանակեր՝ բայց եթէ անձամբ պիտի գար ու քովս եղածներն առնուր, որպէս զի բան մի կարող չլինիմ իրմէ ծածկելու:

«Երկրորդ օրն առին զիս խուովարարաց ա-

տեանն հանեցին, և եղած հարցփորձին ինչպէս որ տուն տրուած էր ինձ այնպէս պատասխանեցի. ասելով՝ թէ աւգոստոսի 10էն 'ի վեր զձեզ տեսած չէի, և թէ միտք ալ չունէի ձեր քովն գտանուելու, և մանաւանդ ձեզ հետ թղթակցելու: Այս բանիս համար յինէն երդումն ուզեցին հասարակապետական ձևով մի, ես ալ միտքս դնելով որ այն ձևն զիս բանի մի չպարտաւորեր՝ ուզածնին կատարեցի. եթէ Աւետարանի վրայ երդումն տալս ուզէին՝ անտարակոյս դէմ պիտի դնէի: Այսու դատաւորներն զիս անպարտ արձակեցին. և երբ քաղաքացի Ֆորթոնն մի գիծս, և առաջ ինձ եկող ժանտադէմ մարդն միւս գիծս քալելով՝ ատեանէն դուրս կ'ելնէի, հոն խռնուած բազմութիւնն սկսաւ պոռչտալ. Կեցցէ հայրենակիցն, կեցցէ հասարակապետութիւն, եղբայրութիւն և կամ մահ. և այս եղբայրութեան անուամբն՝ ստիպուեցայ յիսուն վաթսուն հատ անօրինաց հետ պագնուիլ, որ գինի և արիւն կը հոտէին: Երբ իմ բնակութիւնս հասաք, Տէր Ֆորթոն իր արժանաւոր սպասաւորն դրան առջևն թողլով ինձ հետ սենեակս եմուտ և դուռն ներսէն փակեց: Յետոյ սենեկին ամեն դին անհանգիստ ու հետաքրքիր աչք մի նետելով՝ ինձ դարձաւ, կարծես թէ ասել կուզէր. Արդեօք խաբեցի՞ր զիս չարաճճի, ես հոս բաց սնտուկներէ ու պարապ դարաններէ զատ բան մի չեմ տեսներ. ո՞ւր են ուրեմն այդ ասացած գանձերդ: Բայց ես ժամանակ չթողի որ այս հարցմունքս ինձ առնէ. մահիճս մէկդի քաշեցի, և կորոցի մի ծայրով գետնի աղիւսներէն քանի մի հատ հանեցի. ու երբ անոնց տակն եղած մեծ թերթ մի ստուարաթուղթն վերցնելով՝ նորա աչաց առջևն ելին ժամադրով տոմսակներուն թղթապանն, և ի-

լաբու վրայ դիզուած շարուած ոսկիներն, ալ չկրցաւ ինքզինքը զսպել և ուրախութեամբ գոչեց։ Ոսկիներուն քով լաթէ քսակի մի մէջ ալ գոհարներն ու ադամանդներն դրած էի։

« Ցիրաւի կը խոստովանիմ՝ որ ես ինքն տեսնելով որ այսչափ հարստութիւններն իրենց օրինաւոր տիրոջմէն յափշտակուելով՝ այնպիսի անյագ մարդու մի աւար պիտի լինին՝ որ չափ և սահման չգիտեր, սիրտս տակնուվրայ եղև ու ցաւագին գոչեցի. «Քաղաքացի, գիտցած լինիս՝ որ այս քեզ տուած ստակիս մի մասն իմս է. վասն զի այսչափ տարիներէ 'ի վեր իմ ամսականներս առած չլինելով, մարքէզն ինձ խօսք տուած էր որ առջի անգամ ձեռքն ստակ անցնելուն՝ իմ ստակս ինձ պիտի վճարէր»։ Հօս Տիւպուային աչուըներէն արցունքն աղբիւրի պէս թափելով՝ դարձաւ իւր տիրոջն ու հեծկլտալով ասաց. «Ներեցէք, սիրելի տէր իմ, այսպիսի պարագայի մի մէջ ձեր անունն բերանս առնելուս, և սուտ տեղն ձեր վրայ այսպիսի անհոգութեան մեղադրանք մի ձգելուս համար. ես նոյն ատեն ինքզինքս արդարացուցի միայն բարի լինելուն համար. բայց ինչպէս որ ասացի՝ ամենէն բարի դիտաւորութիւնն ալ՝ սուտն չարդարացներ։ Համարձակեցայ Տ. Ֆորթոնի ասելու՝ որ քսան տարուան առնելիք ունէի ձեր վրայ, և թէ որ այս վերջին յոյսէս ալ զրկուէի, իմ հացըս մուրանալով գտնելէն աւելի լաւ կը համարէի անմիջապէս սպաննուիլս։ Այս ասելուս՝ կարծեմ թէ ինքն ալ իմ յուսահատութենէս վախցաւ՝ կասկածելով որ մի գուցէ դուրս ելած ատենս իմ բերնէս ալ այնպիսի խօսք մի ելնէ՝ որ զինքն ալ կասկածելի և յանցաւոր երևցնէ տէրութեան առջև։ Բայց պահանջած ստակդ

խիստ շատ է կ'ասէր, և կ'ուզէր կէսէն աւելին վար զարնել. յետոյ կէսն տալու հաւանեցաւ. ես երկար ժամանակ դէմ դրի. բայց վերջապէս ստիպուեցայ կէսն առնլով գոհ լինել։ Ուստի 10,000 ֆրանքն ինձ թողլով՝ մնացածն բոլոր առաւ տարաւ. բայց դուրս ելնելէն առաջ՝ լաւ մի մտուկներս խառնեց որ թանկագին բան մի պահած ու ծածկած չլինիմ։

«Նորա երթալէն ետև երբ մինակ մնացի, մտածեցի որ բնակութիւնս փոխեմ, որպէս զի զիս թէ փնտռեն՝ չգտնեն. որովհետև Տ. Ֆորթոնի ինձ ասացած խօսքերուն չէի վստահեր, և դող մի կուգար վրաս՝ երբ կը մտածէի թէ մի գուցէ բռնի տուածին վրայ զղջալով զիս բռնել ու սպաննել տայ։ Ուստի առաւօտ եղածին պէս Սէն-Ժէրմէնի թաղէն ելի՝ և Թամբլ արուարձանին նեղ փողոցներէն միոյն մէջ պանդոկ բռնող վաղեմի բարեկամի մի քով գնացի. անունս ալ փոխելով մօրս մականունն սկսայ գործածել՝ որ Տիւրան կը կոչուէր։ Ամիսներով հոն տեղ բնակեցայ՝ տնէն դուրս չելնելով, և անհամբերութեամբ կը սպասէի որ Աստուած առիթ մի տար ինձ մայրաքաղքէն ելնելու ու սահմանածայրն մօտենալու։ Այն բարեկամս որոյ տունն պահուըտած էի, խորհուրդ տուաւ ինձ որ բանակի պաշարներն հոգացողի մի քով ծառայութեան մտնեմ, որ Ստրասպուր պիտի երթար՝ հոն ժողոված հասարակապետական բանակին պաշար տանելու համար։ Ուրախութեամբ յանձըն առի այս առաջարկս, միտքս դնելով որ միանգամ Ստրասպուր հասնելէն ետև՝ կարող էի դիւրաւ Հռենոս գետն անցնիլ և Գերմանիա մտնել. սակայն շատ դժուարութեն կրեցի մինչև որ իմ ունեցած վաճառքի բեռներուս պէս կապե-

լով ու Վէրին Հռենոսի գաւառն պիտի երթան ասելով՝ քաղքէն դուրս հանեցի։ Հոն նաւավար մի գտի, որուն առատ վարձք տալով՝ Ստրասպուրէն երկու մղոն վար՝ բեռներս ու զիս գետին դիմացի եզերքն անցուց, ուր որ ինքն դարձեալ հոն տեղն յառաջագոյն ձիեր ու առաջնորդներ բերել տուած էր ինձ համար. որովհետև իրեն վտանգաւոր արուեստն էր՝ փրանկիացի պանդուխտներն Գերմանիոյ հողն անցուցանելն. և որովհետև լաւ ստակ կ'առնուր իւր ճամբորդներէն, ինքն ալ նոյն ստակով իրեն ձեռնտու եղողներն կը վարձատրէր։ Որովհետև Քոպլէնցէն 'ի ձէնջ բաժնուելուս ժամանակ՝ գիտէի որ Վիննա երթալու միտք ունիք, ես ալ որոշեցի որ հոն երթամ. մանաւանդ որ հասարակապետականներն դեռ Մայանս քաղաքն ու Հռենոսի եզերքն մեծաւ մասամբ բռնած էին։ Երեք օր է որ Վիեննա հասի, և բոլոր այս ժամանակս զձեզ բնտռելու հետ էի, և գրեթէ յուսահատել էի զձեզ գտնելէն՝ երբ այս առաւօտ օրագրի մի մէջ ընթերցայ՝ թէ Լիխթէնշթայն իշխանին տուած ցայգահանդիսին մէջ փրանկիացի դաշնակահար օրիորդ մի մեծ փառք ու համբաւ ստացել է. անմիջապէս իշխանին ապարանքն գնացի, և նորա ծառաներէն իմացայ ձեր ուր տեղ լինելն»։

Հոս Տիւպուա խօսքն աւարտեց, ու երբ իւր տէրն եռանդուն կերպով նմա շնորհակալ լինէր ու կը գովէր, իւր ծոցէն փոքրիկ տուփ մի հանեց և բանալով զայն՝ իւր մանկահասակ տիկնոջ ձեռքն տուաւ ասելով. «Ահաւասիկ, օրիորդ, ժառանգութեանդ մի փոքրիկ մասն, մեղք որ իմ ձեռքս չէր այլ աւելին ձեզ բերել»։ Աննա տուփն առնելով, որոյ մէջ շատ թանկագին գոհարներ կային, մօրն տուաւ, որ ադամանդից փայլն տեսնելով ժպտեցաւ, ու յետոյ հառաչելով ասաց. «Բարով վայելես զաւակս, բայց ո՛րչափ սուղի կը նստին քեզ սոքա»։

Յետոյ Տիւպուա՝ տիրոջ առջև դրաւ ոսկեով լեցուն երկու քսակ, առջինին վրայ 15,000 և երկրորդին վրայ 10,000 փրանք գրուած. և ուրիշ թղթապան մի տոմսերով լեցուն։ «Այս թղթապանիս մէջն ալ, ասաց, գրեթէ քսան հազարի դրամաթուղթ կայ՝ որ բաւական ատեն մեզ կ'օգտէ։ Այս տասն հազար փրանքն Տ. Ֆորթոնէն կորզած ստակն է, զոր իմ տէրս ինձ պարտական է ասելով՝ ձեռքէն խլեցի. իսկ միւս քսակին մէջ եղած տասնուհինգ հազար փրանքն՝ իմ երեսուն տարուան մէջ խնայութեամբ ժողոված ստակս է. ներեցէք ինձ որ այն ալ ձեր օգտին համար գործածեմ. և ես 'ի ձէնջ ուրիշ բան չեմ խնդրեր՝ բայց եթէ մինչև մեռնիմ երթամ՝ ձեր ծառայութեան մէջ մնամ»։

Մարքէզն սիրտն ելած ու աչուըներն արցունքով լեցուն Տիւպուայի հետ պագանուեցաւ. մարքիզուհին ալ նոյնպէս սիրտն ելած՝ այս հաւատարիմ ծառային վարմունքն՝ իւր փեսին անարժան ընթացից հետ կը բաղդատէր. իսկ Աննա իւր գեղեցիկ աչուըներն դէպ յերկինս վերցնելով շնորհակալ լինէր Աստուծոյ՝ Տիւպուայի պէս արդար մարդն իւր ընտանեաց մէջ դարձընելուն համար. յետոյ մօրն սաստիկ ցաւն տեսնելով՝ ու այնոր պատճառն գուշակելով՝ նորա վիզն պլլուեցաւ և ասաց. «Ա՛հ, գորովագութ մայր իմ, մեք ամենքնիս կեանքերնիս պիտի զոհենք զքեզ մեծարելու և սիրելու համար»։ Ու այս խօսքերս այնպէս ազդեցին նորա սիրտն, որ առատ արցունք երեսն 'ի վար կը վազէին. որով

սակաւ մի սիրտն իջնելով՝ զաւկին հետ կը պտըտուէր առանց խօսք մի զրուցելու. յետոյ Տիւպուայի դառնալով ու անոր ձեռքերն իր ձեռաց մէջ սրտանց սեղմելով՝ իր շնորհակալութիւնն կը յայտնէր. այնպէս որ խեղճ ծերունին սրտաբեկ ձայնով մի հեծկլտալով ասաց. «Ա՛հ, տիկին, ինչպէս պիտի կարող լինիմ փոխարինել սա վայրկենիս ինձ տուած երջանկութեանդ»:

Երբ ամենուն սիրտն սակաւ մի հանդարտեցաւ, մարքէզն սկսաւ այսպէս խօսիլ. «Սիրելի Տիւպուաս, քու վեհանձն վարմունքդ երախտագիտութեամբ սիրտս կը լեցնէ, բայց իմ մանկութենէս 'ի վեր քու վրայ ունեցած համարմանս վրայ բան մի չկարէ աւելցնել: Այո, դու մեր հետ պիտի ապրիս, և որչափ ատեն որ Աստուած զքեզ այս աշխարհիս վրայ պահէ՝ իրարմէ պիտի չբաժնուինք: Անտարակոյս իմ կինս ու զաւակս ալ ինձ պէս կը մտածեն. բայց քու վեհանձն սիրովդ ալ զեղծանիլ չեմ ուզեր. ուստի ահա սա գումարն՝ զոր քու ճակտիդ քրտինքովդ վաստկած ես: Չեմք գիտեր թէ ամենուս ճակատն ինչ գրուած է. և Աստուած մի արասցէ, որ ես իմ բարեկամներէս ամենէն հաւատարմին՝ խեղճութեամբ ապրելուն պատճառ լինիմ և զնա կարօտութեան մէջ ձգեմ, յայսմ հետէ դու իբրև ընտանեաց բարեկամ՝ այնպէս պիտի ապրիս մեր մէջն»:

Տիւպուա թողուց որ իւր տէրն խօսքն աւարտէ, և յետոյ բացարձակ յայտնեց իւր միտքն թէ՝ որովհետև ամեն իւր ուզածն նմա շնորհել էին, ա՛լ ինքն բանի մի կարօտ չէր, և չէր կարող ետ առնուլ այն ստակն՝ որ ա՛լ իրենն չէր սեպուիր: Այսով վեհանձն առատաձեռնութեան կռիւ մի բրդաւ մարքէզին և այն պատուական

ծերոյն մէջ. վերջապէս այս վերջինս յաղթեց. խեղճին մտքէն չէր անցներ և չէր կարող ալ գուշակել՝ թէ սակաւ ժամանակէն ինչ յանկարծակի փորձանք պիտի գար իրենց գլուխն:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Պարոնի ընդունայն առաջարկութիւնները. — Խաղ:

Պարոն Պրաւն ինչպէս որ գրած էր, մարքէզին տունն եկն. բայց Տիկին Սէնթ-Անժի և Աննայի տուած բացասական պատասխաններն իր յոյսն պարապ հանեցին, որոյ համար շատ զարմացաւ. որովհետև չէր կարող հասկնալ թէ հասարակ ու աղքատ արուեստաւէտ մի՝ ինչպէս դէմ կարող էր դնել այնպիսի շահաւոր առաջարկութեան, և թէ ինչպէս իրեն անարժան բան կը սեպէր դերասանութիւնն՝ զոր ինքն գերմանացի պարոն մի ալ լինելով՝ շատ պատուաւոր վիճակ կը համարէր: Անոր համար ա՛յլ աւելի սկսաւ վրայ տալ և ասել. «Կամ այն է որ իմ խոստացած գումարիս չէք հաւնած, և այն ատեն այսօր ճարն կարող եմք գտնել եթէ պահանջմունքդ ինձ իմացնէք, և կամ այն է որ գուսանութեան արուեստն անարգ բանի մի տեղ դրած էք»: — Աննա այնպիսի հաստատ փաստերով՝ պարոնին պատճառներն հերքեց՝ որ իր հասակին չէիր թողուր, այնպէս որ մարքէզն ևս զարմացաւ: Վերջապէս հոս կապեց խօսքն, որ եթէ յետոյն կարօտութեան մէջ ալ ինկանէր, միշտ սարսափմամբ ետ պիտի կենար այնպիսի

արուեստէ մը՝ որ ամենէն անկարգ կրից գրգռիչ ըլնել է, և շատ անգամ ալ դժբաղդութեամբ յիրաւի անոնց գործիք եղած է. արուեստ մը՝ զոր իրեն նախահարց կրօնքն դատապարտած էր: Պարոնն զայսօրինակ լսելով՝ տհաճութիւնն ծածկել կը ջանար. բայց որչափ աւելի իմացել էր Աննայի կատարելութիւնները, նորա կիրթ հանճարն և գերազանց միտքն և ազնուական արժանաւոր՝ քաղաքավար և փափուկ կերպն, այնչափ առաւել միտքն դրաւ՝ ամեն կերպ բանեցնելու որ նորա դիմադրութեանն յաղթէ, և ստիպէ զինքն իւր կեանքն նուիրելու Վեննայի ժողովրդեան զուարճութեանն: Այն ատենները (այսինքն 1792ին) ճիշդ նոյն բանն կը հանդիպէր Աւստրիոյ մէջ ալ, ինչ որ ըլնէր Անգլիա, Իտալիա և Սպանիա, այսինքն թէ այն երկիրներու ժողովուրդն՝ փրանկիացի պանդուխտներն՝ հասարակապետականներէն չէին որոշեր, այլ զամենքն առհասարակ կատէին. և ամեն տեղ խեղճ գաղթականներն մեծ քաղաքներէն ու սահմաններէն կը վռնտուէին, բաց ՚ի նոցանէ որ զինուոր գրուած էին: Պարոնն այս բանս գիտելով՝ ուզեց այսով իւր կամքն առաջ տանել:

Եղաւ Լիխթէնշթայն իշխանին գնաց և իւր միտքն նմա յայտնեց. և որովհետև սովորաբար մեծամեծք այնպէս կը համարին որ արուեստագէտք իրենց զուարճութեան գործիքն են, իրաւունք տուաւ պարոնին, և կը զարմանար թէ ինչո՞ւ փրանկիացի դաշնակահարն Վեննայի մէջ գուսանութիւն պիտի չառնէ. ուստի խօսք տուաւ պարոնին՝ որ ինքն ալ իւր ձեռքէն եկածին չափ պիտի օգնէ: Պարոնին միտքն այն էր՝ որ տէրութեան կողմանէ հրաման մի ղրկել տայ մարքէզին շուտով քաղքէն ելնելու. կարծելով

թէ մայրաքաղքէն հեռի Աննայի տաղանդն անծանօթ մնալով և ստակ չկարելով վաստակել՝ կարօտութիւնն զինքն պիտի ստիպէր ետ դառնալու ու իւր առաջարկն ընդունելու: Միւս կողմանէ ալ միտքն դրաւ որ երբեմն երբեմն երթայ զԱննա և նորա ընտանիքն տեսնէ, զոր իւր հովանաւորութեան ներքև առած կը համարէր. և որովհետև նոքա պիտի չգիտէին՝ թէ որու բարձին տակէն էր այս իրենց վրայ եղած հալածանքն, ինքն այնպէս պիտի ձևացնէր՝ թէ պիտի ջանար իւր ազդեցութեամբն այն հրամանն ետ դարձնելու. և այս բանիս մէջ յաջողելու համար այնպէս պիտի ցուցնէր թէ Աննայի դերասան ըլնելն մի միայն միջոց մի է:

Եկ տես, որ առանց իր գիտելուն պարագաներն ալ՝ իւր խորհուրդն յաջողեցին: — Մարքէզն բոլոր ձեռքն եղած ստակն հաշուելով ու գումարելով՝ տեսաւ որ գրեթէ 60,000 ֆրանք ունէր, Տիւպուային բերած գոհարներով միատեղ: Արդէն սահմանադրուխն անցած ժամանակ՝ ունեցած յոյսն ալ կորուսել էր, որով կը համարէր թէ քանի մի ամսէն կարող պիտի ըլնի՚ի Փրանկիա դառնալու, և հասարակապետականաց ամեն մի յաղթութիւնն լսելուն՝ իր աքսորանաց ժամանակն ալ աւելի երկարած կը համարէր: Այս 60,000 ֆրանքս եթէ խոհեմութեամբ գործածէր՝ երկայն ատեն իրենց պիտի բաւէր՝ առանց իւր աղջկան աշխատութեանն կարօտ ըլնելու. որովհետև որչափ ալ խեղճ աղջիկն ինքզինք ծնողաց համար նուիրելով՝ մեծ իշխանի մի աչքն մտած էր, սակայն ծայրն այնպիսի առաջարկութեամբ մի կ՚աւարտէր, որ իրեն նախատական կը համարէր: Մարքէզն իրաւունք ունէր վասն զի 60,000 ֆրանքով ոչ միայն քանի մի տա-

րի իւր ընտանեաց ամեն պիտոյքն կարէր հոգալ այլ և հանգիստ ապագայ մի պատրաստել. որով հետև այս ստակով կարէր պզտի ագարակ մի գնել ու բանեցնել, և այնոր եկամուտին հանգիստ ապրիլ: — Բայց Աստուած Աննայի վրայ դեռ շատ խաչեր պիտի ղրկէր՝ իւր համբերութեան և ծնողասիրութեան արժանաւոր վարձքն տալէն յառաջ:

Մարքէզն Վիեննայի մէջ կոմս Մարինեի անուամբ պանդուխտ փրանկիացիի մի հետ դըժբաղդաբար բարեկամացաւ, զոր յառաջագոյն ալ Փարիզ եղած ժամանակն կը ճանաչէր: Այս մարդս այնպիսի արտաքին կատարելութիւններ ունէր, որ սրտի բարելաւութիւնը բանի տեղ չդնող մարդկանց համար՝ շատ հաճոյական բաներ էին. և այս իր արտաքուստ ունեցած փայլովը՝ Վիեննայի մէջ եղած իշխանազուններուն շատին հետ ծանօթացեր էր ու կը տեսնուէր, և նոցա մէջ գտուած ատեն՝ շատ ճոխութիւն կը ցուցանէր: Սակայն մարքէզն գիտէր՝ որ Մարինեի կոմսն նոյն գերդաստանին կրտսեր զաւակն ըլլալով՝ հայրենական ժառանգութիւնն մեծ բան մի պիտի չըլլէր. ուրեմն ուսկից կը գտնէր այնչափ ստակըն՝ զոր կը վատնէր գոհարեղինաց, զգեստուց և տան ճոխութեան համար. այս բանս այնպիսի գաղտնիք մի էր՝ որում մարքէզին խելքն չէր հասնէր, և հարցնելու ալ չէր համարձակեր: Սակայն Մարինեի ինքն իրեն նորա տարակոյսն լուծեց. «Կը զարմանաս բարեկամ, ասաց, որ ես Վիեննայի մէջ Փարիզ եղած ատենէն աւելի հարուստ եմ. և յիրաւի, Փարիզ ամեն քար շարժելու էի՝ ստակ վաստկելու համար, իսկ հոս Վիեննա քսանուհինգ կամ երեսուն հազարի չափ փոքրիկ եկամուտի մի տէր եմ: Եթէ

այսօր ինչպէս եղածն հարցնես, ասկէ դիւրին բան չկայ. խաղ, խաղ, բարեկամ, ահա սոքա են իմ կալուածներս ու ժառանգութիւնս. ամեն խաղալուս կը վաստկիմ, նախ որ բաղդ ունիմ, և երկրորդ որ չափս չեմ կորուսաներ. ուր ընդհակառակն այս բարեմիտ աւստրիացիներն՝ այնչափ եռանդեամբ իրենք զիրենք խաղալու կուտան, որ հարիւր անգամ կորուսածին տեղ՝ հազիւ մի անգամ կը վաստկին. իսկ ինձ բոլորովին հակառակն կը հանդիպի: Յիրաւի նոցա հետ խաղ խաղալն շատ զուարճալի է, գրեթէ ապահով եմ որ նոցա ստակն քոյ գրպանդ է: Սիրելի բարեկամ, եթէ կամիս՝ ես զքեզ պատուաւոր տներէն մին տանիմ ներկայացնեմ, ուր որ ընկերներն միայն կ'ընդունուին:

Ատենօք մարքէզն ալ խաղի շատ սէր տուած էր, և այս ախտս իր սրտին մէջ չէ թէ մարած՝ այլ թմրած էր. այնպէս որ Մարինեի խօսքերէն այնչափ աւելի ուժով արթնցաւ՝ որչափ որ երկայն ատենէ 'ի վեր զսպուած էր. ուստի խնդրեց Մարինեիէն որ զինքն այն տունն տանի. և նոյն երեկոյին համար իրարու խօսք տուին: Սակայն այս իր ախտին նորէն անձնատուր ըլնելէն յառաջ. իր մտաց մէջ շատ պատերազմեցաւ. 'ի միոյ կողմանէ միտքն կը բերէր որ ինքն խաղի մէջ գրեթէ միշտ անյաջող եղած էր. միւս կողմանէ ալ կը քաջալերուէր յողդողդ բաղդն նորէն փորձելու, որ յիրաւի մինչև հիմա իրեն հակառակ եղած էր, բայց թերևս այս անգամ իրեն յաջողէր: Սակայն կը մտածէր՝ որ եթէ յոյժ պարապ ելնելով՝ կորուսանէր թէ իւր՝ թէ զաւկին և թէ խեղճ Տիւպուային ստակն, ինչ պիտի առնէր, և իւր կինն, զաւակն, և ծերունի ծառայն ինչ պիտի ըլլէին: — Բայց չէ,

տէր, այս բանս անկարելի է, Լինքն խոհեմութեամբ ու պաղ արեամբ պիտի խաղար, և ինքզինքը չափի մէջ պիտի բռնէր, և այն ալ սակաւ մի ստակով, այնպէս որ եթէ կորուսանէ՝ անյապաղ ետ քաշուի. Իսկ եթէ վաստկի՝ յառաջ տանի այն գտած երջանկութեան աղբիւրն: Ի՛նչ ուրախութիւն պիտի լինի իրեն եթէ երկպատիկ քառապատիկ տասնպատիկ իւր ունեցածն աւելնայ. և այս անկարելի բան չէ, ո՛րչափ մարդիկ կը ճանաչեմ որ խաղով հարստացած են: — «Հապա ո՛րչափ մարդիկ ալ կան որ խաղով փճացած են, կը գոչէր իրեն ներքին ձայն մի. դէմ դիր այդ փորձութեանդ որ զքեզ կարող է կորուսանել՝ որոյ դարմանն անհնարին է: Եթէ կամիս աւելի ուժ առնուլ, գնա՛ այդ վտանգալից խորհուրդդ կնոջդ և զաւկիդ իմացո՛, երբ միտքդ նոցա իմացնես, ա՛լ չես համարձակիր և խոհեմութիւնն զքեզ չթողուր այդ տունդ ոտք կոխելու՝ ուր ամօթէ ու խղճի խայթէ զատ ուրիշ բան պիտի չգտնես»: Բայց այս ձայնս պարապի գնաց, որովհետև մարքեզն այնոր մտիկ չըրաւ. իւր ընելիքին վրայ բան մի չասաց իրեններուն. գրպաններն ոսկւով լեցուց, ելաւ գնաց. վրայն երկու ժամ անցաւ չանցաւ՝ դեղնած թոշնած ու խռովեալ ետ դարձաւ: Կինն, աղջիկն ու Տիւպուստ նորա չորս դին առած՝ կը հարցնեն կը պրպտեն. նա սուտերով փախուստ տալ կ'ուզէ, ասելով՝ թէ չար լուրեր եկած են դրսէն, և թէ Բրուսիացիք, Աւստրիացիք և գաղթականաց բանակներն բոլորովին զարնուել ջարդուել են՝ հասարակապետականներէ Շաբէլ-Սէնթ-Անի պատերազմին մէջ (22 յուլիս 1793), և թէ իր բարեկամներէն մին ալ սպաննուել է: Թէպէտ և այս դաշնակցաց ջարդուիլն ստոյգ էր,

բայց մարքեզին սիրտն կեղեքողն իւր գործած անխոհեմութիւնն էր, որ այնչափ վնասուց պատճառ եղեր էր իւր ընտանեաց: Սրտէն կ'անիծէր Մարինելի հանդիպիլն և տեսութիւնն, և ինքն իրեն խօսք կուտար ա՛լ նորէն խաղ չխաղալու: «Երէք հարիւր ոսկի կորուսի, ասէր, այս դասս ինձ սուղի պիտի նստի, սակայն գոնէ իմ ախտէս պիտի բժշկուիմ»: — Բայց առտու եղածին պէս միտքն նորէն փոխուեցաւ, և կորուսածն ետը գնելու յոյսն՝ առջի երեկուին դըրած խոհեմական առաջադրութեանն յաղթեց: «Դիւրին բան չէ, ասէր ինքնիրեն, այսչափ մեծագումար դրամէ յանկարծակի զրկուիլ. երէք հարիւր ոսկին սակաւ բան չէ, մանաւանդ երբ ստոյգ գիտեմ որ իմ յանցանքովս կորուսի. բայց պատճառն այն է որ լաւ ճամբայ չբռնեցի. սուտ դրութիւն մի զիս շլացուց. բայց այս նոյն բանն պիտի չհանդիպի, ինձ այնպէս կուգայ որ այսօր պիտի յաղթեմ. ունեցած նախազգացութեանս մէջ յոյժ սակաւ անգամ խաբուել եմ»: Սակայն այդ իր վստահացած նախազգածութիւններն թէ նոյն օրն և թէ հետեւեալ օրերն դարձեալ զինքն խաբեցին. այնպէս որ շաբթուան մէջ բոլոր քովն եղած ըստակն կորոյս, բաց 'ի Լիխթէնշթայն իշխանին տուած 1500 ֆիորինէն, զոր մարքիզուհին բարեբաղդաբար Աննայի տուել էր որ պահէ: Մարքեզն յուսահատ և խռոված՝ ել մեկնեցաւ այն գժոխային խենդանոցէն. ու երթալու ատեն փորձութիւն եկն իրեն որ երթայ ինքզինքը Դանուբ գետն նետէ խղդուի, կամ գոնէ սահմանագլուխն երթայ ու ինքզինքը կամաւ փորձանքի մէջ դնէ ու սպաննուի: — Բայց մարքեզն իր ժամանակի իշխաններէն շատերուն

պէս անաստուածութեամբ պարծեցողներէն չէր. և թէպէտ անհաւատ չէր՝ բայց շատ մեղկ սկզբունք ունէր. այնպէս որ իւր դժբաղդութեան մէջ՝ ի կրօնից մխիթարութիւնն փնտռելու տեղ, ինքն իրեն դէմ կը կատաղէր, և այս անխելք կատաղութիւնն յուսահատութեան կը տանէր զինքն. իսկ արդ յուսահատութիւնն մարդուս վրայ տիրելուն պէս՝ շատ դժուարին է որ այնպիսին խելքին ցուցած իմաստուն խրատուցն հետևի կամ կրօնից պատուիրանացն հպատակի, որ ախտից ամէն անկարգ շարժմունքն կը դատապարտեն:

Ուստի այսպէս յուսահատ տուն դառնալով, ուր որ ութ օր յառաջ իր խաղաղութիւնն անտարակոյս գտած էր, հիմա կը տեսնէր որ այն խաղաղութիւնն բոլորովին իրմէ հեռացած էր. և իւր վրայօք ընտանեաց ալ զգացած անհանգստութիւնն տեսնելով, հազիւ ինքզինքը կը բռնէր իւր ցաւն չյայտնելու, և Աստուծմէ ոչ եթէ ույժ կը խնդրէր եղածն նոցա իմացնելու և խոստովանելու, հապա կ'ուզէր որ յանկարծական մահն հասնի իր վրայ և ազատէ զինքն այն սրտին տանջանքէն, և միանգամայն գործած յանցանքն խոստովանելու ամօթէն: Այսպիսի ներքին տագնապ մի երկայն չէր կարող տևել. նոյն գիշերն սաստիկ ջերմ մի եկն իր վրայ, և երեք օր երեք գիշեր բոլորովին ինքզինքը կորուսած՝ մեծ վախ պատճառեց իւր ընտանեաց, որ յոյսերնին կտրել էին նորա ապրելէն: Զինքն տեսնելու համար եկող բժիշկն ալ՝ չծածկեց նորա մերձաւոր վտանգի մէջ լինելն. և հիւանդութեան պատճառն հարցնելով՝ կասկածեցաւ որ ծանր տրտմութենէ մի առաջ եկած պիտի լինի: Մարքիզուհին որ մինչև այն ատեն եղածն չէր գիտեր,

բայց երկանն խաղասէր լինելն լաւ գիտէր, և թէ միշտ անյաջող եղած էր խաղի մէջ, մտքէն կասկած մի անցաւ. և այս կասկածն ստուգութեան փոխուեցաւ՝ երբ գրասեղանն բանալով՝ որոյ մէջ ստակն պահուած էր, բոլորովին դատարկ գտաւ զայն. և արցունքն չկարաց բռնել ոչ այնչափ իրեն՝ որչափ իւր աղջկանն և խեղճ Տիւպուային համար, որուն անձնանուիրութիւնն այս կերպով բոլորովին պարապ ելած էր:

Աննա մօրն հեծկլտանքն լսելով՝ քովն վազեց, որ հիւանդութեան սկիզբէն 'ի վեր հօրն անկողնին քովէն զատուած չէր. և քանի մի վայրկեան Տիւպուան իր տեղն թողլով, վազեց մօրն իմացընելու թէ հիւանդն սակաւ մի ինքնիրեն կուգար: Մայրն նորա ներս մտնելն տեսնելով, «Սիրելի զաւակս, ասաց, քու հօրդ գուժաբեր գաղտնիքն իմացայ, ունեցածնիս չունեցածնիս փճացուցել է. ա՜հ, այն չարագոյժ խաղն ամէն բան կուլ տուել է: Ա՜հ, խեղճ Աննա, ինչ պիտի լինի քու վերջդ:

— Մայր իմ, հոգ մի առներ. առաջ հայրս ազատելու նայինք. թերևս Աստուած մեր խեղճութեանն ողորմի ու նորա առողջութիւնն մեզ պարգևէ. և յետոյ ինձ զօրութիւն տայ աշխատելու:

— Աննա, ինչ ասել կ'ուզես, ասաց մարքիզուհին սարսափմամբ. ինչ, միթէ պիտի հաւանիս որ պարոնն...

— Բնաւ, բնաւ, մայր իմ. ձեր ու իմ հացս ճարելու համար ամչնալու բան մի պիտի չառնեմ. բայց առ այժմ երթամք հօրս քովն, որ աչքն բացած ատեն զմեզ իւր մօտն տեսնէ:

Մարքէզն խելքն գլուխն գալուն պէս, նախ և

առաջ իւր կնոջ վրայ նայեցաւ. Աննա ալ պատուհանին առջև կայնած՝ բժշկին ապսպրած դեղն կը պատրաստէր։

Մարքէզն ուզեց խօսիլ, բայց կինն ձեռքն նորա բերնին վրայ դրաւ՝ իմացնելու համար որ կուրծքն յոգնեցնելու չէր գար։ Բայց մարքէզն ինքզինք կը բռնադատէր և խօսիլ կ՚ուզէր. Աննա ջուրով դեղն բերաւ, և հօրն տալով այն մունջ կռուին վախճան տուաւ դադրեցուց։ Երկու օր անցնելէն ետև, բժիշկն հրաման տալով նմա խօսելու, վերջապէս լռութիւնն խզեց և սոսկ տկար ձայնով. «Տիկին, ձեզ խօսք մի ունիմ ասելու, որ ինձ շատ ծանր է, բայց ձեզ հարկաւոր է»։

— «Ասելդ աւելորդ է, սիրելիս պատասխանեց մարքիզուհին, ես ամէն բան իմացած եմ. և ես ու աղջիկս զքեզ մեղադրելու բան մի չունիմք. Աստուած տար որ դու ալ մոռնայիր այս խեղճութիւնս ինչպէս որ մեք ալ մոռցանք»։

— «Ո՛վ իմ արժանաւոր կողակիցս, գոչեց մարքէզն. Աստուած քու բարութիւնդ վարձատրէ. և դու, սիրելի զաւակս, յԱստուծոյ ընդունիս քոյ վարձդ. հապա դու, Տիւպուա, դու ալ ինձ պիտի ներես»։

— «Սիրելի տէրս, ասաց ծերունին, որդէն կեանքս ձեզ նուիրել էի և հիմա ալ ձեզ համար զոհած եմ. քոյ կեանքդ ազատելէն ետև կրնամ բանի մի վրայ ցաւիլ»։ — Այն ատեն մարքէզն թևերն բացաւ Աննայի և Տիւպուայի ուսերուն վրայ դնելով, և սկսաւ մարքիզուհւոյն թևերուն մէջ լալ ու արցունք թափել, և չորսն ալ միատեղ սակաւ մի ժամանակ այսպէս իրարու պլլուած կեցան լռութեամբ, վասն զի իրենց սրտէն անցածն խօսքով բացատրել կարող չէին։

Այն ատենէն յոյս աւելի նորա առողջանալուն վրայ. սակայն կաղդուրիլն ու ապաքինութիւնն շատ երկայն տևեց. և թէպէտ մարքէզն առողջացաւ, բայց սրտին տրտմութիւնն չանցաւ, և կարծեմ թէ իւր կենաց կարճընալուն ալ պատճառն այն եղև։ Մարքիզուհին եղածն բոլորովին մոռնալ խոստացաւ, բայց այս պայմանաւ՝ որ ալ անկէ ետև Աննա իւր զաւակն լինելն չըծածկէ։ «Երկու աղջիկ ունիմ, ասէր, անդրանիկն ինձ համար կորուսեալ է, և երկանն բըռնած անօրէն ընթացքէն ինձ այսպէս կ'երևի որ նորա միտքն ալ իրեն հետ համաձայն է։ Ինչ անխելք հպարտութիւն է՝ որ ես համարձակ չխոստովանիմ այն զաւակն որ Աստուած ինձ պարգևել է։ Ո՛չ, ալ յետ այսօրիկ Աննա որբ մի պիտի չհամարուի, հապա իմ և քոյ աղջիկդ. ինչպէս որ է ստուգիւ։ Թէ որ դժբաղդութեամբ սխալուիմք նորա հանճարոյն ալ կարօտ լինել, այն ալ մեզ համար ամաչելու բան մի չէ։

Ամաչելու բան՝ սանձարձակ կենաց տուած դայթակղութիւնն է՝ որ իմ Աննայիս պանծալի առաքինութիւններէն շատ հեռի է։ Բաց աստի քեզ հիմակուց կը զրուցեմ՝ որ ուր ալ երթաս, գիտցած լինիս որ ես ալ նորա հետ քոյ ետևէդ պիտի գամ, և նորա մայրն լինելուս վրայ պիտի պարծիմ»։

Մարքէզն ուրախացած որ իւր գործած անիրաւութիւնն բոլորովին պիտի մոռցուի, կընոջն ասացածին դէմ չդրաւ, և շատ գոհ ցոյց ինքզինքն նորա առաջադրութեան վրայ. մանաւանդ որ ինքն ալ զաւակն շատ կը սիրէր, ուստի իր անձնասիրութիւնն ալ այս բանիս մէջ կամակար զոհեց։ Իսկ Աննա կարծես թէ նորէն

գտնելով իւր ընտանիքն մեծ երջանկութեան մէջ էր. և կը փափաքէր որ իւր արժանիքն մօրն պարծանք համարուի: Մարքիզուհին ալ սակաւ ժամանակէն իւր մայրութիւնն ցուցընելու առիթն ունեցաւ. վասն զի երկու օրէն ետև Սաքս-Թէշէն դքսին սպասաւորներէն մին՝ նամակ մի բերաւ մարքէզին տունն փրանկիացի դաշնակահարին անուամբն, որով կը հրաւիրէր զինքն իւր տունն երթալու իւր աղջկան երգի և դաշնակի դաս տալու համար, և կ'աղաչէր որ իմացնէ իրեն թէ արդեօք ո՛ր ժամուն զինքն ընդունելու պատիւ պիտի ունէր:

Մարքիզուհին նամակն կարդալէն ետև սպասաւորին դառնալով, «Կարէք ասել դքսին որ վաղիւ կէս օր աղջիկս կը բերեմ նմա ներկայացընելու», ասաց:

Եւ ճիշդ խօսք տուած ժամուն մայրն ու աղջիկն ելլին գնացին, և սպասաւորներէն միոյն ասացին որ զդուքսն կ'ուզէին տեսնել: — «Անուննի՞դ, տիկին», հարցուց սպասաւորն: — «Փրանկիացի դաշնակահարն և իւր մայրն՝ մարքիզուհին տը Սէնթ-Անժ», ասաց մայրն: — Այս ասելուն՝ դահլճին երկու դուներն մէկէն բացուեցան, և դուքսն անձամբ եկն այն տիկնայքն ընդունելու:

Դուքսն խռովութենէն յառաջ շատ տարիներ Փրանկիա բնակած լինելով Սէնթ-Անժ անունն ալ իրեն ծանօթ էր. և Փարիզու ազնուական ընտանեաց մէջ յաճախած լինելով՝ նուրբ քաղաքավարութիւն մի ստացած էր, որ հարստութենէն աւելի թանկագին է. «Ինչ ասէք, տիկին, գոչեց, Օրիորդն ձեր դո՞ւստրն է. երջանիկ մայր մի էք ուրեմն: Օրիորդին կարգէ դուրս հանճարն անշուշտ ձեր հայրենիքէն

դանդաղեալ լինելուն թշուառութիւնն կը մեղմացնէ»:

Հազիւ այս խօսքերս ասաց, դաշնակի դաս առնելու աղջիկն դահլճէն ներս եմուտ, մայրն ալ ետևէն: — Տիկին, ասաց դուքսն դքսուհւոյն, ահաւասիկ այն սիրելի փրանկիացին՝ որոյ համար ձեզ խօսել էի, և իւր մայրն Տիկին մարքիզուհին տը Սէնթ-Անժ»: — Երկու տիկնայք զիրար քաղաքավարութիւններով բարևելու ժամանակ, երկու օրիորդներն ալ իրարու հասակակից ու տարեկից լինելով և սրտերնուն անմեղութեամբն ու պարզութեամբն ալ հաւասար, որ իրենց երեսաց վրայ կը փայլէր, իրարու հետ շուտ մի բարեկամանալով սիրով կը խօսակցէին:

Դուքսն սանէպնոցա մարց խօսակցութեանն կը խառնուէր, և մարքիզուհւոյն մեծ ազնուածութիւն և յարգութիւն ցուցնելով՝ կարծես թէ նմա իմացնել կ'ուզէր՝ թէ բաղդին գործած անիրաւութիւնն՝ իր առջև նորա անձնական յարգն ու արժանաւոր պատիւն չէր նուազեցներ:

Սաքս-Թէշէն դքսին տուած այցելութիւննին՝ Աննայի և իւր մօրն համար երջանիկ օր մի եղև: Բայց, աւա՜ղ, այս օրս ալ սարսափելի վաղիւ մի ունեցաւ: Մարքիզուհին ու աղջիկն յուսոյ պատրանօքն օրօրուելով քունն եղեն, բայց ցաւալի տագնապներու մէջ արթնցան:

ԳԼՈՒԽ ԺԳ.

Պատրն. — Մարքիզին մահն։

Պարոն Պրաւն միտքն դրածն յառաջ տանիլ ուզելով, և զԱննա ստիպելու համար որ դերասանութեան աւելի արուեստն յանձն առնու, աւստրիական ոստիկանութեան գլխաւորին դիմեց, և մարքէզ Սէնթ-Անժի վրայ չարախօսութիւն առնելով՝ այնպէս ցոյց որ շատ վտանգաւոր մարդ մի է՝ իր նենգաւորութեանց և հասարակապետականաց հետ թղթակից լինելուն պատճառաւ։ Որչափ որ այս չարախօսութիւնս անտեղի էր, սակայն որովհետև ոստիկանութեան գլխաւորն բոլոր սրտովն կ'ատէր զՓըրանկացիս առ հասարակ առանց որոշելու հասարակապետականներն գաղթականներէն, ուստի շուտով հրաման ղրկեց մարքէզին որ Վիեննայէն դուրս ելնէ և հեռու տեղ մի երթայ բնակի։ Այս հրամանս խեղճ պանդուխտ ընտանեաց համար մեծ թշուառութիւն մի էր, որովհետև մարքէզի յանցաւոր անխոհեմութեամբն աւուր հացի կարօտ վիճակի մէջ կը գտնուէին, և ուրիշ բանի վրայ յոյս չունէին՝ բաց 'ի Աննայի աշխատութենէն. և իրենց համար սահմանուած երկրին մէջ փոքրիկ քաղաքներ միայն գտնուելուն՝ Աննայի տաղանդն հոն անծանօթ ու թաղուած պիտի մնար և օգուտ մի պիտի չառնէր։ Եւ այս բանս տան մէջ ամենեցուն մտքէն ալ անցնելով՝ դադրած ցաւերն նորէն սկսան և գոցուած վէրքերն միւսանգամ բացուեցան. մարքէզին հիւանդութիւնն ալ կրկնելով՝ մազ մնաց կը մեռնէր։ Բը-

ժիշկն Նայմէյէր, որ ալ այս ընտանեաց սրտակից բարեկամն դարձեր էր և շատ կը ցաւէր ու կը սիրէր զնոսա՝ ինքն անձամբ ալ ոստիկանութեան գլխաւորին գնաց. բայց տրուած հրամանն ետ չկարողացաւ դարձնել տալ. սակայն գոնէ հիւանդին բժշկուելուն կամ մեռնելու ատեն գործադրութիւնն ուշացուց։ — Ոստիկանութեան պաշտօնէին այս վերջի խօսքերէս բժիշկն իմացաւ որ այս բանս յառաջագոյն կարգադրուած թշնամւոյ մի դաւանքն է. որովհետև այն հրամանն մարքէզին մեռնելէն ետքն ալ պիտի կատարուէր՝ որուն համար տրուած էր երկու խեղճ ու տկար կանանց դէմ՝ որոց վրայ ամենէն կասկածոտ և բծախնդիր ոստիկանութիւնն ալ փոքրիկ երկիւղ մի չէր կարող ունել. բայց այս թշնամութեանս որոյ բարձին տակէն լինելն չէր կարող գուշակել։ Սակայն երկու երեք օրէն երբ հիւանդն տեսնելու գնացել էր, Պարոն Պրաւն ալ հոն հասաւ և շատ ցաւ կը ցուցանէր՝ նոցա հանդիպած թշուառութիւնն նոր լսած ձևացնելով. և անոր խօսք բացաւ և եցոյց թէ արքունի թատերաց դերասաններն՝ որչափ պաշտպանութիւն կը գտնեն այսպիսի դիպուածներու մէջ. յայտնապէս Աննայի խօսք իմացընելով որ եթէ իւր առաջարկութեանն հաւանէր՝ դաշնագրին թուականն ոստիկանութեան հրամանագրին թուականէն յառաջ դնելով, կարող էր այն հրամանն յետս կոչել տալու։ Այն ատենէն բժիշկն միտքն դրաւ որ այս ամբաստանութիւնս առնողն՝ նոյն ինքն պարոնն էր, որ և երկրորդ օրն ալ գալու խօսք տալով ել և գնաց։ — Երբ նա դուրս ելաւ, բժիշկն իւր կասկածներն մարքիզուհւոյն յայտնեց. նա ալ պատմելով բոլոր անցած դէպքերն՝ եցոյց թէ

փնչպիսի անյաղթելի հակառակութիւն մի ունի այն արուեստին՝ որ իւր աղջիկն՝ իրենց տաղանդն Ժողովրդեան հաճոյից համար ծախողներուն կարգն պիտի անցընէր. զոր լսելով բժիշկն՝ շատ գովեց և հաւնեցաւ նորա ասացածներուն, և խոստացաւ նմա որ թէ իւր և թէ բարեկամաց միջնորդութեամբն մեղմացընել տայ այսպիսի դատն հրաման մի՝ որ տանից պատճառի տըրուած էր այսպիսի անմեղ և անյանց ընտանեաց դէմ: — Երբ պարոնն առջի աւուր խոստացածին պէս եկն, մարքիզուհին նորա խօսիլ սկսելուն չսպասեց. «Զեմ գիտեր, տէր, և չեմ ալ ուզեր գիտել, ասաց, թէ որոց ձեռքովն այս փորձանքս իմ և ընտանեացս գլուխն կը հասնի. և սակայն քաղքիս մէջ մարդու մի չարութիւն չեմք գործած կարծեմ, և յայսմ մասին խիղճ մի չունիմք: Շնորհակալ եմ ձեր մեզ խոստացած պաշտպանութեանդ՝ որում այնպիսի պայման մի կը դնէք՝ զոր իմ պարտքս է բացէ 'ի բաց մերժել: Գիտցիք, տէր, որ եթէ Աննա խեղճ որբ մի ալ լինէր՝ մարդկային յետին թշուառութեան մէջ ինկած՝ ինքն՝ մանկութենէն 'ի վեր կրօնի սուրբ սկզբունքովն մեծցած լինելուն համար՝ քրիստոնէութեան պարտուց դէմ եղած արուեստի մի անուանէն անգամ պիտի սարսափեր, որչափ ալ այնու իւր խեղճ վիճակէն կարող էր ազատիլ: Ուր մնաց որ Աննա երեսի վրայ ձըգուած որբ մի չէ, նորա ծնողքն դեռ ողջ են, և իւր հայրն Փրանկիոյ ազնուական ցեղերէն է. իւր մայրն ալ բաւական զօրութիւն ունի թըշուառութեան դէմ դնելու, որովհետև թշուառութիւնն մարդս անպատիւ չառնէր, բայց Ժողովրդեան անարգանքն ու երբէք յանձն կ'առնու »:

— Եւ ո՛վ է իւր մայրն, տիկին:

— Ձեր առջև կեցողն է:

— «Ա՜հ տիկին, գուշեց պարոնն, ինչպէս անտեղեակ էի ճշմարտութեան. եթէ գիտէի թէ Օրիորդն ձեր զաւակն է՝ ոչ համարձակէի նմա այնպիսի առաջարկութիւն անելու, որ յիրաւի զինքն վշտացուցած է. ներեցէք, տիկին, իմ տգիտութեանս, նոյնպէս և դուք Օրիորդ. յիրաւի ձեր ազնուական կերպէն, ձեր հմտութենէն և բովանդակ վարմունքէն պէտք էի ձեր ազնուական ծնունդն ճանաչել: Բայց թերևս եղած չարեաց դարման մի կարեմ անել. և վստահ եղիք, տիկնայք, որ իմ ամէն ջանքս պիտի գործեմ ձեր հանգստութեան համար». ասաց և ել մեկնեցաւ:

Յիրաւի այս մարդուս սիրտն չար չէր. միտքն այն չէր որ աքսորին հրամանն կատարուի, այլ միայն զԱննա վախցնելով իւր առաջարկութեանն հաւանիլ և ստորագրել տալ կ'ուզէր. ուստի երբ իմացաւ որ մարքէզին աղջիկն է՝ իւր բարի զգացմունքն արթընցան, և մարքէզին վրան իբրև թշուառ եղբօր մի վրայ նայելով՝ գործածին վրայ զղջաց, ու անմիջապէս ոստիկանութեան պաշտօնէին երթալով՝ աղաչեց պաղատեց որ այն հրամանն ետ առնու. բայց չյաջողեցաւ: Պաշտօնեայն պատասխան տուաւ թէ արդէն կայսրն իւր ստորագրութիւնն դրած էր, և թէ ինքն հարցփորձ անելով իմացել էր թէ մարքէզն Օրլէանի կողմնակցութենէն է, որով պէտք պիտի լինէր միշտ հսկելու նորա վրայ: Պարոնին աղաչանքն ընդունայն եղև նաև Լիխթէնշթայն իշխանին քովն, որ խոստացաւ՝ բայց բան մի չկարաց կատարել. ուստի ինքն ալ իւր պաշտօնէին զբաղմանց պատճառաւ՝ ալ կարող չեղև այս բանիս

ետեւէն լինել: Միայն բժիշկն եղև որ իր խոստմունքն կատարեց, ու գալով երթալով և աղերսագիր աղերսագրի վրայ տալով՝ վերջապէս թոյլտուութիւն առաւ խեղճ ընտանեաց համար՝ որ Վիեննայի մօտ Պատըն ասացեալ քաղաքն բնակին:

— Այս փոքրիկ քաղաքս երեք հազար տեղացի բնակիչ ունի. բայց իւր ջերմուկներուն և հանքային ջրերուն պատճառաւ տարուէ տարի չորս հինգ հազար մարդ հոն կ'երթան: Մարքեզին բժիշկն տէր Նայմէյեր այն քաղքին մէջ արուեստակից ու բարեկամ մի ունէր Շէնք անունով, որ քաղքին անուանի բժիշկներէն մին էր, և սովորաբար ամեն օտարականք նմա կը դիմէին. ուստի մտածեց որ իւր արուեստակիցն շատ ծանօթ ու բարեկամ ունելուն պատճառաւ՝ կարող էր Սէնթ-Անժի ընտանեաց օգտակար լինել և Աննայի տաղանդն շահաւոր գործել իւր ընտանեաց: Մարքեզն ալ այս լսելով հաւանեցաւ բժշկին խորհրդոյն այն քաղաքն երթալու: Սեպտեմբերի վերջերն աշնանային գեղեցիկ օդով մի Վիեննայէն ելին, և երեկոյ չեղած կանուխկեկ Պատըն հասին: Բժիշկն Շէնք ալ յառաջագոյն իր բարեկամին գրած նամակէն իմանալով նոցա գալուստն՝ դիւրագին ու հանգիստ տուն մի վարձել էր քաղքին մէջ տեղն, և պանդուխտ ընտանեաց հասնելու օրն ալ պատրաստած տան մէջ կը սպասէր զիրենք ընդունելու համար, և եթէ պէտք էր մարքեզն դարմանելու:

Ուղևորներն հասին և շնորհակալ լինելով բժշկին մտադրութեանն՝ շուտով մի տեղաւորուեցան: Տունն քաղքին ամենէն բարձր դիրքին վրայ շինուած էր, Գողգոթայ ասացեալ փոքրիկ լերին զառ 'ի վայրին վրայ որ Քահլէն լերանց մասն է: Չորս պզտի սենեակ ունէր.

մին նախասենեակ, միւսն դահլիճ, երկու ալ խուցեր. դահլիճին պատուհաններէն որ դէպ 'ի հարաւ կը նայէր՝ Շավչա գետին բոլոր ընթացքն կը տեսնուէր՝ որ պզտի գետ մի է ու Վիեննայէն ութ ասպարէզ վար Դանուբի հետ կը խառնուի: Մարքեզին խուցն Հանկ դղեակին աւերակաց վրայ կը նայէր՝ որ նոյն ատեններն փլուցած էին, որովհետև երկայն ատեն երեսի վրայ մնալուն՝ չարագործաց որջ եղած էր: Աննայի խուցէն 1714ին կանգնուած սիւնն կ'երևէր, երբ այն տարին եղած ժանտամահն դադրեցաւ՝ որ Աւստրիոյ բնակչաց տասնէն մին առաւ տարաւ: Այս չորս սենեակէս զատ՝ վարի յարկն ալ ծառայի խուց մի և խոհանոց մի կար. այս էր բոլոր նոյն տան մէջ վարձած օթևանն. բայց որ լաւագոյն է՝ Մարիա-Թերեզա կայսրուհւոյն պարտէզին կամ ծառաստանին շատ մօտիկ էր՝ զոր հերուն շինած էին: Բաց աստի Պատընի շրջակայքն ալ շատ զուարճալի են, ու գեղեցիկ պարտէզներով և սիրուն տեսարաններով զարդարուած:

Պատընի ջրերն բովանդակ Աւստրիոյ մէջ հռչակաւոր են, ուստի շատ հիւանդներ ու ախտաժէտներ հոն կ'երթան, ինչպէս նաև հետաքրքիր և զբօսասէր մարդիկ՝ որ գարնան ժամանակ այն քաղքին մէջ եղած զուարճութիւններն վայելելու համար հոն կը վազեն: Բժիշկն Շէնք՝ որ Աննայի կենակցութենէն շատ կախորժէր, որովհետև ասէր թէ նորա չափ հըմուտ օրիորդ մի տեսած չէր, և ոչ ալ օտարական մի որ նորա պէս մաքուր խօսի գերմաներէնն, օր մի ասաց նմա՝ թէ այս ջերմուկներս Հռովմայեցւոց ժամանակն ալ ծանօթ էին, որովհետև 1764ին խուզարկութեան համար հողն

քրած տաեն՝ հին շէնք մի գտնուած էր, որոյ գը-
րան վրայ որոշ կը կարդացուէին այս բառերս
Itermæ pannonieneses Ջերմաջուրք պաննոնիական[1]։
« Զանազան աստիճան ջերմութեամբ տասնու-
վեց ակունք կան, ասաց, քսանուերկուքէն մին-
չեւ քսանեւինն աստիճան բարեխառնութեամբ.
համն շատ անախորժ է և սաստիկ թնդանօթի
վառօդ կը հոտի։ Ականց գլխաւորն Ռուսբրունկ
ասացեալն է, ուր որ ջուրն ստորերկրեայ քարայ-
րի մի մէջ՝ ժայռէ փորուած աւազանի մի մէջէն կը
բղխի. այս քարայրս երթալու համար գրեթէ
քսանեւհինգ մեդր երկայնութեամբ ստորեր-
կրեայ սրահակէ մի անցնելու է, և հոն ջուրն
խիստ առատ է և գրեթէ ժամն քսանուերկու
քառակուսի մետր ջուր կը բխի[2]»։

Բժիշկն Շէնք երկու երեք աշակերտ պտտա-
մարքեզին աղջկանն՝ որ իրենց կարօտութեան
նայելով ոչինչ բան մի էր։ Մարքեզն կատարեալ
առողջութիւն գտած չէր, այլ միշտ տկար ու
սրտաբեկ՝ իւր անցուցած զուարճալի կեանքն կը
յիշէր, և չէր կարող ալ մոռնալ այն Մարինէի
հետ հանդիպած չարաբաղդ ծանօթութիւնն և
անոր յառաջ եկած թշուառութիւնքն. այս անց-

1 Նախկին Պաննոնիայի հիւսիսային սահմանն էր Դա-
նուբ գետն, և նորա մէջ կը համարուէին բաց 'ի Կրօա-
տիայէն, Կարնիոլէն, Դալմատիայէն ու Բոսնիայէն՝ նաև
Սերվիայի, Հունգարիոյ և Աւստրիոյ մէկ մասն։ Հռով-
մայեցիք առջի անգամ Յուլիոս Կեսարու առաջնորդու-
թեամբ մտին այն երկիրն, բայց բոլորովին նուաճին Տի-
բեր կայսեր ժամանակն եղև։

2 Յամին 1797 Ռուսբրունկի քարայրին մօտ արեւելեան
ոճով գեղեցիկ շէնք մի շինուեցաւ, որ շատ հանգիստ լի-
նելուն՝ զարնան շատ հիւանդներ ու պարապորդներ հոն
կը յաճախեն։

քերս իրեն գաւն յիշատակ մի էին, և այն յի-
շատակներէն մաղձոտութեան և տրտմութեան
այնպիսի խորին զգացում մի եկած էր իւր վը-
րայ՝ որ ամենեւին չէր փարատեր, և կամաց կա-
մաց իւր կեանքն կը մաշեցնէր։

Իսկ մարքիզուհին՝ արդէն տկար կազմուածք
ունելուն՝ դժուարաւ կը վարժէր ամեն բանէ
զրկուած ու կարօտ կենաց։ Տիսպուա ալ թէ-
պէտ առանց տժգոհանալու կը կրէր, սակայն
սարէքն առած ու աւերած լինելուն ծանր կու-
գար իրեն։ Մէջերնին միայն Աննա էր՝ որ իւր վի-
ճակին բոլորովին համակամ՝ ոչ միայն իւր աշ-
խատութեամբն իւր մօր պէտքն կը հոգար,
այլ և քաղցր մխիթարութիւններն պակաս չէր
աներ՝ զինքն համբերութեան յորդորելով,
և մի լաւագոյն օրերու յոյս ունելու սիրտ տա-
լով՝ ու կ՚ասէր. «Բոլոր վստահութիւննիս Աս-
տուծոյ վրայ դնենք, մայրիկ, վասն զի ինքն ոչ
երբեք ձեռքէ կը թողու զնոսա՝ որ հաւատքով
և եռանդեամբ իրեն կը դիմեն։ Երեք աշակերտ
ունիմ, որ թերեւս Պառլնի պէս փոքրիկ քաղքի
մի համար շատ է. բայց կը յուսամ որ ջրերու և
զուարճութեանց եղանակն որ գայ՝ նոցա թիւն
պիտի յաւելու։ Բարեբաղդաբար այնպիսի եր-
կրի մի մէջ եմք՝ ուր ամեն բան դիւրագին է. ու-
րեմն համբերութեամբ տանիմք մեր ներկայ վի-
ճակին թշուառութեան. այս փորձի ժամանա-
կէս ետև Աստուած մեզ լաւ օրեր ալ պիտի ցու-
ցանէ»։

— Ա՜հ, սիրելի Աննաս, ես աւելի զքեզ կը
կսկծամ, որ խաղաղ ու քաղցր կեանք վարելու
համար ծնած լինելով՝ բոլոր մանկութիւնդ
մրրիկներով, խռովութեամբ, հոգերով, աշխա-
տութեամբ ու զրկողութեամբ կ՚անցուցանես։
Գոնէ Վիեննա մնացած լինէաք....

— Վե՛ննա, ասաց Աննա նորա խօսքն հատանելով. ո՜ գիտէ որ այս աքսորս՝ զոր դու թշուառութիւն կը համարիս՝ աստուածային նախախնամութեան գաղտնի հնարքն չէ զմեզ վտանգներէ ազատելու համար. ո՜ գիտէ թէ այն մեր առջև բացուած ապարանքն ու պալատներն՝ ինչ վտանգալից ժայռեր կը ծածկէին՝ ուր իմ անփորձութիւնս պիտի նաւակոծէր ու խորտակէր։ Հաւատա ինձ, մայրիկ, մտքերնիս ու սրտերնիս Աստուծոյ հնազանդեցնեմք, և վստահ լինիմք որ աշխարհիս մէջ դիպուածով բան մի չլինիր, և կենաց դէպքերուն մէջ Աստուած ճիշդ այն բաներն կը ղրկէ մեզ՝ որ մեզ աւելի օգտակար են։

Աննա ոչ միայն իւր մայրն այսպիսի խօսքերով կը մխիթարէր, այլ աւելի ևս իւր հայրն իւր անուշիկ ձայնովն կը սփոփէր. զոր լսելով դժբաղդ մարքեզն՝ կարծես թէ իւր վիշտերն կը թեթևնային և ասէր. «Զաւակս, քու ձայնդ լսելու կարօտութիւն կը զգամ. վասն զի երբ քու քաղցր ձայնդ կը դադրի ականջէս՝ ձանձրոյթն զիս կը խեղդէ, և հանդստութիւնս կը կորսուի. դու ես միայն, սիրելի Աննաս, որ դեռ սակաւ մի փափաքելի առնես ինձ այս կեանքս, և դու միայն իմ սրտիս վիրաց վրայ առողջարար սպեղանի մի կը սփռես, զիս իմ անձիս հետ կը հաշտեցնես, և աստուածային ողորմութեան ապաւինիլ կ'ուսուցանես. բայց դեռ գործած անիրաւութիւններս մտքէս չեն ելներ. երանի՜ թէ Աստուած իմ զղջմանս նայելով՝ զիս այնչափ խստութեամբ չդատէր՝ որչափ որ սիրտս զիս կը դատէ»։ —

Երբ մարքեզն զայս կը զրուցէր՝ Աննայի սիրտըն ելնելով՝ մտքովն ու սրտովն ամեն ջանք կ'առնէր զնա մխիթարելու. ծածուկ Աստուծոյ ալ կ'աղօթէր և կը պաղատէր որ տայ իրեն այն

ճարտարխօսութիւնն որ միտքն կը համոզէ ու սիրտն կը շարժէ, որպէս զի իւր հայրն յուսահատութենէն ազատէ։ Աստուած ալ նորա հայցուածքն կը լսէր, և մխիթարական խօսքերն աղբիւրի նման նորա շրթունքէն կը բղխէին. և քաղցր արտասուք մարքեզին երեսն 'ի վար կը վազէին։ Այն ատեն Աննա ու մայրն յոյս կ'առնուին որ իրենց սիրալիր խնամքովն կարող պիտի լինէին նորա տրտմութիւնն փարատել, և սիրտն վիրաւորող նետն քաշել դուրս հանել։ — Ընդունայն յոյս. տարի մի այսպէս պատերազմելէն ետև՝ բժիշկ Շենքի ջանքն ալ պարապ ելին, և մարքեզն իւր կնոջ, զաւկին և հաւատարիմ Տիւպուայի բազկաց մէջ իւր հոգին աւանդեց, և անկեղծ արտասուք՝ նորա գերեզմանն թացին։ Քանի մի տարիէն հաւատարիմ ծառայն ալ ծերացած ալևորած իւր տիրոջ ետևէն գնաց։

ԳԼՈՒԽ ԺԴ.

Օրագրի հատուած մի։

Մարքիզուհին Պառլնի մէջ բնակիլն չէր ախորժէր, ուստի աւստրիական կառավարութենէն խնդրեց որ Վեննա դառնայ. սակայն ընդունայն եղև և միտքն դրաւ որ այլ իրենց վիճակն ամենևին լաւագոյն դառնալիք չունի։ Այն ատեն բժիշկ Շենքի խորհրդովն քաղքին մէջի բնակարանն թողուց, և արուարձանին մէջ ուրիշ տուն մի վարձեց, ուր որ ինքն ու աղջիկն չորս տարի մենաւորիկ բնակեցան. և երջանիկ կարող էին լինել՝ եթէ իւր սիրելի անձինքն կորուսանողն՝ երջանիկ կարող է համարուիլ. որոց

հետ արեամբ և բարեկամութեամբ կապուելէն յետոյ՝ նոցա մեռնելովն մարդուս սրտին մէջ այնպիսի անդունդ մի կը բացուի՝ որ ուրիշ բա-նով չլեցուիր: Աննա շատ կը ցաւէր հօրն ու Տիպուայի վրայ. շատ անգամ իւր քոյրն ալ միտքն կու գար, որ թէպէտ իրեն շատ անիրա-ւութիւն գործել էր, սակայն իրեն այնպէս կուգար որ եթէ կամ զղջալով իր գործածներուն վրայ և կամ ուրիշ դիպուածով իրենց քովն դառ-նար՝ անտարակոյս մեծ հաճութեամբ նորա հետ պիտի սիրուէր ու պաշտուէր: Մարքիզուհին ալ ճիշդ աղջկանը պէս կը մտածէր ու կը ցա-ւէր, իւր էրկանն ու մեծ աղջկանն վրայ միշտ արցունք կը թափէր:

Սակայն այս չորս տարուան մէջ իրենց խա-ղաղութիւնն վրդովելու բան մի չհանդիպեցաւ. Աննա միշտ իւր երգի և դաշնակի դասերն տա-լու հետ էր. և թէպէտ աշակերտներն շատուոր չէին, սակայն նոցա ամսականներն բաւական էին իւր և մօրն պիտոյքն հոգալու, որովհետև դըժ-բաղդութիւնն խնայութեան ճամբաներն լաւ ուսուցել էր իրենց:

Տիպուայի մահուանէն ետև հազիւ վեց ա-միս անցել էր, աւստրիացի սպաներ երկայն պատերազմէ ետև՝ սակաւ մի հանգչելու համար՝ քանի մի օր Պատընի ջրերն եկել էին. սոքա ի-րենց քովն եղած փրանկերէն օրագիրներն բժըշ-կին տուին, սա ալ համարելով թէ մարքիզուհ-ւոյն և աղջկանն հաճոյ կ'անցնի իրենց հայրենեաց լուրերն նոցա ղրկեց. ուստի Աննա և իւր մայրն անյագութեամբ սկսան աչքէ անցունել այն թերթերն: Բայց մտածէ միանգամ նոցա յան-կարծական ցաւն՝ երբ մարքիզուհին սա տողերս սկսաւ կարդալ. «Փարիզ 14 (յուլիս 1794). Ե-

րեկուան օրն երբեմն ազնուականն Ֆորթոն իւր ոճրագործութեանց պատիժն կրեց. իւր վրայ ամբաստանութիւն եղած լինելով, յեղափո-խական ատեանին առջև խոստովանեցաւ հասա-րակապետութեան դէմ գործած դաւաճանու-թիւններն, որով տէրութեան վերաբերեալ շատ ինչք և ստացուածք ալ խարդախութեամբ իրեն անցուցած էր. ուստի տէրութեան եղած վնասն հատուցանելու համար՝ իւր ամեն ստա-ցուածքն գրաւուեցան: Իւր կինն ալ երբեմն ազնուական և գաղթեալ մի աղջիկն՝ հասարա-կապետութեան երկրէն դուրս աքսորուեցաւ, և զինուորներով հանգուցէ հանգոյց մինչև սահմանածայրն պիտի տարուի... Դատակնքէն հասկցուեցաւ որ Ֆորթոն խարդախ ճամբանե-րով իւր աներն՝ որ բռնաւորին վաղեմի սպաներէն էր, մինչև սահմանածայրն տանել տուել է, և ստիպել է զնա օտար երկիր անցնելու, և ուզածն չյաջողելով՝ Սրտան բերդաքաղաքին ատեանն ամ-բաստանել է զինքն սպաննելու մտօք. դարձեալ սա թէ բոլոր գերդաստանին ինչքն ծածկապէս աճուրդի հանել է, և գինն աւելցողներն հե-ռացուցել է: Իրեն խորհրդակից և գործակից գտնուել է մարսիլիացի խաժամուժին գլուխն Տ... անուամբ հռչակաւոր սիկարեանն կողմնա-կից Հէպէրթի. այս մարդս Ֆորթոնի իրեն հա-նած բաժնէն գոհ չլինելով՝ ամբաստանել է զինքն մեծապատիւ Ֆուքիէ-Թէնվիլ քաղաքա-ցւոյն, որ այս բանիս մէջ յանցաւորին դատապար-տութիւնն խնդրելով իւր արդար և անողոքելի անկողմնակցութիւնն յայտնել է: Սակայն այն մարսիլիացի ամբաստանողն ալ՝ իւր մատնու-թեան պտուղն չվայելեց, որովհետև ինքն ալ կառափնատեղւոյն վրայ կորեաւ՝ Ֆորթոնի գո-

ղութեան մասնակից լինելուն և այլ ոճրագործութեանց համար»:

Այս հատուածս կարդալով մարքիզուհին խռովեցաւ ու տակնուվրայ եղև. կարծէր թէ Յորթոնի խայտառակութիւնն իր վրայ անկանէր, յանցաւոր Եմիլիի միջոցով իւր ծնողաց վրայ տարածուելով: «Ո՛վ թշուառական աղջիկ, կը գոչէր ցաւագին, որպիսի փոխարէն կ'ընդունիմ քեզ ցուցած կոյր սիրոյս և անխրատ նախապատուութեանցս. հիմա ի՞նչ պիտի գործես. արդեօք բաւական առաքինութիւն ունի՞ս պարտաւորութեանցդ նեղ ճամբայն մանելու, թէ Աստուած արդարապէս քեզ դէմ բարկացած՝ թողու պիտի զքեզ քոյ խղճիդ խայթերուն ձեռքն որ յուսահատութեամբ կորնչիս: Ներէ՛ ինձ, Աստուած իմ, և նորա սրտին մէջ փրկարար զեղջ մի շարժէ»: — Աննա ալ իւր մօր հետ կուլար. և որովհետև ցաւոց առաջին վայրկեանին մարդուս սիրտն մխիթարութիւն մի չէ կարող ընդունիլ, ուստի Աննա ալ զնա հանդարտեցնելու համար բան մի չխօսեցաւ. բայց երբ ցաւն ու վիշտն դուրս պոռթկաց և սկսաւ առատ արցունք թափել, Աննա իւր ցաւերն ծածկելով քաղցր և համոզող ձայնով՝ որով շատ անգամ մօրն սիրտն խաղաղել ու մխիթարել էր, ասաց. «Իրաւ, մայր, Աստուած արդար է, բայց միանգամայն ողորմած ու գթած է. անշուշտ Եմիլիին սիրտն պիտի շարժէ, և օր մի զինքն իւր մօրն և քրոջն սիրոյն պիտի դարձնէ»: Մարքիզուհւոյն սիրտն ելած՝ գլուխն զաւկին սրտին վրայ կռթնցուցած՝ որ իրեն պլլուած կեցած էր, ասէր. «Խեղճ Աննա, եթէ դու քովս չլինէիր, եթէ քոյ սէրդ լինէր, ես ի՞նչ պիտի լինէի. և այսչափ ատեն ես զքեզ չճանչցի, զքեզ տրտմեցուցի, ա՛հ իմ

զաւակս. ա՛հ, ասա քոյ մօրդ որ ինձ ներել ես»: Աննա լեզուն բռնուած պատասխան տալու տեղ՝ ալ աւելի զնա կը գրկէր ու կը պագնէր:

Երբ այս սարսափելի յուզմունքս սակաւ մի դադրելով սրտերնին հանդարտեցաւ, Աննա մօրն իմացուց թէ ո՛րչափ հարկաւոր էր որ այս եղածս ամենէն և նոյն իսկ բժիշկէն անգամ ծածուկ պահէին. «Երբ զմեզ Վեննայէն վտարեցին, ասաց, խեղճ հօրս վրայ յանցանք ձգեցին՝ որպէս թէ իւր թագաւորին թշնամեաց հետ կուսակից է. արդ եթէ իմանան որ այս թշուառական Յորթոնն իմ քրոջս այրն է եղել, ո՞ գիտէ ինչ չեն առնէր մեզ: Մի՛ գուցէ իմանան որ այս անօրէն մարդս մեզ ազգակից է. դու ալ, մայր իմ, ջանա զինքն մտքէդ հանելու, և բաւական սեպեմք աստուածային գթութեան զինքն յանձնելու, եթէ վերջի ժամուն գործածին վըրայ զղջացել է՝ ինչպէս որ կը յուսամք, թերևս այն յետին պահուն ամեն ազատութեան յոյս կորուսած տեսնելով կրօնից օգնութիւնն խընդրել է՝ անողոքելի դատաւորին առջև ելնելու համար»:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Պատրենի աւագերէցն. — Եկեղեցւոյն երգեհոնն:

Աննա իւր հօրն մեռնելէն 'ի վեր՝ սովորութիւն ունէր երկու օրն մի անգամ սուգի զգեստով և երեսն սև քող մի ձգած՝ ժողովրդապետական եկեղեցին երթալ և նորա հոգւոյն համար աղօթել: Շատ անգամ զինքն տեսնելով և նորա պարկեշտ ու ջերմեռանդ կերպն դիտելով՝ շատ շինուել էր

Նորա վրայ աւագերէցն, (որ եօթանասուն տարուան պատկառելի ծերունի մի էր՝ ժողովրդեան սիրելի և ամեն առաքինութեանց օրինակ)։ Օր մի տեսնելով որ այս աղջիկս սովորականէն աւելի կ'երկարէ իւր աղօթքն, վախցաւ որ մի գուցէ մարելիքի պէս բան մի եկած լինի վրան, և իւր սովորական բարեսիրութեամբն՝ զոր ամենուն վրայ կը տարածէր՝ յուշիկ յուշիկ նմա մօտեցաւ՝ որ եթէ բան մի պէտք է՝ առնէ, իսկ թէ չէ՝ նորա աղօթիցն արգելք չլինի։

Աննա որ ինքն իրմէ դուրս ելած՝ աղօթքի հետ էր, նորա գալն և չորս հինգ քայլ իրմէ հեռու կանգնիլն չիմանալով հառաչանօք ու եռանդեամբ կ'աղօթէր, և մերթ ընդ մերթ քանի մի խօսք կը լսուէր նորա բերնէն և իւր սիրտն Աստուծոյ առջև կը բանար, այնչափ մտադրութեամբ որ բոլոր աշխարհ աչքէն աներևոյթ եղած էր, որպէս թէ Արարչին և իւր արարածոյն մէջ իւր աղօթքէն զատ ուրիշ բան չլինէր։ «Աստուած իմ, կը գոչէր, ողորմէ նորա հոգւոյն, իմ քրոջս վրայ ալ գթա։ Աստուած իմ մօրս վրայ ալ քու սուրբ մխիթարութիւններդ սփռէ, ինձ ալ ոյժ տուր որ խեղճութեան դիմանամ։ Եթէ քու կամքդ է նեղութիւն նեղութեան վրայ ղրկէ ինձ, բայց միանգամայն տուր քու զօրութիւնդ նոցա համբերելու. Աստուած իմ, մի թողուր զմեզ քու ձեռքէդ»։

Յարգելի աւագերէցն՝ ալ չդիմացաւ ու Աննայի մօտենալով, «Ինչո՞ւ կու լաս, զաւակս, ասաց. քու խնդրած ոյժդ և համբերութիւնդ Աստուած քեզ պիտի տայ. վասն զի ինքն բարեգութ հայր մի է, և իւր ականջն միշտ բաց է իւր զաւակաց աղաչանքին. միշտ վստահութեամբ իրեն աղաչէ, և ինքն քու վշտացդ մէջ զքեզ կը

պաշտպանէ. ահա ես ալ քու հետդ կ'աղօթեմ և կը խնդրեմ՝ որ քեզ միշտ հովանի լինի, երկօցունցս աղօթքն միանալով այլ աւելի շուտ կը թռչին դէպ 'ի երկինք», ասելով բարի քահանայն նորա մօտ ծնգան վրայ եկաւ, և նորա համար աղօթեց։ — Աննայի սիրտն եռնելով՝ սկսաւ լալ ու քաղցր արտասուք թափել. վասն զի այն պատուական ծերունւոյն իր վրայ ցուցած սէրն, նորա բերնէն ելած անոյշ խօսքերն՝ կ'իմացնէին թէ դժբաղդութեան դէմ կռուած պատերազմին մէջ մինակ չէր. հապա Աստուած իրեն օգնական, առաջնորդ ու մխիթարիչ մի կը ղրկէր. ուստի քաջալերուած՝ սիրտն նմա բացաւ, որովհետև դժբաղդներու բնական բան մի է՝ իրենց քաշածն ուրիշի ցուցընել։ Քահանայն ալ մտադրութեամբ մտիկ անելով նորա խոստովանութեանն՝ կը զարմանար ու կը հիանար անբծութեանն ու մաքրութեանն վրայ. և ասաց, «Սիրելի զաւակս, Աստուած քու օրերդ պահէ ու պահպանէ մօրդ և քրոջդ երջանկութեանն համար»։

Յետոյ հարցուց նմա թէ ինչ արուեստ կը բանի, ո՞վ են իր ծնողքն և ինչո՞վ կ'ապրին. ու երբ իմացաւ. «Ա՛հ, դու մարքէզ Սէնթ-Անժի աղջի՞կն ես, ես քու վրադ 'ի վաղուց լսած եմ, և կը տեսնեմ որ ասացողներն չեն խաբուած. հապա, զաւակս, սիրտ առ քաջալերուէ, Աստուած օր մի քու առաքինութեանցդ վարձքն պիտի տայ, և գրեթէ կը յանդգնիմ գուշակելու՝ որ ինքն պիտի դարձնէ ձեզի այն մոլորեալ ոչխարն՝ զոր խռովութեան մրրիկն ձեզմէ զատեր է»... Երէցն սակաւ մի մտածելէն ետև, «Միտքս բան մի եկն, ասաց, դու երաժիշտ և դաշնակահար ես, ասացիր, դաշնակն ու երգեհանն իրա-

բու Ծմոն են, արդեօք վաղը ձայնաւոր պատարագին կարո՞ղ ես երգեհոնն հարկանել. շատերն ասեն թէ մեր երգեհոնն՝ յոյժ ընտիր է, բայց վեց ամսէ 'ի վեր մեր երգեհոնահարն մեռնելով իւր տեղն մարդ մի դեռ չկարողացաք գտնել՝ որ ժողովրդեանս ալ մեծ զրկում մի է: Երիտասարդ եղած ժամանակս՝ ես ալ կը հարկանէի, բայց հիմա ա՛լ մատուըներս բթացեր են, մանաւանդ որ թէ՛ խորանին և թէ երգեհոնին միատեղ չեմ կարող հանել»:

— «Փորձած չունիմ, ասաց Աննա վախկոտութեամբ, և չեմ գիտեր թէ արդեօք երգեհոն կարե՞մ հարկանել թէ չէ. բայց թէ որ սակաւ մի ժամանակ ունիք և թէ կը հաճիք մի անգամ փորձեմ»:

— «Իմ ուզածս ալ այս է, ասաց քահանայն, եկէս եկ»:

Աննա երգեհոնին վրայ եղած շարականն բանալով և ահա նորա թեթև մատանցներքև փանդիռներն այնպէս դաշնակաւոր ու գեղեցիկ ակրտան հնչել՝ որ աւագերէցն յափշտակուած ու խազերուն վրայէն աչքն չվերցնելով՝ էջերն աւարտելուն պէս թղթերն դարձնէր ու կընայէր և ասէր. «Շատ լաւ, շատ լաւ. յիրաւի, դու երգեհոն հարած չե՞ս, և սակայն ճիշդ մեծ վարպետի կերպ ունիս»: Այս ասացած ատեն՝ Աննա յորդորակ կէտի մի հանելով ա՛լ երգարանին չէր նայեր, այլ իւր փափուկ ախորժակին և վառ երևակայութեանն հետևելով քանի մի վայրկեան այնպիսի յանպատրաստից եղանակ մի հնարեց՝ որ քահանայն բոլորովին հիացած՝ շունչն ևս կը բռնէր՝ որ եղանակէն կէտ մի ևս չփախցնէ. և իւր զարմանքն ապշութեան ծայրն հասնելով ասաց որ այսպիսի հաճոյք ոչ երբէք

զգացել էր. «Ա՛լ հերիք է, վաղուան համար ինձ խօսք տուր»:

Երկրորդ օրն Աննա բոլոր պատընցիներն հիացուց, այնչափ որ եթէ եկեղեցւոյ մէջ չըլինէին՝ ծափահարութեամբ զինքն պիտի գովէին. պատարագէն ետև իրենցմէ մեծերն աւագերիցուն ուրախակցութեան գնացին այնպիսի վարպետ երգեհոնահար մի գտնելուն համար, որ առանց չափազանցութեան իր նախորդէն տասն անգամ աւելի տաղանդ ունի ասէին: — «Տեարք, ասաց աւագերէցն, ես ալ ձեզ չափ կը փափաքէի որ այս երգեհոնահարս մեր քով մնար, բայց չեմ կարող ձեզ խոստանալ. հիմա ինքն ալ հոս պիտի գայ. և թերևս դուք և ես 'ի միասին աղաչելով՝ նորա կամքն առնեմք ու զինքն հաւանեցնեմք»: — Այս ասելուն Աննա ներս մտաւ. «Ահա մեր երգեհոնահարն, ասաց աւագերէցն ժպտելով: — «Ինչ, կի՞ն մարդ է, գոչեցին պատընցիք, և դեռ մանկահասակ է. զարմանք»: Եւ մէջերնէն ամենէն ճարտասանն, կամ այն որ զինքն այնպէս կը համարէր Աննային մօտելով՝ քաղաքավար շնորհակալութիւն մի ըրաւ իրեն, և յանուն Պատընի ժողովրդեան աղաչեց նմա որ եկեղեցւոյն երգեհոնահարութեան պաշտօնն իւր վրայ առնու. «Այս խնդիրքս ձեզ առնեմ բոլոր ժողովրդեան և եկեղեցւոյս իշխանաց կողմանէ, որովհետև պատիւ ունիմ նոցա նախագահն կոչուելու: Չեմ գիտեր թէ Փրանկլիոյ մէջ սովորութիւն կա՞յ թէ չէ՝ որ կանայք եկեղեցւոյ մէջ երգեհոնահարութիւն առնեն. բայց հոս մեր մէջ՝ որ շատ լաւ կաթողիկեայ եմք՝ սովորական բան է: Շատ ժամանակ չկայ որ Վեննայի մայր եկեղեցւոյն երգեհոնահարն կին մի էր. այս աւուր օրս ալ Հօֆ

հրապարակին մէջ եղած եկեղեցին՝ որ ատենօք Յիսուսեանց էր և հիմա ժողովրդապետական եկեղեցի է՝ երգեհոն հարկանողն կին մի է. Պատընէն ութսուն ասպարէզ հեռու Կրեօց քաղաքն ալ նոյնպէս կին երգեհոնահար մի ունի »: Աւագերէցն ալ այն մարդուն ասացածներն հաստատելով ալ առանց խօսքն երկայնելու՝ որոշեցին ու եկեղեցւոյն երգեհոնահարութիւնն Օրիորդ Աննա Սէնթ-Անժի յանձնեցին՝ երեք հարիւր ֆիորին թոշակով:

Այս լուրս թէ քաղքին և թէ արուարձանին մէջ շուտ մի տարածելով բժիշկ Շէնք ալ լսեց և շատ ուրախացաւ. ու հետևեալ օրերն եկեղեցին գրեթէ միշտ լեցուն էր հետաքրքիրներով: Այս բանէս Աննային ալ մեծ օգուտ եղև, որովհետև պատընցւոց շատերն ուզեցին իրմէ դաշնակի դաս առնուլ, և ութ օրուան մէջ իր աշակերտաց թիւն ութ կամ տասն եղան. ուրոց ամսականն յեկեղեցւոյ առածին հետ միատեղ՝ բաւական գումարիկ մի լինելով կարող էր ամէն պէտք եղածն հոգալ և իւր մօրն մոռցնել տալ իր կորուսած մեծութիւնն: Այսպէս հոլովեցան Տիւպուայի մեռնելէն ետև անցած երեք տարիներն:

Սակայն Վէննայի Նայմէյէր պատուական բժիշկն՝ մարքէզ Սէնթ-Անժի այրին և աղջիկն չէր մոռցած. ուստի երբ ոստիկանութեան պաշտօնեայն մեռնելով նորա տեղն ուրիշ մի անցաւ՝ զոր ինքն վտանգաւոր հիւանդութենէ մի բուժած էր, եւ գնաց նոր ոստիկանն բարևելու, և այն երկու փրանկիացի տիկնայց համար խօսելով ու պաշտպանելով, և նոցա երաշխաւոր լինելով աղաչեց որ հրաման տրուի Վէննա դառնալու. ոստիկանն ինքզինքն երջանիկ սեպելով

որ արդարութեան գործով մի իր անձնական երախտագիտութիւնն մասամբ իւիք իւր բժշկին պիտի ցուցանէր, շուտով հրաման տուաւ որ դառնան: Բժիշկն հրամանագիրն առածին պէս՝ երկրորդ օրն կանուխ Պատըն երթալու ճամբայ ել. չէր ուզեր որ այսպիսի ուրախալի աւետիս մի ուրիշի ձեռօք հասնի Տիկին Սէնթ-Անժի. և իրիկուան բժիշկ Շէնքի հետ նոցա տունն գնաց, զոր տեսնելով յոյժ ուրախացան՝ իրենց մտերիմ բարեկամն երկայն տարիներէ 'ի վեր տեսած չլինելով: Երբոր նոցա իմացուց իւր գալուն պատճառն, այն խեղճերուն ուրախութեանն ու ցնծութեան չափ չկար:

Աննա, մարքիզուհին և իրենց գերմանացի աղախինն՝ որ իրենցմէ չէր ուզեր բաժնուիլ, շուտով սկսան ճամբորդութեան պատրաստութիւն տեսնել: Նայմէյեր բժիշկն իրենցմէ յառաջ Վէննա դառնալու ժամանակ՝ խօստացել էր որ կառք ու ձիեր ղրկէ իրենց, որք երկու օրէն հասին: Նոյն միջոցին Աննա և իւր մայրն՝ ծանօթներու մնայք բարովն ելին, և ամէնն ալ նոցա երթալուն վրայ կը ցաւէին, որ իրենց սիրտն ալ շնորհակալութեամբ լցուց, և իրենք զիրենք երջանիկ կը սեպէին՝ գրեթէ բոլոր քաղքին յարգութեան և սիրոյ նշաններն ու յիշատակն իրենց հետ տանելով:

Աւագերէցն ու բժիշկն մինչև վերջին վայրկեանն մարքիզուհւոյն հետ մնացին, ու երբ կառքն հեծան՝ ու պիտի ճամբայ ելնէին, բժիշկն ասաց որ իւր բարեկամին ու արուեստակիցին բաղդին վրայ կը նախանձէր. աւագերէցն ալ զնոսա օրհնելու ժամանակ՝ մարքիզուհին ու աղջիկն լալով նորա ձեռքն պագին ու արտասուօք թրջեցին: Քանի մի վայրկեանէն կառքն սկսաւ

քալել ու Վիեննայի ճամբայն բռնեց. աւագերէցն ալ երկար ատեն աչքն յառած նոցա ետևէն կը նայէր։

ԳԼՈՒԽ ԺԶ.

Դարձ 'ի Վիեննա. – փոքրիկ աղջիկ. – Ճանապարհորդութիւն։

Մարքիզուհին և իւր աղջիկն քանի մի աւուր համար իջևան մի գնացին բնակեցան՝ ուր որ բժիշկ Նայմէյեր իրենց համար չորս սենեակով փոքրիկ օթևան մի բռնել էր, մինչև որ Ճաքկերչէլ արուարձանին մէջ Բրադէր ասացեալ անուանի ծառաստանէն սակաւ մի հեռի՝ որ Վիեննայի մօտ է և Դանուբի հարաւային եզերքն անկանի, իրենց համար հանգիստ բնակարան մի գտնին։ Բրադէր ծառաստանն գերմանական մղոն մի երկայն և կէս մղոն լայն անտառ մի է՝ հսկայաձև կասկենիներով, փառաշարք տիլիաներով և ահագին կաղնիներով լեցուն՝ որոց վերայէն շատ դարեր անցած սահած են. այս ծառոց սաղարթներն այնչափ խիտ են՝ որ արեգական ճառագայթներն ներս չեն թափանցեր. տեղ տեղ ալ քառակուսի կամ բոլորաձև ածուներ կան առանց ծառի՝ կանաչ գալարի գորգով պատած՝ ուր եղջերուներն կը ցատքըտեն ու կը խայտան, և երբ շրջագայողներն յոյժ կը շատնան՝ այն ատեն կը ձգեն ու կը փախչին։ Բրադէր հանող ճամբաներուն մին Ճաքկերչէլ արուարձանին մէջէն կ'անցնի, և արուարձանին տներն աւարտած տեղն բոլորաձև ընդարձակ հրապարակ մի կու գայ, ուսկից չորս ուղիներ կը բաժ-

նուին՝ որ ամենն ալ Դանուբ գետն կը հանեն. հոն յոյժ գեղեցիկ տեսարան մի կը բացուի գետին և նորա ճիւղերէն ձևացած կղզիներուն վրայ, որովհետև այն կղզեաց մէջ գեղեցիկ պարտէզներ կան։ Այս չորս ուղիներէս մին Սփաուբաց կամ Մելամաղձոյ ուղի կ'անուանի, որովհետև միւսերուն չափ հոն տեղն յաճախող չկայ, և ստուերին թանձրութիւնն յիրաւի մարդուս վրայ մաղձոտութիւն կը բերէ։ Աննա ամեն առաւօտ դեռ մայրը չարթընցած՝ իւր հաւատարիմ գերմանացի աղախնոյն հետ՝ հոն կ'երթար շրջագայելու[1]։ Օր մի երբ խորին մտածութեանց մէջ ընկղմած ծանրաքայլ տուն կը դառնար՝ իւր առջևէն կին մի անցաւ սևեր հագած և երեսին մինչև կէսն քող մի ձգած՝ գրեթէ չորս տարուան պզտի աղջկան մի ձեռքէն բռնած. կնոջ ձեռքին նիհարութենէն ու տղուն տժգոյն երեսէն՝ կ'երևէր թէ երկուքն ալ հիւանդ էին։ — Աննա միտքն դրաւ որ անշուշտ այն կինն մեծ թշուառութիւններ քաշած է. և թերևս ետ կը դառնար՝ նորա հետ ծանօթութիւն առնելու և հարցնելու, բայց վախցաւ որ շատ ուշանալով մօրն սիրտն անհանգիստ չառնէ՝ որ հիմա թերևս արթընցած էր. դարձեալ կը կասկածէր որ օտարաց հետ տեսնուելուն վրայ մայրն չհաճի.

1 Բրադէրի մեծ ուղին օտարականաց ու քաղաքացւոց շրջագայելու տեղն է՝ ուր ամեն ազգէ մարդ պակաս չէ. Յովսէփ Բ կայսրն այս տեղս ժողովրդեան շնորհեց՝ Դանուբի ճիւղերէն մին որ անտառին ու արուարձանին մէջտեղէն կ'անցնէր՝ լեցնել տալով. և բոլոր ճամբուն երկայնքն ջրելու համար աղբիւրներ շինելով 1787ին։ Լեոփոլշտատ արուարձանին ծայրն ալ ընդարձակ պարտէզ մի կայ, որ երկու ծառատունկ ուղիներով Բրադէրի հետ կը կցի։

ուստի միտքն դրաւ որ վաղուան սպասէ. և տուն դառնալուն պէս մօրն պատմեց. Նա ալ Աննայի պէս մտածելով թէ թերևս այն կինն մեծ տըրտմութիւն մի ունի, դէմ չդրաւ որ երկրորդ օրն եթէ հանդիպի զինքն մխիթարէ. երբ մարդս ինքն թշուառ է՝ թշուառաց վրայ ալ շուտ գութ կը զգայ:

Երկրորդ օրն առաւօտուն Աննա դարձեալ իր գերմանացի աղախնոյն հետ ել ու այն Սգաւորաց ուղին գնաց, և դեռ ճամբուն ծայրն հասած չէր՝ տեսաւ որ այն առջի օրն տեսած փոքրիկ աղջիկն ճամբուն եզերքն եղած թուփերուն մէջէն դուրս ելաւ. բայց այս անգամ մինակ էր, կամ գոնէ մայրն չտեսնուեցաւ: Աննա աչքն չորս դին դարձնելով՝ տեսաւ որ հեռուն տարեց կին մի կեցեր տղայն կը դիտէր: Փոքրիկ տղայն վախնալով Աննայի մօտեցաւ, և առանց աչուըներն վեր վերցնելու՝ աջ ձեռքն բռնած ծալլած թուղթ մի տուաւ նմա: Աննա կանգ առաւ, և թուղթն բաց լինելուն համար՝ առաւ, եթէ կնքած լինէր չպիտի առնուր: «Անունդ ինչ է, զաւակս», ասաց տղուն:

— Ինձ Եմիլի կը կոչեն, ասաց մանուկն մաքուր փրանկերէն արտասանութեամբ: — Աննա նախ գերմաներէն հարցուցած լինելով տղայն չէր հասկցած ու պատասխան չէր տուած: Եմիլի անունն լսածին պէս՝ Աննայի վրայ դող մի եկաւ. «Եմիլի՛, գոչեց սրտաշարժ ձայնով մի, հապա քո մայրդ ո՞ւր է»:

— Հիւանդ է:

— Ա՛հ խեղճ մայր, խեղճ զաւակ, ասաց Աննա, և գրեթէ աներևոյթ ձեռք մի զինքն քաշելով դէպ 'ի փոքրիկ Եմիլին ծռեցաւ, և սըրտանց նորա ճակատն համբուրեց: Մանուկն

կարմրելով իւր շրթունքն Աննայի ձեռքին քսեց ու թեթև մի համբուրեց:

Օրիորդ Սէնթ-Անժ յառաջագոյն հոգալով քովը քանի մի ստակ և շաքարեղէն առած էր. և որովհետև չէր գիտեր նորա մօրն ո՛վ լինելն, և մտածելով որ թերևս ստակ տալն սրտին ծանր գայ, և չգիտելով ալ թէ արդեօք կարօտութենէ՞ թէ ուրիշ բանէ առաջ եկած էր նոցա թշուառութիւնն, վախցաւ որ ստակ տալով անխոհեմութիւն գործած չլինի. ուստի տղուն գրպաններն շաքարով լեցուց՝ ասելով. «Սիրուն զաւակս վաղիւ չմոռնաս գալու ու մօրդ ինչպէս լինելն ինձ իմացնելու: — Աննա թէպէտ անհամբեր կուզէր իմանալ թէ ինչ է արդեօք այն թղթին մէջ գրուածն, սակայն միտքն դրաւ որ մօրն առջև կարդայ զայն: Երբ տուն դարձաւ ու եղածն մօրն պատմեց, նա ուշադրութեամբ մտիկ առնելով՝ ասաց աղէկ որ ստակ չէր տուած այն տղուն ձեռքն՝ զոր չէր ճանաչեր, և մանաւանդ երբ տեսաւ թէ թուղթն առնելէն յետոյ դեռ չէր կարդացած՝ ալ աւելի ուրախացաւ. և շնորհակալ լինէր Աստուծոյ որ իրեն այնպիսի գթասիրտ, զգուշաւոր և հլու զաւակ մի շնորհել էր: Իսկ թղթին մէջ այսպէս գրուած էր.

Օրիորդ.

«Ես որչափ որ յանցաւոր եմ, նոյնչափ ալ դժբաղդ եմ. ոչ սիրոյ արժանի եմ և ոչ գթութեան, և սակայն կը համարձակիմ քեզ դիմելու՝ որ բոլորովին անմեղութիւն ես և առաքինութիւն: Երկայն ատեն ինչ առնելիքս չէի գիտեր, բայց զքեզ տեսնելով հրեշտակային երեսացդ վրայ տեսնուած բարութիւնն զիս յոր-

գորեց. անունս դեռ չեմ կարող ձեզ յայտնել, այս միայն կարող եմ ասել որ իմ բաղդս ձեր ձեռքն է. այս թուղթս ձեզ տուողն իմ զաւակս է. եթէ բաղդաւոր լինիմ ձեր գութն իմ վրաս շարժելու՝ վաղը առաւօտ Սգաւորաց ուղին գալու հաճեցէք. իմ աղջիկս հոն պիտի սպասէ ձեր պատասխանն առնլու համար և այս պատասխանս իմ վիճակս պիտի որոշէ »:

Այս թուղթս քանի մի անգամ կարդալով ու մեկնելով հազար և մի կարծիքներու կ'երթային՝ բայց մինն անգամ հաւանական չէր երևեր իրենց. բայց ինչ առնելու էր. կ'երևէր թէ այս կինս ծածուկ բաներ ունէր նմա յայտնելու, սակայն հրապարակական տեղ մի այս բանիս յարմար կրնա՞ր լինել. ուրիշ կողմանէ Աննա կարո՞ղ էր այնպիսի անծանօթ կնոջ մի հաւտալ՝ որ թերևս իրեն բարեպաշտութիւնն խաբել կ'ուզէր:

Աննա իւր մտաց մէջ թղթին խօսքերն և վրան եղած խորհրդածութիւններն կը յեղյեղէր, և անհամբեր Սգաւորաց ուղին երթալն կը մտածէր: Վերջապէս երբ հոն գնաց՝ տեսաւ որ փոքրիկ աղջիկն ճամբուն ծայրն իրեն կը սպասէր. և այս անգամ երեկուընէ աւելի կոկիկ հագուեցուցել էին զինքն. մաքուր լաթերով, մազերն ալ կէս մի նոր սև ժապաւէնով հիւսուած կապուած էր. և միտքն դրաւ որ տղուն պահեստէն զգեստներն լինելու էին, ուստի գիրկն առնելով ու վեր վերցնելով համբուրեց զայն ասելով. « Գնա՛ վազէ փոքրիկ Եմիլիս, գնա՛ մօրդ ասա՛ որ ես հոս իրեն կը սպասեմ »: Եմիլին սակաւ մի յառաջ երթալով՝ ետ դարձաւ և Աննայի ձեռքն բռնելով կը համբուրէր, և ասաց « Հիմա մայրիկս կու գայ »: — Աննա ետևն դառնալով տե-

սաւ որ այն երեկուան տեսած տարեց կինն փողոցն մտաւ. և հասկցաւ որ այն կինն՝ իւր Եմիլիին ցուցած սէրն տեսնելով՝ մօրն իմացնելու կ'երթայ որ գայ երևի. և տղուն հարցուց թէ « Այն գնացող կի՞նն է քու մայրդ »:

— Ոհ, ոչ. մայրս տունն է »:

— Հապա ինչո՞ւ տունն մնաց »:

— Չեմ գիտեր, ինձ բան մի չասաց »:

— Հապա զքեզ հոս ղրկելու ատեն՝ քեզ ինչ ասաց »:

— Նա ինձ ասաց որ ես զքեզ շատ պէտք է որ սիրեմ, և իրաւցընէ կը սիրեմ, ասաց տղայն նորէն Աննայի ձեռքն պագնելով:

— Եւ ինչ բանի համար զիս պէտք է սիրես »:

— Չեմ գիտեր. մայրիկս ինձ ասաց որ ինքն ալ զքեզ շատ պիտի սիրէ, բայց դու զնա չես կարող սիրել:

Այս խօսքերէս Աննայի միտքն լոյս մի ծագեց և ասաց. « Եւ ինչո՞ւ պիտի չկարեմ զինքն սիրել »:

— « Այնոր համար որ նա քիչ չարութիւն գործել է. ու մայրիկս այս ասացած ժամանակ կու լայ ու ես ալ հետն կու լամ » ասելով արցունքն սկսաւ աչքէն թափթփիլ:

— « Խեղճ տղայ, ասաց Աննա սիրտն գորոված, ու նորէն սկսաւ պագնել զտղայն »:

Քանի մի վայրկեանէն մայրն երևցաւ. առջի օրուան պէս սուգի զգեստ հագել էր, և սև շղարշէ քօղով երեսն կէս մի ծածկած էր, և քղուածքին մէջ տարտամութիւն մի կ'երևէր. կարծես թէ առաջ գալու կը վախէր և սակայն շուտով հասնիլն ալ կ'ուզէր: Աննա ալ Եմիլիին ձեռքէն բռնած քանի մի քայլ առաջ գնաց: « Ո՛վ Աստուած իմ, շնորհակալ եմ քեզ, ասաց

մայրն․ դու քու սկսած գործդ աւարտէ, և թէ այնուհետև մեռնիմ ալ հոգս չէ»։

— Ինչ ասես, Տիկին, վրայ բերաւ Աննա վաղվաղակի․ եթէ Աստուած քու ասացածդ կատարէ, այս խեղճ աղայն ինչ լինի»։

— Քեզ կը թողում զնա և գոհ կը մեռնիմ»։

— Ա՛հ, Տիկին, շուտ արա՛ տարակոյսս փարատէ․ քու ձայնդ, քու կերպդ, Եմիլին գթածութիւնն և նոյն իսկ իւր անունն իմ քոյրս միտքս կը բերեն՝ զոր կը սիրէի։

— Կը սիրէի՞ր։

— Ես մինչև հիմա ալ կը սիրեմ, ա՛հ ինչպէս կ'ուզէի իմ գրկացս մէջ զնա ընդունիլ»։

— Ա՛հ բարեսիրտ, ա՛հ վեհանձն Աննա, ահա քու առջիդ, քու ոտիցդ առջևն է այն անարժան քոյրդ՝ ասելով Եմիլին անկաւ մարեցաւ։

Աննա 'ի միոյ կողմանէ կ'ողբար, միւս կողմանէ ալ զնա արթնցնելու կը ջանար․ պզտիկ Եմիլն մայրիկ, մայրիկ ասելով կուլար․ գերմանացի աղախինն ալ աղբիւրն վազելով թաշկինակն կը թրջէր ու օգնութիւն կը պոռար։ Բայց Եմիլին զաւկին սրտաճմլիկ կանչելներէն ու Աննայի խնամքովը արթըննալով խելքը գլուխն եկաւ։ Աննա վեր վերցուց զնա և իւր սրտին վրայ սեղմելովն․ «Քուրիկ՛ ինչո՞ւ փութով զքեզ չյայտնեցիր», ասաց։

«Ա՛հ բարի Աննա, պատասխանեց Եմիլին, այնչափ յանցաւոր էի քու և իմ խեղճ մօրս առջև, որ շատ օրերէ ի վեր զքեզ տեսնելով՝ չէի համարձակեր հետդ խօսելու, և ոչ ալ առջիդ ելնելու․ սակայն գիտելով որ դու քու աշխատութեամբդ մայրերնիս կը հոգաս՝ միտքս դրի որ այսպիսի գորովագութ զաւակ մի՝ անողոքելի քոյր մի չէր կարող լինել․ և թէպէտ յանցանքս

շատ էր՝ ձեզմէ ներումն գտնելու վստահացայ։ Երեկուան օրն մեծ ուրախութեամբ իմացայ՝ որ իմ զաւակս սիրով ընդունել ես․ այս օրս ալ իմացայ որ զնա սիրել գգուել ու համբուրել ես, և ասոր սիրտ առի քու առջիդ ելնելու»։

— Ալ այսպիսի խօսքեր մի՛ ասեր, պատասխանեց Աննա․ ասա միայն որ դու իմ քոյրս ինձ դարձնելու եկիր՝ ինչպէս որ միշտ կը փափաքէի։ Ա՛հ, մայրս ալ հիմա ինչպէս պիտի ուրախանայ, վասն զի մի տարակուսիր որ զքեզ միշտ սիրած է ու կը սիրէ։

— Ա՛հ, ոչ․ այդ ասացածդ անկարելի է, ես շատ բանի մէջ իրեն սիրտն կոտրեցի։

— Քուրիկ, գիտես որ մօր սիրտն իր զաւկաց համար միշտ բաց է․ միայն խոհեմութիւն բանեցնեմք, որ առաջին անգամ զքեզ տեսնելուն խեղճին փորձանք մի չգայ։

— Ո՛վ քոյր իմ, այսչափ գործած բարեացդ ինչո՞վ հատուցմունք պիտի անեմ։

— Զիս սիրելով՝ ինչպէս որ ես զքեզ կը սիրեմ, ու անցածն մոռնալով։

— Ոչ, անցածն միշտ պիտի յիշեմ՝ զքեզ աւելի սիրելու համար»։

ԳԼՈՒԽ ԺԷ․

Զիղջ և թողութիւն։

Երկու քուրերն դէպ 'ի տունն սկսան երթալ․ բայց Եմիլի տկար էր և ծունգերն քալելուն ատեն կը դողային։ «Քաջալերուէ, սիրելի քոյրս, ասէր Աննա․ Աստուած այսօր չորս տարիներէ 'ի վեր խնդրածս ինձ կը շնորհէ, ինքն իւր

գործն 'ի կատար պիտի հասուցանէ: Ես առաջ Եմիլիկին հետ մօրս սենեակն կը մնամ, դու դահլիճն կը սպասես, և երբ յարմար ժամանակն կու գայ՝ ներս կը մտնես. և ապահով եղիր որ այս ժամանակս շուտ պիտի հասնի »:

Աննա երբ իւր քեռորդեկին ձեռքէն բռնած՝ մօր սենեակն մտաւ՝ որ անկողնէն նոր ելել էր, « Այս տղայն ով է, հարցուց մարքիզուհին:

— Այն ինձ թուղթն գրող տիկնոջ աղջիկն է, որ այնչափ աղուորիկ երեցաւ ինձ՝ որ ուզեցի քեզ ալ ցուցանել զնա:

— Իրաւ ինչ աղուոր զաւակ է, ասաց մարքիզուհին, Եմիլիին վրայ լաւ մի նայելով. երեսին գեղնութիւնն ևս աւելի գեղեցկութիւն մի տուել է իրեն: Իմացա՞ր մօրն ով լինելն և ինչ է եղեր արտմութեան պատճառն:

— Այո, մայր իմ, Փարիզ քաղաքէն փրանկիացի տիկին մի է, որ ժամանակիս թշուառութիւններն ստիպել են զինքն ալ Փրանկիայէն ելնելու. այրի և չքաւոր կին մի է:

— Շատ լաւ աղջիկս, անտարակոյս ձեռքէդ եկած օգնութիւնդ իրեն կ'առնես:

— Տարակոյս չկայ, մայր իմ, և եթէ զինքն տեսնես՝ ես ևս չառնեմ դու զիս պիտի յորդորես. Նայէ ինչ աղուորիկ աղջիկ է, ինչ անոյշ ու փափուկ նայուածք ունի. ես պագնելէն չեմ կշտանար. ասաց Աննա և տղայն մարքիզուհւոյն մօտ կը մղէր: — Մարքիզուհին ալ նորէն նայելով տղուն վրայ. « Զարմանք, ասաց, կարծես թէ...

— Ես ալ նոյնպէս իրեն նմանցուցի, և թերևս ասոր համար զինքն այսչափ կը սիրեմ: « Եմիլիկ, ասաց Աննա, պաչիկ մի տուր մայրիկին »:

— Եմիլի՞ է անունն, ասաց մարքիզուհին. խեղճ տղայ, չես գիտեր թէ որչափ ցաւ կը պատճառես ինձ այս անունս. բայց չէ. դու ինչ յանցանք ունիս ». այս ասելով տղայն գիրկն առաւ: Իսկ Եմիլի իր փոքրիկ պտըտիկ թևերովն զնա գրկել կը ջանար. մարքիզուհին ալ զնա կը գրգուէր ու ասէր « խեղճ զաւակ »:

— Կը ցաւիմ որ իւր անունն տուի, ասաց Աննա, որ քու սիրտդ տխուր յիշատակներ կը բերէ: Ես սակայն եթէ քոյրս դեռ ողջ լինէր, և զղջալով քովդ դառնար, և խեղճ ու հիւանդոտ զինքն տեսնէիր, որովհետև գիտես թէ նա ալ հիմա մեզի պէս աքսորուած է, մի թէ կարօ՞ղ էիր ներումն չտալ՝ զոր սրտիդ մէջ կը զգաս:

— Այդ խօսքդ մի առներ զաւակս. Եմիլին ինքզինքն անարժան արար իմ սիրոյս, գոնէ գիտէի թէ իւր այրն զնա մոլորցուցել է ու գլխէ հանել է:

— Մայր իմ, այդոր վրայ տարակոյս չկայ, ես միշտ քեզ ասէի, և չեմ կարծեր որ սխալիմ: Այս տղուս մայրն ալ հիմա նոյն բանն ինձ ասէր. որովհետև Փարիզ եղած ժամանակէն զինքն կը ճանաչէ եղել, և յետոյ Գերմանիայի մէջ ալ զինքն տեսել է:

— Շատո՞նց է որ տեսել է:

— Ոչ, մայր, այլ հազիւ քանի մի ամիս յառաջ. և զիս տեսնել ուզելուն գլխաւոր պատճառն ալ իմ քրոջս վրայ տեղեկութիւն տալու համար է եղել, որովհետև քոյրս նմա ապսպրել է. և ասէ թէ խեղճ Եմիլին գիշեր ցորեկ արցունք կը թափէ կուլայ կը հառաչէ եղել իր գործածներուն վրայ. և սակայն խեղճն աւելի ցաւալի է, ասէ այն օտարականն, քան թէ յանցաւոր:

— Դու միշտ զինքն արդարացնել կ'ուզէիր, և թերևս հիմակուան բռնած լեզուդ ալ նոյն մըտ-

քով է. այս բանս քու բարեսրտութիւնդ կը ցուցանէ. բայց նորէն կ՚ասեմ, ա՛լ իր վրայ լսելն անգամ չեմ ուզեր. ամէն անգամ որ իր խօսքն կը բացուի՝ սրտիս վէրքերն ալ նորէն կը խլխլան։

— Ա՜հ, մայր իմ, խեղճութեան վրա՞յ գթալու է, զղջացողին ալ ներումն տալու է։

— Հապա. ներել ալ ուզեմ՝ ձեռքէս ինչ կու գայ. ինծ կը վայելէ՞ որ ապերախտ աղջկան մի ետեւէն երթամ բոլոր Գերմանիայի մէջ զինքն բնտռեմ։

— Ո՛վ գիտէ որ ինքն ալ զքեզ բնտռելու հետ չէ. մանաւանդ որ այն օտարական կինն որ զինքն կը ճանաչէ՝ կ՚երևի թէ քրոջս եղած տեղն ալ գիտէ, և կը կասկածիմ թէ նորա հետ թղթակցութիւն ալ ունի, և մեր բնակութիւնն ալ նմա իմացուցած է. և տարակոյս չունիմ որ օր մի նորա Վիեննա գալն ալ պիտի լսեմք։ Վասն զի երբ այս տղուս վրայ որ այսչափ քրոջս կը նմանի այն օտարականին հարցուցի՝ սկսաւ շփոթիլ կմկմալ ու երկդիմի պատասխաններ տալ. և քեզ իմ միտքս յայտնապէս ասե՞մ մայրիկ, ինծ այնպէս երևցաւ որ այս տղայս... քրոջս աղջիկն է։

— Մարքիզուհին այս լսելուն պէս՝ տղայն մեկդի հրելով « Ինչ, այն անօրէն Ֆորթոնեի՞ն, գոչեց. տղայն ալ սարսափած սկսաւ լալ։

« Սիրելի մայր իմ, ասաց Աննա, հօրն անիրաւութենէն զաւկին ինչ. անոր յանցանքին համար այս խեղճ տղա՞յն կ՚ուզես պատժել. նայէ խեղճն ինչպէս արցունք կը թափէ ու փոքրիկ ձեռուըներն տարածած կ՚աղաչէ. խղճա անմեղին վրայ. իրաւցնէ քու թոռդ քրոջս զաւակն էր գիրկդ առածդ, քու արիւնդ է, մի մերժեր զնա »։

Մարքիզուհին սաստիկ այլայլեալ « Բայց ինչէ՞ն գիտես որ այս Եմիլին զաւակն է », ասաց։

— Այն կինն որ զինքն Վիեննա բերելու յանձնառու եղել է, ինծ ամէն բան իմացուց, այնպէս որ ամենևին տարակոյս չունիմ այս բանիս վրայ։ Հիմա այս խեղճ տղուն յանցանքն ինչ է որ հօրն համար չարչարուի. այն որ ինքն ալ իւր յանցանքին պատիժն առել է։ Ահ մայր իմ, մի խըստանար մի որդոլիր նորա դէմ, խեղճ տղայն քու սրտիդ մէջ գոնէ գտնէ մայրական սէրն »։ Այս խօսքերուս ատեն փոքրիկ Եմիլն ալ այնպիսի անուշիկ և աղաչական աչուըներով կը նայէր մամուն վրայ, որ նա ալ ա՛լ չդիմացաւ և թևերն բացաւ. տղայն ալ մէկէն ցատքեց նորա գիրկն ելաւ, և արցունքով լեցուն բիբերուն մէջ այնպիսի խնդում մի պըլպըլաց որ մամն զուարթացուց։

Մինչև հիմա ամենայն ինչ Աննայի ուզածին պէս յաջողեցաւ, բայց բաւական չէր Ֆորթոնի աղջիկն ընդունելի առնելն, պէտք էր որ Եմիլն ալ մօրն աչքն մտնէ՝ որ ամենէն դժուարն էր. ուստի Աննա մօրն դառնալով. « Ուրեմն երթամ քրոջս բարեկամին ասեմ որ Եմիլիկն քու քովդ կ՚ուզես պահել, այնպէս չէ՞, մայրիկ, չէ՞ս ուզեր։

— Շատ լաւ, սիրելի զաւակս, որովհետև դու ալ այնպէս կ՚ուզես »։

— Հապա քրոջս համար ինչ ասեմ. ասե՞մ որ դու ամենևին չես ուզեր զնա քու առջևդ տեսնել, թէ յոյս մի տամք խեղճին՝ որ եթէ կատարեալ կերպով զղջայ իւր գործածներուն վրայ՝ պիտի ներես։

— Որչափ ալ զղջայ՝ ինծ գործած չարիքն կարո՞ղ է ծածկել և վնասներն փոխարինել։

— Մայր իմ, միտքդ բեր միանգամ որ շատ

անգամ ինձ յիշեցուցել ես այն գեղեցիկ խօսքն թէ « Աստուած զղջացող մահկանացուաց համար առատանուէրանց ներման անսպառ է »:

— Կարո՞ղ ես զիս վստահացնել որ ինքն ունի այս առաքինութիւնս. գոնէ եթէ տեսնէի զինքն որ անցեալ կենաց վրայ զղջալով՝ ջանար աւելի լաւ ընթացքով մի զայն մոռցնել տալ... բայց ո՞ գիտէ ուր է նա հիմա: Մի թէ 'ի մէնջ այսչափ հեռու կենալո՞վն կ'ուզէ ցուցանել այդ քու ասացած զղջումդ:

— Եթէ գիտէր որ դու երբեք պիտի չդարձընես՝ հիմա քու ոտքդ անկած էր:

— Աննա, դու գիտես քրոջդ ուր լինելն, ու զիս խաբել կ'ուզես:

— Իրաւ է, մայր իմ, գիտեմ նորա ուր լինելն. խօսք տուր ինձ որ ներես ու անմիջապէս կու գայ քու ոտքդ անկանելու: Ա՜հ, կը խնդրեմ 'ի քէն, մայրիկ, և այս սիրուն տղայն ալ ինձ հետ քեզ կ'աղաչէ:

— Ներէ, մայրիկ, ներէ, ներէ, ներէ կը կրկնէր փոքրիկ տղայն ալ:

— Ներէ, մայր իմ, ապա թէ ոչ մեռանիմ » գոչեց Եմիլի, ներս վազելով ու մօր ոտքն անկանելով:

— Տէր Աստուած, Եմիլի՛ն:

Յիրաւի նոյն ինքն էր, որ ա՛լ ինքզինքն չկարելով բռնել մօրն ոտքն անկած կը հառաչէր: Մարքիզուհին առջի բերան երեսն դարձուց որ չտեսնէ, բայց տղուն անուշիկ ձայնն սիրտն շարժեց ու կակղցուց: Վերջապէս փոքրիկ տղուն մանկական գգուանքներէն, Աննայի աղաչանքէն, Եմիլիի արցունքներէն յաղթուած յաղթահարած՝ աղջիկն գետնէն վեր առաւ և իւր կուրծքին վրայ սեղմելով ասաց. « Աստուած ինքն օրհնէ զմայրն ու զաւակներն »:

Այս տեսարանիս մէջ գտուողներուն ամենուն սիրտն ալ լեցուած էր, և իրարու գիրկն անկած լացով և ողբով սակաւ մի թեթևցան ու հանդարտեցան, և այն մրրկալից օրն ուրիշ բան չթողուց նոցա սրտին մէջ՝ բայց եթէ անցեալ ցաւոց յիշատակն: « Գոնէ մեռնելուս և աչքս գոցած ժամանակ երկու աղջիկներս ալ մօտս գտնուին » ասէր մարքիզուհին: Իսկ Եմիլի մերթ մօրն կը վազէր և մերթ քրոջն, և աչուըներն ուրախութեամբ ու երջանկութեամբ կը վառէին. մանուկն ալ կը ջանար իր ափիկներուն մէջ առնուլ մօրն ու մամուն ձեռուըները: Աննա ալ շնորհակալ լինէր Աստուծոյ որ իւր աղօթիցն լսելով իւր փափաքին հասուցել էր զինքն: Սակայն տիկինն Սէնթ-Անժ ժամ մի առաջ կ'ուզէր լսել ինչ որ Եմիլին գործեր ու կրել էր Փարիզէն ելնելէն առաջ ու աքսորանաց ժամանակն. Եմիլիի ալ մօրն ու քրոջ իղձն լեցնելու համար այսպէս սկսաւ իւր թշուառութեանց պատմութիւնն:

ԳԼՈՒԽ ԺԸ.

Եմիլիի վէպքն:

« Իմ գործած չարիքս ուրիշի վրայ ձգելով պարտկել՝ և ինքզինքս արդարացնել չէ միտքս. ու ես առաւել չեմ ուզեր յանցանքով ծանրաբեռնել այն մարդուն յիշատակն՝ որ ինձ սիրելի եղած է. այսչափս հերիք է ասելն որ եթէ երկանս վրայ այնչափ վստահացած չլինէի՝ այսչափ խիղճս զարնող յանցանաց տէր չէի լիներ: Ուա-

ու երբ իմ առջևս կը դնէր քրոջս իմ վրաս ու-նեցած առաւելութիւնն, այն բարեսիրտ քրոջս՝ որուն այսօր պարտական եմ իմ և զաւկիս եր-ջանկութիւնն, և հօրս նորա վրայ ցուցած ա-ռաւել սէրն, և մանաւանդ իմ մեծ քեռւոյս հրամանատարին նախապատուութիւններն՝ սա-կաւ սակաւ իմ սիրտս զայրացուցին, և բնութէ̃ պարտք դրած սիրոյ զգացման տեղ՝ նախանձն ու ատելութիւնն սկսան իմ սրտին մէջ մանել: — Հարկաւոր չեմ սեպեր յիշեցնելու ձեզ որ Ցորթոն ոտքով գլխով խռովարարաց կողմն ան-ցած էր՝ որոյ առջի բերան Միրապոյ եղած էր պատճառ. բայց երբ այս մարդս տեսնելով որ խռովութիւնն շատ յառաջ կ'երթայ՝ ետ քա-շուեցաւ. Ցորթոն անոր զատուելով՝ Տանթո-նի, Կամիլ Տէ Մուլէնի և Ռոպեսբիէրի հետ միացաւ, ու ա՛լ ամեն չարութիւն աչքն առաւ, ու անհաշտ ատելութիւն մը երդուընցած լինե-լով թագաւորին և նորա կառավարութեան դէմ մինչև վերջն իր երդումն ուզեց պահել: Գիտէք որ ինքն ճարտասան մարդ էր՝ և շատ համոզողա-կան լեզու մի ունէր, գոնէ ինձ համար, այնպէս որ զիս ալ իր իմաստասիրական սկզբանցն հա-մոզեց. այսինքն անկրօնութեան և ամեն կարգ ու կանոն ջնջելու վերցնելու սկզբանցն. Ժողո-վրդեան իրաւունք, ազատութիւն, հաւասա-րութիւն, եղբայրութիւն մեծամեծ բառերն՝ այն աստիճան զիս խաբեցին՝ որ կարծեցի թէ բոլոր Փրանկիա իրարու եղբայր եղած ժողո-վուրդ մի պիտի լինի. մե՛ղք որ խաբուած լինելս շատ ուշ իմացայ:

Աւգոստոսի 10ին լինելէն առաջուց իրմէ ի-մացեր էի, բայց ինքն ինձ պատուիրեր էր որ մար-դու բան մի չասեմ. որովհետև իր կեանքն ալ

այս դաղտնիքէս կախուած էր. ուստի ես ալ ամենայն կերպով ծածուկ պահեցի. ու հինգ վեց օր յետոյ իմացայ հրամանատարին սպան-նուիլն, ու հօրս գլխուն եկած փորձանքն. և ա՛լ ձեզի չգալուս պատճառն ալ իր հրամանն էր: Ընդ հակառակն զիս մխիթարելու համար ամեն տեղ կը տանէր, և ամեն օր նոր զուարճութիւն մի կը հնարէր. այնպէս որ իմ կամացս հակա-ռակ ինքզինքս զուարճութեանց և հաճոյից տուի ամեն պարտաւորութիւնս մէկդի ձգելով: — Ձեր երթալէն 'ի վեր առջի քանի մի ամսոց մէջ անցուցած կեանքս աւելորդ կը սեպեմ ձեզ բացատրել. հօրս և քեռւոյս բոլոր ստացուածքն ձեռքս անցնելէն զատ, նաև եկեղեցիներու ըն-չիցն և գաղթող իշխանաց շատին ստացուածոցն ալ տէր եղէ, և անխիղճ վնաս կը վայելէի՝ ա-ռանց հարցնելու թէ ինչպէս ձեռք անցուցած էր: Ամեն բանի մէջ կուրօրէն իմ էրկանս կը հետևէի. և ինչպէս որ չար քոյր և ապերախտ զաւակ լինելուս պատճառ եղեր էր, այսպէս ալ Աստուծոյ և իմ պարտուցս անհաւատարիմ լի-նելուս առիթ եղև. ու անհաւատ, նենգաւոր, շահասէր և անձնասէր մարդկանց հետ կենա-կցելով՝ ես ալ միտքս դրի որ աշխարհիս վրայ ա-ռաքինութիւն ըսուած բան չկայ, և թէ ար-դարութիւնն, բարոյականն ու հաւատարմու-թիւնն ապուշ մարդկանց համար են, և մեր ա-մեն գործոց կանոնն անձնական շահն լինելու է:

Երբ զաւկս ծնաւ ու մկրտելու խօսքն արարի իրեն՝ նա սկսաւ ծիծաղիլ ու կատակել՝ ասելով թէ իր զաւակն քրիստոնեայ պիտի չլինէր՝ հա-պա մարդկային ճշմարտութեան երկրպագու. բայց որ-չափ ալ խօսեցաւ չհամոզուեցայ ու իր երգի-ծանաց մտիկ չըրի. մինակ սուտ խենթ ձևացայ՝

վախնալով որ ղաւակս ձեռքէս չառնու։ Այն ատեն, մայր իմ, 'ի քէն սորված կրօնից սկըզբունքն մտքիս մէջ արթընցան, և սկսայ ցաւիլ որ անխելք վստահութիւնն զիս տուն առ տուն մինչև անկրօնութիւն հասուցեր էր. ուստի տղուն ջուրն ես տուի՝ միտքս դնելով որ առջի առիթն ունենալուս մկրտութեան արարողութիւնն ալ իր վրայ կատարել տամ. ինչպէս որ Գերմանիա մտնելէս ետև առաջին գործս այն եղև։

Սակայն խռովութիւնն կամ աւելի ևս անիշխանութիւնն տարածուելի կերպով առաջ կ'երթար. Թագաւորին ու Թագուհւոյն հետ հազարաւոր մարդիկ սպաննուեցան։ Ժողովուրդն տեսակ տեսակ կողմնակցութեանց բաժնուեցաւ, և ամէնքն իրարու ձեռքէն իշխանութիւնն յափշտակելու կը նայէին, և ով որ կը յաղթէր՝ միւսերն թրէ կ'անցնէր։ Ես այս դուրսն եղածներն Ֆ'րթոնէն կը լսէի. որովհետև միայն ղաւկիս զբաղած՝ ամենևին տնէն դուրս չէի ելներ. և երբ ինքն եղածներն կը պատմէր՝ աչացս առջևէն այնչափ արագ կ'անցնէին՝ որ շատ ուշադրութիւն մի չէի դներ. միայն իրեն կ'աղաչէի որ իր ապահովութեան վրայ մտածէ. և այս աղաչանքս աւելցուցի՝ երբ ինքն պատմեց ինձ Տանթոնի և բարեկամաց չարաչար սպաննուիլն. միտքս միշտ չար գուշակութիւններ կու գային, այնպէս որ իմ սարսափս զինքն ալ վախցուց և խօսքերս զինքն տատանեցուցին. ու երբ կը մտածէր ծածուկ կերպով Փարիզ ձգել դուրս ելնել՝ նոյն օրն բռնուեցաւ։ — Ալ իմ սիրտ հատնումս չեմ կարող բացատրել երբ իրիկուն լինելով տուն չդարձաւ. ժամերով իրեն գալուն սպասեցի որ ինձ համար հոգևարքի ժամեր եղեն. ու երկրորդ օրն իմացայ գլխուս եկած

փորձանքն։ Խնդրեցի որ իրեն հետ տեսնուիմ ու շատ դժուարաւ հրամանն առի. բոլոր բոլոր մի անգամ տեսի զինքն, և այս չարագոյժ տեսութիւնս յաւիտեան մտքէս պիտի չելնէ։ «Սիրելի Եմիլիս, ասաց նա հաստատ ձայնով, առջա իմ գլուխս ուտել կ'ուզեն, և վաղիւ ալ իմ բանս բուսած է. բայց գանգատելու իրաւունք չունիմ. գերդաստանիս դէմ այսչափ ոճիրներով ծանրաբեռնած, պատուոյս դէմ անիրաւած, Թագաւորիս մահուն եղած, կեանքս ինձ ծանր բեռ մի է՝ զոր ուշ կամ կանուխ ես ինձէն վրայէս պիտի նետէի. ահա մինչև ուր հասուցին զիս վրէժխնդրութեան հոգին և դարուս իմաստասիրութիւնն. ես Աստուծմէ հեռացայ, Աստուած ալ յինէն երես դարձուց. և հասնելով այն ժամուն որ աշխարհս պիտի թողում, հիմա կ'իմանամ խաբուած լինելս, և յաւիտենական ճշմարտութեան ոյժն կը ճանչեմ։ Ես զԱստուած բարկացնելն բանի տեղ չէի դներ, բայց արդարադատն Աստուած զիս կը պատժէ. երանի թէ իմ կենացս զոհն քաւութեան տեղ ընդունելով իւր գթութեամբն զիս ազատէր իր անողոքելի դատաստանէն։ Ես ինքն էի հրամանատարին կեանքն վերցնողին սուրն շարժողը. ես ինքն էի քու հօրդ կենաց խնայօղն, բայց ես էի դարձեալ ամեն օր նորա վրայ լրտեսներ դնողն, որովհետև նա իմ ձեռքս որս մի էր զոր ձեռքէ չէի ուզեր փախցնել. ես ինքն էի որ ստիպեցի զինքն ակամայ մինչև 'ի Սըտան փախչիլ, և կ'ամաչեմ ասելու՝ ես էի զինքն խռովարարաց ատեանն ամբաստանողն՝ ուր անշուշտ պիտի սպաննուէր՝ եթէ Աստուած՝ զոր այսչափ երկայն ժամանակ չճանեայ, իրեն ազատիչ մի ղրկած չլինէր. և յետոյ այս ազատող մարդուն ալ ե-

տեղէն անկայ, և չեմ գիտեր թէ իր գլուխն ազատեց թէ չէ։ Ես քու հօրդ ծերունի պատուաւոր Տիւպուան բռնել տուի՝ քու քեռայրդ ժառանգութենէն ազատած քանի մի կտոր բանն ձեռքէն յափշտակելու համար․ և այն նոտարն որ հաւատարմութեամբ իր պարտքն կատարելով քեռայրդ վերջին կամքն կատարել կ'ուզէր՝ գլուխն կտրել տուի։ Ես ինքն Լուդովիկոս ԺԶի մահուան վճիռ տուողներէն մին եղէ, Ժիրոնտէններու քամհելի տանջանաց պատճառ եղէ․ Ժաքոպէններու և Դաշնակից Ժողովքին մէջ արիւնարբու ու կատաղի ճառերով զամենքն գրգռեցի․ և ահա բոլոր թափած արիւններս հիմա իմ գլուխս կը թափին, և իմս ալ նոցա հետ պիտի խառնուի․ ուստի ասեմ և դարձեալ ասեմ թէ Աստուծոյ դատաստանն արդար է։

« Կ'ուզէի Աստուծոյ հետ հաշտուիլ՝ բայց մալեգին կատաղութեամբ սեղանոյն պաշտօնեաներն հալածեցի․ վասն որոյ ես ալ կրօնից ամեն օգնութիւններէն զուրկ մնացի․ և սակայն կ'իմանամ որ շատ կարօտ եմ նորա մխիթարութեանցն։ Այն սարսափելի Աստուածն որոյ գոյութիւնն երկայն ատեն ուրացայ՝ իւր վրէժխնդիր ձեռքն իմ վրաս կը ծանրացնէ․ բայց սրտիս խորունկէն իրեն կը հառաչեմ և իւր գթութիւնն և ողորմութիւնն կը խնդրեմ, և կը յուսամ որ՝ որչափ ալ չարագործ եմ, իմ վերջի վայրկեաններուս զիս չթողուր։ Դու ալ Եմիլի ինծի հետ աղօթէ և թողութիւն խնդրէ քու թշուառ ամուսնոյդ համար »։

Այս ասելով Ֆորթոն ծնգան վրայ եկաւ, ես ալ նորա քովն ծնրադրած եռանդեամբ աղօթեցի․ յետոյ աւելի հանդարտած ոտք ելաւ, և յինէն մխիթարութիւն ընդունելու տեղ՝ ինքն

զիս սկսաւ քաջալերել ասելով․ « Եմիլիա, իմ մահս քեզ փրկութեան խրատ թող լինի․ ներէ ինձ քեզ գործած չարեացս համար՝ որ զքեզ երդմնազանց արարի այն երդման դէմ որով Աստուծոյ հետ կապուած էիր․ սրտանց իրեն դարձիր․ վասն զի ինքն միայն կայ, և ամեն բան պիտի կորնչի․ զաւկիս վրայ լաւ հոգ տար, մեծցուր զայն մեր նախահարց կրօնքին մէջ, և թող ամենեւին չիմանայ որ իւր հայրն անօրինին մէկն էր և ամեն բան կ'արհամարհէր։ Սիրելի Եմիլիա, ալ դուրս ել գնա, ես ինքզինքս ժողովելու համար մինակ կ'ուզեմ լինել․ իմ կեանքս առանց պաշտպանելու պիտի չթողում այն զիս հալածող հրէշին դէմ․ թէպէտ և գիտեմ որ ամեն բան պարապ է․ երթաս բարով, սիրելիս, երթաս բարով ասեմ այս վերջին անգամ, քու ներկայութիւնդ զիս կը տկարացնէ, և ես ուժի կարօտ եմ »։ Այս ասելով զիս գրկեց պագաւ և յանձնեց որ իրեն համար աղօթեմ, և երդուընցուց զիս որ գերդաստանիս անուամբն իրեն ներեմ, և ես որ այնչափ ինձ համար թողութեան կարօտ էի՝ յանդըգնեցայ ներումն տալ իրեն այն ամենուն կողմանէ որոց այնչափ անիրաւութիւն գործած էի։ — Ա՛լ միւսանգամ զինքն չտեսի․ և երկու անգամ որ բարբարոս Ֆուքիյէէն խնդրեցի՝ դառն երգիծանօք զիս մերժեց, և սպառնացաւ որ զիս ալ երկանս քովն կը ղրկէ։ Եթէ զաւակս չլինէր՝ այն հրէշին սպառնալիքն բանի տեղ ոչ դնէի․ բայց զաւակս զիս կենացս հետ կը կապէր։

Ֆորթոնի թշնամիքն իւր չարաչար սպանմամբն գոհ չեղեն, այլ իւր ունեցածն ալ գրաւեցին, և զիս ալ աքսորի դատապարտեցին, որով Փրանկիոյ հողէն դուրս վտարեցայ, և անարդ ոճրագործի մի պէտ զինուորներն զիս Մէ-

ցէն անդին քշեցին։ Մինչև այն ատեն իմ քա-
շածներս բարոյական ցաւեր էին, իսկ ասկէ յե-
տոյ նիւթական տառապանքս ալ աւելցան, կա-
րօտութիւն և խեղճութիւն։ Վասն զի երբ զիս
բանեցին՝ առանց ժամանակ տալու որ հետս բան
մի առնում և ոչ անգամ զաւկիս լաթերն, տու-
նէս չիտակ Գոնսիէրժըրի բանտն տարին նետե-
ցին, և վճիռս կտրուելէն ետև՝ զինուորաց ձեռ-
քըն յանձնեցին, վճռոյն մէջ այս ալ աւելցնե-
լով որ եթէ հնարք մի գտնելով Փրանկիա դառ-
նամ անմիջապէս գլուխս պիտի կտրուի. որով
բոլորովին յոյսս կտրեցի։ Բարեբաղդաբար զիս
բանած ժամանակ՝ վրաս գրեթէ չորս հարիւր
ֆրանք ոսկի ստակ կար՝ զոր գուրպաներուս
մէջ պահելով՝ բանտապանիս անյագութենէն ա-
զատեցի, երկու հատ ալ ադամանդէ մատնի ու-
նէի՝ զորս բերնիս մէջ պահեցի. և յետոյ ծա-
խելով այս փոքրիկ գումարովս հազիւ քանի մի
ամիս ապրեցայ. վասն զի Գերմանիոյ մէջ ճամ-
բորդութիւնն ալ շատ թանկ է. և Վեննա գա-
լէս առաջ Գոպլէնց գնացի։ — Ցորթմնէն լսել
էի որ հայրս Գոպլէնց է եղեր, ուստի թէպէտ
եղած տեղէս շատ հեռու էր՝ ելի հոն գնացի.
հոն հասնելուս՝ գրանէ 'ի դուռն պտըտելով ըզ-
ձեզ կը բնտըռէի. վերջապէս շատ օրերէն ետև
պանդուխտ փրանկիացիէ մի լսեցի որ դուք
հօրս և քրոջս հետ Վեննա գնացեր էք։ Ա՛լ ու-
րիշ բան չմտածելով շուտով Վեննա եկի, և ա-
միսներով պարապ տեղն ձեզ բնտռեցի։ Այս
ժամանակիս ոյժս ալ բոլորովին կորած և ձեռքս
եղածն ալ հատնելով ստիպեցայ ձեռացս աշխա-
տութեամբն ապրուստս ճարելու։ Այսով ալ
դարձեալ չէի կարող ապրիլ՝ եթէ բանած խեղճ
ու փոքրիկ սենեկիս տանտիկինն՝ ուր չորս տարի

ընակեցայ, վրաս չողորմէր ու ինձ գործ չգըտ-
նէր. բայց քանի մի կտոր բան բանելով ինչ կա-
րող էի վաստկիլ։ Միտքս դրի որ գիտցած սա-
կաւ մի երաժշտութեամբս ստակ վաստկիմ. բայց
ե՛կ տե՛ս որ այն գիտցածս ալ բոլորովին մոռցել
էի, և ուրիշներու ուսուցանելու համար՝ ես
ինքն երկայն ատեն ուսանելու կարօտ էի։

Ա՛լ ձեզ գտնելէն բոլորովին յոյսս կտրել
էի՝ երբ ասկէ երեք ամիս յառաջ՝ Աստուծոյ ո-
ղորմութեամբն՝ Մարինեի կոմսին հանդիպեցայ՝
զոր Փարիզ տեսած էի, և զինքն ճանաչելով ի-
րեն մօտեցայ և Սէնթ-Անժ մարքէզին վրայօք
լուր հարցուցի։ Իւր տուած պատասխանն՝ շատ
արցունք թափել տուաւ ինձ, որովհետև հօրս
մեռնիլն անկէ իմացայ. ինքն ինձ զրուցեց՝ որ
մեռնելէն սակաւ մի յառաջ իւր ընտանեօքն
Պատըն գնացեր էր, սակայն ձեր վրայօք բան մի
չկարաց ասել, բայց կարծեմ թէ դեռ նոյն քա-
ղաքն կը բնակին ասաց։ — Որչափ որ հօրս մա-
հուան վրայ ցաւեցայ՝ սակայն ձեզ գտնելու
յոյսս զիս ուրախացուց, կարծելով թէ այն փոք-
րիկ քաղքին մէջ ձեզ աւելի դիւրաւ պիտի
գտանեմ։

Ուստի մնացած սակաւ ստակովս ճամբայ ելի,
յուսալով որ Աստուած վերջապէս իմ խեղճու-
թեանս կ՚ողորմի, և այս անգամ պարապ չեմ
ելներ. ամեն իջևաններն ու պանդոկներն քա-
լելէն ետև՝ մտածեցի որ քաղքին բժիշկներուն
երթամ, որովհետև հայրս հոն մեռած լինելով
հարկաւ 'ի նոցանէ մին կանչուած պիտի լինէր
նորա հիւանդութեան ժամանակ. երկու երեք
բժիշկներ տեսնելէն ետև՝ վերջապէս բժիշկ
Շէնքի հանդիպեցայ՝ որ ձեր վրայ ինձ լուրեր
տուաւ, և ասաց որ դուք նորէն Վեննա դար-

ձել էք, և իւր բարեկամներէն միոյն զիս ուղարկեց որ բժիշկ Նայմէյեր կ'անուանի։ Այս մարդս այնչափ բարի և արդար անձն մի երևցաւ ինձ՝ որ առանց տարակուսելու իմ ով ըլլալս նմա յայտնեցի և գլխէս անցածներն պատմեցի, որոց վրայ շատ ցաւ զգալով՝ երկայն ատեն ձեր և իմ բարեսիրտ քրոջս վրայ ինձ հետ խօսեցաւ, և ինձ յոյս և քաջալերութիւն տուաւ. Նաև կ'ուզէր ինքն անձամբ զիս ձեզ բերել, բայց ես վախցայ որ դուք՝ իրաւամբ ինձ դէմ բարկացած ըլլալով պիտի չուզէիք զիս ընդունիլ ու երեսս նայիլ։ Ուստի, մայր իմ, քու առջևդ միջնորդ ու բարեխօս մի ուզելով գտնել՝ Աննայի վեհանձնութեան վստահացայ. և բժշկին ապըսպրեցի որ մարդու բան մի չխօսի, ինչպէս որ խոստացաւ ալ. և իմանալով թէ Աննա ամեն առաւօտ Սգաւորաց ուղին կ'երթայ շրջագայելու՝ շատ օրեր ետևէ ետև ես ալ հոն գնացի Եմիլիս հետ միասին. և թէպէտ քրոջս երեսին վրայ նկարած կը տեսնէի իր սրտին բարութիւնն՝ սակայն չէի համարձակեր նորա առջևն ելնելու. այն ատեն միտքս անկաւ որ իմ տանտիկնոջս հետ զաւակս ղրկեմ։ Ա՛լ անոր յետոյ եղածն գիտէք։ Հիմա Աստուած որչափ որ ինձ կեանք տայ՝ զձեզ սիրելու և ձեզ ծառայելու համար անցընելով՝ արդեօք պիտի կարող ըլլամ փոխարէն առնել այնքան չարեաց զոր գործեցի այն բարեգութ քրոջս՝ որ իմ յանցանացս չնայելով զիս իր գրկաց մէջ ընկալաւ, և քան զամենեսին պատուական մօրս՝ որոյ սիրոյն ապերախտութիւն միայն հատուցի»։

ԳԼՈՒԽ ԺԹ.

Վաղեմի ծանօթ մի։

Չորս տարի այսպէս երջանիկ ապրեցաւ Սէնթ-Ընժի ընտանիքն, եթէ աքսորանաց մէջ մարդ երջանիկ կարէ համարուիլ։ — Սակայն այս խաղաղ վիճակս երկայն չէր կարող տևել. և պանդուխտ ընտանիքն՝ որչափ ալ պարծելու պատճառ ունէին փրանկիացի ըլլալուն համար, որովհետև իրենց հայրենեաց բանակներն յանպատրաստից ընտրուած զօրավարներով՝ ամեն տեղ յաղթող կ'ելնէին թշնամեաց վրայ, սակայն միւս կողմանէ մեծ վախի և կասկածանաց մէջ ինկան. որովհետև կը տեսնէին որ պատերազմի դաշտն երթալով կ'ընդարձակէր և իրենց կը մօտենար, և Հռենոսի ու Դանուբի մէջ տեղերն կը հասնէր։ Շատ յաղթութիւններէ ետև Պօնափարթէ Լէօպէնի հաշտութիւնն վճռել էր (18 ապրիլ 1797 ին) որ երկրորդ տարին հոկտեմբերի 17 ին հաստատուեցաւ. բայց կանխատես մարդիկ այս դաշնադրութիւնս զինադադար մի կը համարէին։ Վիեննա դեսպան ղրկուեցաւ փրանկիացի զօրավար մի, (որ որչափ յառաջ բուռն հասարակապետական մի էր, յետոյ թագաւոր ըլլալով ամենէն աւելի բացարձակ միապետութեանց ալ պաշտպան հանդիսացաւ), որ իւր դեսպանատան դրան վրայ եռագոյն դրօշն տնկեց Ազատութիւն և հաւասարութիւն մակագրով։ Ռամիկն յարձակեցաւ պալատին վրայ, բայց հրացանի գնտակներէն ետ քաշուելով ցրուեցան. դեսպանն ալ ստիպեցաւ Վիեննա թողուլ և Ռաշ-

թատ քաշուիլ։ Աւստրիացիք վախնալով որ Թըշնամութիւնն նորէն չսկսի՝ Դանուբի եզերքն բանակ հաւաքելու սկսան, Ռուսիա ալ պատերազմակից լինելն յայտնեց. իսկ Անգլիա ուսկից լըծակներու ուժովն միւս տէրութիւններն կը գրգռէր. ու երբ Փրանկիոյ կառավարութիւն նոցա միտքն և դիտաւորութիւնն կը հարցընէր՝ պատասխան չէին տար. պատերազմն վերահաս ու մօտ էր. Փրանկիոյ այն ժամանակի կառավարութիւնն ալ որ Ուղղութիւն կը կոչուէր՝ յարձակողական պատերազմ որոշեց (1799). բայց իւր անհմտութեամբն ամէն դիէն հալածուելով՝ սակաւ ժամանակի մէջ ձեռք ձգած երկիրներն կորոյս, և հազիւ թէ իւր բնիկ սահմաններն կարող էր պաշտպանել։

Այն ատեններն Վիեննայի մէջ հանդարտութիւն էր, և Սէնթ-Անժի ընտանիքն ալ խաղաղ էին, բայց յանկարծ լուր մի հասաւ՝ որ Պոնաբարդէ Եգիպտոս նուաճելէն ետև Բրովանսի ծովեզերքն անցել է, և ամենուն աչքն նորա արշաւանաց վրայ դարձաւ՝ որ արագ արագ յառաջ կու գար. ինքն Ուղղութեան դէմ եղողներու կողմն բռնելով՝ նորա զօրութիւնն ջախջախեց, բայց կ'երևէր թէ յաղթութիւնն իւր շահուն կամէր գործածել. մառախլոտ ամսուն 18ին անսահման իշխանութեամբ առաջին հիւպատոս անուանուելով բանակին գլուխ կեցաւ, և այս լուրս բոլոր Եւրոպիոյ արքունեաց համար դուժկան մի համարեցաւ։ Մարէնկոյէն սկսեալ հետզհետէ եղած յաղթութիւններն որ Լինցի յաղթութեամբն վերջացաւ (1800ին յունիսի 14էն մինչև դեկտեմբերի 19) ստիպեցին զԱւստրիացիս հաշտութիւն խնդրելու. դեկտեմբերի 31ին բանագնացութիւններն Լիւ-

նէվիլ քաղաքն սկսան, և յետագայ տարւոյն փետրուարի 9ին դաշնագրութիւնն հաստատեցաւ։

Այս հաշտութիւնս մարքիզուհւոյն սիրտն հանդարտեցուց, որովհետև երբ Փրանկիացիք բոլոր վերին Աւստրիան գրաւեցին՝ իրենց առաջարկուեցաւ որ Հունգարիա կամ աւելի հեռու աշխարհ մի երթան հասարակապետականաց երևելու համար. սակայն անակնկալ դէպք մի գերդաստանին վիճակն փոխեց։ Դաշնագրութիւնն ստորագրուելէն և ստորագրութիւնքն իրարու փոխանցուելէն ետև՝ առաջին հիւպատոսն, այն է Նափոլէոն առաջին՝ իւր զօրավարներէն մին Վիեննա ղրկեց՝ պատերազմի գերեաց փոխանակութեան խնդիրն աւարտելու, և դաշնագրութեան մէջ չպարունակուած քանի մի նիւթերն կարգադրելու համար։ Այս խնդրոյ ներքև եղած նիւթերուն վրայ ղրկուած զօրավարին հետ խօսելու և որոշելու համար՝ Աւստրիոյ կայսեր կողմանէ ալ Սաքս-Թէշէն դուքսն որոշուեցաւ. որովհետև տէրութեան նախարարներն նորա այսպիսի նիւթոց մէջ ստացած ճարտարութիւնն և հմտութիւնն գիտէին, զոր իւր ճանապարհորդութիւններումն և գըլխաւոր քաղաքագիտաց հետ վարուելումն ստացած էր։ Սակայն բանագնացութիւնքն կ'երկարէին. որովհետև Փրանկիացի զօրավարն՝ իւր տէրութեան յաղթութիւններով ստացած անհերքելի իրաւունքն յառաջ վարել կը ջանար, և այնպիսի պայմաններ կ'առաջարկէր՝ զոր դուքսն չէր կարող ընդունիլ իւր տէրութեան նախատական կամ ծանրաբեռն համարելով։ — Դուքսն նրբին մարդավարութեամբ զարդարեալ մարդ մի էր, և պատշաճողութեան օրինաց նախանձա-

խնդիր, միանգամայն նրբամիտ և փրանկերէն լեզուի ալ հմուտ և ճարտար՝ իւր հայրենեաց իրաւունքն այնպէս չափաւորութեամբ և իմաստութեամբ կը պաշտպանէր՝ որ զօրավարն շատ բանի մէջ աստացածին կը զիջանէր, որովհետև նորա արժանաւորութեան վրայ ալ մեծ համարումն առել էր. որով երկոցուն պաշտօնէից մէջ կատարեալ միահաւանութիւն լինելով՝ գործն աւարտեցին, և դուքսն խաղաղութեան դաշանց որոշակի ստորագրութիւնն՝ իւր քանի մի ազգականաց հետ հանդիսացնել ուզելով՝ զօրավարն ալ հրաւիրեց իւր ներկայութեամբն հանդէսն շքեղացնելու. նա ալ հաճութեամբ յանձն առաւ:

Սէնթ-Անժի դերդաստանն ալ չմոռցան այս հանդիսին հրաւիրելու, որովհետև Աննայի ալ կարօտութիւն ունէին. դքսին երկու աղջիկներն երգի կամ դաշնակի պարզ վարպետ մի չէին համարեր զինքն՝ այլ սիրելի ընկերակից. նոյնպէս Տանն մարաջախտին քեռորդիքն զինքն կարգէ դուրս կը սիրէին, և Աննա գրեթէ նոցա ընկերութեան ոգին էր: Գերմանացւոց սովորութեան համեմատ ամեն հանդէս խնջոյքով մի կը սկսի կամ կ'աւարտի. և մանաւանդ այս պարագային մէջ խնջոյքն բացարձակ հարկաւոր էր, որովհետև յերկուց կողմանց շնորհաւորութիւններ և կենաց բաժակներ պիտի առաջարկուէին. և կ'ուզէին որ Աննա ալ իր քաղցր ձայնովն ու դաշնակով հանդէսն զուարթացնէ: Բայց ասոնի չորս ձեռօք հարկանելու հատուած մի ալ կար՝ զոր երկուց քերց մէջէն մեծն՝ Աննայի հետ պիտի հարկանէր. որ իւր աշակերտին վարպետութիւնն ցուցանելու համար՝ միայն ընկերակցութեան և զուգաձայնութեանց կ'օգ-

նէր. և դուքսն որ իւր աղջիկն շատ կը սիրէր՝ և նորա քաջ հանդիսանալն կը բաղձար՝ կ'ուզէր որ Աննայի հետ հարկանէր այն հատուածն: Եւ որպէս զի միւս հրաւիրելոց ալ հանճարն երևան ելնէ՝ որոշեցին որ յառաջ փոքրիկ երգահանդիսով մի խնջոյքն սկսի:

Շատ անգամ աստացածնիս հոս չեմք ուզեր կրկնել. ինչպէս որ մեր ընթերցողք կը յուսան՝ Աննա շատ ծափահարութիւններ ընդունեցաւ, և իւր երկու աշակերտներն ալ իրեն մասնակից եղան: Ունկնդրաց մէջն էր փրանկիացի զօրավարն ալ՝ որ երեսունեվեց տարուան բարձրահասակ երիտասարդ մի էր, աղնուական և այրական կերպարանօք և վսեմ կերպերով. բայց բոլոր անձին վրայ կ'երևէր որ մարտիկ զինուորի մի կերպարանաց ներքև՝ զգայուն և մարդասէր սիրտ մի ունէր: Դքսին բոլոր հրաւիրեալ տիկնայց աչքն նորա վրայ էր, սակայն ինքն Աննայի միայն կը նայէր, և Աննա էր բոլոր իւր մտածութիւնն գրաւողն. մինչդեռ Աննա և ոչ անգամ մտքէն կ'անցընէր: Եմիլին անդրադառնալով մօրն քովէն խթեց ու կամացուկ մի ականջէն բսբսաց. մարքիզուհին ալ զօրավարին դառնալով երկայն ատեն և ուշադրութեամբ զնա կը դիտէր և կարծես թէ միտքն բան մի բերել կը ջանար, և նմա այնպէս կ'երևէր որ այն զօրավարն իրեն անծանօթ չէր և տեղ մի տեսած պիտի լինէր զինքն: Սակաւ մի յետոյ երբ Աննա երգն աւարտեց ու լռեց՝ զօրավարն դքսին մօտելով ցած ձայնով սկսաւ խօսիլ: Մարքիզուհին նորա խօսածն չէր լսեր, բայց կը մակաբերէր թէ իւր աղջկան վրայ էր այն խօսակցութիւնն, ինչպէս որ սակաւ մի յետոյ իւր տարակոյսն ստուգեցաւ՝ երբ տեսաւ որ փրանկիացի

սպայն դէպ 'ի իրեն կու գայ, և զինքն ողջունելով շնորհալի կերպով մի հարցուց թէ արդեօք Սէնթ-Անժ մարքիզուհւոյն հետ չէ՞ր որ պատիւ ունէր խօսելու. «Հապա, Տիկին, ասաց, մի թէ անցեալ ութ տարիներն այնչափ կերպարանափոխ արարեալ են զիս՝ որ պատիւ չունիմ 'ի ձէնջ ճանչցուելու»:

— «Տէր, պատասխանեց մարքիզուհին, զձեզ շուտով չճանաչելուս պատճառն այն է՝ որ ձեր դիմաց գծագրութիւնն աչացս վրայ միայն տպաւորուած էր, բայց ձեր վեհանձնական բարերարութիւնն սրտիս մէջ անջնջելի դրոշմած է»:

— «Ես ինքն, Տիկին, պատասխանեց զօրավարն, այնչափ հեռի էր մտքէս ձեզ հօս տեղս հանդիպելու երջանկութիւն, որ թերևս զձեզ պիտի չճանաչէի՝ եթէ հաճութիւնն չունէի լսելու ձեր զաւկին օրիորդին..., ներեցէք, թերևս տիկին ասելու էի —, ասաց զօրավարն սկսած խօսքն կտրելով, և այնպիսի շփոթած եղանակաւ մի, որում մարքիզուհին անդրադառնալով ժպտելն եկաւ և վրայ բերաւ. «Ոչ, Տէր, ոչ սխալէք. աղջիկս դեռ Օրիորդ Սէնթ-Անժ է»:

Այս ասելու ատեն Աննա ալ մօր քովն իւր տեղն նստելու համար հօն եկաւ, և երբ զօրավարն նորա ձայնին ազնուութիւնն և դաշնակին քաղցրաձայնութիւնն գովելով շնորհաւորութիւններ կը մատուցանէր՝ նա շիկնելով կարմրելով վար կը նայէր. մինչև որ մօրն ասելովն աչքն վեր առաւ և իւր հօրն ազատողն աչաց առջև տեսնելով՝ նորէն շփոթեցաւ՝ վախելով որ պաշտպանէն աւելի կամ պակաս բան մի չըրուցէ: — Բոլոր հանդիսին ժամանակն զօրավարն շատ անգամ առիթ գտաւ՝ մանաւանդ թէ բնտռեց մարքիզուհւոյն և երկու աղջկանցն հետ

խօսելու, և երթալէն առաջ նոյա մօրէն հրաման խնդրեց իրենց տունն գալու իւր մեծարանքն մատուցանելու, տիկինն ալ հաճութիւն ցուցանելով՝ երկրորդ օրն անմիջապէս եկն երևցաւ, և ներս մտածին պէս «Տիկին, ասաց, թերևս կը զարմանաք՝ որ ձեր տուած ազատութիւնն այսչափ շուտով ուզեցի վայելել, բայց ներեցէք զինուորականի մի թերևս անդէպ համարձակութեանն՝ որ գուշակելով թէ Վիեննայի մէջ երկայն ատեն պիտի չկարէ մնալ կ'ուզէ քաղքիս ամեն տեսնելու բաներն տեսնել՝ մանաւանդ իւր բարեկամներն. ես առաւել կարծեմ թէ իրարու ալ հաղորդելու բաներ ունիմք. և թերևս ձեզ ձանձրութիւն ոչ լինի լսելն թէ ինչ հանդիպմամբ ես այժմ Վիեննա կը գտնուիմ. և իմ կողմանէս ալ շատ կը փափաքիմ լսելու թէ դուք ալ ինչ պատահմամբ հօս կը գտնուիք ձեր ընտանեօքն»: Զօրավարին այս խօսքերս խօսած ատեն՝ փոքրիկ Եմիլն նորա սուրին հետ կը խաղար, և դրած աթոռին վրայէն վեր վերցնել կը ջանար՝ բայց ոյժն չէր բաւեր. եթէ իրեն թողուիր զօրավարին փետրազարդ գլխարկն ալ առնուլ կ'ուզէր՝ բայց վախնալով որ չէխ մի կը լսէ՝ իր մատիկներուն ծայրովն փետուրներուն կը դպչէր:

— Ի՞նչ գեղեցիկ զաւակ, ասաց զօրավարն:

— Այո, բայց սակաւ մի երես առած է, ասաց մարքիզուհին:

— Ձե՞րն է, Տիկին»:

— Թոռս է, տիկին Ֆորթօնի աղջիկն»:

— Ֆորթօն, ուրեմն Տիկինն ալ ձեր աղջի՞կն է. կարելի՞ բան: Ա՛հ, ներեցէք, Տիկին, այս անունս իմ կենացս վշտալից դէպք մի միտքս բերաւ:

Այն ատեն մարքիզուհւոյն միտքն անկաւ՝ որ

Սրտան եղած ժամանակնին՝ զօրավարն սարսափելի գրուածք մի իրեն ցուցած էր, որով Ֆօրթօն կը խնդրէր որ մարքէզն դատաստանի կոչուի՝ ինչ որ լինի թող լինի ասելով. այս բանս յիշելով շատ ցաւեցաւ որ իւր աղջիկն երկանն անուամբն կոչել էր։

Եմիլ՝ զօրավարին լռութենէն իմացաւ՝ որ նորա լեզուին ներքև գաղտնի խորհուրդ մի կար՝ իւր երկան չարութեամբն հնարուած. ուստի խօսք մի չէր խօսէր, բայց սրտէն կը տանջուէր։ Մարքիզուհին հասկնալով աղջկան միտքն՝ խօսքն ուրիշ նիւթի փոխեց, ու համառօտիւ պատմեց զօրավարին՝ ինչ որ իրենց գլխէն անցել էր՝ երկանն մեռնելէն յառաջ և յետոյ. զԱննա ալ շատ գովեց իւր անձնանուիրութեանն և ծնողաց ցուցած խնամոց և հոգերուն համար։ Զօրավարն ալ զարմացմամբ մինչև վերջն մտիկ առնելէն ետև՝ չկարաց ինքզինք բռնել ու գոչեց. «Ազնուական սիրտ մի ունիք դուք, Օրիորդ»։ Այս ասելով մարքիզուհւոյն դարձաւ և ասաց. «Ինչո՞ւ փորձ մի չէք փորձեր Փրանկիա դառնալու համար. գիտէք որ առաջին հիւպատոսն (Նափոլէոն Ա.) կը ջանայ ամեն աստիճանէ նեղող փրանկիացիներն իրեն քաշելու. թերևս ձեր կալուածներն ամենքն ալ ծախուած չեն, և դուք ալ կարող էիք խնդրել որ ձեզ դարձուին»։

— Այս բանիս մէջ յաջողելու համար, Տէր, Բարիզ լինելու է. ինչպէս կրնամ յուսալ որ Վիեննա աքսորուած տկար կնոջ մի ձայնն՝ մինչև առաջին հիւպատոսին ականջն հասնի»։

— Դուք այս բանս մի հոգաք, պատասխանեց զօրավարն. աղերսագիր մի գրեցէք՝ ինձ տուէք, ես քանի մի օրէն Փարիզ պիտի դառնամ, և

ուղղակի իրեն ձեռքն կը հասցնեմ. այս բանիս վստահ եղէք. առաջին հիւպատոսն զիս կը սիրէ, և գրեթէ ապահով եմ որ այս բանս պիտի յաջողցնեմ»։

— Ձեր խոստմունքին վրայ վստահ լինելուս համար՝ չեմ կարող դիմադրել. ես և զաւակներս յոյժ լաւ համոզուած եմք որ մեր շահն այլ աւելի պատուական ձեռաց չեմք կարող յանձնել»։

— Տիկին, աւելի ճարտար ձեռաց եթէ ասէք կարելի է, կը համոզուիմ, բայց առաւել անձնանուէր ձեռաց՝ ոչ երբէք»։

ԳԼՈՒԽ Ի.

Զօրավարին վէպքն։

Այս ասելով՝ զօրավարն ոտք ել և երթալու վրայ էր. բայց մարքիզուհին նորա միտքն ձգեց տուած խօսքն՝ ինքն ալ իր գլխէն անցածներն պատմելու։

«Իմ պատմելիքս յոյժ պարզ բան մի է, Տիկին, պատասխանեց զօրավարն, և ձեր հետաքրքրութեանն արժանաւոր նիւթ մի լինելուն վրայ ալ կ'երկբայիմ. սակայն ձեզ հնազանդելն ալ իմ առաջին պարտքս է, ուստի սկսիմ։

Տէր Սէնթ-Անժ աքսորուելէն քանի մի օրետև՝ ամեն կողմէն ամբաստանութիւններ կը տեղային ինձ դէմ, ասելով թէ մարքէզն թշնամեաց երկիր փախչողն Ժերվալ բերդակալն է, որ ես ինքն եմ Տիկին. և զինքն մահուանէ ազատելս ուրիշ բանի համար չէր՝ բայց եթէ հայրենեաց թշնամիներուն և մատնիչներու բանակն զօրացնել։ Աչքի բերան այս սովորական ամբաստա-

նութիւններս բանի տեղ չէի դներ ու չէի վախեր, որովհետեւ առաջուց հոգացեր էի ու մարքեզի ազատութեան թղթոյն վրայ՝ ժողովրդեան երկու երեսփոխանաց ստորագրութիւնն դնել տուել էի. և սակայն յետոյ այնչափ յաճախեցին այս չարախօսութիւններս՝ որ ես ալ սկսայ մտածել, մանաւանդ որ արդէն հասարակաց ամբաստանչին երկրորդ անգամ հրաման եկել էր՝ի Փարիզէ՝ զիս դատաստանի կոչելու համար: Բարեբաղդաբար չէին գիտեր կամ մոռցել էին որ Սըտան բերդաքաղաքն պաշարման վիճակի մէջ էր՝ որով ամենայն իշխանութիւն բերդակալին ձեռքն էր, և ես ալ դեռ պաշտօնէս ոչ անկած էի և ոչ դադարած: Սոցա մոռացութիւնն իմ գործիս ծառայեց. վասն զի երբ հասարակաց ամբաստանիչն յանդգնեցաւ զիս եկակոչ առնելու՝ գունդ մի զինուոր ղրկեցի դատաստանարանին վրայ, որք այն անզգամն բռնեցին ու զնդանն տարին, և պատերազմական ատեանն մահուան դատապարտեց զնքն՝ բերդակալին գերագոյն իշխանութիւնն չճանաչելուն համար. բայց ես հինգ տարուան բանտարգելութեան փոխեցի իւր պատիժն. և այս բանն իրեն համար բաղդ մի եղև. որովհետև Սարսափ ասացեալ ժամանակին մէջ եղած փոփոխութեանց ատեն՝ եթէ իւր պաշտաման մէջ մնացած լինէր՝ անշուշտ գլուխն պիտի կորուէր: Յետոյ այս եղածներն Դաշնադիր ժողովքին իմացուցի, երկու երեսփոխանաց տուած ստորագրութիւնն ալ ցուցանելով, ստորագրողներուն ալ իմացուցի որ եթէ ինչ կերպով իրենց ստորագրելնին իմացուէր՝ իրենց ալ բանն բռնուած էր: Այն ատեններն ամենայն իշխանութիւն Տանթոնի ձեռքն էր՝ որոյ հետ առանձին ծանօ-

թութիւն ունէի, և ինքն զիս Մէց քաղքին բերդակալ անուանեց: Քանի մի օրէն իմացայ որ այն ձեզ ծանօթ գրուածքին հեղինակն զիս Ժաքոպէններու և Դաշնադրաց ժողովոյն առջև ամբաստանել էր, բայց Տանթոն իւր ստենտորական ահեղ բարբառովն՝ նորա ձայնն խափանել էր: Սակաւ ժամանակէն Մէցի և շրջակայից մէջ բանակ մի յարդարեցաւ, և Ժուրտան սպարապետ անուանելով ինձ առաջարկեց որ բերդակալութիւնն թողում և գունդի մի հրամանատարութիւնն ընդունիմ, զոր և յանձն առի. և նորա հրամանաց ներքև ծառայեցի մինչև 1795ին վերջերն. այն ատեն իմ գնդովս Իտալիա ղրկուեցայ՝ Պոնաբարթէ զօրավարին օժանդակ:

Այս երիտասարդ աշխարհակալն՝ որոյ փառաց ճառագայթներն ամեն տեղ սփռել սկսել էր՝ Իտալիոյ մէջ գտաւ եռանդուն երիտասարդաց բանակ մի՝ բայց ամեն բանէ զրկուած, ոչ ստակ ունէին, ոչ ուտելիք, ոչ հագուստ, ոչ թնդանօթ, և ոչ անգամ զէնք. բայց իւր հաստատամտութեամբ և անյողդողդ արիութեամբն ամեն բան կարգի դնելով և զինուորաց վստահութիւնն գրաւելով՝ նորանոր և յանդուգն արշաւանաց ձեռք կը զարնէր և յաջողութեամբ կ՚աւարտէր: Հինգ վեց աւուր մէջ բոլոր Բիէմոնթն ձեռքն անցուց, Լոմպարտիան ու Թոսքանան նուաճեց, և Քասթիլիոնէի և Արքոլի պանծալի յաղթութիւններովն՝ Աւստրիացւոց բանակներն գլորեց: Յետագայ տարին՝ Մանդուայի անձնատուր լինելովն՝ որ անմատոյց բերդ մի կը համարէր՝ Գերմանիա մեծ տագնապի մէջ անկաւ, որովհետև յաղթականք այն երկրին մինչև ներսերն յարձակելու վրայ էին, և

վերջապէս տիրապետեցաւ Լեօպէնի հաշտութիւն ընդունելու: Պոնաբարթէ իւր զօրականաց սիրելի եւ պաշտելի՝ որովհետեւ այնչափ յաղթանակներու առաջնորդել էր զիրենք, Թագաւորաց հաւասար սկսաւ նոցա հետ դաշնագրութիւններ առնել, եւ ամէնքն իւր պատերազմական հանճարին վրայ կը զարմանային. մի եւ նոյն ատեն իւր հայրենիքն ալ ընկճուած ազգաց աւարներովը ճոխացուց, եւ թշնամեաց զէնքերէն եւ դրօշներէն զատ՝ որ իւր յաղթանակներն էին՝ որչափ որ իտալական նկարչութեան եւ յունական արձանագործութեան հրաշակերտներ կային՝ ամէնքն ալ Փրանկիա փոխադրեց:

Բայց այսչափ փառաց հասնելէն ետեւ՝ այլ աւելի պանծալի յաղթութեանց հետամուտ լինելով իւր աչքն Արեւելից վրայ դարձուց՝ ուր Աղեքսանդր մակեդոնացի իւր աշխարհակալութեանց յիշատակն թողած էր. եւ այս բանիս համար Թուլոնի նաւարանին մէջ մեծամեծ պատրաստութիւնք կը տեսնուէին: Պոնաբարթէ բանակին հրամանատարութիւնն առնլու համար ճամբայ ելած ժամանակ, ինձ դառնալով հարցուց թէ արդեօք այս արշաւանաց մէջ ալ իրեն ընկերանալ կամէի թէ չէ: Եւ որովհետեւ արդէն Իտալիա եղած ժամանակ շատ բարեսիրութիւն ցուցած էր ինձ՝ ուստի կամակար յանձն առի բաղդակից լինելու այնպիսի զօրավարի մի՝ զոր սովորած էի անյաղթելի համարելու, առանց գիտնալու թէ ինչ ծովեր պիտի անցնէինք եւ որ եզերք պիտի տանէինք Փրանկիոյ զօրութիւնն, զոր ինձ պէս ուրիշներն ալ չէին գիտեր: Նաւատորմիղն հիանալի կարգաւորութեամբ եւ հասարակաց խնդութեամբն ճամբայ ել, եւ սակաւ մի յետոյ իմացանք մեր որ

կղզին արշաւելուն դաղտնիքն, եւ կարծես թէ մահկաձեւ (օսմանեան) դրօշին վրայ գործելու յաղթութեանց յառաջընթաց եղեւ՝ Մալթա կղզին նուաճելնիս՝ այն անառիկ եւ անմատոյց կղզին, որ երկու տարի ամբողջ դիմացել էր բովանդակ Օսմանեանց զօրութեան դէմ:

Քանի մի օրէն ետեւ երբ Աղեքսանդրիոյ մինարէներն երեւել սկսան՝ այն ատեն իմացանք մեր արշաւանաց նպատակն, եւ մեր նաւերն գրեթէ հրաշիւք զերծանելով անգլիացւոց նաւատորմիղին խուզարկութենէն՝ որ մեր մօտէն անցած ժամանակ զմեզ չճանչցան, հասանք Եգիպտոսի եզերքն՝ ուր ցամաքն ելին Իտալական բանակին զինուորներն. հոն սկսաւ այս ընտիր գունդին անլուր աշխատութիւններն ու մեծամեծ պատերազմներն՝ որոց յաղթելու համար նորահնար գիւտեր հնարելու էր՝ նորատեսակ թշնամւոյ մի դէմ: Մէմլուք աստացեալ տեղացի շքեղ հեծելազօրն՝ որ կարծես թէ իրենց ձիոց հետ կը թռչէին՝ արեւելեան արեգական առջեւ իրենց ոսկեճամուկ զինուորական զգեստներն եւ պողպատեայ սուրերն շողացնելով՝ առջի բերան արհամարհանօք նայեցան այս հետեւակ բանակիս վրայ, որ անապատին վտանգաց եւ աշխատութեանց դիմադրաւ կ՚ընթանային. բայց սակաւ մի յետոյ փրանկիացի զօրականին արժէքն իմացան: Արեւելից կորիւն որդւոց յանդուգն քաջութիւնն եւ արագ արագ շարժմունքն եւ յարձակմունքն՝ եւրոպական զինուորական կարգաց դէմ զարնուելով խորտակեցան, եւ իրենց ամէն ձիգն ու ջանքն պարապ ելին՝ այս անտեղիտալի երկրէ պարիսպներուս դէմ՝ որ կարծես թէ կենդանի պատնէշ մի էր սուիններով շրջապատած եւ ամէն դիէն կրակ թափելով: — Իմ

միտքս այս գոգցես առասպելական պատերազմին նկարագրութիւնն անել չէ, որ վաղեմի ժամանակաց հսկայից ու դիւցազանց պատերազմներն կը յիշեցնէ. բայց ներեցէք ինձ իմ զարմանքս յայտնելու՝ մեր գլուխն կեցող սպարապետին քաջութեանն և հանճարոյն: Աբուքերի դիմաց մեր նաւատորմիղն այրուելէն ետև՝ Պօնաբարթէ գրեթէ իր աշխարհակալութեան մէջ բանտարկուած՝ յայտնի ցոյց ետ թէ որչափ որ յաջողութեան ժամանակ ճարտարութիւն ունէր՝ նոյնչափ ձախողութեան ատեն ալ քաջութիւն և հաստատութիւն: Մերթ զինուոր և մերթ օրէնսդիր լինելով՝ իւր զօրականաց քաջութիւնն կը վառէր, և Արաբացւոց նախանձայուզութիւնն կը նուաճէր ու յաղթողին դրած օրինացն կը հպատակեցնէր: Մի և նոյն ատեն իւր փառաւոր արշաւանաց մի մասն անգամ անխնամ չթողլու համար՝ իրեն հետ բերած իմաստնոց և գիտնոց ժողովոց մէջ նախագահ կը բազմէր և նորա ձեռնտու լինէր. այնպէս որ որչափ զինուորական փառքն՝ նոյնչափ ալ գիտութիւններն իրեն երախտապարտ պէտք է լինին:

Սակայն նոյն ժամանակներն ծանր խռովութիւններ զՖրանկիա կը վրդովէին. 'ի ներքոյ կուսակցութիւններն զօրանալով՝ իշխանութիւն ձեռքերնին անցուցանել կը ջանային՝ զոր ծխծաղական կառավարութիւն մի չէր կարող պահպանելու. իսկ սահմանածայրերն զինուորական կարգն ու կանոնն եղծանելով՝ նախընթաց պատերազմներով վաստակածնին ալ չէին կարող պահպանել: Երբ Պօնաբարթէ այս լուրերս իմացաւ՝ շուտ և յանկարծական որոշում մի արար. իրեն յանձնուած բանակն թողլու ծանր պատասխանատուութիւնն իւր վրայ առնլով. և

Քլէպէրն իւր տեղ հրամանատար կարգելով յԵգիպտոս՝ միւսանգամ իր բաղդն ծովուն անհաստատ ալեացն յանձնեց: — Ես Եգիպտոսի յարձակման ժամանակ վիրաւորուած էի. զօրավարն զիս ալ հետն առնուլ ուզելով՝ հաւանեցայ, և ծովու ճամբորդութեամբն ալ բոլորովին առողջացած՝ մառախուղ ամսուն 18ին հաշակաւոր պատերազմին մէջ զօրավարիս քովն էի. և Պօնաբարթէ առաջին հիւպատոս լինելով՝ իմ ծառայութեանցս փոխարէն գնդի մի հրամանատարութիւնն ինձ յանձնեց. և Լիւնէվիլի խաղաղութենէն ետև՝ զիս ընտրեց Վիեննա գալու գերեաց փոխանակութեանն համար, և այս պաշտօնս ինձ մեծ բարեյաջողութիւն եղև՝ որովհետև այսով է որ ձեզ հանդիպելու բաղդն ստացայ»:

Այս տեսութենէս քանի մի օր յետոյ՝ զօրավարն Վիեննայէն մեկնեցաւ՝ մարքիզուհին ալ իւր աղերսագիրն նմա յանձնելու ատեն ասաց. «Ահ Տէր, ինչպէս պիտի կարեմք այսչափ բարեացդ փոխարէնն առնելու»: Որուն պատասխանեց զօրավարն. «Ինչ կարծէք, Տիկին, միթէ ծառայութիւն մի մատուցած ժամանակ զգացած գոհութիւննիս՝ բաւական փոխարէն չէ մեզ: Բաց աստի, աւելցուց կամացուկ ձայնով և մարքիզուհւոյն ձեռքն բռնելով՝ այնպէս որ նա միայն լսեց ասացածն, եթէ զիս փոխարէն մի ունելու արժանի կը համարիք, և եթէ Օրիորդ Աննա ալ ձեզ պէս կը մտածէ, ես ալ 'ի ձէնջ ամենէն փառաւոր փոխարէնն կը խնդրեմ՝ ուսկից աւելին չեմ կարող յուսալ»:

Մարքիզուհին պատասխան տալու տեղ՝ հեղ մի իւր աղջկան վրայ նայեցաւ, և յետոյ զօրավարին վրայ դարձնելով աչքն՝ սիրով նորա ձեռքն սեղմեց:

ԳԼՈՒԽ ԻԱ.

Էմիլիի կատարեալ քրիստոնէի պէս մեռնիլը։

Էմիլի քանի մի տարիէ 'ի վեր իւր մօրն ու քրոջ քով հանգիստ կեանք մի կ'անցուցանէր. սակայն երջանիկ չէր կրնար կոչուիլ. որովհետեւ հոգւոյ խաղաղութիւն չունէր, այն ներքին խաղաղութիւնն առանց որոյ աշխարհիս վրայ մարդս երջանիկ չկարէ լինել. այն խաղաղութիւնն զոր բան մի չէ կարող վրդովել՝ ոչ մարդկանց անիրաւութիւն եւ ոչ ծանր դժբաղդութիւններն, այն երկնային խաղաղութիւնն զոր մարդ մաքուր եւ անարատ խղճիւ եւ իւր ամեն պարտքերն կատարելով միայն կը ստանայ։ Իսկ արդ Էմիլին ինչպէս կարող էր ունել այս խաղաղութիւնս։ Յիրաւի Աննա ու մարքիզուհին նմա սրտանց ներել էին, հայրն ալ քրիստոնէի պէս մեռած էր, եւ ճշմարիտ քրիստոնեայն ընդունած անիրաւութիւններն կը մոռնայ եւ չյիշեր. ուստի Էմիլի ալ վստահ կարէր լինել՝ որ իրմէ վիշտ եւ անիրաւութիւն կրողներն՝ ամենքն նմա ներել էին. բայց իւր սրտին խորն որդ մի կար որ զայն կը կրծէր, որ էր խղճին խայթն, որ ինչպէս զօրաւոր թոյն մի ամեն բան կ'եղծանէ կ'ապականէ, այսպէս ալ այն խայթն իւր երջանկութիւնն ու հանգիստն կը խռովէր։ — Իւր մտքէն չէր կարող հանել իւր հօր վիճակն՝ երբ մոլեգնեալ խաժամուժէ մի կը հալածուէր՝ զորս դրդողն ու վարձատրողն իւր այրն էր. դարձեալ խեղճին արեան դատաստանի մատնուիլն իր զաւկին ձեռօքն, եւ վեհանձն օտարականի մի

ձեռօք ազատելն՝ որոյ ճարտարութիւնն պատուհասելու համար՝ իւր այրն նորա եռանդն անկած հալածել էր. հօրն մահուան անկողնոյն վրայ տարածուած՝ իւր պզտի աղջիկն օրհնած ժամանակ՝ թերեւս իրեն դէմ սարսափելի անէծք կարդացել էր։ Հրեղէն գրերով նկարուած իր աչքին կու գային իւր մօր տառապանքն՝ այն ողկար մօր՝ որ զինքն միայն եւ անչափ սիրել էր, եւ ինքն վտանգի ժամանակ վատ մատնութեամբ երեսի վրայ թողել էր։ Այն բարեսիրտ Աննայի երկայն տարիներ քաշած ցաւերն՝ զոր ինքն մայրենի գրկէն միշտ վռնտել էր, եւ նա հիմա իրաւամբ իւր սիրտն ժառանգած ատեն՝ իրեն ալ մասն կը հանէր այն սրտէն զոր միայն իրեն իրաւունքն էր վայելելն. Աննա՝ որ իւր զաւկին պէս կը սիրէր՝ այն զինքն ամեն բանէ զրկող մարդուն աղջիկն։ Վերջապէս Էմիլ՝ այն խստասիրտ մարդկանց պէս՝ որ մինչեւ կենաց վերջի օրն չարիքն ձեռքէ չեն թողուր. բայց վերջապէս մօտալուտ մահուան սարսափներէն՝ իրենց գործած անիրաւութեանց անողոքելի խիղճն կը լսեն, նոյնպէս ինքն ալ բոլոր կենաց պարագաներն՝ ակամայ իւր աչաց առջեւ կը բերէր, եւ իւր խիղճն զարհուրելի դատաւորի մի պէս իւր ամեն գործածներն նորա առջեւն կը դնէր։

Այս մտածութիւններով այնպիսի տրտմութե մի անկաւ իւր սիրտն՝ որ բանով մի չէր կրնար զայն սրտէն հանել. զբաղմունքն զինքն կը յոգնեցնէին, հանգիստն ալ այլ աւելի ծանր կու գար՝ որովհետեւ անցելոյն տխուր մտածութիւններն ալ աւելի կը զօրանային իւր վրայ։ Մարքիզուհւոյն իրեն վրայ ցուցած սէրն՝ տրտմութիւն մի կը բերէր նմա, եւ գառն արտասուօք աչքերն կը լեցուէին։ Աննայի գգուանքն ալ զինքն կը վրդ-

տացնէին, որովհետև ինքզինք անարժան կը սեպէր. միայն ատեն ատեն նմա կը հարցանէր. «Քոյր իմ բարի՝ Եմիլին կը սիրես, այնպէս չէ՞»: Աննա ալ տղուն պլլուելով և սրտին վրայ սեղմելով՝ պատասխան կուտար. «Հապա դու Եմիլի՝ դու ալ զԱննա կը սիրես, այնպէս չէ՞»:

Օր մի փոքրիկ աղջիկն լալով մօրքրոջ սենեակն վազեց. «Ինչո՞ւ կու լաս, զաւակս», ասաց Աննա:

— «Մայրիկս զիս թողուլ երթալ կ'ուզէ, և սակաւ ժամանակէն զքեզ պիտի թողում ասէ ու կու լայ» ասաց մանուկն հեծկլտալով:

— «Ո՛չ, ո՛չ, պատասխանեց Աննա, հանգիստ եղիր, մայրիկդ զքեզ չթողուր. եկ երթամք զինքն տեսնելու», առնելով տղուն ձեռքէն բռնեց Եմիլիին սենեակն գնաց՝ որ նստէր կու լար: «Հապա, այդ ինչ է քոյր, ասաց Աննա, որ շատոնց նորա խորին տրտմութեան պատճառն հասկցել էր, դու միշտ այսպէս պիտի մնաս, ու սիրտդ ամեն մխիթարութենէ ու իմ սիրոյս դէմ միշտ պիտի փակես. հապա, մի վայրապար զքեզ վըշտացներ, խեղճ զաւկիդ սիրտն ալ մի ցաւցներ՝ զոր ամենքս ալ կը սիրեմք. Նայէ՛ ինչպէս արցունք կը թափէ խեղճն. հապա սրբէ նորա արցունքն. և ասա՛ նմա որ զինքն ա՛լ պիտի չթողուս երթաս»:

Եմիլի այս խօսքերս լսելով՝ սիրտն բացուեցաւ, աչքերն զուարթացան. բայց այս զուարթութիւնս անցողական պայծառութիւն մի էր՝ նման այն մարելու մօտ պլպլացող կանթեղին վերջին փայլմանէն: Ու երբ տղայն քովէրնէն հեռացաւ ու մինակ մնացին՝ սակաւ մի լռութենէ ետև Եմիլի հառաչելով ասաց. «Բարի Աննաս, 'ի զուր չիմանալու կը զարնեմ՝ բայց կը զգամ որ սակաւ սակաւ ոյժէ կը պակսիմ, և անտարակոյս

շատ չըքշէր որ ամեն տառապանքէս պիտի ազատիմ. մի՛ լար քոյր իմ, մի՛ ցաւիր իմ վրաս. վասն զի յոյժ սարսափելի բաներ են քաշածներս ... և զիս տանջող խորհուրդներն մտքէս չեմ կարող հանել... չորս տարիէ 'ի վեր երակներուս մէջ թոյն մի կը պտըտի, և սրտիս մէջ կրակ մի կը վառի՝ որ զիս կ'երէ կը լափէ և կեանքս կը հատցնէ. և աստուածային արդարութիւնն ինձ պէս մեծ յանցաւոր մի կամաց կամաց կը տանջէ. բայց ես ուրախ եմ. այս բանիս վրայ յուսամ որ Աստուած երկրիս վրայ ինձ իւր արդարութիւնն ու անողոքելի խստութիւնն ցուցանելով՝ երկինքն ալ իւր գթութիւնն և ողորմութիւն պիտի ցուցանէ: Մի գուցէ ասացածներէս բան մի իմացնես խեղճ մօրս, արդէն տրտմութեան ատենն շատ չէքշէր պիտի հանի... Քոյր իմ, մեռնելուս վրայ չեմ ցաւիր, որովհետև քու սէրդ կը ճանաչեմ և գիտեմ որ զաւկիս վրայ ալ հոգ պիտի տանիս, այն անմեղն իր ծնողաց չարութեան համար՝ խեղճութիւն չքաշէ»:

Ջուր տեղ կը ջանար Աննա իւր քոյրն մխիթարել, նորա սիրտն հանգարտեցնել ու տխուր խորհուրդներն մտքէն փարատել. վասն զի արդէն ցաւն իր սիրտն թափանցել էր: Այն ատենէն Եմիլի երթալով սկսաւ տկարանալ, և քանի մի օրէն անկողին ինկաւ, և զինքն ազատելու յոյս ևս չմնաց: Նայմեյեր բժիշկն յայտնապէս իմացուց մարքիզուհւոյն որ հազիւ թէ ամսուան մի կեանք ունէր, և հիւանդութիւնն օր աւուր առաջ երթալով՝ իրաւ ելաւ իր խօսքն: Ութ օր դեռ չէր անցած որ կրակոտ ջերմ մի եկաւ վըրան. բժիշկն դուռն անգամ սենեկէն կ'ելնէր՝ տեսնելով որ իր ներկայութեամբ հիւանդն կը

մխիթարուի, բայց անօգուտ դեղերով զինքն չէր յոգնեցներ. «Արդէն կենաց ակունքն ցամքած են, կ'ասէր մօրն, բան մի չկարէ զինքն ազատել, և առաջին ճգնաժամին շատ կը վախեմ որ չդիմանայ»: Աստուածին երկրորդ օրն բժիշկն տեսած նշաններէն գուշակեց որ ճգնաժամն մօտ էր և մօրն ու Աննային միատեղ ասաց. «Հիւանդին իմացնելու է վերահաս վտանգն՝ որ թերևս կենաց վերջին օրն լինի. ինքն քրիստոնեայ ու բարեպաշտ կին մի է, հարկաւ կրօնից օգնութիւններն կ'ուզէ ընդունիլ»:

Այս ասելով բժիշկն ալ խուռովեցաւ, մայրն ու աղջիկն ալ սկսան արտասուել. որ թէպէտ շատոնց գիտէին հիւանդին վիճակն, բայց չէին կարծեր որ մահաբեր վայրկեանն այնչափ մօտալուտ էր, ուստի կայծակէ զարնուածի պէս մնացին. «Ո՜հ, Աստուած իմ, ասէին, ինչպէս իմացնելու է իրեն որ յաւիտեան պիտի բաժնուինք, այս երիտասարդական հասակիս մէջ, ո՜հ, որչափ դժուար է քսանուինն տարուան մեռնիլ՝ մայր զաւակ ու քոյր մի թողլով աշխարհիս վրայ: Ա՛հ սիրելի Եմիլի, ո՞ւմ սիրտն պիտի դիմանայ այս սուրս քոյ սիրտդ մխելու. Աստուած իմ, դու մեզ ճամբայ մի ցոյց, կերպ մի ուս թէ ինչ պիտի առնեմք»:

Բժիշկն տնէն դուրս ելաւ. գերմանացի աղախինն ու տղայն ալ հիւանդին սենեակն էին. ու երբ մարքիզուհին և Աննա լալով ողբալով կ'աղօթէին՝ Եմիլին վազելով եկաւ ասաց որ մայրն զիրենք տեսնել կ'ուզէր: Շուտով ելին նորա սենեակն գնացին՝ աչուրնին ուռած արտասուալից և շունչերնին բռնուած: Եմիլին առտնօք իւր հօրն Հռովմայէն բերած օծեալ խաչելութիւնն ուզել էր՝ զոր մարքիզուհին միշտ խնամքով կը

պահէր: Ներս մտնելնուն պէս իմացաւ որ մայրն ու քոյրն լացել էին, և այս արցունքս իրեն համար թափուած էին: Խնդրեց որ զինքն սակաւ մի վեր վերցնեն ու կռնակն ու գլխուն ետին բարձ մի դնեն որ կռթնի. ու երբ դրին՝ «Շատ հանգիստ եմ, ասաց, սակաւ մի ալ այսպէս նստիմ». և տեսնելով որ զաւակն ու քոյրն անկողնոյն մի կողմն, միւս կողմն ալ մայրն ու հաւատարիմ աղախինն կանգներ էն՝ վրանին նայելով ասաց. «Պաղ պաղ քրտինք մի կու գայ վրաս, և կիմանամ որ ալ իմ վերջս հասած է. և դուք թէպէտ և չէք ուզեր իմ վիճակիս ծանրութիւնն ինծ իմացնել, բայց կը տեսնեմ որ աչուրնիդ լալով ուռած է. ի՞նչ, կը վախէք որ զիս չարտմեցընէք. բայց մահն ինծ վախ չբերեր, այլ կը տեսնեմ որ այնով պիտի հանգչիմ: Գորովագութ մայր և դու բարի Աննաս, դուք ինծ ներեցիք, և յուսամ որ Աստուած ալ իմ զղջմանս նայելով ինծ ներէ. բայց ես ինծ չեմ կարող ներել, և իմ յանցանացս յիշատակն զիս միշտ կը հալածէ. և այս դառն յիշատակն ինծ հետ գերեզման պիտի իջնէ. բայց քանի որ գերեզմանս չէ բացուած՝ կուզեմ իմ Արարչիս հետ հաշտուիլ. ուստի շուտով մարդ ղրկեցէք, կաղաչեմ, ինծ համար քահանայ մի կոչեցէք. ժամանակս կարճ է. կը ցաւիմ որ մինչև այս վայրկեանս ուշացուցի»:

Գերմանացի աղախինն շուտով դուրս ել՝ որ մօտ եկեղեցին երթայ՝ քահանայն կոչելու. բայց անդէն ետ դարձաւ ասելով թէ բժիշկն է. յետոյ կամացուկ մի մարքիզուհւոյն ականջէն ասաց որ հետն քահանայ մի ալ եկել է: Բարի բժիշկն մտածել էր որ ոչ մարքիզուհին և ոչ Աննա պիտի չկարէին իրեն յանձնարարութիւնն

կատարել ու հիւանդին իմացնել. ուստի եւ դարձել էր որ այս ցաւալի պարագն ալ ինքն կատարէ. և որովհետև առաւօտեան նշաններէն իմացել էր որ Ճգնաժամն յոյժ մօտ է՝ խոհեմութեամբ քահանայ մի ալ բերել էր հետն։ Ուստի հիւանդին քովն երթալով ասաց. «Այս առաւօտ ինձ այնպէս երեւցաւ որ հոգեւորական օգնութիւններն ալ կը փափաքիք ընդունելու. որովհետև լինելիքն չեմք գիտեր. երբեմն ծանր հիւանդութենէ մի մարդս կ'առողջանայ, երբեմն ալ թեթև կարծուածի մի չդիմանար. ուստի միշտ պատրաստ լինելն լաւագոյն է. եթէ աշխարհասէր կին մի լինէիք՝ որ աշխարհ թողլու կը վախէ, այսպէս չէի խօսեր»։

— «Տիկինն ալ գիտէ որ՝ ասաց քահանայն, յամենայնի Աստուծոյ կամացն հնազանդելու եմք. արդէն ձեռքն բռնած խաչելութենէն և մեզ համար մեռնող Փրկչին պատկերէն՝ կիմանամ որ ինքն այն հաւատացեալներէն է՝ որ աներկիւղ կը սպասեն յաւիտենականութեան դռներն բացուելուն, որովհետև յոյս ունի որ Աստուած զինքն իր գրկաց մէջ պիտի ընդունի»։

Եմիլին գլուխն ծռելով՝ հաւանութիւն եցոյց և խաչելութեան ոտքն համբուրեց։ Բժիշկն ալ նշմար մի առնելուն՝ ամենքն սենեկէն դուրս ելին՝ բաց 'ի քահանայէն. բժիշկն ալ քահանային ձեռքն եթերի սրուակ մի տալով՝ ապսպրեց որ եթէ տագնապ մի կրէ՝ որ յոյժ բնական բան է այս վերջի վայրկեանիս, կամ սաստիկ քրտնի կամ մարելիք մի գայ վրան, ատեն ատեն այն եթերն հոտոտել տայ. այս բաներս ապսպրելով ինքն ալ սենեկէն դուրս ել։ Քառորդէ մի ետև քահանայն սենեկին դուռն բացաւ և երբ ամենքն ներս մտին՝ բարձր ձայնով ասաց. «Տի-

կինն պատրաստ է սուրբ խորհուրդներն ընդունելու, և եթէ Աստուած այս զոհս հարկաւոր կը դատի՝ ինքն ալ պատրաստ է առանց տրտնջանաց այս զոհս Աստուծոյ նուիրելու»։

Այս խօսքիս վրայ ա՛լ մարքիզուհին, Աննան, Եմիլէկն և աղախինն իրենց ցաւն ու արտասուքն չկարացին բռնել՝ զոր մինչև այն ատեն զսպած էին։ «Ա՜հ, ասաց Եմիլի տկար ձայնով մի, ձեր արցունքն յինէն մի ծածկէք, նոքա իմ վերջի վայրկեանները կը քաղցրացնեն, որովհետև նոքօք կիմանամ որ զիս կը սիրէք». ու սակաւ մի շունչ առնելով «Մայր իմ, քոյր իմ, ասաց, մոռացէք իմ ձեզ պատճառած ցաւերն և իմ զղջս միայն յիշեցէք. և դու զաւակս... յիշէ միշտ որ առանց առաքինութեան երկրիս վրայ ոչ հանգստութիւն կայ և ոչ երջանկութիւն... միշտ հնազանդ եղիր իմ բարի մօրս խրատներուն, և իմ սիրելի Աննաս քեզ օրինակ ա՛ռ. ինքն իմ տեղս քեզ մայրութիւն պիտի առնէ»։ Յետոյ քահանային դառնալով՝ «Հայր իմ ա՛լ քոյ ձեռքդ եմ. վասն զի կիմանամ որ Աստուած զիս կը կոչէ»։

Բժիշկն քովն կեցած՝ ոգիքներ հոտոտել տալով՝ հիւանդին սակաւ մի զօրութիւն կու տար՝ բայց տկարացած բնութիւնն ա՛լ լուծուելու վրայ էր, որչափ քրտինքն կ'առաւելուր՝ նոյնչափ ինքն ալ ույժէն անկանէր ու կը տկարանար։ Եմիլի մեծ եռանդեամբ սուրբ կրօնից խորհուրդներն ընկալաւ. և քառորդէ մի ետև հոգին աւանդեց։ Քահանայն մօրն դառնալով «Տիկին, զաւակդ Աստուծոյ գիրկն է հիմա, ասաց, և այս մտածութիւնն՝ զձեզ պէտք է մխիթարէ. իւր հոգին զղջմամբ և վշտօք մաքրագործեալ թռեաւ 'ի յերկինս»։

Եմիլի մեռնելէն յառաջ խնդրել էր որ մար-

մինն Պատընի դերեզմաննոցը իւր հօր քովը թաղեն, որպէս զի նորա աճիւնն ալ աքսորանաց երկրին մէջ մենաւոր չմնայ: Նայմէյեր ալ՝ բժիշկ Շէնքի և Պատընի աւագերիցուն օգնութեամբն որ դեռ կենդանի էր, իւր վրայ առաւ Տիկին Ցորթոնի վերջին կամքն կատարելու հոգն ու խնամքն: Մարմնոյն փոխադրութեան օրն մարքիզուհին և Աննա ուզեցին Պատըն երթալ. բայց բժիշկն դէմ դրաւ. «Ինչ օգուտ, ասաց, երթալնէդ, բայց եթէ դեռ չգոցուած վէրքերն նորէն բանալ. նայեցէք որ ձեր առողջութեանն խնամ տանիք՝ որ ձեզ յանձնած այս տղուս համար ալ հարկաւոր է, և որոյ համար այս ցաւալից տեսարանն վնասակար կարէ լինել և զինքն հիւանդացնել: Տեսիք ահա թէ ինչպէս իր մօր մարմնոյն վրայ անկած՝ չէր ուզեր անտի բաժնուիլ, մինչև որ բռնի զնա բաժնեցինք. երկրորդ անգամ ցաւ մի՝ իրեն մահաբեր կարէ լինել»: Այս ասելով զիրենք համոզեց որ տեղերնէն չշարժին:

Եմիլիի մահուամբն ընտանեաց մէջ այնպիսի վիհ մի բացուեցաւ՝ զոր խեղճ մօրն համար անհնարին էր լեցնելն. յիրաւի երկայն ատեն Աննայի սէրն իրեն համար բաւական համարել էր. սակայն այն ատենէն 'ի վեր որ աստուածային նախախնամութիւնն իրեն գտնել տուաւ իւր անդրանիկ զաւակն՝ զնա իր աչքէն չէր հեռացըներ: Բարեբաղդաբար սակաւ մի ժամանակէն այնպիսի առիթ մի եղև՝ որ իւր ցաւն դոյզն ինչ մոռցնել տուաւ, որ սակաւ սակաւ այնպիսի յիշատակ մի դարձաւ՝ որոյ դառնութիւնն երթալով կը մեղմանայ: Մարքիզուհւոյն ցաւն սակաւ մի մեղմացնող առիթն՝ զօրավարէն եկած նամակ մի էր՝ զոր Փրանկլին դեսպանատան ձեռօքն ընկալաւ: — Այս նամակովս Ժէրվալ մարքիզուհւոյն կիմացնէր՝ որ իւր աղերսագիրն առաջին հիւպատոսին մատուցանելով՝ նա ալ գլխէ 'ի գլուխ կարդալով խօսք տուեր էր իրեն խնդիրքն կատարելու: «Իրմէ չծածկեցի, ասէր զօրավարն, որ ես ալ յոյժ կը ցանկամ այս խնդրոյս կատարմանն. և առաջին հիւպատոսն տեսնելով իմ այս մասին մէջ ցուցած ջանքս ու եռանդս՝ ժպտելով մի ինձ ճիշդ այս խօսքերովս պատասխան տուաւ. «Զօրավար, կարծեմ դու հասարակապետութիւնն Սէն–Ժէրմէնի թաղին հետ (այսինքն ազնուապետութեան) հաշտեցընել կուզես. իմ միտքս ալ այն է՝ տեսցուք, կամ թէ...»: Պոնաբարթէ խօսքն առաջ չտարաւ, ուստի ես ալ չեմ համարձակիր զայն ամբողջացնելու. բայց կարծեմ թէ նորա միտքն հասկըցայ. կերևի թէ մեծ խորհուրդ մի ունի մտաց մէջ. կուզէ ցկեանս հիւպատոս անուանիլ. և կարծեմ թէ պիտի յաջողի, որովհետև ամեն ուզածն կարող է առնել: Ուրիշ անգամ մի ալ զինքն շատ զուարթ տեսնելով՝ ձեր խնդիրքն նորէն առաջարկեցի. և թէպէտ հիւպատոսի փոխանորդն դէմ կը դնէ՝ բայց գրեթէ ապահով եմ որ պիտի յաջողի»:

ԳԼՈՒԽ ԻԲ.

Դարձ 'ի Փրանկլին:

Զօրավարին նամակէն շատ գոհ եղև մարքիզուհին. որովհետև որչափ ալ գերմանացի մեծամեծք իւր աստիճանին համեմատ զինքն կը մեծարէին՝ սակայն իւր զաւկին դաստատուու-

թեամբ ստակ վաստկիլն իրեն ծանր կու գար. իսկ եթէ Փրանկիա դառնային և զօրավարին պաշտպանութեամբն իրենց ստացուածոց մի մասն ալ միայն ձեռք ձգէին՝ կարող էին մարդու կարօտ չլինելով ազատ ապրիլ։ Դարձեալ թէպէտ և ազնուականութեան պատիւն Փրանկիոյ մէջէն վերցուած էր, այսու ամենայնիւ դարձեալ ինքն Սէնթ-Անժի մարքիզուհի էր, և իւր ծանօթներն ալ հին ազնուականներէն լինելուն համար՝ գոնէ նոցա մէջ իւր ազնուականութիւնն և պատուանուններն կարէր վայելել։ Աննա ալ մօրն յուսովը կ'ուրախանար Փրանկիա դառնալուն համար՝ բայց ուրիշ պատճառաւ. հայրենեաց սէրն երիտասարդաց սրտին մէջ աւելի վառվռուն է, իսկ անձնասիրութիւնն հասակն առած մարդու զգացումն է. և չեմք կարծեր որ մարդկանց մէջ երիտասարդ մի եղած լինի առաջին անգամ այն խօսքն ստացողն թէ Ուր որ հանգիստ կ'ապրիմ՝ հոն է իմ հայրենիքս. ուստի Աննա ալ թէպէտ և Վիեննայի մէջ հանգիստ էր՝ բայց կիմանար որ Փարիզու մէջ այլ աւելի հանգիստ պիտի լինէր։ Ամէն օր խօսակցութիւննին ապագայ ճամբորդութեան վըրայ էր, և մայր ու աղջիկ անհամբերութեամբ կը սպասէին գործին վերջանալուն՝ զոր զօրավարն կերպով մի իրենց խոստացել էր։

Վերջապէս այնչափ փափաքանօք և անհամբերութեամբ սպասուած աւետիսն եկն եհաս. և այս հրամանս անմիջապէս Նաբոլէոնի Առաջնոյ Սրբոյ գահուն հետ դրած դաշնադրութենէ ստորագրուելէն ետև ելած էր (15 յուլիսի 1801ին)[1]։ Իրմէ առաջի կառավարութիւններն

[1] Այս դաշնադրութիւնս Օրէնսդիր ժողովքէն ալ հաստատուելով վաւերացաւ 8 ապրիլ 1802ին։

կրօնից վրայ ամենևին չէին խորհած, որովհետև կրօնքն պարզ մարդկային սահմանադրութիւն մի կը համարէին, ու հոգ չէին տաներ նորա կորսուելուն կամ հալածուելուն վրայ, և այնոր տեղն աստուածեան կամ ուրիշ նման հաւատք մի հաստատուիլն նոցա համար անտարբեր բան էր. կամ աւելի լաւ բացատրենք՝ կրօնից անխըտրութեան սկզբունքն կուզէին հաստատել՝ որոյ առջև հեթանոսութիւնն քրիստոնէութիւնն մարդկային իմաստութեան պաշտօն տանելն և ժամանակին իմաստասիրութեան հետևիլն՝ ամենքն ալ մի և նոյն բան կը համարէին։ Իսկ Պօնաբարթէ կանուխ և լաւ հասկըցաւ որ առանց կրօնից օգնութեանն, բարոյականի սկզբունքն ազդեցութիւն մի չունին. օրէնքն իշխանութիւն և մարդիկ ալ ապահովութիւն չեն կարող ունել. և թէ առանց կրօնից առաքինութիւնք կանխակալ կարծիք կամ նախապաշարմունք կը համարուին, և արդարութիւնն հաւատարմութիւնն և պատիւն՝ սոսկ աննշան բառեր։ Աս բաներս գիտելով դաշնադրութիւն մի ստորագրեց՝ որով Փրանկիոյ մոլորած ազգն եկեղեցւոյ Գլխոյն հետ հաշտեցոյց։

Այս բանս յաջողութեամբ աւարտելէն ետև՝ ուզելով իւր սկսած գործն յառաջ վարել ու փրանկիացի ազգն վերանորոգել՝ հասարակաց կրթութիւնն բարեկարգելու ձեռք զարկաւ. յետ այնորիկ իշխանազանց տոհմային ստացուածքն և եկամուտներն հաստատել ուզեց. բայց այն յանձնաժողովն որ կարգել էր այս նիւթիս վրայ խորհելու համար՝ նորա առաջարկութիւնն մերժեց և հակառակն հաստատեց. սակայն այս իւր փորձէն ալ կիմացուի՝ թէ որ կողման էր առաւել իւր յարմունքն՝ այսինքն

ազնուապետութեան: Ուստի դաղթականներէն շատերն՝ նոր կառավարութեան 'ի գործ դրած արդարութեան սկզբամբքն վստահութիւն առնլով՝ խնդրեցին իրենց հայրենիքն դառնալու: Զօրավարն ժամանակն յարմար սեպեց՝ և աքսորելոց ցուցակն ջնջելու բացարձակ հրամանն առաւ առաջին հիւպատոսէն. և այս աւետաբեր լուրն շուտ մի մարքիզուհւոյն ծանոյց՝ փութացընելով զիրենք որ վաղվաղակի Փարիզ հասնին: Այն ատենէն Աննա և իւր մայրն ալ զիրենք փրանկիացի համարելով՝ գնացին Փրանկիոյ դեսպանին պաշտպանութիւնն խնդրեցին՝ ինչպէս որ զօրավարն ալ իրենց համար սախպօղական յանձնարարական մի գրած էր. և այս զգուշութիւնս հարկաւոր էր, որպէս զի դեսպանատան ստորագրութեամբ անցագիր ունելով ձեռունին՝ ուղևորութեան մէջ ընդդիմութիւն մի չկրեն: Այս պատրաստութիւններս տեսնելէն ետև՝ մայր ու աղջիկ իրենց ծանօթից և բարեկամաց այցելութեան ելին՝ ծանուցանելով իրենց մօտակայ ուղևորութիւնն: Ամէնքն իրենց հետ ուրախակից եղեն՝ հայրենիք դառնալուն համար, բայց միանգամայն իրենց ցաւն կը յայտնէին 'ի նոցանէ բաժնուելուն համար: Մանաւանդ Սաքս-Թէշէն օրիորդներն շատ արտմեցան այս բաժանմանս վրայ՝ որ հաւանականաբար յաւիտեան պիտի տևէր, և թերևս այլ զիրար պիտի չտեսնէին:

Ճամբայ ելնելէն յառաջ բան մի ալ կար առնելիք. Աննա փափաք ցուցած էր Պատրն երթալու, և վերջին անգամ իր հօր և քրոջ գերեզմանին վրայ աղօթելու. մարքիզուհին ոչ միայն դէմ չդրաւ այս բանիս, այլ և փութացաւ այս սրբազան պարտքս կատարելու: — Բարի աւագերէցն

զիրենք վաղեմի ծանօթից պէս ընկալաւ, զոր մարդ յոյս չունելով միւսանգամ տեսնելու, վերջի անգամու տեսութեան ալ այլ աւելի կուրախանայ. և չթողուց որ իջևան երթան բնակին՝ այլ իր տունն զիրենք հիւրընկալեց, և նոցա գըլխէն անցած փորձանաց և դժբաղդութեանց ցաւակից եղև, բայց միանգամայն ուրախացաւ նոցա Փրանկիա դառնալուն վրայ. և փոքրիկ Եմիլին հետ ալ խօսելով շատ կը զարմանար այն փոքրիկ հասակին մէջ ցուցած խելացն ու համեստութեանն: — Նմանապէս բժիշկ Շէնք ալ գալով՝ ուրախակից լինէր մարքիզուհւոյն և աղջկանն իրենց բաղդին և վիճակին փոփոխութեանն համար: Պատրնցոց ազնուականներէն շատերն ալ ննջեցելոյ պաշտօնին ներկայ գտնուելէն ետև՝ իրենք ալ գնացին վերջի անգամ իրենց երդեհոնահարն և իւր ազնուական մայրն մեծարելու:

Երկրորդ օրն որ Ճամբայ պիտի ելնէին՝ մարքիզուհին առաւօտանց իւր երկու աղախիններուն վարձքն վճարեց՝ բաւական բարի ձեռք մի ալ աւելցնելով. բայց իրիկուան դէմ տուն դառնալով՝ շատ զարմացաւ երբ տեսաւ որ գերմանացի աղախինն ներս մտնելով՝ առաւօտուն առած ստակն և ուրիշ պզտի գումարիկ մի սեղանին վրայ դրաւ. ու երբ մարքիզուհին պատճառն հարցուց. աղախինն պատասխանեց ասելով. «Տիկին, բարեհաճեցէք մտիկ արարէք խօսքիս. ութ տարի է որ ձեզ կը ծառայեմ, և կարծեմ թէ հաւատարմութեանս վրայ գոհ էք. արդ հիմա դիւրին բա՞ն կը կարծէք ինձ որ 'ի ձէնջ բաժնուիմ իմ Տիկնոջէս և Օրիորդ Աննայէն՝ այն չափ բարիք տեսնելէս ետև: Ես գնացի աղերկացայ որ ասոր մինչև ձեր Փարիզն Ճամբու

ծախքն ինչ է, և գիտցող մարդիկ ինձ ասացին որ հարիւր երեսուն ֆիորինի չափ կերթայ: Ահաւասիկ, սիրելի տիկին, սա հարիւր յիսուն ֆիորինն որ բոլոր ունեցած ստակս է. և՛ ի ձէնջ ուրիշ բան չեմ խնդրեր՝ բայց եթէ այս որ զիս ալ հետերնիդ տանիք»:

Մարքիզուհւոյն սիրտն ելաւ և գրկելով ու համբուրելով զնա ասաց. «Վերցո՛ սա ստակդ, և գնա՛ միատեղ գալու պատրաստուէ»: — Խեղճ աղջիկն սաստիկ ուրախացած՝ տիկնոջն զինքն համբուրելուն համար՝ աղաչական նայուածքով մի Աննայի դարձաւ՝ 'ի նմանէ ալ նոյն շնորհն խնդրելու մտօք: Աննա ալ նորա միտքն հասկնալով ինքն ալ նորա հետն պլլուեցաւ ու պագտուեցաւ: «Ո՛վ սիրելի տիկնայք իմ, գոչեց աղախինն, ձեր հետ մինչև աշխարհիս ծայրն ալ երթալ պէտք լինի, պիտի գամ»:

Եղանակն ալ գարուն լինելով՝ ուղևորութիւնն յոյժ զուարճալի եղև առանց ինչ փորձանաց. Թէպէտ և իրենց հետ տխուր խորհուրդներ ալ ունէին, բայց երթալով հայրենի հողն կը մօտէին, և այս ուրախարար մտածութիւնս զիրենք կը մխիթարէր: Շատ օրեր ճամբորդութիւն առնելէն ետև՝ հորիզոնին ծայրն շէնքի մի ծայրն սկսան տեսնել, կառավարն «Ահա Սթրասպուրկ» գոչեց: «Սթրասպուրկ՛ Փրանկլիա» գոչեցին ետևէ ետև մարքիզուհին և աղջիկն:

Արդեօք ինչ կխմնար նոյն ատեն Աննայի սիրտն: Երբ տարիներ յառաջ Գերմանիոյ հողն կոխեցին ինքն իրեն ասէր. «Իմ հայրս ազատեցաւ, բայց ո՛րչափ սուղի կը նստի իրեն այս ազատութիւնս. ինձ ալ ո՛րչափ սուղի նստաւ իրեն շնչած օդն շնչելս. ա՛լ մեզ համար հայրենիք չըկայ: Իսկ հիմա Սթրասպուրկ և սիրելի հայրե-

նեաց Փրանկլիայի մօտեցած ատեն՝ վերջի անգամ աչքն դարձուց այն երկրին վրայ զոր կը թողուին և գոչեց. «Երթաս բարո՛վ, երկիր հիւրընկալ, որ իմ տկարութեանս պաշտպան և օգնութիւն եղեր. երկիր ուր իմ սիրտս միշտ պիտի դառնայ՝ ցաւալից յիշատակներ բնտռելու համար. վասն զի ես ձեզ աւանդեցի հօրս և քրոջս աճիւնն, և այն արդար և հաւատարիմ սպասաւորին մարմինն՝ որ իմ ծնանիլս տեսել ու շատ անգամ իր բազկաց մէջ զիս գրկել էր: Ո՛վ Վեննա ու Պատըն՝ ձեր անուննն իմ քրոջս և հօրս անուան հետ միացած՝ միշտ մտացս մէջ պիտի մնայ»:

Փրանկլիա հասնելուն երկրորդ օրն՝ մարքիզուհին զօրավարին գրեց և իրենց գալն իմացուց. նա ալ շուտով ել եկն զնոսա տեսնելու: «Տիկին, ասաց, յոյժ բարեբաղդ լուրեր ունիմ ձեզ տալու. Առաջին հիւպատոսին որոշակի հրամանաւ ձեր անունն աքսորելոց ցանկէն աւրուեցաւ. ձեր ամեն չվաճառուած ստացուածքն ձեզ պիտի դառնան, և առած տեղեկութեանցս համեմատ գրեթէ ամենքն ալ. ուստի նախ պատիւ ունիմ զձեզ ձեր տունն Սէնթ-Անժի ապարանքն տանելու, որ պետութեան պաշտօնատուն մի եղած էր, բայց հիմա զձեզ ընդունելու համար պատրաստ է. Նմանապէս Սէնթ-Անժի երկիրն որ մեծաւ մասամբ անտառ էր, և տէրութեան գրաւուած՝ նորէն ձեզ դարձած է: Դարձեալ գրաւուած Ֆորթոնի ստացուածոց վրայէն ալ գրաւումն վերցնել տուի՝ որովհետև իւր զաւկին շահն ալ ձերինին հետ մի սեպելով՝ համարեցայ որ նմա մատուցած ծառայութիւնս ձեզ մատուցած եմ, Տիկին»:

Մարքիզուհին և Աննա չէին գիտեր թէ ինչպէս իրենց շնորհակալութիւնն և երախտագի-

տուԹիւնն յայտնեն. յետոյ զօրավարին հետ միա-
տեղ ելին իրենց տունն գնացին, և տեսին զար-
մացմամբ որ վերէն 'ի վար կահած ու զարդա-
րուած էր. որ աս ալ դարձեալ զօրավարին մտա-
դրութիւնն եղած էր: Սակայն մարքիզուհին այս
ճոխ կահերն ընդունել չուզեց՝ բայց եթէ եղած
ծախքն վճարելով:

« Տիկին, պատասխանեց զօրավարն ծիծաղե-
լով, սակաւ մի յետոյ իմ հաշիւս ձեզ կը ներ-
կայացնեմ, և եթէ Վիեննա եղած ժամանակնիս՝
շնորհակալութեան խօսք որ արարիք՝ նոյն ատեն
իմ զուրցածս մտքերնիդ բերելու բարեհաճիք՝
հաշիւնիս յոյժ դիւրաւ կը շտկուի »: Հետևեալ
օրն ալ մարքիզուհին մինակ գտնելով՝ իւր խըն-
դիրքն յայտնապէս առաջարկեց. մարքիզուհին
ալ իւր դստեր հաճութեան վրայ աներկմիտ լի-
նելով՝ հաւանութիւն ու խօսք տուաւ:

Եւ յիրաւի զօրավարն ամեն կողմանէ մարքի-
զուհւոյն համարմանն ու սիրոյն արժանաւոր էր,
որովհետև ոչ միայն իւր այրն ազատողին մեծա-
պէս երախտապարտ էր, այլ և նորա առաքինու-
թեանց և արժանապատուութեան վրայ ստացած
տեղեկութիւններն զինքն լաւ համոզել էին՝ որ Ան-
նայի համար մի միայն արժանաւոր անձն նա էր:
Ուրիշ կողմանէ ալ իր ներկայ վիճակն՝ ապագա-
յին համար շատ մեծամեծ բաներ կը խոստանար.
վասն զի այն մեծ մարդն (Նաբոլէոն Ա.) որ նոյն
ատեն Փրանկիայն կը կառավարէր, արդէն սկը-
սած էր իւր փայլն ամեն դի սփռել, որով յետոյ
կայսերական գահն ալ շքեղացաւ, և իւր մեծու-
թիւնն իրեն զինուորակցին և փառակցին վրայ
ալ կը տարածուէր:

Հարկաւոր չեմք համարիր աւելցնել որ Աննա
ալ՝ գերազանց դուստր և գերազանց քոյր երև-

նալէն յետոյ՝ գերազանց մայր ալ հանդիսացաւ
իւր գերդաստանին, և նորածնունդ տոհմին օրի-
նակ լինելով ամենայն առաքինութեանց, որ ան-
ցաւոր աշխարհիս մէջ գրաւական մի է այն ճշմա-
րիտ երջանկութեան՝ զոր կրօնք ապագայ և լա-
ւագոյն աշխարհի մէջ գտնել կը խոստանան
մեզ, եթէ իրեն հաւատարիմ մնամք:

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԵՐՋ

2228

2013